



Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊՐՈՍԵԿՅՈՒՐ ԳԵՆԵՐԱԿԱԼ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 136 2024

ՀՀ ՊՐՈՍԵԿՅՈՒՐ ԳԵՆԵՐԱԿԱԼ
ՊԱՐԲԵՐԱԿԱԼ

Տպագրվում է 1997 թվականից ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

LEGALITY

SCIENTIFIC-PRACTICAL JOURNAL OF THE PROSECUTOR'S OFFICE
OF THE REPUBLIC OF ARMENIA

Published since 1997 at the initiative of RA Prosecutor General Henrik Khachatryan

ЗАКОННОСТЬ

НАУЧНО-ПРАКТИЧЕСКИЙ ЖУРНАЛ ПРОКУРАТУРЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Публикуется с 1997 года по инициативе Генерального прокурора РА Генрика Хачатряна

Պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի սահմանած դոկտորական (2002 թ.) և թեկնածուական (1999 թ.) ատենախոսությունների արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The Journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the results and provisions of doctoral dissertation (since 2002) and candidate dissertation (since 1999) established by the Supreme Certifying Committee of the Republic of Armenia.

Журнал включен в список научных периодических изданий, принятых для публикации результатов и положений докторских (с 2002) и кандидатских (с 1999) диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения.

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՅԱՑՅԵԼ Է ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ 34-ՐԴ ՆԻՍՏԸ



Երևանում 2024 թվականի հոկտեմբերի 4-ին կայացել է Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի 34-րդ նիստը:

Նիստին մասնակցել են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը, Համակարգող խորհրդի նախագահ, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ Իգոր Կրասնովը, ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, Համակարգող խորհրդի գործադիր քարտուղար Վլադիմիր Չիմինը, Տաջիկստանի Հանրապետության գլխավոր դատախազ Ռահմոն Յուսուֆ Ահմադզոդը, Բելառուսի գլխավոր դատախազ Անդրեյ Շվեդը, Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Գալիմժան Կոյգելդիևը, Ղրղզական Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Նուրբեք Քայիմովը, Ուզբեկստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Սվետլանա Արտիկովան, ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը և այլք:

Աննա Վարդապետյանը ողջունել է ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի 34-րդ նիստին մասնակցող պատվիրակությունների ղեկավարներին Երևանում, շնորհակալություն է հայտնել աշխատանքային զբաղվածության պայմաններում իր հրավերն ընդունելու համար և ընդգծել, որ 17-ամյա դադարից հետո Հայաստանի մայրաքաղաքը հյուրընկալում է ԱՊՀ երկրների գլխավոր դատախազությունների պատվիրակություններին:



Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը ողջունել է Համակարգող խորհրդի 34-րդ նիստին մասնակցող պատվիրակություններին և կարևորել Խորհրդի գործունեությունը քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության, օրենքի գերակայության ամրապնդման և անդրազգային հանցավորության դեմ պայքարում: Փոխվարչապետը կարևորել է պետությունների միջև կառուցողական համագործակցությունը՝ հանցավորության՝ հատկապես կազմակերպված և անդրազգային հանցավորության դեմ պայքարում:

Փոփոխվող իրողությունների համատեքստում ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն առաջնահերթ է համարել Անկախ պետությունների համագործակցության իրավապայմանագրային դաշտի թարմացումն ու զարգացումը՝ այդ առումով ընդգծելով Համակարգող խորհրդի դերը:



Համակարգող խորհրդի նախագահ, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ Իգոր Կրասնովը շնորհակալություն է հայտնել Աննա Վարդապետյա-



նին Խորհրդի նիստը գերազանց կազմակերպելու և ջերմ ընդունելության համար: ՌԴ գլխավոր դատախազը վստահություն է հայտնել, որ փորձի փոխանակումը կնպաստի հետագայում համատեղ ուժերով հանցավոր սպառնալիքների հակազդմանը, ինչպես նաև ԱՊՀ անդամ երկրների քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը:

Համակարգող խորհրդի 34-րդ նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ պատվիրակությունների ղեկավարները հանդես են եկել զեկույցներով, որոնք վերաբերել են կոռուպցիայի դեմ պայքարին, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձմանը, պետական և համայնքային շահերի պաշտպանության



ուղորտում իրականացվող աշխատանքներին, կիրերհանցավորության դեմ պայքարում իրավական փոխգործակցությանը, սոցիալապես խոցելի խմբերի, անչափահասների իրավունքների պաշտպանությանը, օրենքի գերակայության ապահովմանը և այլ հարցերի:

ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը շնորհակալություն է հայտ-



նել պատվիրակություններին ակտիվ մասնակցության և կառուցողական երկխոսության համար, երախտագիտությամբ է ընդգծել Համակարգող խորհրդի աշխատանքը հանդիպման նախապատրաստման և անցկացման հարցում կատարած աշխատանքի համար:

Համակարգող խորհրդի նախագահ, ՌԴ գլխավոր դատախազ Իգոր Կրասնովը ՀՀ գլխավոր դատախազին պարգևատրել է «ԱՊՀ մասնակից պետությունների պատվավոր դատախազ» կրծքանշանով:



Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի 35-րդ նիստը կկայանա Տաջիկստանի Հանրապետությունում:

ՆԵՐԿԱՅԱՅՎԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ



Գլխավոր դատախազության, Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ ջանքերով 2024 թվականի նոյեմբերի 15-ին Երևանում կայացել է Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի կարծիքների հայերեն ժողովածուի շնորհանդեսը:

Միջոցառման նպատակն էր ազդարարել Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի կարծիքների (այսուհետ՝ Կարծիք) հայերեն թարգմանության հասանելիության մասին, ներկայացնել դրանց կարևորությունը, ինչպես նաև քննարկել Կարծիքների գործնական կիրառության հետ կապված առանձնահատկությունները:

Կարծիքների հայերեն թարգմանությունն ու տպագրությունն իրականացվել է որպես Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» համատեղ ծրագրի մաս, որը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից և իրականացվում Եվրոպայի խորհրդի կողմից:

Խորհրդաժողովին մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ

Արթուր Դավթյանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Կարեն Կարապետյանը, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մաքսիմ Լոնգանգեն, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության Համագործակցության բաժնի ղեկավար պարոն Ֆրանկ Հեսսը, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի նախագահ, Չեխիայի Հանրապետության գլխավոր դատախազության օրենսդրական բաժնի պետ, վարչության փոխտնօրեն Յանա Չեզուլովան, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների, արդարադատության և իրավական համագործակցության չափանիշների իրականացման վարչության իրավական բարեփոխումների և մարդու իրավունքների հարցերով համագործակցության ծրագրերի բաժնի փոխտնօրեն Լիլիթ Դանեղյանը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ Եղիազար Ավագյանը, Արթուր Պողոսյանը, Լիլիթ Գրիգորյանն ու Գրիգոր Էլիգբարյանը, ինչպես նաև Դատախազության այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:



Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը ողջույնի խոսքում կարևորել է Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի աշխատանքը, որը ներառում է նաև դատախազական գործունեության համար հիմնարար նշանակություն ունեցող հարցերի առնչությամբ կարծիքների մշակումն ու ընդունումը: Աննա Վարդապետյանի խոսքով՝ դատախազների համար Կարծիքների հասանելիությունը հնարավորություն է տալիս նրանց ներպետական իրավական համակարգերում աշխատել ԵԽ չափորոշիչներին համապատասխան:

«ՀՀ դատախազության առաջնահերթություններից է ապահովել առավել սերտ համագործակցություն միջազգային և տարածաշրջանային մասնագիտական կառույցների հետ և ավելի մոտեցնել դատախազի մասնագիտական հմտություններն ու կերպարը միջազգային և Եվրոպայի խորհրդի չափորոշիչներին: Դրան հասնելու համար նվազագույն պահանջը տեղեկատվության հասանելիությունն է, դրա անմիջական և ակտիվ կիրառությունը: Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի կարծիքների թարգմանությունն ու տպագրությունն այս ուղղությամբ իրականացվող առաջին քայլերից են: Ես լիահույս եմ, որ այս ձեռնարկը կդառնա Հայաստանում գործող դատախազների սեղանի գիրքը»,- նշել է Աննա Վարդապետյանը և երախտագիտություն հայտնել Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կառույցներին ու պաշտոնատար անձանց արդյունավետ համագործակցության համար:

Հանրապետության գլխավոր դատախազն ընդգծել է, որ Հայաստանի Հանրապետության դատախազության համագործակցությունը Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի հետ ունի լավ ավանդույթներ և հատկապես վերջին տարիներին այն թևակոխել է զարգացման որակապես նոր փուլ: «Դատախազներն ազդեցիկ դեր ունեն հասարակությունում և շատ կարևոր է, որ իրենք իրենց գործունեությամբ պաշտպանեն օրենքի գերակայությունը, արդարությունն ու անաչառությունն այնպես, ինչպես առաջարկվում է Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի կարծիքներում»,- նշել է Աննա Վարդապետյանը:



Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մաքսիմ Լոնգանգեն ողջունել է միջոցառման մասնակիցներին, հաստատել Եվրոպայի խորհրդի շարունակական աջակցությունը Հայաստանում արդարադատության բարեփո-

խումներին և նշել. «Ցանկանում եմ հավաստիացնել, որ Եվրոպայի խորհուրդը լիովին հանձնառու է աջակցել Հայաստանի ջանքերին՝ արդարադատության համակարգի բարեփոխման և դատախազական ստանդարտների բարձրացման հարցում: Այս միջոցառումը ևս մեկ կարևոր քայլ է ուղղված մեր գործընկերության ամրապնդմանը: Մենք հպարտ ենք արդեն իսկ արձանագրված առաջընթացով: Հայտնում ենք մեր պատրաստակամությունը քայլել ձեր կողքին այս ճանապարհին»:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության Համագործակցության բաժնի ղեկավար պարոն Ֆրանկ Հեսան ընդգծել է Եվրոպական միության հանձնառությունը՝ աջակցելու Հայաստանին դատախազական համակարգը հզորացնելու գործում: «Կարևոր է օգտագործել հավաքված փորձը և գիտելիքը՝ բարձրացնելու կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարում դատախազների դերի եվրոպական ստանդարտների մասին իրազեկումը: Մեր նպատակն է հայաստանյան գործընկերների հետ համատեղ հասնել անկախ դատախազական համակարգի, որն առավելագույնս համապատասխանում է եվրոպական ստանդարտներին»,- նշել է Ֆրանկ Հեսար:

ԵԽ համագործակցության ծրագրերի բաժնի փոխտնօրեն Լիլիթ Դանեղյանն իր ելույթում նշել է, որ ուրախությամբ են արձագանքել ՀՀ գլխավոր դատախազի նախաձեռնությանը Կարծիքների հայերեն թարգմանությունն ապահովելու վերաբերյալ, որոնք հասանելի կլինեն ՀՀ-ում գործող դատախազներին և ապագա իրավաբաններին:

Միջոցառման թեմատիկ նիստի ընթացքում ներկայացվել է Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի թիվ 14 կարծիքը, որը վերաբերում է կոռուպցիայի և հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարում դատախազների դերին, անդրադարձ է կատարվել կոռուպցիոն բնույթի հանցանքների բացահայտման արդի մարտահրավերներին և այլն:

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականի խմբագրական խորհուրդ

Եղիազար Ավագյան (խմբագրական խորհրդի նախագահ) - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ

Անահիտ Մանասյան - իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

Արթուր Ղամբարյան - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ

Հաննա Սուխոցկա - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) պատվավոր նախագահ, Պոզնանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանի սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, Լեհաստանի նախկին վարչապետ

Յանիս Պլեպս - իրավաբանական գիտությունների դոկտոր, Լատվիայի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դոցենտ, Լատվիայի Գերագույն դատարանի դատավոր

Ռոման Մելնիկ - իրավաբանական գիտությունների դոկտոր, Մ.Ս. Նարիկբանի անվան KAZGUU համալսարանի իրավունքի բարձրագույն դպրոցի պրոֆեսոր

Լեոնիդ Գուլովկո - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության, արդարադատության և դատախազական վերահսկողության ամբիոնի վարիչ

Իգոր Կրավեց - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Նովոսիբիրսկի պետական համալսարանի պետության և իրավունքի տեսության ու պատմության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ

Նորբերթ Բերնսդորֆ - իրավաբանական գիտությունների դոկտոր, Մարբուրգի Ֆիլիպսի անվան համալսարանի պատվավոր պրոֆեսոր, Հիմնարար իրավունքների Եվրոպական միության խարտիայի ազգային փորձագետ (Վիեննա), Գերմանիայի դաշնային սոցիալական դատարանի նախկին դատավոր

Անդրես Պարմաս - Էստոնիայի Հանրապետության գլխավոր դատախազ, քրեական իրավունքի դասախոս Տարտուի համալսարանի իրավունքի դպրոցում, Էստոնիայի «Դատական իշխանություն» պարբերականի նախկին գլխավոր խմբագիր

Մաուրիցիո Բոլկ - Իտալիայի Հանրապետության զինվորական գլխավոր դատախազ, «Չինվորական արդարադատություն» պարբերականի խմբագիր

Կոնտակտային տվյալներ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 5

Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am

Հեռ.՝ 010-511-506

www.prosecutor.am

**Editorial Board of the Scientific-Practical Journal “Legality” of the
Prosecutor’s Office of the Republic of Armenia**

Yeghiazar Avagyan (Chair of the Editorial Board) - Deputy Prosecutor General of the Republic of Armenia

Anahit Manasyan - PhD in Law, Associate Professor of the Department of Constitutional Law at Yerevan State University, Human Rights Defender of the Republic of Armenia

Artur Ghambaryan - Doctor of Law, Professor, Head of the Chair of Theory of Law and Constitutional Law at the Russian-Armenian University

Hanna Suchocka - Doctor of Law, Professor, Head of the Department of Constitutional Law at Adam Mickiewicz University in Poznań, Honorary President of the European Commission for Democracy through Law (the Venice Commission of the Council of Europe), Former Prime Minister of Poland

Janis Pleps - Doctor of Law, Associate Professor of the Department of Legal Theory and History, Faculty of Law, University of Latvia, Judge of the Supreme Court of Latvia

Roman Melnyk - Doctor of Law, Professor at M. Narikbayev KAZGUU University Law School

Leonid Golovko - Doctor of Law, Professor, Head of the Chair of Criminal Procedure, Justice and Supervision by Public Prosecutor at Lomonosov Moscow State University

Igor Kravets - Doctor of Law, Professor, Head of the Chair of Theory and History of State and Law and Constitutional Law at Novosibirsk State University

Norbert Bernsdorff - Doctor of Law, Honorary Professor at Philipps-Universität Marburg/Hessen, National Key Expert on the European Charter of Fundamental Rights (Vienna), Retired Judge of the Third Instance Court on Social Affairs of Germany

Andres Parmas - Prosecutor General of the Republic of Estonia, Lecturer of criminal law of the School of Law at the University of Tartu, Former Editor-in-Chief of the yearbook of Estonian judiciary

Maurizio Block - Military General Prosecutor of the Republic of Italy, editor of the legal journal “Military Justice”

Contacts

Address- Vazgen Sargsyan Street 5, Yerevan, 0010, Armenia

E-mail- orinakanutyun@prosecutor.am

Tel.- 010-511-506

www.prosecutor.am

**Редакционная коллегия научно-практического журнала «Законность»
Прокуратуры Республики Армения**

Егиазар Авагян (Председатель редакционной коллегии) - заместитель Генерального прокурора Республики Армения

Анаит Манасян - кандидат юридических наук, доцент кафедры конституционного права Ереванского государственного университета, Защитник прав человека Республики Армения

Артур Гамбарян - доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории права и конституционного права Института права и политики Российско-Армянского университета

Ханна Сухоцка - доктор юридических наук, профессор, заведующая кафедрой конституционного права Университета им. Адама Мицкевича в Познани и почетный председатель Европейской комиссии Совета Европы «Демократия посредством права» (Венецианская комиссия), бывший премьер-министр Польши

Янис Плепс - доктор юридических наук, доцент кафедры теории и истории права юридического факультета Латвийского университета, судья Верховного суда Латвии

Роман Мельник - доктор юридических наук, профессор Высшей школы права университета КАЗГЮУ имени М.С. Нарикбаева

Леонид Головкин - доктор юридических наук, профессор, заведующий кафедрой уголовного процесса, правосудия и прокурорского надзора юридического факультета Московского государственного университета имени М.В. Ломоносова

Игорь Кравец - доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права и конституционного права Новосибирского государственного университета

Норберт Бернсдорф - доктор юридических наук, почетный профессор Марбургского университета им. Филиппа, национальный ключевой эксперт Хартии Европейского Союза об основных правах (Вена), судья в отставке федерального суда по социальным делам Германии

Андрес Пармас - Генеральный прокурор Республики Эстония, преподаватель уголовного права в Школе права Тартуского университета, бывший главный редактор ежегодника судебной власти Эстонии

Маурицио Блок - Генеральный военный прокурор Республики Италия, редактор журнала «Военное правосудие»

Контактные данные

Адрес: Республика Армения, г. Ереван, 0010, улица Вазгена Саргсяна 5

Эл. почта: orinakanutyun@prosecutor.am

Тел.: 010-511-506

www.prosecutor.am

Ծանոթագրություն

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականում տպագրված հոդվածները հանդիսանում են հեղինակների մասնագիտական հետազոտության արդյունքը և արտացոլում են վերջիններիս մասնագիտական կարծիքը ակադեմիական ազատության շրջանակում:

Հոդվածներում տեղ գտած վերլուծությունները, դատողություններն ու եզրահանգումները չեն արտահայտում և չեն կարող արտահայտել ՀՀ դատախազության դիրքորոշումը որևէ իրավական հարցի և (կամ) փաստական հանգամանքի վերաբերյալ:

Disclaimer

The articles published in the scientific-practical journal “Legality” of the RA Prosecutor’s Office are the result of the authors’ professional research and reflect their professional opinion within the framework of academic freedom.

The analyses, judgments and conclusions contained in the articles do not and cannot express the position of the Prosecutor’s Office of the Republic of Armenia in regard to any legal issue and (or) factual circumstances.

Примечание

Статьи, опубликованные в научно-практическом журнале «Законность» прокуратуры РА, являются результатом профессиональных исследований авторов и отражают их профессиональное мнение в рамках академической свободы.

Содержащиеся в статьях анализы, постановления и выводы не выражают и не могут выражать позицию прокуратуры Республики Армения в отношении каких-либо правовых вопросов и (или) фактических обстоятельств.

Բովանդակություն
Content
Содержание

Norbert Bernsdorff, Bettina Kukat-Sedler

Equality Requirements in the European Judicial Area - Special Focus:
Gender Discrimination (in English).....19

Նորբերթ Բերնսդորֆ, Բետինա Կուկատ-Սեդլեր

Հավասարության պահանջները եվրոպական ընդդատության
տարածքում. առանցքային ուշադրությունը՝ գենդերային
խտրականություն (անգլերեն).....32

Норберт Берндорф, Беттина Кукат-Седлер

Требования к равенству в европейском судебном пространстве – особый
фокус: гендерная дискриминация (на английском).....34

Արթուր Ղամբարյան

Քրեադատավարական ապացույցների թույլատրելիության
սահմանադրաիրավական կանոնները (հայերեն)35

Artur Ghambaryan

Constitutional Rules of Admissibility of Criminal Evidence (in Armenian).....68

Арту́р Гамбарян

Конституционные правила допуска уголовно-процессуальных
доказательств (на армянском).....69

Ալիսա Ամիրխանյան

Ապօրինի հարստացման միջազգային-իրավական ամրագրումը
(հայերեն)70

Alisa Amirkhanyan

The International-Legal Regulation of Illegal Enrichment (in Armenian).....85

Алиса Амирханян

Международно-правовое регулирование незаконного обогащения
(на армянском).....86

Լիլիթ Շիրվանյան

Դատական ակտը չկատարելը կամ դրա կատարմանը
խոչընդոտելը (հայերեն)87

Lilit Shirvanyan

Failure to Perform a Judicial Act or Obstructing its Performance
(in Armenian).....104

Лилит Ширванян

Неисполнение судебного акта или воспрепятствование их исполнению (на армянском)105

Արշակ Մարտիրոսյան

Համագործակցության վարույթի քրեադատավարական ասպեկտները և առկա հիմնախնդիրները (հայերեն)106

Arshak Martirosyan

Criminal Procedure Aspects of Cooperation Proceedings and Current Issues (in Armenian).....123

Аршак Мартиросян

Уголовно-процессуальные аспекты производства по делу о сотрудничестве и актуальные вопросы (на армянском).....124

Էդգար Պողոսյան

Դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման առանձնահատկությունները նոր քրեական դատավարության օրենսգրքի համատեքստում (հայերեն).....125

Edgar Poghosyan

Specificities of Change of Court's Charge within the Context of the Code of the New Criminal Trial Process (in Armenian).....142

Эдгар Погосян

Особенности изменения судебного обвинения в контексте нового кодекса уголовного судопроизводства (на армянском).....143

Վարեն Սուրիայան

Հանցագործությունների համակցության դեպքում պատիժ նշանակելու իրավական կարգավորման որոշ գործնական հարցեր (հայերեն)144

Karen Sukiasyan

Certain Practical Issues of the Legal Regulation of Imposition of Punishment for Cumulative Crimes (in Armenian).....166

Карен Сукиасян

Некоторые практические вопросы юридического урегулирования назначения наказания по совокупности преступлений (на армянском) ...167

Ռոզա Բախչյան

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի որոշ հիմնախնդիրները ՀՀ քրեական իրավունքում (հայերեն)168

Roza Bakhshyan

Certain Fundamental Issues of the Institute of Conditional Early Release from Serving the Punishment in the Criminal Law of the Republic of Armenia (in Armenian).....193

Роза Бахшян

Некоторые фундаментальные проблемы института условно-досрочного освобождения от отбывания наказания в уголовном праве РА (на армянском)194

Սամինե Պետրոսյան

Ընդհանուր բաժնային սեփականության հարաբերությունների իրավական կարգավորման էվոլյուցիան (հայերեն).....195

Samine Petrosyan

Evolution of the Legal Regulation of Common Ownership Relations (in Armenian).....209

Самине Петросян

Эволюция правового регулирования отношений общей долевой собственности (на армянском).....210

Հայկուհի Մարտիկյան

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալման որոշ հիմնախնդիրներ (հայերեն).....211

Haykuhi Martikyan

Problems Related to Detention on the Grounds of Reasonable Suspicion (doubt) of Commitment of a Crime (in Armenian).....227

Айкуи Мартикян

Некоторые проблемы задержания на основе непосредственного подозрения в совершении преступления (на армянском).....228

Վարդինա Հարությունյան

«Կրոնական փոքրամասնություն» եզրույթի էությունը և բնորոշման կարևորությունը (հայերեն)229

Karolina Harutyunyan

The Essence of the Definition “Religious Minority” and the Importance of Characterization (in Armenian)254

Каролина Арутюнян

Суть определения «религиозного меньшинства» и важность характеристики (на армянском).....256

Մարիամ Այվազյան

Հրապարակային հաղորդելու (հանրությանը հաղորդելու), հանրությանը մատչելի դարձնելու իրավունքները՝ որպես կատարողի հիմնական իրավունքներ (հայերեն).....258

Mariam Ayvazyan

The Rights to Communicate to the Public, to Make Available to the Public as Basic Rights of the Performer (in Armenian)276

Мариам Айвазян

Права на сообщение для всеобщего сведения и право доведения до восприятия публикой как основные права исполнителя (на армянском).....278

Norbert Bernsdorff

Doctor of Law, Honorary Professor at Philipps-University Marburg, Faculty of Law, National key expert at the European Union Agency for Fundamental Rights (in Vienna), Retired Judge of the Federal Social Court (Third Instance Court on Social Affairs of Germany),

Member of the Editorial Board of the Scientific-Practical Journal “Legality” of the RA Prosecutor`s Office

Bettina Kukat-Sedler

Doctor of Law, Editor of the Journal for Inclusive Didactics and the Journal „Frauenförderung and Gender Mainstreaming“, Head of the Institute „Genderperspektiven für die European Studies“, Staff Member of the International Institute for Gender Equality

EQUALITY REQUIREMENTS IN THE EUROPEAN JUDICIAL AREA - SPECIAL FOCUS: GENDER DISCRIMINATION¹

Abstract

The following article shows that the principles of equality and non-discrimination have gradually become established in the legal order of the European Union, namely as part of a development process. The European Court of Justice has played a decisive role in ensuring the effective protection of these principles.

Initially, these principles were only recognised in relation to employment and social security until, as their scope and field of application gradually expanded, they were finally made explicit in the Charter of Fundamental Rights of the European Union.

Above all, the gender mainstreaming approach should be applied in all phases of the process of making political decisions. Gender mainstreaming complements the traditional equality of women.

However, the prohibition of gender discrimination can come into conflict with other rights and interests, meaning that restrictions to this prohibition may be justified.

Keywords: principle of equality; non-discrimination; gender discrimination; gender, disability and age; Gender mainstreaming; ECJ; ECJ case law; European judicial area; Charter of Fundamental Rights; prohibition of discrimination.

¹ The article was presented on 07.10.2024 and was reviewed on 31.10.2024.

1. Introduction

A long time ago, the Frankfurter Allgemeine Zeitung (FAZ) criticised a judgement by the European Court of Justice in Luxembourg (ECJ) in which the ECJ had banned different tariffs in private insurance for men and women, and a week later demanded: "Courts should no longer incapacitate legislators". Criticism of the ECJ's equality jurisprudence was nothing new, and five years after the "*Mangold*" case², the ECJ was once again "pilloried"; the Court was accused of having "disregarded the legislative power in the member states with remarkable recklessness".

2. Stages of the Prohibition of Discrimination - Community and Union Law

The idea of equality, which is one of the core tasks of the European Community/Union, has always been anchored in its legal system. In accordance with its objective, which was originally (solely) aimed at establishing a single market without restrictions³, the Treaty establishing the European Economic Community (EEC Treaty)⁴ did not initially contain a general principle of equality or a general prohibition of discrimination. The aim of the Community's earlier endeavours to protect against discrimination was a level playing field in the internal market, rather than social protection, which was also initially understood by the ECJ only as an annex to the internal market concept.⁵ Therefore, the focus was initially on the prohibition of discrimination on the basis of nationality as a strictly functional principle of equality geared towards market integration, which was systematically assigned to the fundamental freedoms⁶ (Art. 7 para. 1 EEC Treaty, then Art. 6 of the Treaty establishing the European Community <ECT>, later Art. 12 EC Treaty, now Art. 18 para. 1 TFEU). In contrast to the prohibition of discrimination on grounds of nationality, the prohibition of discrimination on grounds of sex did not apply generally in the development stage of the EEC Treaty, but only to labour law.⁷ Article 119 of the EEC Treaty (then Article 141 of the EC Treaty, now Article 157 of the Treaty on the Functioning of the European Union <AEUV>), which provided for equal treatment of men and women with regard to pay, was also initially intended to ensure only liberal equality of competition⁸; i.e. the primary aim was to prevent the employment of women from leading to distortions of competition.⁹

² ECJ, judgement of 22 November 2005, case C-144/04 (*Mangold*), ECLI:EU:C:2005:709.

³ Cf. ECJ, judgement of 9 February 1982, Case C-270/80 (*Polydor Limited and RSO Records Inc.*), ECR 1982, p. 329.

⁴ From 25 March 1957, BGBl II p. 766.

⁵ Hermann Reichold, Aktuelle Rechtsprechung des EuGH zum Europäischen Arbeitsrecht, Juristenzeitung (JZ) 2006, p. 549.

⁶ Stefan Huster, Gleichheit im Mehrebenensystem, Europarecht (EuR) 2010, p. 325 (332).

⁷ For the guidelines issued in this regard, see Manfred Husmann, Die Richtlinie 79/7 im Lichte der Rechtsprechung des Europäischen Gerichtshofs, Rentenversicherung (RV) aktuell 2010, p. 100.

⁸ Hermann Reichold, loc. cit., p. 549.

⁹ Ulrich Becker, Sozialrecht in der europäischen Integration - eine Zwischenbilanz, Zeitschrift für die sozialrechtliche Praxis (ZFSH/SGB) 2007, p. 134.

This first phase of the development also includes what was derided as the "postage paragraph"¹⁰. Section 611a of the old version of the German Civil Code (BGB)¹¹, which, in implementing a directive based on Article 119 of the EEC Treaty¹², initially simply "lacked bite". The worst punishment for a company that discriminated against a woman when awarding a job in violation of equality was that it had to reimburse her for the postage and envelope for the application: a loss that any company could probably easily cope with¹³. A breath of fresh air in the cautious ruling practice of the labour courts was only brought about by a case decided by the ECJ in 1984, which was brought about by a referral from the Hamm Labour Court. The plaintiffs in the original proceedings, Colson and Kamann, had invoked Section 611a of the German Civil Code (BGB) due to rejection of their application to a prison and were successful with their claim on the merits. The ECJ countered the compensation of only DM 7.20 awarded by the Labour Court by stating that the damages must not only adequately compensate for the loss suffered by the discriminated job applicants, but must also have a deterrent effect against further discrimination¹⁴.

However, protection against discrimination in Community law was only really accelerated with the EC Treaty¹⁵, which was accompanied by a considerable extension of the prohibition of discrimination. While the Treaty of Maastricht¹⁶ still did not contain any changes to the prohibitions of discrimination, which had previously only been granted in certain areas, the Treaty of Amsterdam¹⁷ laid the foundation for the comprehensive promotion of equality between men and women - in the sense of gender mainstreaming - at the level of primary law. The newly inserted Art. 3 para. 2 TEC (now Art. 8 TFEU) stipulated that the Community should endeavour to eliminate inequalities and promote equality between men and women in its activities referred to in Art. 3 para. 1 TEC. The promotion with a cross-cutting clause, which covered all Community/Union policy areas such as transport policy, competition policy, environmental policy, development policy or energy policy, aimed to accelerate the development of gender equality and achieve sustainability in this regard¹⁸. By declaring equality bet-

¹⁰ Christian Rolfs, Aktuelle Rechtsprechung und Praxisfragen zur Benachteiligung wegen des Geschlechts, Neue Juristische Wochenschrift (NJW) 2009, p. 3329; the term goes back to Manfred Zuleeg, Gleicher Zugang von Männern und Frauen zu beruflicher Tätigkeit, Recht der Arbeit (RdA) 1984, p. 325.

¹¹ Inserted by the Act on Equal Treatment of Men and Women in the Workplace and on the Preservation of Entitlements in the Event of a Transfer of Undertakings of 13 August 1980, Federal Law Gazette I p. 1308.

¹² Council Directive 76/207/EEC of 9 February 1976 on the implementation of the principle of equal treatment for men and women as regards access to employment, vocational training and promotion, and working conditions ("Equal Treatment Directive"), OJ L 39, 14 February 1976, p. 40.

¹³ The "Portoparagraph" - Deutschlandfunk, PISApplus from 28 August 2010.

¹⁴ ECJ, judgement of 10 April 1984, Case C-14/83 (Colson and Kamann), ECR 1984, p. 1891.

¹⁵ Treaty establishing the European Community as amended by the Treaties of Maastricht, Amsterdam and Nice.

¹⁶ From 7 February 1992, entered into force on 1 November 1993.

¹⁷ From 2 October 1997, entered into force on 1 May 1999.

¹⁸ Renate Pirstner-Ebner, Neue Gemeinschaftsrechtsentwicklungen im Bereich des Gender-Mainstreaming, European Journal of Economic Law (EuZW) 2004, p. 205.

ween men and women to be a Community task and, in conjunction with Art. 3 para. 2 TEC, establishing a positive obligation on the part of the Community that was of equal importance to other Community tasks and objectives, Art. 2 TEC made the gender equality policy especially weighty¹⁹.

The likewise newly inserted Art. 13 TEC (now Art. 19 TFEU) has further extended the protection against discrimination through a comprehensive prohibition of discrimination on grounds of sex, racial or ethnic origin, religion or belief, disability, age or sexual orientation. However, in order for Article 13(1) of the EC Treaty to become effective, the respective prohibition of discrimination had to be specified in concrete terms by means of Council directives or measures²⁰. Article 13 TEC was also the authorising basis for the newly added secondary law measures of the Community legislator, which were later accompanied by a reorientation of subjective public rights in Union law²¹.

The Community legislator "entered" this "new territory" with Council Directive 2000/43 of 29 June 2000, implementing the principle of equal treatment between persons, irrespective of racial or ethnic origin ("Racial Equality Directive")²², the scope of which, unlike the gender directives of the first stage²³, was extended beyond the area of gender equality to all areas of life such as access to and supply of goods and provision of services available to the public, including access to housing. Directive 2002/73 of the European Parliament and of the Council of 23 September 2002²⁴ merely amended Council Directive 76/207 EEC of 9 February 1976 ("Equal Treatment Directive")²⁵ and, like the latter, was therefore limited to labour law. Council Directive 2000/78 of 27 November 2000, establishing a framework for equal treatment in employment and occupation ("Framework Directive")²⁶, prohibited discrimination in this area on the grounds of religion or belief, disability, age or sexual orientation. Council Directive 2004/113 EC of 13 December 2004²⁷ took gender equality out of the Racial Equality Directive and therefore concerned the same matters in this area and also applied to private law relationships²⁸.

¹⁹ Renate Pirstner-Ebner, loc. cit., p. 206.

²⁰ Cf. Martin Rungaldier, Aktuelle Tendenzen in der europäischen Rechtsentwicklung, insbesondere hinsichtlich des Alters und der Arbeitszeit, RdA 2009, Sonderbeilage Heft 5, p. 40.

²¹ Thorsten Kingreen, Grundrechtsverbund oder Grundrechtsunion - Zur Entwicklung der subjektiv-öffentlichen Rechte im europäischen Unionsrecht, EuR 2010, p. 338, 339.

²² OJ 2000 No L 180, p. 22.

²³ Council Directive 75/117/EEC of 10 February 1975 ("Equal Pay Directive"), Council Directive 76/207/EEC of 9 February 1976 ("Equal Treatment Directive") and Council Directive 79/7 EEC of 19 December 1978 ("Directive on statutory security schemes").

²⁴ OJ No L 269, 5 October 2002, p. 15.

²⁵ Council Directive 76/207/EEC of 9 February 1976 on the implementation of the principle of equal treatment for men and women as regards access to employment, vocational training and promotion, and working conditions.

²⁶ OJ 2000 No. L 303, p. 16.

²⁷ OJ 2004 No. L 373, p. 37.

²⁸ Thorsten Kingreen, loc. cit., p. 339.

The final stage in the development of equality rights in Europe is crowned by the Charter of Fundamental Rights of the European Union (CFR), which became legally binding when the Treaty of Lisbon came into force on 1 December 2009. Unlike the Constitutional Treaty, the CFR has not been incorporated into the treaties. Instead, the Union has expressly recognised the rights, freedoms and fundamental rights laid down in the Charter of Fundamental Rights by reference in Article 6(1) of the Treaty on European Union (TEU) and has designated the Charter as the primary source of fundamental rights. Furthermore, the CFR's status as primary law is determined by its equal status with the treaties. In seven titles, the CFR contains a comprehensive catalogue of rights, freedoms and principles that not only go beyond the guarantees recognised as general principles of Community/Union law, but also exceed the rights to freedom and equality in the German Basic Law in terms of content. What is new above all is the equal inclusion of social rights in Title IV of the Charter, which is entitled "Solidarity"²⁹. In addition, so-called modern or innovative fundamental rights, which take up more recent social and technical developments such as data protection, consumer protection or biomedicine, are different from the German Basic Law. Finally, Title III on equality, which contains many specific prohibitions of discrimination in addition to a general principle of equality, takes up a great deal of space.

3. Areas of Protection of the Prohibition of Discrimination - ECJ Case Law

3.1. Discrimination on the Basis of Gender

3.1.1. Cases of "Defrenne I-III" - In the "Defrenne" decisions from the 1970s, the ECJ made fundamental statements on the equal treatment of men and women with regard to the pay of male and female employees. The decisions were based on legal disputes between a (former) stewardess and her employer, the Belgian Sabena Public Limited Company, in which she was pursuing compensation claims for wage discrimination against her male colleagues who performed the same work as "pursers"³⁰. The reason for a referral to the ECJ at this time was not only the lower pay of the stewardesses for the same work. According to a provision of the Belgian Arrêté royal of 3 November 1969, stewardesses were also excluded from the special regulation on retirement pensions for civil aviation personnel. The ECJ did not agree with the plaintiff, who saw this as a violation of the principle of equality enshrined in Article 119 of the EEC Treaty because the pension entitlement was part of the "remuneration" defined in Article 119(2) of the EEC Treaty as remuneration owed indirectly by the employer. The ECJ excluded social security systems or benefits directly regulated by law, in particular old-age pension schemes, from the definition of remuneration in Art. 119 of the

²⁹ Eckhart Pache/Franziska Rösch, Europäischer Grundrechtsschutz nach Lissabon - Die Rolle der EMRK und der Grundrechtecharta in der EU, EuZW 2008, p. 519 (520).

³⁰ ECJ, judgement of 8 April 1976, Case C-43/75 (Defrenne II), ECR 1976, p. 455; ECJ, judgement of 15 June 1978, Case C-149/77 (Defrenne III), ECR 1978, p. 1365.

EEC Treaty³¹. According to the ECJ, the principle of equal pay enshrined therein, which is a specific expression of the general principle of equality, is one of the foundations of the Community. Although Art. 119 of the EEC Treaty expressly only addressed the Member States, in the opinion of the ECJ, it also granted employees their own rights which, in the event of discrimination, applied not only to public authorities, but also directly to legal relationships between private individuals³², i.e. it had a horizontal effect.

In the "*Lawrence and Others*" decision³³, the ECJ restricted the principle that equal pay must be granted for equal work or work of equal value, regardless of whether it is performed by a man or a woman. The reason for the decision was the difference in payment for canteen and cleaning services in school facilities. Following the (contractual) transfer of services to a private company, the ECJ had to decide whether the lower remuneration of women constituted discrimination on grounds of sex if equivalent activities were carried out by different employers. It found that Art. 141 para. 1 EC Treaty does not contain any reference to the fact that the work must be carried out for one and the same employer. In the opinion of the ECJ, however, the criteria already established in the "*Defrenne II*" case, according to which a single source responsible for the unequal treatment, such as a collective agreement, is sufficient, were not fulfilled. The provision therefore only covered gender-related differences in the same sector or within the same group; large-scale compensation for labour market-related gender discrimination was therefore ruled out³⁴.

The ECJ reaffirmed its fundamental statements on equal pay in the "*Cadman*" case³⁵, which concerned the criterion of seniority (anciennity) as a factor determining pay, the application of which resulted in pay inequalities between male and female employees.

3.1.2. Case of "*Dekker*" - The consistent (implementation of) the advancement of women can also be demonstrated by the ECJ's case law on equal treatment for pregnant women. The subject of the "*Dekker*" decision³⁶ was the refusal of an employer to conclude an employment contract with a female applicant who had been deemed to be suitable by a selection committee. The employer based its refusal on the fact that the applicant was pregnant when she submitted her application, which would lead to financial disadvantages for the employer if the applicant were hired due to her absence linked to pregnancy. As the refusal to hire was not directly linked to gender, the ECJ had to decide whether this behaviour could constitute direct discrimination based on gender at all. The ECJ considered it decisive whether the reason for the refusal could

³¹ ECJ, judgement of 25 May 1971, Case C-80/70 (*Defrenne I*), ECR 1971, p. 445.

³² ECJ, judgement of 8 April 1976, Case C-43/75 (*Defrenne II*), loc. cit.

³³ ECJ, judgement of 17 September 2002, Case C-320/00 (*Lawrence and others*), ECR 2002, p. I-7325.

³⁴ Hermann Reichold, loc. cit., p. 549 (550).

³⁵ ECJ, judgement of 3 October 2006, Case C-17/05 (*Cadman*), ECLI:EU:C:2006:633.

³⁶ ECJ, judgement of 8 November 1990, Case C-177/88 (*Dekker*), ECR 1990, p. I-3941.

apply indiscriminately to both sexes or (by its nature) exclusively to one of the two sexes. Pregnancy can therefore be considered as a factor leading to discrimination, even if only women have applied for the job.

Even before Directive 92/85³⁷ came into force, the ECJ had also granted pregnant women protection against dismissal and ruled that, on the basis of the principle of non-discrimination and in particular Art. 2 para. 1 and Art. 5 para. 1 of Directive 76/207, a woman must be granted protection against dismissal not only during maternity leave, but also throughout her pregnancy. The Court stated that dismissal during the relevant periods could (by its very nature) only affect women and should therefore be regarded as direct discrimination on the grounds of sex³⁸.

3.1.3. Case of "Kleist" - In the "*Kleist*" case³⁹, the plaintiff, employed by a pension insurance institution as a senior doctor, defended herself against her dismissal upon reaching the age of 60. The dismissal was based on the pension insurance institution's decision to dismiss all employees who fulfilled the requirements for retirement in accordance with the relevant regulations⁴⁰. The ECJ first stated that the application of the principle of equal treatment with regard to the conditions of dismissal in accordance with Art. 3 para. 1 lit. c) of Directive 76/207 precludes both direct and indirect discrimination on the grounds of sex. The ECJ also includes such an age limit for the mandatory departure of employees under the term "dismissal" in this provision, if this departure entails the granting of retirement pension. In principle, the ECJ considers a dismissal policy that is linked to the entitlement to old-age pension to be discriminatory if women achieve this entitlement at an earlier age (five years) than men. Consistently, it also affirms direct discrimination prohibited by the Directive in the event that a national regulation allows an employer to make such dismissals in order to promote access to employment for younger people.

3.2. Discrimination on the Basis of Disability

In the "*Chacon Navas*" case⁴¹, for the first time, the ECJ dealt with the prohibition of discrimination on the grounds of disability covered by Directive 2000/78⁴². In the main proceedings, the plaintiff challenged the termination of her employment rela-

³⁷ Council Directive 92/85/EEC of 19 October 1992 on the introduction of measures to encourage improvements in the safety and health at work of pregnant workers and workers who have recently given birth or are breastfeeding (tenth individual Directive within the meaning of Article 16(1) of Directive 89/391/EEC), OJ L 348, 28 November 1992, p. 1.

³⁸ ECJ, judgements of 8 November 1990, Case C-179/88 (*Handels- og Kontorfunktionærernes Forbund*), ECR 1990, p. I-3979, and of 30 June 1998, Case C-394/96 (*Brown*), ECR 1998, p. I-4185.

³⁹ ECJ, judgement of 18 November 2010, Case C-356/09 (*Kleist*), ECLI:EU:C:2010:703.

⁴⁰ Service Regulations B for doctors and dentists working for the Austrian social insurance institutions.

⁴¹ ECJ, judgement of 11 July 2006, Case C-13/05 (*Chacon Navas*), ECLI:EU:C:2006:456.

⁴² Council Directive 2000/78/EC of 27 November 2000 establishing a general framework for equal treatment in employment and occupation, OJ L 303, 2 December 2000, p. 16.

onship, which had been sent to her by her employer after a long period of sick leave without giving any further reasons. At the same time, the employer had recognised the unlawfulness of her dismissal and offered the plaintiff compensation. In her lawsuit, the dismissed employee claimed that the dismissal was null and void and requested that the employer be ordered to reinstate her. Under Spanish law⁴³ - the case was held in Spain - "unilateral decisions by the employer that lead to direct or indirect discrimination on the grounds of age or disability are considered null and void". Against this background, the referring Spanish court had primarily asked the ECJ whether the general framework established under Directive 2000/78 guaranteed protection of a person who had been dismissed by their employer solely on the grounds of illness. Within the meaning of Directive 2000/78, the interpretation of the term "disability", which, according to the ECJ, must be carried out autonomously and uniformly, leads to the conclusion that a person dismissed by his or her employer solely on the grounds of illness is not covered by the general framework established under Directive 2000/78 to combat discrimination on the grounds of disability. The ECJ then defined the concept of disability as a limitation that does not have to be exclusively attributable to physical, mental or psychological impairments. It is then sufficient, if the disability generally constitutes a hindrance to the participation of the person concerned in employment. Therefore, the ECJ's decision is based on a social concept of disability, not a medical concept of disability⁴⁴. It states that Article 13 of the EC Treaty does not apply to discrimination on the grounds of illness, and therefore, illness cannot constitute further ground for prohibition of discrimination within the meaning of Directive 2000/78.

3.3. Discrimination on the Grounds of Age

3.3.1. Case of "Mangold" - Subject of the "*Mangold*" decision⁴⁵ was the fixed-term agreement based on Section 14 para. 3 sentence 4 of the German Part-Time and Fixed-Term Employment Act (TzBfG)⁴⁶ in an employment contract concluded by the plaintiff Mangold with his employer in 2003. According to this provision, the limitation of an employment relationship did not require an objective reason if the employee had attained the age of 52 at the start of the employment relationship⁴⁷. In principle, the ECJ considered the disputed provision of the TzBfG to be compatible with the provi-

⁴³ Article 17(1) of the Law on the Status of Employees, as amended by Law 62/2003 of 30 December 2003 introducing fiscal, administrative and social measures (BOE No. 313 of 31 December 2003, p. 46874), which transposed the Directive into Spanish law.

⁴⁴ Ninon Colneric, Antidiskriminierung - quo vadis?, Neue Zeitschrift für Arbeitsrecht (NZA), Supplement 2/2008, p. 66 (72).

⁴⁵ ECJ, judgement of 22 November 2005, case C-144/04 (*Mangold*), loc. cit.

⁴⁶ Act on Part-Time Work and Fixed-Term Employment Contracts and on the Amendment and Repeal of Labour Law Provisions of 21 December 2000, Federal Law Gazette I, p. 1966, amended by the First Act on Modern Services on the Labour Market of 23 December 2002, Federal Law Gazette I, p. 4607.

⁴⁷ According to the version of the regulation that came into force on 1 January 2003 (in force until 31 December 2006; thereafter: from the age of 58).

sions of Community law on the protection of employees because it served precisely to promote the employment of older workers. However, the ECJ ultimately agreed with the plaintiff, who had argued that the fixed-term agreement based on Section 14 (3) TzBfG was incompatible with Directive 2000/78. The unrestricted act of linking the provision to the attainment of 52 years of age constituted discrimination based directly on age, which was prohibited by the Framework Directive. The ECJ examined the justification of the unequal treatment on the basis of Art. 6 (1) of Directive 2000/78, which required a legitimate aim and proportionality. The employment policy objective, which it considered to be legitimate in principle, was countered by the fact that a large group of employees, defined solely on the basis of age, would run the risk of being excluded from permanent employment for a significant part of their work lives. Against this background, the ECJ held that a regulation contradicted the principle of proportionality if it used age as the sole criterion for a fixed term, without taking into account other circumstances such as the structure of the respective labour market or the personal situation of the person concerned.

3.3.2. Case of "Palacios de la Villa" - The decision in the *Palacios de la Villa case*⁴⁸, which concerned a collective agreement provision for the purpose of promoting employment; this provided for compulsory retirement upon attaining the age limit of 65 if the employee concerned had fulfilled the required qualifying period for drawing old-age pension; it is also related to the prohibition of age discrimination. In its decision, the ECJ found that even though a national provision with this content led to unequal treatment based directly on age within the meaning of the Framework Directive, this unequal treatment was justified under Art. 6 of the Directive. The ECJ considered the labour policy objective pursued by the collective agreement provision an issue, namely to promote access to employment and regulate the labour market in order to curb unemployment, to be legitimate, and the measures based on this – to be proportionate. If the national regulation does not contain more precise information, the objective can also be derived from the general context of the measure in question.

3.3.3. Case of "Küçükdeveci" - The subject of the *"Küçükdeveci" decision*⁴⁹, which concerned German law, was the calculation of an employee's notice period. Although the plaintiff, who had entered the employment relationship at the age of 18, had already been employed by the employer for ten years at the time of termination, the employer calculated the notice period on the basis of a period of employment of only three years and based this on Section 622 (1) sentence 2 BGB (old version). According to this, periods before the age of 25 were not taken into account when calculating the notice pe-

⁴⁸ ECJ, judgement of 16 October 2007, Case C-411/05 ((Palacios de la Villa), ECLI:EU:C:2007:604.

⁴⁹ ECJ, judgement of 19 January 2010, case C-555/07 (Küçükdeveci), ECLI:EU:C:2010:21.

riod. The plaintiff considered this to be discrimination on the grounds of age, which is why the provision should not be applied. In the opinion of the ECJ, the discrimination of young employees by this provision depending on when they started work, also constituted an unjustified violation of the prohibition of discrimination on the grounds of age, as specified by the Directive.

4. Once Again: Prohibition of Gender Discrimination

4.1. Art. 21 CFR - Non-Discrimination

Non-discrimination on the basis of sex is regulated in Art. 21 CFR. Art. 21 (1) CFR is closely linked to Art. 19 TFEU. The provision explicitly states that measures can be taken to combat various forms of gender discrimination⁵⁰. However, non-discrimination within the meaning of the CFR and Art. 19 TFEU, differ in terms of their scope of application. In contrast to Art. 19 TFEU, Art. 21 CFR does not state that the European Union is authorised to determine measures to combat the respective discrimination. The standard deals with discrimination on grounds of sex by the respective bodies of the European Union. Therefore, Art. 21 CFR does not affect Art. 19 TFEU in any way. At the time it was drafted, the individual grounds of non-discrimination in Art. 21 CFR were still exhaustively regulated. Today, however, a demonstrative list is assumed; the characteristics regulated in this standard are only exemplary in nature.

In the event of violation of Art. 21 CFR, there are several forms of correction: either the legislator extends the more favourable provision to the discriminated group or the discriminated persons, or it treats everyone equally and eliminates the more favourable provision⁵¹:

All in all, the fundamental rights standard serves as a good opportunity to defend oneself against gender discrimination. However, it does not cover so-called indirect discrimination. Here what is helpful is that the characteristics of Art. 21 CFR are not exhaustively regulated anyway so that direct discrimination based on another characteristic not listed in the catalogue can be claimed at any time. In any case, the general principle of equality in Art. 20 CFR applies to so-called indirect discrimination. What should also be kept in mind is that the fundamental rights standard does not contain an absolute prohibition, but only a relative prohibition because there is still the possibility of justifying discrimination.

⁵⁰ Heinrich Wolfgang in: Carl-Otto Lenz/Klaus-Dieter Borchardt (eds.), EU-Verträge, Kommentar, 2nd ed., 2012, Art.21 CFR para. 1.

⁵¹ Hans Dieter Jarass, Charter of Fundamental Rights of the European Union, Commentary, 4th edition, 2020, Art. 21 para. 5.

4.2. Art. 23 CFR - Equality between Women and Men

Art. 23 CFR is based on two provisions, Art. 3 TEU and Art. 157 TFEU. In principle, Art. 23 para. 2 CFR corresponds to Art. 157 para. 4 TFEU⁵². The aim of this provision is to "promote equality between women and men"⁵³. The intention was to establish an independent provision to enshrine the equality of both genders; furthermore, the aim was to regulate so-called positive discrimination. Such positive discrimination can occur if, for example, a measure puts a woman in a better position than a man. Ultimately, Art. 23 CFR developed from this.

The provisions of the TEU and the TFEU were therefore the model or basis for Art. 23 CFR. However, Art. 3 para. 3 TEU and Art. 10 TFEU also serve to prevent gender discrimination. Furthermore, the CFR aims to prevent differentiation and achieve equality.

If Art. 23 CFR is not relevant in certain constellations, anyone affected by gender discrimination can invoke the general principle of equality in Art. 20 CFR. This provision is there to guarantee equality. Another key advantage of this provision is that Art. 20 CFR can be invoked directly before a court.

4.3. The Fundamental Rights Approach to Gender Discrimination

To sum up, there are several legal grounds in the CFR for taking action against gender discrimination. However, it depends on the context in which such gender discrimination occurs. Art. 20 CFR is rarely applied to gender discrimination because the special prohibitions of discrimination, namely non-discrimination and equality of the sexes under Art. 21 and Art. 23 CFR, are relevant here. There is no general consensus as to whether legal persons under public law are also covered by the scope of protection of Art. 20 CFR. Gender discrimination can be justified if there is an objective justification that also complies with the principle of proportionality. In the context of Art. 20 CFR, no distinction is made between so-called indirect and direct discrimination. Art. 23 CFR also contains the obligation to protect equality. However, this does not mean that the citizen has a claim against the State for a specific measure within the meaning of Art. 23 para. 2 CFR.

5. Conclusion: Anti-Discrimination in the European Judicial Area Today

The European Community/Union has pursued a systematic anti-discrimination policy in recent decades. Based on the past experiences of the Member States, measures have been taken in primary and secondary law to protect many disadvantaged groups of the population from discrimination. The four already mentioned central anti-discrimi-

⁵² Heinrich Wolfgang in: Carl-Otto Lenz/Klaus-Dieter Borchardt (eds.), loc. cit., Art. 23 para. 1.

⁵³ Georg Blauensteiner/Gerhard Oswald/Bernd Weinhandl in: Michael Holoubek/Georg Lienbacher (eds.), CFR Commentary, 2014, Art. 23 p.312.

mination directives, which oblige the Member States of the Union to establish and enforce legal standards to combat discrimination and apply the principle of equal treatment, should be mentioned here. The directives contain a ban on direct and indirect discrimination. This also covers simple harassment ("unwanted behaviour") which has the effect of violating the dignity of the person concerned and creating an environment characterised by intimidation, hostility, humiliation, degradation or insults⁵⁴. The directives also require a the country's guarantee for effective legal protection.

The topic of "equality in the European judicial area" has been significantly upgraded by the Charter of Fundamental Rights. It begins in Title III with a general principle of equality (Art. 20) and then (Art. 21 and Art. 23) contains many prohibitions of discrimination that are to be regarded as special principles of equality. In addition to the grounds for non-discrimination in Art. 19 para. 1 TFEU, the Charter of Fundamental Rights also prohibits discrimination on the following grounds: social origin, genetic characteristics, language, political or other opinion, membership of a national minority, property and birth.

⁵⁴ Thus expressly Art. 2 para. 3 of Directives 2000/43 and 2000/78.

Reference list (գրականության ցանկ, список литературы)

- 1.N. Colneric, Antidiskriminierung – quo vadis?, NZA, ISSN 0943-7525, 2008, p. 66.
- N. Colneric, Anti-discrimination – quo vadis?, NZA, ISSN 0943-7525, 2008, p. 66.
- 2.St. Huster, Gleichheit im Mehrebenensystem, EuR, ISSN 0531-2485, 2010, p. 325.
- St. Huster, Equality in the multi-level system, EuR, ISSN 0531-2485, 2010, p. 325.
- 3.R. Pirstner-Ebener, Neue Gemeinschaftsrechtsentwicklungen im Bereich des Gender-Mainstreaming, EuZW, ISSN 0937-7204, 2009, p. 205.
- R. Pirstner-Ebener, New developments in Community law in the field of gender mainstreaming, EuZW, ISSN 0937-7204, 2009, p. 205.
- 4.H. Reichold, Aktuelle Rechtsprechung des EuGH zum Europäischen Arbeitsrecht, JZ, ISSN 0022-6882, 2006, p. 549.
- H. Reichold, Current case law of the ECJ on European labour law, JZ, ISSN 0022-6882, 2006, p. 549.
- 5.Chr. Rolfs, Aktuelle Rechtsprechung und Praxisfragen zur Benachteiligung wegen des Geschlechts, NJW, ISSN 0341-1915, 2009, p. 3329.
- Chr. Rolfs, Current case law and practical issues relating to discrimination on grounds of sex, NJW, ISSN 0341-1915, 2009, p. 3329.
- 6.Judgement of the Court of Justice of the European Community in the Case C-43/75, Defrenne II, 8 April 1976, ECR 1976, p. 455.
- 7.Judgement of the Court of Justice of the European Community in the Case C-149/77, Defrenne III, 15 June 1978, ECR 1978, p. 1365.
- 8.Judgement of the Court of Justice of the European Community in the Case C-177/88, Dekker, 8 November 1990, ECR 1990, p. I-3941.
9. Judgement of the Court of Justice of the European Union in the Case C-144/04, Mangold, 22 November 2005, ECLI:EU:C:2005:709.
- 10.Judgement of the Court of Justice of the European Union in the Case C-13/05, Chacon Navas, 11 July 2006, ECLI:EU:C:2006:456.
- 11.Judgement of the Court of Justice of the European Union in the Case of C-411/05, Palacios de la Villa, 16 October 2007, ECLI:EU:C:2007:604.
- 12.Judgement of the Court of Justice of the European Union in the Case C-555/07, Küçükdeveci, 19 January 2010, ECLI:EU:C:2010:21.
- 13.Judgement of the Court of Justice of the European Union in the Case of C-356/09, Kleist, 18 November 2010, ECLI:EU:C:2010:703.

Նորբերթ Բերնադորֆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, Մարբուրգի Ֆիլիպսի անվան համալսարանի պատվավոր պրոֆեսոր, Հիմնարար իրավունքների Եվրոպական միության խարտիայի ազգային փորձագետ (Վիեննայում), Գերմանիայի դաշնային սոցիալական դատարանի նախկին դատավոր, ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ

Բեռինա Կուկար-Սեդեր

Իրավաբանական գիտությունների դոկտոր, «Inclusive Didactics» («Ներառական դիդակտիկա») և «Frauenförderung and Gender Mainstreaming» («Կանանց իրավահավասարության աջակցում և գենդերային ինտեգրում») ամսագրերի խմբագիր, «Genderperspektiven für die European Studies» («Գենդերային հեռանկարների ոլորտում եվրոպական ևսումնասիրությունների») ինստիտուտի ղեկավար, Գենդերային հավասարության միջազգային ինստիտուտի աշխատակազմի անդամ

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ. ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ¹

Համառոտագիր

Ներկայացված հոդվածը ցույց է տալիս, որ հավասարության և խտրականության արգելման սկզբունքները աստիճանաբար հաստատվել են Եվրոպական միության իրավական համակարգում՝ որպես զարգացման գործընթացի մաս: Արդարադատության եվրոպական դատարանը վճռորոշ դեր է խաղացել այս սկզբունքների արդյունավետ պաշտպանության ապահովման գործում:

Ի սկզբանե այս սկզբունքներն ամրագրվել են միայն աշխատանքի և սոցիալական ապահովության հետ կապված հարաբերություններում, մինչև որ աստիճանաբար ընդլայնելով դրանց շրջանակն ու կիրառման դաշտը՝ դրանք վերջնականապես ամրագրվել են Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիայում:

Նախ և առաջ գենդերային ինտեգրման մոտեցումը քաղաքական որոշումների կայացման գործընթացի բոլոր փուլերում պետք է լինի անկյունաքարային: Գենդերային ինտեգրումը լրացնում է կանանց ավանդական հավասարությունը:

Այնուամենայնիվ, գենդերային խտրականության արգելքը կարող է բախվել

¹ Հոդվածը ներկայացվել է 07.10.2024 թ., գրախոսվել է 31.10.2024 թ.:

այլ իրավունքների և շահերի հետ, ինչը նշանակում է, որ այս արգելքի սահմանափակումները կարող են արդարացված լինել:

Հիմնաբառեր - հավասարության սկզբունք, հակախտրականություն, գենդերային խտրականություն, գենդեր, հաշմանդամություն և տարիք, գենդերային ինտեգրում, ԱԵԴ, ԱԵԴ նախադեպային իրավունք, Եվրոպական ընդդատության տարածք, Հիմնարար իրավունքների խարտիա, խտրականության արգելք:

Норберт Берндорф

Доктор юридических наук, почетный профессор в Марбургском университете им. Филиппа, национальный ключевой эксперт Европейской хартии основополагающих прав (в Венне), бывший судья федерального суда по социальным делам Германии, член редакционной коллегии и научно-практического журнала «Законность» Прокуратуры РА

Беттина Кукат-Седлер

Доктор юридических наук, редактор журналов «Inclusive Didactics» («Инклюзивная дидактика») и «Frauenförderung and Gender Main streaming» («Поддержка женского равенства и гендерная интеграция»), руководитель Института «Genderperspektiven für die European Studies» («Европейские исследования гендерных перспектив»), сотрудник Международного института гендерного равенства

ТРЕБОВАНИЯ К РАВЕНСТВУ В ЕВРОПЕЙСКОМ СУДЕБНОМ ПРОСТРАНСТВЕ – ОСОБЫЙ ФОКУС: ГЕНДЕРНАЯ ДИСКРИМИНАЦИЯ¹

Абстракт

В данной статье показано, что принципы равенства и запрета дискриминации постепенно утвердились в правовом порядке Европейского Союза, а именно как часть процесса развития. Европейский суд сыграл решающую роль в обеспечении эффективной защиты этих принципов.

Изначально эти принципы признавались только в отношении занятости и социального обеспечения, пока, по мере постепенного расширения их сферы и области применения, они, наконец, не были четко изложены в Хартии основных прав Европейского Союза.

Прежде всего, подход гендерной интеграции должен применяться на всех этапах процесса принятия политических решений. Гендерная интеграция дополняет традиционное равенство женщин.

Однако запрет гендерной дискриминации может вступать в противоречие с другими правами и интересами, что означает, что ограничения этого запрета могут быть оправданы.

Ключевые слова: принцип равенства; антидискриминация; гендерная дискриминация; гендер; инвалидность и возраст; гендерная интеграция; ЕС; прецедентное право ЕС; европейское судебное пространство; Хартия основных прав; запрет дискриминации.

¹ Статья была представлена 07.10.2024 и прошла рецензирование 31.10.2024.

<https://doi.org/10.59821/18294219-2024.2-agqa02>

Արթուր Ղամբարյան

Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական սպարբերականի խմբագրական խորհրդի անդամ

ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ¹

Համառոտագիր

Հոդվածում քննարկվում է ապացույցի թույլատրելիության սահմանադրաիրավական և քրեադատավարական հիմքերը:

Հեղինակը նշում է, որ ՀՀ Սահմանադրությունում ամրագրված են ապացույցի թույլատրելիության մի քանի խումբ նորմեր: Առաջինը վերաբերում է պաշտոնատար անձի կողմից ապացույց ձեռք բերելու՝ օրենքով նախատեսված լիազորության առկայությանը (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մաս), երկրորդը՝ հիմնական իրավունքների խախտման կամ արդար դատաքննության իրավունքի խաթարմամբ ձեռք բերված ապացույցներին (ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մաս):

Քննչական ենթակայության կանոնների խախտմամբ ձեռք բերված ապացույցները դիտարկվում են ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտման համատեքստում, քանի որ քննչական ենթակայության կանոնները, ըստ էության, այնպիսի դրույթներ են, որոնք քննիչին օժտում են տվյալ վարույթով ապացույցներ հավաքելու (նախաքննություն կատարելու) իրավասությամբ: «Վարույթը (գործը) ենթակա է քննչական մարմնի քննիչին» ձևակերպումը հավասարազոր է «քննչական մարմնի քննիչը տվյալ վարույթով իրավասու է իրականացնել նախաքննություն» ձևակերպմանը:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասի տեսանկյունից արդար դատաքննության իրավունքի խաթարումը չպետք է նույնացնել արդար դատաքննության իրավունքի ցանկացած խախտման հետ: Արդար դատաքննության իրավունքի խաթարումը բարձր ինտենսիվության աստիճանի միջամտությամբ կամ լայն մասշտաբի խախտումներն են:

Հիմնաբառեր – հիմնական իրավունքների խախտում, ապացույց, արդար դատաքննության իրավունքի խաթարում, իրավասություն, քննչական ենթակայություն:

¹ Հոդվածը ներկայացվել է 21.06.2024 թ., գրախոսվել է 25.10.2024 թ.:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պատմական ակնարկ

ՀՀ Սահմանադրությունում ամրագրված է ապացույցի թույլատրելիությանը վերաբերող երկու նորմ: Առաջինը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասն է, որը պարունակում է ապացույց ձեռք բերող իրավասու սուբյեկտին վերաբերող՝ ապացույցի թույլատրելիության կանոն, իսկ երկրորդը ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասն է, որը պարունակում է ապացույց ձեռք բերելիս մարդու հիմնական իրավունքներին վերաբերող՝ ապացույցի թույլատրելիության կանոն:

Ներկայումս ապացույցի թույլատրելիությունը ապացույցի ինքնավար հատկանիշ է, մինչդեռ եղել են ժամանակաշրջաններ, երբ ապացույցի թույլատրելիությունը որոշվել է վերաբերելիությամբ, այսինքն՝ ապացույցի թույլատրելիությունը միշտ չէ, որ ճանաչվել է ապացույցի ինքնավար հատկանիշ: Օրինակ՝ ԱՄՆ քրեական դատավարությունում ոչ բոլոր ժամանակներում է ապացույցի թույլատրելիությունը ճանաչվել որպես ապացույցի հատկանիշ: ԱՄՆ գերագույն դատարանն ապացույցի թույլատրելիության (ապացույցի բացառման կանոնի) վերաբերյալ առաջին գործը, որը կապված էր խուզարկությունների և առգրավումների հետ, քննել է 1886 թ.-ին, երբ որոշում կայացրեց, որ հանցագործության մասին վկայող տվյալներ պարունակող փաստաթղթերը հարկադրաբար բացելը խախտում է կասկածյալի՝ չհիմնավորված խուզարկությունից և առգրավումից պաշտպանվելու սահմանադրական իրավունքը, ուստի այդպիսի առարկաները դատական վարույթի ընթացքում օգտագործելն անթույլատրելի է (Boyd v. United States, 1886): Իսկ 1914 թ. «Ուիքսն ընդդեմ Միացյալ Նահանգների» (Weeks v. United States, 232 US 383 (1914)) գործով ԱՄՆ գերագույն դատարանը, որոշեց, որ դաշնային բոլոր քրեական գործերով դաշնային մարմինների կողմից ապօրինի ձեռք բերված ապացույցները ենթակա են բացառման (անթույլատրելի են): ԱՄՆ գերագույն դատարանը հայտարարել է, որ դատարանների և նրանց պաշտոնատար անձանց ջանքերն ուղղված մեղավորներին պատասխանատվության ենթարկելու, որքան էլ գովելի լինեն, չպետք է զոհաբերեն երկրի հիմնական օրենքում արտացոլված այն հիմնարար սկզբունքները, որոնք հաստատվել են տարիների ջանքերի և տառապանքների արդյունքում. օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն օգտագործելը կնշանակեր, որ դատարանը վավերացնում է ոստիկանության կողմից Սահմանադրության արգելքների բացահայտ անտեսումը:² Այս կանոնի ներմուծումը ցնցող ազդեցություն ունեցավ ամերիկյան իրավական համակարգի համար, այն իմաստով, որ, ինչպես նշել է ԱՄՆ գերագույն դատարանի դատավոր Կարդոզոն, «հանցագործին (...) ազատ են արձակում զուտ այն պատճառով, որ ոստիկանը սխալ է թույլ տվել» (People v. Defore, 242 NY 13, 2 1, 150 NE 585,587 (1926))³:

² Барабанов П.К., Уголовный процесс в США. М.: Изд. «Спутник +», 2023. С. 295.

³ Недопустимость доказательств в уголовном процессе Российской Федерации и государств англо-американской и романо-германской правовых семей: учебное пособие. Под науч. ред. А. Г. Волеводза. М.: Изд. Прометей, 2022. С. 55-56.

Քրեական արդարադատության համակարգում ապացույցի թույլատրելիության ինստիտուտի ներմուծումը հիմնավորման կարիք ունի:

1.2. Ապացույցի թույլատրելիության հիմնավորումները

Ընդհանուր առմամբ, ապացույցների թույլատրելիության ինստիտուտը լուծում է հետևյալ խնդիրները.

Առաջին խնդիրը ապացույց հավաքելիս թույլ տրված իրավախախտման գոհին, հիմնականում՝ մեղադրյալին, հատուցելն է, այսինքն՝ նրա մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելն է: Այս խնդիրը միանշանակ չի ընկալվում, օրինակ՝ կան դատավարագետներ, որոնք կարծում են, որ թույլատրելիության կանոնը ծայրահեղ անհամաչափ է հանցագործության կատարմանը, և մարդու իրավունքների խախտումը պետք է հատուցել ոչ թե փաստական տվյալն անթույլատրելի ճանաչելու, այլ դրամական հատուցում տալու եղանակով:

Երկրորդը հետագայում նման խախտումների կանխումն է: Կանադացի մասնագետները նշում են, որ իրավունքի խախտմամբ ձեռք բերված ապացույցի բացառման (անթույլատրելի ճանաչելու) իրավունքի բացակայությունը կնշանակեր, որ դատարանները լուրջամբ վավերացնում են ոստիկանության թույլ տված խախտումները:⁴ ԱՄՆ-ում հակասահմանադրական ճանապարհով ձեռք բերված տվյալն անթույլատրելի ճանաչելու կանոնը նույնպես հիմնված է զսպող հիմնավորման վրա. հակասահմանադրական եղանակով ձեռք բերված ապացույցները բացառվելու են (ճանաչվելու են անթույլատրելի) միայն այն դեպքում, եթե դրանց բացառումը զսպող ազդեցություն կունենա ոստիկանության վրա: ԱՄՆ դատավորներից մեկը հատուկ կարծիքում նշել է, որ ապացույցը բացառելը (տվյալն անթույլատրելի ճանաչելը - *հեղ.*) միակ միջոցն է «ջանասեր դատախազին համոզելու, որ նա Սահմանադրությունը խախտելուց օգուտ չի ունենա» (Wolf v. Colorado. (1949) 338 US 25):⁵ Եթե խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալների օգտագործումն արգելվում է, ապա դրանով իսկ վերացվում է օրենքը խախտելու շարժառիթը:

Երրորդը դատական իշխանության հեղինակության (դատական իշխանության ամբողջականության) ապահովումն է, որպեսզի դատարանները չհանդիսանան մարդու իրավունքների խախտման մեղսակից կամ առնչակից: Դատական իշխանության հեղինակությունն էապես կվնասվի, եթե հասարակությունը տեսնի, որ դատարանները վավերացնում են քրեական վարույթի հանրային մասնակիցների ոչ իրավաչափ գործողությունները:

⁴ Недопустимость доказательств в уголовном процессе Российской Федерации и государств англо-американской и романо-германской правовых семей: учебное пособие. Под науч. ред. А. Г. Волеводза. М.: Изд. Прометей, 2022. С. 68-69.

⁵ sНедопустимость доказательств в уголовном процессе Российской Федерации и государств англо-американской и романо-германской правовых семей: учебное пособие. Под науч. ред. А. Г. Волеводза. М.: Изд. Прометей, 2022. С. 58.

Այսպիսով՝ իրավահամեմատական տեսանկյունից կարելի է առանձնացնել ապացույցի թույլատրելիության ինստիտուտի երեք խումբ հիմնավորում.

1) *պրոտեկցիոնիստական* հիմնավորում, ըստ որի՝ ապացույցի թույլատրելիության ինստիտուտն անհրաժեշտ է, քանի որ դրանով պաշտպանվում են մարդու իրավունքները,

2) *գուպնան* հիմնավորում, ըստ որի՝ ապացույցի թույլատրելիության ինստիտուտն անհրաժեշտ է, քանի որ դրանով զսպվում է քրեական վարույթի հանրային մասնակիցների ոչ իրավաչափ վարքագիծը,

3) *հեղինակություն* հիմնավորում, ըստ որի՝ ապացույցի թույլատրելիության ինստիտուտն անհրաժեշտ է, քանի որ դատարանները, օրենքի խախտմամբ ձեռք բերված տվյալներն անթույլատրելի ճանաչելով, պահպանում են դատարանների հեղինակությունը. նրանք չեն դառնում քրեական վարույթի հանրային մասնակիցների ապօրինի գործողությունների առնչակիցը կամ մեղսակիցը, որի պարագայում դատական իշխանության հեղինակությանը կհասցվեր կործանարար վնաս:⁶

1.3. Ապացույցների թույլատրելիության ֆորմալացված և նյութական մոտեցումները

Ապացույցի թույլատրելիության հատկանիշը պատշաճ ընկալելու համար կարևոր է ապացույցների թույլատրելիության ֆորմալացված (ձևական) և նյութական մոտեցումների տարբերության գիտակցումը: Քրեական դատավարությունում ապացույցների թույլատրելիության ֆորմալացված մոտեցման դեպքում ապացույցի թույլատրելիությունը կախված է ապացուցողական տվյալի արտաքին վավերապայմաններից (ապացույցի ձեռք բերման կարգից), իսկ նյութական մոտեցման դեպքում՝ նրա բովանդակությունից: Քանի որ հետխորհրդային մի շարք պետություններում մինչդատական վարույթը, ի տարբերություն անգլոսաքսոնական դատավարության, հետախուզական է, ուստի ապացույցների թույլատրելիության ֆորմալացված մոտեցումը համարվում է միակը:⁷

Այս հանգամանքը կարևոր է, որպեսզի հայ իրավակիրառները գիտակցեն, որ Հայաստանի քրեական դատավարությունում ապացույցների թույլատրելիությունն ապացույցի ձևին և ոչ թե բովանդակությանը վերաբերող հատկանիշ է: Եթե քննիչն ապացույցները ձեռք է բերել, օրինակ, քննչական ենթակայության կանոնների խախտմամբ, ապա պետք չէ ենթագիտակցորեն կապ փնտրել քննչական ենթակայության կանոնի խախտման և ապացույցի բովանդակության խաթարման միջև: Այս դեպքում Օրենսդիրը, հիմք ընդունելով ապացույցների թույլատրելիության ֆորմալացված մոտեցումը, քննչական ենթակայության կա-

⁶ Недопустимость доказательств в уголовном процессе Российской Федерации и государств англо-американской и романо-германской правовых семей: учебное пособие. Под науч. ред. А. Г. Волеводза. М.: Изд. Прометей, 2022. С. 79-80.

⁷ Ерпылёв И. В., Допустимость доказательств в уголовном процессе России и зарубежных стран. М.: Изд. Юрлитинформ, 2017. С. 56, 90.

նոնների խախտումն ինքնին (անկախ ապացույցի բովանդակության վրա ազդեցությունից) համարել է փաստական տվյալն անթույլատրելի ճանաչելու հիմք:

Ապացույցների թույլատրելիության ֆորմալացված և նյութական մոտեցումները պետք է տարբերել տվյալներն անթույլատրելի ճանաչելու նյութական և ձևական խախտումներից:

Տվյալներն անթույլատրելի ճանաչելու հիմքերը, ըստ մարդու իրավունքներին միջամտելու հետևանքի, կարող են լինել ձևական և նյութական: Տվյալներն անթույլատրելի ճանաչելու ձևական խախտման (օրենքի էական խախտման) դեպքում մարդու իրավունքներին ինքնին (անմիջական) միջամտություն տեղի չի ունենում, այսինքն՝ Օրենսդիրն այս կամ այն նորմի էական խախտումը համարում է տվյալն անթույլատրելի ճանաչելու հիմք՝ անկախ նրանից՝ այդ խախտմամբ մարդու իրավունքներ սահմանափակվել են, թե ոչ: Օրինակ՝ Օրենսդիրը համապատասխան ապացուցողական կամ վարույթային այլ գործողություն կատարելու իրավասություն չունեցող անձի կողմից ապացույց (տվյալներ) ձեռք բերելը համարել է ձևական (օրենքի էական) խախտում, քանի որ վարույթային գործողություն կատարելու իրավասություն չունեցող անձի կողմից այդ գործողությունը կատարելն ինքնին մարդու որևէ իրավունք չի խախտում (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ): Մինչդեռ նյութական խախտման դեպքում տեղի է ունենում մարդու իրավունքների միջամտություն (օրինակ՝ խոշտանգումների արգելքի խախտում):

1.4. Ապացույցների թույլատրելիության պոզիտիվ և նեգատիվ կանոնները

Օրենսդիրն ապացույցների թույլատրելիության կանոնները կարող է ձևակերպել պոզիտիվ և նեգատիվ ձևերով (այսուհետ՝ պոզիտիվ և նեգատիվ կանոններ): Թույլատրելիության պոզիտիվ կանոններն օրենքի այն դրույթներն են, որոնք ուղղակիորեն *թույլատրում* են որոշակի հանգամանքները հաստատել օրենքով սահմանված կոնկրետ տեսակի ապացույցով:⁸ Թույլատրելիության պոզիտիվ կանոնները իմպլիցիտ (անուղղակիորեն) արգելում են օրենքում նշված հանգամանքները հաստատել մեկ այլ տեսակի ապացույցով: Այսպես՝ թույլատրելիության պոզիտիվ կանոն է այն նորմը, ըստ որի՝ անձի տարիքը թույլատրվում է հաստատել միայն անձնագրով կամ ծննդյան վկայականով: Նման կանոնի առկայության դեպքում անուղղակիորեն արգելվում է անձի տարիքը հաստատել մեկ այլ տեսակի ապացույցով, օրինակ՝ ցուցմունքով:

⁸ Որոշ հեղինակներ ապացույցի թույլատրելիության կանոնների պոզիտիվ ամրագրման ձևը դիտարկում են առավել լայն՝ այն կապելով նաև օրենքով ապացույցի տեսակների (փաստական տվյալների աղբյուրների) սպառիչ ցանկ սահմանելու և ապացույց հավաքելու եղանակներ թվարկելու հետ: Ապացույցի տեսակների և ապացույց հավաքելու եղանակների սպառիչ ցանկը ներկայացվում է որպես ապացույցի թույլատրելիության կանոնի պոզիտիվ ամրագրման ձև, քանի որ դրանով օրենսդիրն ընդգծում է, որ այլ աղբյուրներից կամ այլ եղանակներով ապացույցներ հավաքելն անթույլատրելի է: Այս մասին տե՛ս Кокорев Л. Д., Кузнецов Н. П., Уголовный процесс: доказательства и доказывание. Воронеж. Изд. Воронежского университета, 1995. С. 129.

Թույլատրելիության նեգատիվ կանոններն այն դրույթներն են, որոնք *արգելում են* օրենքի խախտմամբ ձեռք բերված տվյալներն օգտագործել որպես ապացույց: Թույլատրելիության նեգատիվ կանոն է այն նորմը, ըստ որի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտմամբ ձեռք բերված տվյալներն անթույլատրելի են:

Ինչպես նկատում ենք, օրենսդիրը ապացույցի թույլատրելիության կանոնի ամրագրման պոզիտիվ ձևն ընտրելիս շեշտը դնում է միայն կոնկրետ տեսակի ապացույցի օգտագործման *թույլատրելիության* վրա, իսկ նեգատիվ ձևով ամրագրելու դեպքում՝ տվյալի օգտագործման *անթույլատրելիության* վրա:

Ժամանակակից քրեական դատավարության գիտությունը, ի տարբերություն քաղաքացիական դատավարությանը⁹, ընդհանուր առմամբ մոռացության է մատնել թույլատրելիության կանոնները պոզիտիվ և նեգատիվ ձևով ամրագրելու տարանջատումը¹⁰, մինչդեռ այս տարանջատումը հայտնի էր խորհրդային քրեական դատավարությանը: Այսպես՝ խորհրդային նշանավոր դատավարագետ Մ. Ստրոգովիչը նշել է.

«Ապացույցների թույլատրելիության կանոնները հիմնականում նեգատիվ են: Դրանք սահմանում են, թե որ միջոցները, աղբյուրները չեն թույլատրվում օգտագործել փաստերը պարզելու համար: Դրա հետ մեկտեղ ապացույցների թույլատրելիության կանոնները կարող են ունենալ նաև պոզիտիվ բնույթ. օրինակ՝ օրենքով սահմանվում է, որ որոշակի հանգամանքներ հաստատելու համար անհրաժեշտ են կոնկրետ տեսակի ապացույցներ»¹¹:

Խորհրդային դատավարագետները քննադատության են ենթարկել Մ. Ստրոգովիչի այս մոտեցումը¹², որի հետևանքով քրեական դատավարության մասնագետները հետագայում խուսափել են ապացույցների թույլատրելիության՝ պոզիտիվ և նեգատիվ կանոնների բաժանումից: Այնուամենայնիվ, ժամանակակից մասնագետներն արդարացիորեն առաջարկում են «վերակենդանացնել» ապացույցների թույլատրելիության պոզիտիվ և նեգատիվ կանոնների բաժանումը¹³:

Ապացույցի թույլատրելիության պոզիտիվ (թույլատրող) կանոններն ամրագրված են ՀՀ քր. դատ. օր.-ի 107-րդ հոդվածի 1-ին մասում, որտեղ թվարկված են

⁹Треушников М. К., Судебные доказательства. М.: Изд. Городец 2004. С. 128: Մեդրյան Ս., Ապացույցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում: Եր.: Արդարադատության ակադեմիա, 2020, էջեր 162-166:

¹⁰Բացառություն են, օրինակ, հետևյալ աշխատանքները՝ Кокорев Л. Д., Кузнецов Н. П., Уголовный процесс: доказательства и доказывание. Воронеж. Изд. Воронежского университета, 1995, Кипнис Н. М., Допустимость доказательств в уголовном водстве. М.: Изд. Юристь, 1995.

¹¹Строгович М. С., Курс советского уголовного процесса. Том 1. Основные положения науки советского уголовного процесса. М.: Изд. Наука, 1968. С. 393-394.

¹²Теория доказательств в советском уголовном процессе. Отв. Ред. Н. В. Жогин, изд. 2-е исп. и доп. М.: Изд. Юридическая литература, 1973. С. 232.

¹³Дикарев И. С., Правила допустимости доказательств с позитивным характером в уголовном процессе // Вестник Восточно-Сибирского института МВД России. 2019. № 2. С.112-120.

այն հանգամանքները, որոնք թույլատրվում է հաստատել միայն կոնկրետ տեսակի ապացույցով, օրինակ՝ առողջությանը հասցված վնասի բնույթը կամ ծանրության աստիճանը թույլատրվում է հաստատել միայն դատաբժշկական փորձագետի եզրակացությամբ: Այս կանոնից բխում է, որ առողջությանը հասցված վնասի բնույթը կամ ծանրության աստիճանն այլ տեսակի որևէ ապացույցով, օրինակ՝ բժշկական տեղեկանքներով հաստատելն անթույլատրելի է:

Եթե ապացույցի թույլատրելիության կանոնների պոզիտիվ ամրագրման ձևը դիտարկենք առավել լայն՝ այն կապելով նաև ապացույց ձեռք բերելու եղանակների թույլատրման հետ, ապա կարելի է նշել, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասում իմպլիցիտ (անուղղակի) ամրագրված է ապացույցի թույլատրելիության «պատշաճ սուբյեկտին» վերաբերող պոզիտիվ կանոն, ըստ որի՝ քրեադատավարական կարգավիճակ ունեցող պետական մարմինների (ՀՀ դատարանների, դատախազության, քննչական մարմինների և այլն) ու պաշտոնատար անձանց (դատավորի, դատախազի, քննիչի և այլն) հավաքած ապացույցները թույլատրելի են, եթե այդ մարմինները և անձինք Սահմանադրությամբ կամ օրենքներով լիազորված են կատարելու համապատասխան ապացուցողական գործողությունները (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մաս):

Ապացույցի թույլատրելիության նեգատիվ կանոններն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասում և ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածում:¹⁴ Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասում նեգատիվ (արգելման) ձևով սահմանված է.

«Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատարանության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է»:

Իսկ ապացույցի թույլատրելիության կանոնները քրեական վարույթի ո՞ր մասնակիցներին են հասցեագրված (ո՞ր մասնակցի համար է վարքագծի կանոն սահմանում), քրեական վարույթի ո՞ր մասնակիցների վարքագիծը կարող է խախտել այդ կանոնները՝ միայն պետական մարմինների և պաշտոնատար անձանց, թե՛ նաև քրեական վարույթի մասնավոր մասնակիցների:

1.5. Ապացույցի թույլատրելիության սահմանադրական և քրեադատավարական կանոնների հասցեատերը

Քրեական դատավարությունում ապացույցներ հավաքելու հնարավորությամբ օժտված են ոչ միայն պետական մարմինները և պաշտոնատար անձինք, այլ նաև՝ վարույթի մասնավոր մասնակիցները (օրինակ՝ մեղադրյալը կարող է ձեռք

¹⁴ Ապացույցների թույլատրելիության կանոններ պարունակում են նաև այլ օրենքներ: Բանն այն է, որ ՀՀ քր. դատ. օր.-ում խոսվում է ոչ թե քրեադատավարական օրենքի, այլ օրենքի էական խախտմամբ ստացված տվյալների անթույլատրելիության մասին, ուստի տվյալները կարող են անթույլատրելի ճանաչվել, եթե դրանք ձեռք են բերվել նաև այլ օրենքների պահանջների խախտմամբ, հատկապես, եթե խոսքն արտավարությանյին փաստաթղթերի մասին է:

բերել փորձագետի կարծիք և եզրակացություն), ուստի պետք է պարզել՝ ապացույցի թույլատրելիության կանոնները հասցեագրված են միայն պետական մարմիններին և պաշտոնատար անձանց, թե՛ նաև վարույթի մասնավոր մասնակիցներին:

Ապացույցի թույլատրելիության *սահմանադրական* կանոնների *միակ* հասցեատերը պետական իշխանությունն է: Նկատի ունենալով, որ սահմանադրական նորմերի հասցեատերը պետությունն է՝ ուստի ապացույցի թույլատրելիության սահմանադրական նորմերի (<< Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մաս, 63-րդ հոդվածի 3-րդ մասում) հասցեատերերը ևս քրեադատավարական կարգավիճակ ունեցող պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք են: Ապացույցի թույլատրելիության սահմանադրական նորմերը քրեական վարույթի մասնավոր մասնակիցներին հասցեագրված պահանջներ (վարքագծի կանոններ) չեն պարունակում:

Ապացույցի թույլատրելիության *քրեադատավարական* կանոնների *հիմնական* հասցեատերը ևս պետական իշխանությունն է՝ քրեական վարույթի իրավասու հանրային մասնակիցները ու դատարանը: Օրենքով ապացուցողական գործողություններ (բացառությամբ՝ փորձաքննության) կարող են կատարել քննիչը, հետաքննիչը և դատարանը, հետևապես՝ վերջիններս ապացուցողական գործողությունների կատարման կարգին վերաբերող նորմերի հասցեատերեր են:

Քրեական վարույթի մասնավոր մասնակիցը չի կարող խախտել այն նորմերը, որոնց հասցեատերը ինքը չէ: Օրինակ՝ մեղադրյալը << քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված ապացույցի թույլատրելիության կանոնի (ոչ պատշաճ սուբյեկտի կողմից տվյալներ ձեռք բերելը) հասցեատեր չէ, քանի որ նա որևէ պարագայում քրեական վարույթն իրականացնելու կամ ապացուցողական գործողություններ կատարելու իրավասությամբ օժտված չէ:

Ճիշտ է, վարույթի մասնավոր մասնակիցները կարող են նախաձեռնել ապացույցի առանձին տեսակներ՝ փորձագետի կարծիք և եզրակացություն ստանալու գործընթաց, սակայն օրենքով փորձագետի կարծիք ձեռք բերելու դատավարական կարգ սահմանված չէ, իսկ փորձագետի եզրակացության ստանալու վերաբերյալ Օրենսդիրը սահմանել է մեկ նորմ, որն էլ վերաբերում է փորձաքննություն նախաձեռնելու կապակցությամբ կազմվող փաստաթղթի բովանդակությանը (<< քր. դատ. օր.-ի 253-րդ հոդվածի 3-րդ մաս): Եթե վարույթի մասնավոր մասնակիցների նախաձեռնությամբ փորձագետի կարծիք կամ եզրակացություն ձեռք բերելու կարգ օրենքով նախատեսված չէ, ուստի նրանք պետք է ղեկավարվեն << Սահմանադրության 39-րդ հոդվածի՝ ազատ գործելու իրավունքով, ըստ որի՝ վարույթի մասնավոր մասնակիցները փորձագետի եզրակացություն կամ կարծիք ձեռք բերելիս ազատ են անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին:

Վերը նշվածից չպետք է եզրակացնել, որ վարույթի մասնավոր մասնակիցները որևէ պարագայում չեն կարող հանդիսանալ ապացույցի թույլատրելիության

դատավարական որևէ կանոնի հասցեատեր: Վարույթի մասնավոր մասնակիցները համապատասխան տեսակի ապացույց ձեռք բերելիս պետք է պահպանեն ընդհանուր իրավական արգելքները, օրինակ՝ պետք է պահպանեն ՀՀ քր. դատ. օր.-ի ի 71-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված իրավական արգելքը, ըստ որի՝ փորձագետը չի կարող մասնակցել վարույթին, եթե առկա են օրենքով նշված բացարկի հիմքեր: Եթե վարույթի մասնավոր մասնակիցը փորձագետ ներգրավելիս խախտի դատավարական այս արգելքը, ապա նրա ձեռք բերած՝ փորձագետի եզրակացությունը կամ կարծիքը կհանաչվի անթույլատրելի: Մեկ այլ օրինակ՝ վարույթի մասնավոր մասնակիցները վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ապացույցներ ներկայացնելիս պետք է պահպանեն նաև անհայտ աղբյուրից տվյալների օգտագործման արգելքը (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետ):

Այսպիսով՝ ՀՀ Սահմանադրությունում ամրագրված է ապացույցի թույլատրելիությանը վերաբերող երկու նորմ: Առաջինը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասն է, որը պարունակում է ապացույց ձեռք բերող իրավասու սուբյեկտին վերաբերող՝ ապացույցի թույլատրելիության իմպլիցիտ պոզիտիվ կանոն, իսկ երկրորդը ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասն է, որը պարունակում է ապացույց ձեռք բերելիս մարդու հիմնական իրավունքներին վերաբերող՝ ապացույցի թույլատրելիության էքսպլիցիտ նեգատիվ կանոն:

2. Մարդու հիմնական իրավունքներին վերաբերող թույլատրելիության սահմանադրական կանոնները

2.1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ Սահմանադրության նախկին խմբագրություններում նշվում էր, որ արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը (ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդված, 2005 թ. խմբ. Սահմանադրության 22-րդ հոդված): Այդ ժամանակաշրջաններում գործող նորմերի ձևակերպումն այն աստիճան լայն էր, որ դրա տառացի մեկնաբանության արդյունքում որոշ իրավաբաններ պնդում էին, որ Սահմանադրությունն արգելում է օրենքի ցանկացած խախտման արդյունքում ստացված ապացույցի օգտագործումը: Պարզ է, որ նման ծայրահեղ տառացի մեկնաբանությունը չէր բխում սահմանադրական վերը նշված նորմի իմաստից, քանի որ այն կվտանգեր հանրային շահի վրա հիմնված սահմանադրական այլ արժեքներ:

Պատահական չէ, որ Օրենսդիրը, ճիշտ ընկալելով ապացույցների թույլատրելիության սահմանադրական նորմի իմաստը, արգելում էր այն ապացույցների օգտագործումը, որոնք ձեռք են բերվել ոչ թե օրենքի *ցանկացած* խախտման, այլ օրենքի *էական* խախտման արդյունքում¹⁵:

¹⁵ Խոսքը քննչական և դատավարական գործողությունների կատարման էական կարգի խախտման մասին է (1998 թ. ՀՀ քր. դատ. օր.-ի 105-րդ հոդվածի 2-րդ մաս):

2015 թ. խմբ. Սահմանադրությունը, ի տարբերություն նախորդ խմբագրությունների, էապես սահմանափակել է ապացույցների թույլատրելիության սահմանադրական նորմի գործողության ոլորտը: ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է»:

Սահմանադիրն ապացույցների թույլատրելիության նորմի կիրառության ոլորտը (պաշտպանության ոլորտը) նեղացրել է՝ այն կապելով միայն նյութական խախտման հետ, քանի որ արգելել է միայն այն ապացույցների օգտագործումը, որոնք ձեռք են բերվել հիմնական իրավունքների խախտմամբ կամ խաթարում են արդար դատաքննության իրավունքը: Այս կարգավորումների պարագայում ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասը չի կարող վկայակոչվել այն դեպքերում, երբ դատավարական խախտումը ձևական է, այսինքն՝ դրա հետևանքով մարդու իրավունքներին անմիջական միջամտություն տեղի չի ունենում:

Օրենսդիրը, սահմանադրական այս կարգավորման պարագայում ևս ճիշտ գնահատելով ապացույցի թույլատրելիության ինստիտուտի դատավարական արժեքը, քրեական դատավարությունում պահպանել է թույլատրելիության դատավարական կանոնների պաշտպանության լայն ոլորտը և սահմանել է առավել լայն երաշխիքներ, քան Սահմանադիրը: Այսպես՝ Օրենսդիրը ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրել է դրույթներ, որոնք արգելում են ոչ միայն նյութական խախտումների (մարդու հիմնական իրավունքների խախտման), այլ նաև ձևական խախտումների (օրենքի էական այն խախտումներ, որոնք մարդու իրավունքներին անմիջապես չեն առնչվում) արդյունքում ձեռք բերված տվյալների օգտագործումը:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասում նեգատիվ ձևով ամրագրված է ապացույցի թույլատրելիության երկու կանոն՝

- 1) մարդու հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցի օգտագործումն արգելվում է,
- 2) արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

2.2. Մարդու հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման արգելքը

ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված են հիմնական իրավունքները: Եթե ապացույց ձեռք բերվի խախտվել են հիմնական իրավունքները, ապա տվյալ ապացույցի օգտագործումն արգելվում է, այսինքն՝ հիմնական իրավունքի խախտմամբ ստացված փաստական տվյալը ճանաչվում է անթույլատրելի: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք, իսկ 67-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք: Եթե մեղադրյալին հարցաքննելիս կամ նրա մասնակցության քննչական գործողություն կատարելիս խախտվել է մեղադրյալի պաշտպանության իրավունքը, ապա նրա ցուցմունքը կամ նրա մասնակցությամբ կատարված քննչական գործողության արձանագրությունը, ձեռք բերված իրեղեն ապացույցները չեն կարող օգտագործվել որպես ապացույց, այսինքն՝ այդ տվյալները կճանաչվեն անթույլատրելի:

«Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցի օգտագործումն արգելվում է» սահմանադրական նորմի հիման վրա Օրենսդիրը քրեական դատավարությունում մարդու սահմանադրական (հիմնական) իրավունքների խախտումը որակել է էական խախտում:

«Ապացույցներ ձեռք բերելիս էական են նաև այն խախտումները, որոնք դրսևորվել են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ոտնահարմամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 4-րդ մաս)»:

2.3. Արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցների օգտագործման արգելքը

«Արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է» սահմանադրական նորմի մեկնաբանությունն ավելի բարդ է, քան հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված տվյալների օգտագործման արգելքի մեկնաբանությունն է:

Ես/ս՝ արդար դատաքննության իրավունքը նույնպես հիմնական իրավունք է, պարզապես այն դատավարական բնույթի սահմանադրական իրավունք է, որը կոչված է պաշտպանելու մարդու նյութական բնույթի այլ իրավունքներ: Մակայն արդար դատաքննության իրավունքն իր հերթին պաշտպանության կարիք ունի և այս գործառնությունը վերապահված է «արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է» սահմանադրական նորմին:

Քննարկվող արգելքն իմպլիցիտ բովանդակում է մարդու մեկ այլ իրավունք՝ պահանջելու ՀՀ դատարաններից կամ կիսադատական մարմիններից, որ վերջիններս չօգտագործեն արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցներ: Ստացվում է, որ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցները չօգտագործելու մարդու իրավունքը մարդու նյութական իրավունքները պաշտպանող դատավարական իրավունքը պաշտպանող իրավունք է: Այլ կերպ ասած՝ արդար դատաքննության իրավունքի պաշտպանության իրավունքն է (իրավունքի իրավունք է):

Երկրորդ՝ քննարկվող նորմում խոսվում է ոչ թե արդար դատաքննության իրավունքի խախտման, այլ խաթարման մասին: Լեզվաբանական առումով խաթարել նշանակում է ամբողջությամբ խախտել, քայքայել, աղավաղել, քանդել, ավիրել:¹⁶

Քրեական դատավարությունում արդար դատաքննության իրավունքի խախտումները կարող են ունենալ տարբեր դրսևորումներ, ինտենսիվության տարբեր աստիճաններ, օրինակ՝ դատավորի կողմից տեղանքի զննությունը մեղադրյալի բացակայությամբ կատարելը, թեև արդար դատաքննության դատավարական իրավունքի խախտում (միջանտություն) է, սակայն այն իր բնույթով (ինտենսիվությամբ) արդար դատաքննության իրավունքի խաթարում չէ:

Ս. Մեղրյանը, արդար դատաքննության իրավունքը խաթարում ասելով, հասկանում է արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրերից որևէ մեկի (իրավահավասարության, մրցակցության, «զենքերի հավասարության», արդարացիության և այլն) խաթարումը: Նա, որպես արդար դատաքննության իրավունքի խաթարման օրինակ, նշում է այն վկայի ցուցմունքի օգտագործումը, որը չի կարողանում հստակորեն նշել իր իրազեկության աղբյուրը: Վկայի հարցաքննության ժամանակ տվյալների ներկայացման (ստացման) ընթացքում անձի հիմնարար իրավունքների խախտման փաստ չի արձանագրվում, սակայն դրա օգտագործումը (վճռի հիմքում դնելը) խաթարում է արդար դատաքննության իրավունքն այնքանով, որքանով մյուս կողմն օբյեկտիվորեն գրկվում է վկայի ցուցմունքի արժանահավատությունն առերես հարցաքննությամբ կամ իրազեկվածության աղբյուրի ստուգմամբ պարզելու հնարավորությունից:¹⁷

Ընդհանուր առմամբ համաձայնելով հեղինակի հետ՝ ավելացնենք, որ վկայի (որը չի կարողանում նշել իր իրազեկության աղբյուրը) ցուցմունքը օգտագործելը կխաթարի արդար դատաքննության իրավունքը, եթե վերջինիս հաղորդած տեղեկությունները վարույթի համար ունեն էական կամ վճռական նշանակություն: Եթե այդ վկան հաղորդել է վարույթի համար ոչ էական տվյալներ, ապա դատարանի կողմից դրանք օգտագործելը չի կարող հասնել արդար դատաքննության իրավունքի խաթարման աստիճանի: Նման տվյալների օգտագործումը կարող է խախտել դատավարական օրենքով նախատեսված որևէ արգելք:

Քրեական դատավարությունում արդար դատաքննության իրավունքի խաթարման օրինակ է, երբ մինչդատական վարույթի ընթացքում ապացույցները հավաքել է տվյալ քրեական վարույթն իրականացնելու իրավասություն չունեցող անձը (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի խախտում), սակայն դատարանը, անտեսելով այս խախտումը, հետազոտում և օգտագործում է

¹⁶ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հրայր Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: Հայկական ՄՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Եր.: 1972, էջ 462, Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան», Եր.: 1976, հատոր 1, էջ 554:

¹⁷ Մեղրյան Ս., Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում: Եր.: Արդարադատության ակադեմիա, 2020, էջ 159-160:

(դատավճռի հիմքում է դնում) ոչ պատշաճ քննիչի ձեռք բերած *բազմաթիվ* ապացույցները (ապացուցողական գործողության արձանագրություններ, իրեղեն ապացույցներ, արտավարության փաստաթղթեր և այլն): Դատարանի կողմից նման քանակի ապացույցների օգտագործումը խաթարում է արդար դատաքննության իրավունքի օրինականության տարրը: Օրինական չէ այն արդարադատությունը, որն առավելապես հիմնված է քննություն կատարելու իրավասություն չունեցող անձի կողմից (ըստ էության << Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտմամբ) ձեռք բերված *բազմաքանակ* ապացույցների վրա:

Ճիշտ է, ոչ իրավասու քննիչի կողմից ապացույց հավաքելն ինքնին մարդու հիմնական իրավունքների խախտում չէ¹⁸, սակայն դատարանի կողմից այդ ծավալի ապացույցների օգտագործումը խաթարում է արդար դատաքննության իրավունքը:

*Երրորդ*¹⁹ նախորդ օրինակից պարզ է դառնում, որ արդար դատաքննության իրավունքը խաթարող վարքագիծ կարող է դրսևորել ոչ թե քննիչը կամ հետաքննիչը, այլ դատարանը (կիսադատական մարմինները): Քննություն կատարելու իրավասություն չունեցող քննիչը, ապացույցներ հավաքելով և դրանք օգտագործելով, ինքնին չի խաթարում արդար դատաքննության իրավունքը: Քննիչն այս իրավիճակում խախտում է ոչ թե << Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասը, այլ << քր. դատ. օր.-ի 210-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը (քննչական գործողությունը կատարում է տվյալ վարույթով քննչական գործողություն կատարելու իրավասություն ունեցող քննիչը), որի պարագայում նրա ձեռք բերած տվյալները << քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիման վրա (օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել տվյալ քրեական վարույթն իրականացնելու իրավասություն չունեցող անձի կողմից) պետք է անթույլատրելի ճանաչվեն:

Եթե դատարանն անտեսում է քննիչի կողմից << քր. դատ. օր.-ի 210-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի խախտումը և ոչ իրավասու քննիչի ձեռք բերած բազմաթիվ ապացույցները (տվյալները) անթույլատրելի ճանաչելու փոխարեն օգտագործում է դրանք, ապա դրանով խաթարում է արդար դատաքննության իրավունքը:

¹⁸ Սահմանադրագետների մեկ այլ խումբ կարծում է, որ իրավասություն չունեցող քննիչի կողմից քննչական գործողություններ կատարելը ինքնին հանգեցնելու է արդար դատաքննության իրավունքի խաթարման, քանի որ անձի իրավունքների նկատմամբ ցանկացած միջամտություն պետք է տեղի ունենա օրենքով և օրենքի հիման վրա, ուստի արդար դատաքննության իրավունքը ենթադրում է, որ քննությունը պետք է իրականացնեն օրենքով այդ իրավասությունն ունեցող մարմինները և պաշտոնատար անձինք:

3. Պատշան սուբյեկտին վերաբերող թույլատրելիության սահմանադրական և քրեադատավարական կանոնները

3.1. Ընդհանուր դրույթներ

Քրեական դատավարությունում լայն ճանաչում է ստացել ապացույցների թույլատրելիության «չորս պատշանի» դոկտրինը¹⁹:

Ապացույցի թույլատրելիությունը որոշելիս պետք է պահպանել «չորս պատշանի» կանոնները՝

- 1) ապացույցը ձեռք բերող պատշան սուբյեկտ,
- 2) ապացույցի ձեռքբերման պատշան աղբյուր,
- 3) ապացույցի ձեռքբերման պատշան եղանակ,
- 4) ապացույցի ձեռքբերման պատշան դատավարական կարգը:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասում իմպլիցիտ ամրագրված ապացույցի թույլատրելիության պոզիտիվ կանոնը վերաբերում է ապացույց ձեռք բերող պատշան սուբյեկտին, ըստ որի՝ քրեադատավարական կարգավիճակ ունեցող պետական մարմինների (ՀՀ դատարանների, դատախազության, քննչական մարմինների և այլնի) ու պաշտոնատար անձանց (դատավորի, դատախազի, քննիչի և այլնի) հավաքած ապացույցները թույլատրելի են, եթե այդ մարմինները և անձինք Սահմանադրությամբ կամ օրենքներով լիազորված են՝ կատարելու համապատասխան ապացուցողական գործողությունները (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մաս):

3.2. Պատշան սուբյեկտի սահմանադրական կանոնը

3.2.1. «Ապացույց» հավաքելու *ultra vires*²⁰ ակտերը և օրինականության սահմանադրական սկզբունքը: Ապացույց ձեռք բերող պաշտոնատար անձը պատշան սուբյեկտ է, եթե օրենքով օժտված է տվյալ քրեական վարույթն իրականացնելու (քննություն կատարելու) կամ տվյալ վարույթով ապացուցողական գործողություն կատարելու իրավասությամբ:

Պատշան սուբյեկտի կանոնը վերաբերում է օրինականության սահմանադրական սկզբունքին, ըստ որի՝ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մաս): Եթե, օրինակ, պաշտոնատար անձը (քննիչը) օժտված չէ տվյալ քրեական վարույթով ապացուցողական գործողություններ կատարելու առարկայական կամ տարածքային իրավասությամբ, սակայն կատարում է ապա-

¹⁹ Кипнис Н. М., Допустимость доказательств в уголовном водстве. М.: Изд. Юристь, 1995, Ղամբարյան Ա., Ապացույցների թույլատրելիությունը քրեական դատավարությունում (մինչդատական վարույթ): Եր.: «Եգես», 2004, Մելքոնյան Դ., Քրեական գործով ապացույցներն անթույլատրելի ճանաչելու հիմքերը և դատավարական կարգը: Իրավ. գիտ. թեկնած. ստեղծագործություն: Եր.: 2006:

²⁰ Ultra vires – լիազորություններից, իրավասություններից դուրս:

ցուցողական գործողություններ և հավաքում ապացույցներ, ապա խախտում է նաև ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը: Պետականագիտական տեսանկյունից նկարագրված իրավիճակը *ultra vires* (իր լիազորությունների սահմաններից դուրս) ակտերի (ապացույց հավաքելու մասին որոշումների, գործողությունների) մասին է:

Ապացուցողական գործողություններ կատարելու լիազորության բացակայության պայմաններում ապացույց հավաքելու հարցը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի լույսի ներքո դիտարկելիս պետք է տարանջատել *ultra vires* ակտերի՝ պետական մարմնի և պաշտոնատար անձի հարթությունները:

3.2.2. *Ultra vires* ակտերը պետական մարմնի հարթությունում:

Մինչդատական քրեական վարույթին մասնակցում են տարբեր պետական մարմինների (ՀՀ դատախազություն, քննչական մարմիններ, ոստիկանություն և այլն) աշխատակիցներ: Այդ մարմիններից ոչ բոլորն են օժտված նախաքննություն կատարելու կամ համապատասխան ապացուցողական գործողություն կատարելու (ապացույց հավաքելու) լիազորությամբ, իսկ եթե օժտված են ապացուցողական գործողություններ կատարելու լիազորությամբ, ապա այդ լիազորությունը ոչ բոլոր դեպքերում կամ իրավիճակներում կարող են իրացվել (այդ լիազորության իրականացման համար անհրաժեշտ են օրենքով սահմանված փաստակազմ):

Պետական մարմնի հարթությունում հնարավոր է *ultra vires* ակտերի մի քանի իրավիճակ:

Իրավիճակ առաջին՝ տվյալ պետական մարմինն ընդհանրապես օժտված չէ քննություն կատարելու գործառնությամբ և ապացուցողական գործողություններ կատարելու լիազորությամբ: Օրինակ՝ ՀՀ դատախազությունը նախաքննություն կատարելու գործառնությամբ և քննչական գործողություն կատարելու լիազորությամբ օժտված չէ: Եթե դատախազությունն ընդհանրապես օժտված չէ քննություն կատարելու գործառնությամբ, ապա նրա աշխատակիցները (դատախազները) որևէ պարագայում չեն կարող իրացնել ապացույց հավաքելու լիազորություն: Նույնիսկ քրեական դատավարության՝ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման փուլի ժամանակ, երբ հսկող դատախազը ձեռք է բերում վարույթն իրականացնող մարմնի կարգավիճակ (ՀՀ քր. դատ. օր.-ի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ), օժտված չէ ապացույց հավաքելու լիազորությամբ: Եթե դատախազը փաստացի կատարի ապացուցողական գործողություն, ապա նրա որոշումները և գործողությունները պետական մարմնի հարթությունում կհամարվեն *ultra vires* ակտեր:

Իրավիճակ երկրորդ՝ պետական մարմինն օժտված է նախաքննություն կատարելու գործառնությամբ և ապացուցողական գործողություններ կատարելու լիազորությամբ, սակայն այդ գործառնությունները և լիազորությունները սահմանա-

փակված են օրենքով նշված կոնկրետ հանցագործություններով (առարկայական իրավասություն): Դատավարական տերմինաբանությամբ ասած՝ պետական մարմնի՝ նախաքննություն կատարելու գործառույթը և ապացուցողական գործողություններ կատարելու լիազորությունը սահմանափակված են առարկայական քննչական ենթակայության՝ օրենսդրական կանոններով: Օրինակ՝ ՀՀ քննչական կոմիտեն (նրա քննիչը) առարկայական քննչական ենթակայության կանոններով որոշված սահմաններում օժտված է նախաքննություն (ապացուցողական գործողություններ) կատարելու գործառույթով (լիազորությամբ), սակայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը կիսախտվի, եթե ՀՀ քննչական կոմիտեն դուրս գա իր առարկայական իրավասության սահմաններից և նախաքննություն կատարի մեկ այլ քննչական մարմինների իրավասության մեջ մտնող գործով: Այս պարագայում նրա որոշումները և գործողությունները պետական մարմնի հարթությունում կհամարվեն *ultra vires* ակտեր:

Պետական մարմնի հարթությունում օրինական լիազորության բացակայության պայմաններում փաստական տվյալներ հավաքելն այն աստիճանի աղաղակող (ակնառու) խախտմամբ կատարված ակտ է, որ այդ խախտումներն անգոյացնում (ոչնչացնում) են այդ պետական մարմնի կատարած «քննչական» գործողությունը և դրա հետևանքները («ապացույցները»):

Համեմատության համար նշենք, որ վարչական իրավունքում առկա է վարչական մարմինների ակտերի իրավաչափության ստուգման «inexistence»²¹ չափանիշը, որը վերաբերում է վարչական գործողության գոյություն չունենալուն: Վարչական իրավունքի մասնագետները նշում են, որ առանձին ոլորտներ այն աստիճան կարևոր են, որ դրանց խախտումը կասկածի տակ է դնում ենթադրյալ գործողության կամ որոշման բուն գոյությունը: Դրա օրինակ է ոչ պատշաճ անձի կամ լիազորություն չունեցող անձի կողմից որոշում կայացնելը²²: Օրինակ՝ ՀՀ վարչական իրավունքում ոչ իրավասու վարչական մարմնի կողմից վարչական ակտ ընդունելը համարվում է ակնառու կոպիտ խախտում և այդ ակտն առ ոչինչ ճանաչելու հիմք («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մաս):

3.2.3. *Ultra vires* ակտերը պաշտոնատար անձի հարթությունում

Նախաքննություն կատարելու կամ առանձին ապացուցողական գործողություն կատարելու իրավասություն ունեցող պետական մարմնի աշխատակիցները (պաշտոնատար անձինք) ոչ բոլոր դեպքերում ունեն նախաքննություն կամ ապացուցողական գործողություններ կատարելու լիազորություն: Նրանց՝ ապացույց հավաքելու լիազորության ծագման համար պետք է առկա լինեն օրենքով

²¹ Inexistence - գոյություն չունեցող:

²² Ст'ю Галлиган Д., Полянский В. В., Старилов Ю. Н., Административное право: история развития и основные современные концепции. М.: Изд. Юристъ, 2002. էջեր 334-341:

սահմանված որոշակի պայմաններ, իրավաբանական փաստեր (նախաքննություն կատարելու հանձնարարություն, քննչական գործողություն կատարելու հանձնարարություն և այլն):

Պաշտոնատար անձի հարթությունում հնարավոր է *ultra vires* ակտերի մի քանի իրավիճակ:

Իրավիճակ առաջին՝ պետական համապատասխան մարմինը (օրինակ՝ քննչական մարմինը) տվյալ հարցերի (առարկայի) շրջանակներում օժտված է նախաքննություն կատարելու կամ ապացուցողական գործողություններ կատարելու լիազորությամբ, սակայն այդ մարմնի աշխատակիցը (օրինակ՝ քննիչը) հանրային իրավական կարգավիճակ է ձեռք բերել սահմանադրական իրավունքի և վարչական իրավունքի նորմերի էական խախտումներով:

Եթե կոնկրետ վարույթով պարզվի, որ տվյալ քննիչը պաշտոնի է նշանակվել կեղծ փաստաթղթերի հիման վրա կամ նշանակման կարգի այլ էական խախտմամբ, ապա նա չի կարող կոնկրետ վարույթով իրականացնել դատավարական գործառնություններ: Օրենքի խախտմամբ նշանակված պաշտոնատար անձինք կոնկրետ վարույթով պատշաճ սուբյեկտ չեն, ուստի նրանց ակտերը չեն կարող վավեր համարվել:²³

Իրավիճակ երկրորդ՝ իրավասու պետական մարմնի՝ օրենքով սահմանված կարգով նշանակված պաշտոնատար անձանց լիազորությունը սահմանափակված է տարածքային գործոնով (տարածքային իրավասություն), սակայն պաշտոնատար անձն ապացուցողական գործողություններ է կատարել տարածքային իրավասության սահմաններից դուրս: Օրինակ՝ «՝ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության քննիչն օժտված է տարածքային քննչական ենթակայության կանոններով որոշված հարցերով վարույթ իրականացնելու և ապացուցողական գործողություններ կատարելու լիազորությամբ: «՝ Սահմանադրության 6-րդ հոդվածը կիսախտվի, եթե «՝ քննչական կոմիտեի Կոտայքի քննչական վարչության քննիչը դուրս գա իր տարածքային իրավասության սահմաններից և նախաքննություն կատարի «՝ քննչական կոմիտեի Գեղարքունիքի քննչական վարչության քննիչի իրավասության մեջ մտնող գործերով:

Իրավիճակ երրորդ՝ համապատասխան պաշտոնատար անձը կոնկրետ վարույթով օժտված չէ նախաքննություն կատարելու կամ ապացուցողական գործողություններ կատարելու իրավասուբյեկտությամբ: Օրինակ՝ հետաքննիչը գաղտնի քննչական գործողություն կատարելու իրավասուբյեկտություն է ձեռք բերում բացառապես քննիչի հանձնարարության հիման վրա («՝ քր. դատ. օր.-ի 188-րդ հոդվածի 2-րդ մաս): Եթե հետաքննիչը գաղտնի քննչական գործողություն է կատարել քննիչի հանձնարարության բացակայության պայմաններում, ապա նրա որոշումները և գործողությունները *ultra vires* ակտեր են:

²³ Տե՛ս Ղամբարյան Ա., Ղազարյան Ա., Թաղևոսյան Ա., Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (օրենսդրությունը, սկզբունքները և սուբյեկտները): Գիտաուսումնական ձեռնարկ / Գիտ. իսթ. Ա. Ղամբարյան. Եր.: Տիգրան Մեծ, 2024.

Մեկ այլ օրինակ՝ քննիչը կոնկրետ վարույթով նախաքննություն կատարելու իրավասությունները է ձեռք բերում քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննություն կատարելու հանձնարարության հիման վրա (ՀՀ քր. դատ. օր.-ի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի): Եթե քննիչը նախաքննություն է կատարել քննչական մարմնի ղեկավարի համապատասխան հանձնարարության բացակայության պայմաններում, ապա նրա որոշումները և գործողությունները *ultra vires* ակտեր են:

Պաշտոնատար անձի հարթությունում «ապացույց» հավաքելու *ultra vires* ակտերը հնարավոր են բազմաթիվ այլ պատճառներով, օրինակ՝ քննիչն ընդգրկված չէ քննչական խմբում:

Ի տարբերություն պետական մարմինների հարթությունում *ultra vires* ակտերի, որոնք հիմնականում ակնառու (աղաղակող) խախտումներ են՝ պաշտոնատար անձանց հարթությունում ակտերի *ultra vires* լինելու փաստը կարիք ունի համակողմանի ուսումնասիրության: Օրինակ՝ երբեմն կոնկրետ վարույթով տարածքային քննչական ենթակայության կանոնները հնարավոր չէ հստակ և միանշանակորեն որոշել, ուստի եթե քննիչը նման իրավիճակում գործել է բարեխիղճ, ապա նրա կողմից կատարված քննչական գործողությունների արդյունքները (ապացույցները) չպետք է համարել անվավեր (անթույլատրելի), նույնիսկ եթե հետագայում (*post factum*) հաստատվի, որ այդ գործողությունների կատարումը դուրս է եղել նրա տարածքային լիազորությունների սահմաններից:

3.3 Պատշաճ սուբյեկտի քրեադատավարական կանոնները

3.3.1. Պատշաճ սուբյեկտի կանոնի դատավարական խախտումները

ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում ամրագրված են պատշաճ սուբյեկտի կանոնի խախտմանը վերաբերող երեք նորմ: Այսպես՝ օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել՝

- 1) տվյալ քրեական վարույթն իրականացնելու իրավասություն չունեցող անձի կողմից,
- 2) համապատասխան ապացուցողական կամ վարույթային այլ գործողություն կատարելու իրավասություն չունեցող անձի կողմից,
- 3) բացարկյալ ենթակա անձի էական մասնակցությամբ, եթե նա իմացել է կամ ողջամտորեն պետք է իմանար վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության մասին:²⁴

Քրեական վարույթն իրականացնող անձինք են քննիչը, դատախազը և դատարանը, սակայն վարույթն իրականացնող այս մարմիններից ապացույցներ կարող են հավաքել միայն քննիչը և դատարանը: Դատախազը դատարանում

²⁴ Այն հարցը, թե վերջին կանոնը վերաբերում է միայն գործողությունների մասնակիցներին, թե նաև ապացուցողական գործողություն կատարող անձին (տվյալ ձեռք բերող քննիչին, հետաքննիչին կամ դատարանին), կներկայացվի հաջորդիվ:

մեղադրանք հարուցելու հարցի լուծման փուլում թեև վարույթն իրականացնող մարմին է, սակայն ապացույց հավաքող սուբյեկտ չէ:

Քննչական մարմնի ղեկավարը վարույթն իրականացնող մարմին չէ, ուստի նրա կողմից փաստացի նախաքննություն կատարելը կամ քննչական գործողություն կատարելը կիսախտի ապացույցի թույլատրելիության պատշաճ սուբյեկտի կանոնը, իսկ նրա հավաքած տվյալները կհամարվեն օրենքի էական խախտմամբ ձեռք բերված և կճանաչվեն անթույլատրելի:

3.3.2. Տվյալ վարույթն իրականացնելու իրավասության բացակայությունը

3.3.2.1. *Վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայությունը*: Քննիչը քրեական վարույթ իրականացնելու իրավասություն կարող է ձեռք բերել քրեական վարույթ նախաձեռնելու (քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն) պարագայում: Եթե քննիչը նախաքննության ընթացքում այլ ենթադրյալ հանցանք կատարելու փաստ է հայտնաբերում, ապա պարտավոր է նախաձեռնել նոր քրեական վարույթ (<< քր. դատ. օր.-ի 178-րդ հոդվածի 7-րդ մաս):²⁵

Քրեական վարույթ նախաձեռնելու բացակայության պայմաններում հավաքված տվյալները համարվում են տվյալ վարույթն իրականացնելու իրավասություն չունեցող քննիչի (ոչ պատշաճ սուբյեկտի) կողմից ձեռք բերված տեղեկություններ, այսինքն՝ համարվում են օրենքի էական խախտմամբ ստացված տվյալներ և ճանաչվում են անթույլատրելի:²⁶

Քննիչը քրեական վարույթ իրականացնելու իրավասություն կարող է ձեռք բերել, եթե քրեական վարույթը նախաձեռնվել է քննիչի կողմից, քանի որ քրեական վարույթ նախաձեռնելու պարտականության միակ կրողը քննիչն է: Եթե քրեական վարույթը նախաձեռնվել է ոչ պատշաճ սուբյեկտի, օրինակ՝ հետաքննիչի կամ դատախազի կողմից, ապա դա նշանակում է, որ կատարվել է *ultra vires* գործողություն:

Եթե քննիչը քրեական վարույթ նախաձեռնելու *ultra vires* արձանագրության հիման վրա ձեռնամուխ լինի նախաքննության կատարմանը, ապա դրանով քրեական վարույթին կհասցնի անդառնալի վնաս: Օրինականության ռեժիմի

²⁵ Վերը նշվածը չի վերաբերում նոր ի հայտ եկած հանգամանքներով նախնական վարույթով քննություն կատարելուն, որի համար պահանջվում է ոչ թե քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն, այլ դատախազի հանձնարարությունն (<< քր. դատ. օր.-ի 405-րդ հոդվածի 2-րդ մաս):

²⁶ Օրենսդիրը միայն *sui generis* (ինքնատիպ) իրավիճակում է թույլատրել մինչև քրեական վարույթ սկսելը (եթե քրեական վարույթի սկիզբը համարենք միայն հաղորդում ստանալու ձևով ամերևույթ հանցանքի մասին տեղեկանալը) կատարել ամառնձին վարույթային գործողություններ: Օրինակ՝ հետաքննիչը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի ակայության դեպքում կատարում է ձերբակալում և դրան ուղեկցող անձնական խուզարկություն՝ այդ մասին անհապաղ հայտնելով իրավասու դատախազին (<< քր. դատ. օր.-ի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ):

տեսանկյունից պետական մարմնի *ultra vires* ակտերը չեն կարող առաջացնել իրավական հետևանքներ: Դատախազի լիազորությունների վերազանցմամբ կազմված արձանագրությունը չի կարող փաստել նախաքննության սկիզբը, իսկ եթե փաստացի առաջացրել է նախաքննություն, ապա նման նախաքննությունը ի սկզբանե կհամարվի «վիրուսով վարակված», որի հանգրվանը լինելու է քրեական վարույթը կարճելու որոշումը:²⁷

Քրեական վարույթ նախաձեռնելու *ultra vires* արձանագրության պայմաններում հավաքված տվյալները համարվում են կոնկրետ վարույթն իրականացնելու իրավասություն չունեցող քննիչի (ոչ պատշաճ սուբյեկտի) կողմից ձեռք բերված տեղեկություններ, այսինքն՝ համարվում են օրենքի էական խախտմամբ ստացված տվյալներ և ճանաչվում են անթույլատրելի:

3.3.2.2. *Քննչական ենթակայության կանոնների սկնառու խախտումը*: Քննիչը քրեական վարույթ իրականացնելու իրավասություն կարող է ձեռք բերել բացառապես քննչական ենթակայության կանոնների սահմաններում: Քննչական ենթակայության կանոնները, ըստ էության, այնպիսի դրույթներ են, որոնք քննիչին օժտում են տվյալ վարույթով ապացույցներ հավաքելու (նախաքննություն կատարելու) իրավասությամբ: «Վարույթը (գործը) ենթակա է քննչական մարմնի քննիչին» ձևակերպումը հավասարազոր է «քննչական մարմնի քննիչը տվյալ վարույթով իրավասու է իրականացնել նախաքննություն» ձևակերպմանը: Եթե քննիչը առարկայական, անհատական կամ տարածքային քննչական ենթակայության կանոնների խախտմամբ կատարում է նախաքննություն, ապա դա նշանակում է, որ նա տվյալները հավաքել է առարկայական, անհատական և տարածքային իրավասության սահմաններից դուրս:

Օրենսդիրը տարբեր հարաբերություններ կարգավորող նորմերում հետևողականորեն շեշտում է քննչական ենթակայության կանոնները պահպանելու անհրաժեշտությունը: Այսպես՝

1) Օրենսգրքով նախատեսված աղբյուրից առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում դատախազը, օրենսգր-

²⁷ *Ultra vires* քրեական վարույթ նախաձեռնելը՝ որպես քրեական վարույթը կարճելու հիմք, օրենքով նախատեսված չէ, ինչը պետք է համարել օրենսդրական բաց, որը կարելի է լրացնել քննարկվող իրավիճակին նման մեկ այլ հարաբերություն կարգավորող նորմն անալոգիայի կարգով կիրառելու ճանապարհով: Խոսքը ՀՀ քր. դատ. օր.-ի 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի մասին է, ըստ որի՝ քրեական հետապնդումը դադարեցվում է, եթե վարույթը նախաձեռնվել է օրենսգրքով չնախատեսված աղբյուրից ստացված տեղեկության հիման վրա: Տարբերակներից մեկն այն է, որ *ultra vires* արձանագրության հիման վրա իրականացված նախաքննությունը գնահատվում է ինքնին ապօրինի, որի հետևանքով բոլոր ապացույցները ճանաչվում են անթույլատրելի: Մեղադրանքը հիմնավորող ապացույցների բացակայության պայմաններում այդ վարույթը կկարճվի քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայությունը հաստատելու հիմքով (ՀՀ քր. օր.-ի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Այս մասին տե՛ս Դամբարյան Ա., Քրեական վարույթ նախաձեռնելը (գիտազործնական մեկնաբանություններ): Եր.: Տիգրան Մեծ, 2022, էջեր 85-86:

քով սահմանված **քննչական ենթակայության կանոններին համապատասխան**, այն վերահասցեագրում է իրավասու քննչական մարմնի ղեկավարին՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար (ՀՀ քր. դատ. օր.-ի 178-րդ հոդվածի 1-ին մաս),

2) ՀՀ քննչական կոմիտեի և հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները նախաքննությունը կատարում են **իրենց իրավասության սահմաններում** (ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածի 1-ին մաս),

3) վերադաս դատախազն իր որոշմամբ, օրենսգրքով սահմանված **քննչական ենթակայության կանոններին համապատասխան**, վարույթը փոխանցում է նախաքննության մեկ այլ մարմնի՝ համակողմանի և անաչառ նախաքննությունն ապահովելու նպատակով (ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ),

4) եթե քրեական վարույթ նախաձեռնած քննիչը, օրենսգրքով սահմանված **քննչական ենթակայության կանոններին համապատասխան**, իրավասու չէ նախաքննություն կատարելու, ապա նա քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրությունն ուղարկում է հսկող դատախազին (ՀՀ քր. դատ. օր.-ի 178-րդ հոդվածի 6-րդ մաս),

5) քննչական խմբի ղեկավար կարող է նշանակվել այն նախաքննության մարմնի քննիչը, որին **օրենսգրքի 181-րդ հոդվածի (առարկայական քննչական ենթակայության) կանոններով** վերապահված է նախաքննության կատարումը (ՀՀ քր. դատ. օր.-ի 184-րդ հոդվածի 1-ին մաս):²⁸

Եթե պետությունը քննչական ենթակայության հարցերի կարգավորումը բերել է օրենքի դաշտ, ապա պետական մոտեցումը քննչական ենթակայության

²⁸ Մինչև 2021 թ. ՀՀ քր. դատ. օր.-ի ընդունումը թե՛ դատախազները և թե՛ դատավորները տարբեր մտացածին պատճառաբանություններով շրջանցում էին քննչական ենթակայության կանոնները խախտելու հիմքով փաստական տվյալները (ապացույցները) անթույլատրելի ճանաչելու հարցերը: 2007 թ. ՀՀ քր. դատ. օր.-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում կատարված փոփոխությամբ Օրենսդիրը փորձեց դատախազի՝ գործը նախաքննության մի մարմնից մյուսին հանձնելու լիազորությունը սահմանափակել քննչական ենթակայության կանոններով, սակայն դատախազները, չցանկանալով կորցնել իրենց ազդեցության կարևոր լծակներից մեկը, չինազանդվեցին օրենքի կարգավորմանը և երկար տարիներ շարունակեցին 1998 թ. ՀՀ քր. դատ. օր.-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը մեկնաբանել այնպես, իբրև թե այդ հոդվածում ՀՀ քր. դատ. օր.-ի 190-րդ հոդվածի (քննչական ենթակայությունը) վկայակոչմամբ ընդամենը հստակեցվել են նախաքննության այն մարմինները, որոնցից դատախազը կարող էր գործը վերցնել և հանձնել մյուսին: Թեև նման մեկնաբանությունը որևէ քննադատության չէր դիմանում, սակայն ՀՀ դատախազությունը, ՀՀ դատավորների թողտվությամբ, շարունակում էր քննչական ենթակայության կանոններին հակադրվելով, գործերը նախաքննության մի մարմնից հանձնել մյուսին:

Օրենսդիրը քննչական ենթակայության կանոնները պահպանելու հարցում իր դիրքորոշումն առավել հստակ արտահայտեց 2021 թ. ՀՀ քր. դատ. օր.-ով և հետևողականորեն սահմանեց քննչական ենթակայության կանոնները պահպանելու հրամայականը: Այս մասին տե՛ս Ղամբարյան Ա., Ղազարյան Ա., Դատախազական անհնազանդություն քննչական ենթակայության նկատմամբ (օրենսդրի լռությունը և դատավորի թողտվությունը), ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2021, № 1 (101), էջեր 7-40:

կանոնները խախտելու բացասական հետևանքների վերաբերյալ պետք է լինի խիստ և հետևողական:

Դոկտրինում լայն ճանաչում է ստացել այն մոտեցումը, որ քննչական ենթակայության կանոնների խախտմամբ ձեռք բերված նյութերը համարվում են ոչ պատշաճ սուբյեկտի կողմից ձեռք բերված, որոնք չեն կարող օգտագործվել որպես ապացույց²⁹:

Քննչական ենթակայության կանոնների ակնառու խախտման պայմաններում հավաքված տվյալները համարվում են կոնկրետ վարույթն իրականացնելու իրավասություն չունեցող քննիչի (ոչ պատշաճ սուբյեկտի) կողմից ձեռք բերված տեղեկություններ, այսինքն՝ համարվում են օրենքի էական խախտմամբ ստացված տվյալներ և ճանաչվում անթույլատրելի:

3.3.2.3 Նախաքննություն կատարելու հանձնարարության բացակայությունը: Քննիչը քրեական վարույթ իրականացնելու իրավասություն կարող է ձեռք բերել, եթե առկա է քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննություն կատարելու մասին հանձնարարությունը: ՀՀ քր. դատ. օր.-ի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն.

«Քննչական մարմնի ղեկավարը նախաքննության կատարումը հանձնարարում է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին»:

Քննչական մարմնի ղեկավարի այս լիազորության դատավարական արժեքը էապես բարձրացել է, քանի որ դարձել է կոնկրետ վարույթով պատշաճ քննիչի նույնականացման միակ հիմքը: Օրենքով «գործը քննիչի վարույթ ընդունելու մասին» որոշում այլևս նախատեսված չէ, ուստի առավել քան ակնհայտ է, որ քննիչի՝ կոնկրետ վարույթով նախաքննություն կատարելու իրավասուբյեկտության ծագման հիմքը քննչական մարմնի ղեկավարի նախաքննություն կատարելու հանձնարարությունն է: Այս լիազորության իրականացման հարցում պետք է լինել ուշադիր:

Քննարկվող լիազորության կրողը քննիչի անմիջական վերադասն է, ուստի գործնականում այդ լիազորության իրականացման կառուցակարգը հետևյալն է. քննչական մարմնի ստորաբաժանման պետը, օրինակ՝ մարզային քննչական վար-

²⁹ Сильнов М. А., Вопросы обеспечения допустимости доказательств в уголовном процессе (досудебные стадии). М.: Изд. МЗ-Пресс, 2001. С. 86, Защита по уголовному делу: пособие для адвокатов / Под ред. Е. Ю. Львовой. М: Изд. Юристъ, 1999. С. 45, Костенко Р. В., Понятие и признаки уголовно-процессуальных доказательств. М.: Изд. Юрлитинформ, 2006. С. 76, Уголовно-процессуальное право Российской Федерации // в 2 ч. Часть 1; под ред. Г. М. Резника. 2-е изд., перераб. и доп. М.: Изд. Юрайт, 2019. С. 224, Барыгина А. А., Доказывание в уголовном процессе: допустимость доказательств: учебное пособие. 2-е изд., перераб. и доп. М.: Изд. Юрайт, 2019. С. 68-69, Ерпылёв И. В., Допустимость доказательств в уголовном процессе России и зарубежных стран. М.: Изд. Юрлитинформ, 2017. С. 59, Костенко Р. В., Кравченко М. Е., Допустимость вещественных доказательств в уголовном процессе: монография. М.: Изд. Юрлитинформ, 2018. С. 58, Դամբարյան Ա., Դազարյան Ա., Քննչական ենթակայությունը և ընդդատությունը (գիտագործնական մեկնարանություններ), Եր.: Մազադարթ, 2023, էջեր 56-65:

չության պետը (այսուհետ՝ Վարչության պետ) հիմնականում մակագրության ձևով հանձնարարություն է տալիս համապատասխան տեղակալին կամ բաժնի պետին (որն ունի անմիջական ենթակա քննիչներ) *կազմակերպել* նախաքննությունը (չփոթել քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու և նախաքննություն կատարելու հանձնարարության հետ), իսկ վերջիններս քրեական վարույթ նախաձեռնելու հարցի լուծումը և նախաքննության կատարումը (այսուհետև կնշվի նախաքննություն կատարել, որը ներառում է նաև քրեական վարույթ նախաձեռնելու հարցի լուծումը) հանձնարարում է իր անմիջական ենթակայության ներքո գործող որևէ քննիչի:

Վարչության պետը պետք է հստակ գիտակցի, թե ինչ հանձնարարություն է տալիս. նա հանձնարարում է իր տեղակալին *կազմակերպել* նախաքննություն³⁰, թե՛ *կատարել* նախաքննություն: Եթե վարչության պետն իր տեղակալին հանձնարարում է կատարել նախաքննություն, ապա այս պարագայում նա դառնում է ՀՀ քր. դատ. օր.-ի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված լիազորության կրողը, իսկ իր տեղակալը՝ իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչ, որը պետք է կատարի նախաքննություն: Վարչության պետի կողմից իր տեղակալին նախաքննություն *կատարելու* հանձնարարության դեպքում տեղակալը չի կարող նախաքննության կատարումը վերահանձնարարել իրեն անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին:

Քննիչը որևէ դեպքում չի կարող շրջանցել քննչական մարմնի ղեկավարին և նրա փոխարեն կոնկրետ դեպքով ինքն իրեն (փաստացի գործողություններով) վերապահել նախաքննություն կատարելու լիազորություն. դա քննչական մարմնի ղեկավարի բացառիկ իրավասությունն է³⁰: Նախաքննության ընթացքում ենթադրյալ այլ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում քննիչը պետք է կազմի ոչ թե վարույթ նախաձեռնելու արձանագրություն, այլ հանցագործության մասին հաղորդում և այն ուղարկի քննչական մարմնի ղեկավարին, իսկ վերջինս էլ որոշի, թե որ քննիչին հանձնարարել վարույթ նախաձեռնել և նախաքննություն կատարել³¹: Եթե քննիչը ենթադրյալ այլ հանցանքի հայտնաբերման դեպքում իր նախաձեռնած վարույթով նաև ձեռնամուխ լինի նախաքննության կատարմանը, ապա դրանով իսկ նա փաստացի ինքն իրեն կվերապահի (կյուրացնի) քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննության կատարումը քննիչին հանձնարարելու լիազորությունը:

³⁰ Տե՛ս Ղամբարյան Ա., Ղազարյան Ա., Թադևոսյան Ա., Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (օրենսդրությունը, սկզբունքները և սուբյեկտները): Գիտաուսումնական ձեռնարկ / Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան. Եր.: Տիգրան Մեծ, 2024, էջեր 365-369:

³¹ ՀՀ քր. դատ. օր.-ի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 173-րդ, 177-րդ հոդվածների միջև առկա է անհամապատասխանություն, որի պայմաններում պետք է նախապատվությունը տալ ՀՀ քր. դատ. օր.-ի 173-րդ և 177-րդ հոդվածների կարգավորումներին: Այս մասին տե՛ս Ղամբարյան Ա., Քրեական վարույթ նախաձեռնելը (գիտագործնական մեկնաբանություններ): Եր.: Տիգրան Մեծ, 2022, էջեր 29-32:

Այսպիսով՝ քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննություն կատարելու հանձնարարության բացակայության պայմաններում հավաքված տվյալները համարվում են կոնկրետ վարույթն իրականացնելու իրավասություն չունեցող քննիչի (ոչ պատշաճ սուբյեկտի) կողմից ձեռք բերված տեղեկություններ, այսինքն՝ համարվում են օրենքի էական խախտմամբ ստացված տվյալներ և ճանաչվում են անթույլատրելի:

3.3.2.4. Քննչական խումբ ստեղծելու որոշման բացակայությունը: Քննիչների խումբը (քննչական խումբը) քրեական վարույթ իրականացնելու իրավասություն կարող է ձեռք բերել, եթե առկա է քննչական մարմնի ղեկավարի որոշումը՝ նախաքննությունն իր ենթակայության ներքո գործող քննիչներից կազմված քննչական խմբի կողմից կատարելու վերաբերյալ (ՀՀ քր. դատ. օր.-ի 40-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ): Որոշման մեջ նշվում են խմբի ղեկավար քննիչը և մյուս բոլոր քննիչները, որոնց հանձնարարվում է նախաքննության կատարումը (ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածի 1-ին մաս):

Եթե վարույթի նյութերից³² երևում է, որ վարույթ նախաձեռնելուց անմիջապես հետո նախաքննությունը փաստացի կատարվել է մի քանի քննիչների կողմից, սակայն քրեական վարույթի նյութերում բացակայում է քննչական մարմնի ղեկավարի՝ քննչական խումբ ստեղծելու որոշումը, ապա այդ խումբը կհամարվի փաստական տվյալներ հավաքող ոչ պատշաճ սուբյեկտ:

Այսպիսով՝ քննչական խումբ ստեղծելու որոշման բացակայության պայմաններում հավաքված տվյալները համարվում են կոնկրետ վարույթն իրականացնելու իրավասություն չունեցող քննիչների խմբի (ոչ պատշաճ սուբյեկտի) կողմից ձեռք բերված տեղեկություններ, այսինքն՝ համարվում են օրենքի էական խախտմամբ ստացված տվյալներ և ճանաչվում անթույլատրելի:

3.3.2.5. Նոր ի հայտ եկած հանգամանքներով նախնական վարույթով քննություն կատարելու դատախազի հանձնարարության բացակայությունը: Վերը նշված դեպքերը վերաբերում էին դասական իմաստով քրեական վարույթին (նախաքննությանը): Սակայն օրենքով նախատեսված է ինքնատիպ մի իրավիճակ, երբ նախաքննության մարմինը կատարում է քննություն, սակայն այդ *քննությունը* դասական իմաստով *նախաքննություն* չէ: Խոսքը նոր ի հայտ եկած հանգամանքներով նախնական վարույթի մասին է:

Եթե, օրինակ, դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարզվել են դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած այնպիսի

³² Օրինակ՝ քննչական գործողությունների արձանագրությունների ներածական մասում նշվել է, որ գործողությունը կատարել է քննչական խմբի անդամը, կամ քրեական վարույթի նյութերում առկա է տեղեկանք այն մասին, որ քննիչը վարույթի մասնավոր մասնակիցներին հրավիրել է ծանոթանալու քննչական խումբ ստեղծելու մասին որոշմանը, և նրանց պարզաբանվում է ցանկացած քննիչի բացարկ հայտնելու իրավունքը:

հանգամանքներ, որոնք ապացուցում են դատապարտյալի անմեղությունը (նոր ի հայտ եկած հանգամանք), ապա դատախազն այդ հանգամանքի առերևույթ առկայության դեպքում որոշում է կայացնում նոր ի հայտ եկած հանգամանքների վերաբերյալ նախնական վարույթ հարուցելու մասին և այդ հանգամանքների առթիվ քննություն կատարելու հանձնարարություն է տալիս նախաքննության մարմնին (ՀՀ քր. դատ. օր.-ի 405-րդ հոդվածի 2-րդ մաս):

Նախաքննության մարմինը իրավասու է նոր ի հայտ եկած հանգամանքներով նախնական վարույթով քննություն կատարել միայն դատախազի հանձնարարության հիման վրա: Եթե շահագրգիռ կամ իրավասու անձը նոր ի հայտ եկած հանգամանքների մասին հաղորդումը անմիջապես ուղարկել է ՀՀ քննչական մարմնին և ոչ թե դատախազություն, և քննչական մարմնին առանց դատախազի հանձնարարության կատարել է քննություն, ապա նա կհամարվի ոչ իրավասու սուբյեկտ:

Այսպիսով՝ նոր ի հայտ եկած հանգամանքներով նախնական վարույթով դատախազի հանձնարարության բացակայության պայմաններում հավաքված տվյալները համարվում են քննություն կատարելու իրավասություն չունեցող անձի (ոչ պատշաճ սուբյեկտի) կողմից ձեռք բերված տեղեկություններ, այսինքն՝ համարվում են օրենքի էական խախտմամբ ստացված տվյալներ և ճանաչվում անթույլատրելի:

3.3.3. Առանձին վարույթային գործողություն կատարելու իրավասության բացակայությունը

3.3.3.1. Գործողություն կատարելու հանձնարարության կամ քննչական փոխօգնության խնդրանքի բացակայությունը: Քննիչը իրավասու է մեկ այլ քննիչի կողմից իրականացվող վարույթով կատարել առանձին վարույթային գործողություններ, եթե առկա է այն կատարելու մասին հանձնարարություն կամ փոխօգնության խնդրանք: Այստեղ հնարավոր են ստորև նշված իրավիճակները:

Նախ՝ քննչական մարմնի ղեկավարը կարող է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի կողմից իրականացվող վարույթով իր ենթակայության ներքո գործող քննիչներին հանձնարարել առանձին ապացուցողական կամ վարույթային այլ գործողություններ կատարել, եթե բացակայում է վարույթը, քննչական խմբի կողմից իրականացնելու անհրաժեշտությունը (ՀՀ քր. դատ. օր.-ի 40-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ):

Երկրորդ՝ այլ վայրում առանձին ապացուցողական կամ վարույթային այլ գործողություններ կատարելու անհրաժեշտության դեպքում քննիչն իրավասու է միջնորդելու իր անմիջական վերադասը հանդիսացող քննչական մարմնի ղեկավարին՝ իր իրավասության սահմաններում ապահովելու դրանց կատարումը՝ հանձնարարություն տալու կամ քննչական փոխօգնության խնդրանք ներկայացնելու եղանակով (ՀՀ քր. դատ. օր.-ի 182-րդ հոդվածի 2-րդ մաս):

Հետաքննիչը գաղտնի քննչական գործողությունները կարող է կատարել

բացառապես քննիչի հանձնարարության հիման վրա (ՀՀ քր. դատ. օր.-ի 188-րդ հոդվածի 2-րդ մաս):

Օրենսդիրը հետաքննիչին լիազորել է հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում կատարել ձերբակալմանը ուղեկցող անձնական խուզարկություն (ՀՀ քր. դատ. օր.-ի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ): Այս պարագայում հետաքննիչն անձնական խուզարկությունը կատարում է մինչև քրեական վարույթ սկսելը և քննիչի հանձնարարության բացակայության պայմաններում:

Վերը նշված պահանջների խախտմամբ հավաքված տվյալները համարվում են ապացուցողական կամ վարութային այլ գործողություն կատարելու իրավասություն չունեցող անձի (ոչ պատշաճ սուբյեկտի) կողմից ձեռք բերված տեղեկություններ, այսինքն՝ համարվում են օրենքի էական խախտմամբ ստացված տվյալներ և ճանաչվում են անթույլատրելի:

3.3.3.2. Քննչական խմբում ընդգրկված չլինելը: Եթե նախաքննության կատարումը հանձնարարվել է մի քանի քննիչի, ապա քննչական խմբի քննիչները ապացուցողական գործողություններ կատարելու իրավասություն են ձեռք բերում, եթե նրանք նշված են քննչական մարմնի ղեկավարի՝ քննչական խումբ ստեղծելու որոշումում (ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածի 1-ին մաս):

Քննիչն օժտված չէ ապացուցողական կամ վարութային այլ գործողություն կատարելու իրավասությամբ, եթե նա նշված չէ քննչական խումբ ստեղծելու որոշումում, կամ նշված է եղել, սակայն հետագայում խմբի կազմը փոխվել է, և նա հանվել է խմբի կազմից, կամ հսկող դատախազը խմբի քննիչին հեռացրել է տվյալ վարութին մասնակցելուց:

ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի տեսանկյունից օրենքի էական խախտում չէ, երբ քննիչը կոնկրետ քննչական գործողությունը կատարելիս խախտում է քննչական խմբի ներսում աշխատանքի պլանավորման կամ խմբի անդամների միջև աշխատանքի բաժանման վերաբերյալ քննչական խմբի ղեկավարի հանձնարարությունները: Օրինակ՝ քննչական խմբի ղեկավարը քննչական խմբի աշխատանքները կազմակերպելիս և ղեկավարելիս կոնկրետ տեսակի քննչական գործողության կատարումը հանձնարարել է քննչական խմբի կոնկրետ քննիչին, սակայն այդ գործողությունը փաստացի կատարել է խմբի մեկ այլ քննիչ: Քննչական խմբի ղեկավարի այս հանձնարարության խախտումը չի համարվում օրենքի էական խախտում, քանի որ խմբի յուրաքանչյուր քննիչ, քննչական խմբում ընդգրկված լինելու փաստով, ձեռք է բերում ցանկացած քննչական գործողություն կատարելու իրավասություն:

Այսպիսով, քննչական խումբ ստեղծելու որոշումում չնշված կամ քննչական խմբի կազմից հանված քննիչի հավաքված տվյալները համարվում են ապացուցողական կամ վարութային այլ գործողություն կատարելու իրավասություն

չունեցող անձի (ոչ պատշաճ սուբյեկտի) կողմից ձեռք բերված տեղեկություններ, այսինքն՝ համարվում են օրենքի էական խախտմամբ ստացված տվյալներ և անթույլատրելի են ճանաչվում:

3.3.3.3. *Առանձին ապացուցողական գործողությունների կատարումը նախաքննության ավարտ հայտարարելուց հետո:* Նախաքննության ժամանակահատվածում քննիչը կարող է վարույթ իրականացնել, իսկ հետաքննիչը՝ գաղտնի քննչական գործողություններ կատարել: Նախաքննության ավարտի մասին վարույթի մասնավոր մասնակիցներին ծանուցելուց հետո քննիչը, թեև դեռևս համարվում է վարույթն իրականացնող մարմին, սակայն այլևս չի կարող կատարել քննչական գործողություններ: Ընդ որում, նախաքննության հետ միաժամանակ ավարտվում է նաև հետաքննությունը, իսկ նախաքննության ավարտման պահին շարունակվող գաղտնի քննչական գործողությունները և օպերատիվ-հետախուզական միջոցառումները դադարեցվում են (ՀՀ քր. դատ. օր.-ի 188-րդ հոդվածի 5-րդ մաս): Բացի այս, մինչև նախաքննության ավարտի մասին ծանուցելը քննիչը միջոցներ է ձեռնարկում իրականացվող գաղտնի քննչական գործողություններն ու օպերատիվ-հետախուզական միջոցառումները դադարեցնելու և դրանց արդյունքները վարույթի նյութերին կցելու համար (ՀՀ քր. դատ. օր.-ի 199-րդ հոդվածի 4-րդ մաս):

Փորձաքննությունը՝ որպես ապացուցողական գործողություն, ևս պետք է ավարտված լինի (եզրակացությունը պետք է կազմված լինի) մինչև նախաքննության ավարտը: Քննիչը, որպեսզի կարողանա որոշել, թե որքանով է հավանական դատարանի կողմից մեղադրյալին վերագրվող հանցանքի համար դատապարտումը և դրա հիման վրա որոշի, թե արդյո՞ք առկա է նախաքննության ավարտ հայտարարելու հիմքեր, պետք է գնահատի մինչդատական վարույթում հավաքված բոլոր ապացույցները (ՀՀ քր. դատ. օր.-ի 199-րդ հոդվածի 1-ին մաս): «Բոլոր ապացույցներ» օրենսդրական ձևակերպման մեջ մտնում է նաև փորձագետի եզրակացություն, սակայն գործնականում, հատկապես քրեական հետապնդման ժամկետների խախտումից խուսափելու համար քննիչները երբեմն նախաքննության ավարտ են հայտարարում այն ժամանակ, երբ նախաքննության կատարման ընթացքում նշանակված փորձաքննությունը դեռևս չի ավարտվել: Այս պրակտիկան թեև խախտում է ՀՀ քր. դատ. օր.-ի 199-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման տրամաբանությունը, սակայն նախաքննության ավարտ հայտարարելու փաստը ինքնին չի վերացնում փորձագետի՝ փորձաքննության կատարումը շարունակելու իրավասությունը: Ի տարբերություն գաղտնի քննչական գործողությունների՝ ՀՀ քր. դատ. օր.-ում նախատեսված չէ նախաքննությունն ավարտելու հետ միաժամանակ փորձաքննությունն ավարտելու ուղղակի պահանջ, ուստի նախաքննության ընթացքում նշանակված, սակայն նախաքննության ավարտ հայտարարելուց հետո շարունակվող փորձաքննության դեպքում փորձագետը համարվում է պատշաճ սուբյեկտ:

Այսպիսով, նախաքննության ավարտ հայտարարելուց հետո քննիչի կամ հետաքննիչի հավաքված տվյալները համարվում են քննչական և գաղտնի գործողություն կատարելու իրավասություն չունեցող անձի (ոչ պատշաճ տուբյեկտի) կողմից ձեռք բերված տեղեկություններ, այսինքն՝ համարվում են օրենքի էական խախտմամբ ստացված տվյալներ և ճանաչվում են անթույլատրելի:

3.3.4. Բացարկյան ենթակա անձի մասնակցությունը

ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում նշված է ևս մեկ նորմ.

«Օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել բացարկյան ենթակա անձի էական մասնակցությամբ, եթե նա իմացել է կամ ողջամտորեն պետք է իմանար վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության մասին»:

Նշված նորմում օգտագործվում է «անձի էական մասնակցությամբ» ձևակերպումը, ուստի այս նորմի կարգավորման առարկայի սահմանները կախված են «ապացուցողական (հիմնականում՝ քննչական) գործողություն կատարող» և «ապացուցողական գործողությանը մասնակցող» ձևակերպումների հարաբերակցությունից: Հնարավոր է մեկնաբանման երկու տարբերակ:

Տարբերակ առաջին՝ հիմք է ընդունվում, որ «քննչական գործողություն կատարող» և «քննչական գործողությանը մասնակցող» ձևակերպումները տարբեր են. քննչական գործողություն կատարում է իրավասու քննիչը, իսկ քննչական գործողությանը մասնակցում են քրեական վարույթին ներգրավված տարբեր տուբյեկտներ: Այս մոտեցման դեպքում ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի կարգավորման առարկան սահմանափակվում է միայն քննչական գործողություններին մասնակցող անձանցով, այն չի տարածվում քննիչի նկատմամբ, որը ոչ թե մասնակցում է գործողությանը, այլ կատարում այն: Այլ կերպ ասած՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը կվերաբերի ոչ թե քննչական գործողություններ կատարող քննիչին, որը ենթակա է բացարկման, այլ քննչական գործողություններին մասնակցող անձանց, որոնք ենթակա են բացարկման:

Քննիչի մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության պարագայում քննիչը կորցնում է այդ վարույթն իրականացնելու իրավասությունը: Եթե քննիչը, իր մասնակցությունը բացառող հանգամանքները անտեսելով, շարունակում է քննությունը, սպա նրա ձեռք բերած տվյալները անթույլատրելի կճանաչվեն ոչ թե ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, այլ 1-ին կետով. տվյալները ձեռք են բերվել քրեական վարույթն իրականացնելու իրավասություն չունեցող քննիչի կողմից:

Տարբերակ երկրորդ՝ հիմք է ընդունվում, որ «քննչական գործողությանը մասնակցող» ձևակերպումը ունի լայն իմաստ, որն ընդգրկում է նաև քննչական գոր-

ծողություն կատարող անձին: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 210-րդ հոդվածում «Քննչական գործողությունների մասնակիցները» վերտառությունը ձևակերպված է լայն իմաստով, քանի որ նշված հոդվածում նախատեսված են նորմեր, որոնք վերաբերում են ոչ միայն քննչական գործողության մասնակիցներին (բառի նեղ իմաստով), այլ նաև քննչական գործողություն կատարող անձին: Ուստի, լայն իմաստով քննչական գործողությունների մասնակիցներն են քննչական գործողություն կատարող քննիչը և քննչական գործողությանը մասնակցող այլ անձինք՝ վարույթի մասնավոր մասնակիցները, վարույթին օժանդակող անձինք, հետաքննության մարմնի աշխատակիցը:

Եթե ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը մեկնաբանվում է ՀՀ քր. դատ. օր.-ի 210-րդ հոդվածի հետ համակարգային կապի լույսի ներքո, ապա կատարվի, որ այս նորմի կարգավորման առարկան լայնանում է և դրա հիման վրա օրենքի էական խախտմամբ ստացված են համարվելու այն տվյալները, որոնք ձեռք են բերվել ինչպես բացարկման ենթակա քննիչի մասնակցությամբ, այնպես էլ այլ անձանց մասնակցությամբ:

Բացարկման ենթակա անձի էական մասնակցությամբ ձեռք բերված տվյալները համարվում են անթույլատրելի, եթե բացարկման ենթակա անձը ակտիվ մասնակցություն է ունեցել ապացուցողական գործողությանը, օրինակ՝ մեղադրյալի հարցաքննությանը մասնակցած պաշտպանն ակտիվորեն օգտվել է մեղադրյալին հարցեր տալու իրավունքից: Ապացուցողական գործողություններին էական մասնակցություն է համարվում նաև այն իրավիճակը, երբ գործողության մասնակիցն իր կարգավիճակի ուժով պետք է կատարեր որոշակի գործողություններ՝ տալ հարցեր, քննչական գործողության արձանագրությունում ներկայացնել առարկություններ, դադարեցնել քննչական գործողություն կատարող քննիչի ապօրինի գործողությունները և այլն, սակայն բացարկման ենթակա հանգամանքների ուժով ձեռնպահ է մնացել իր պոզիտիվ պարտականությունները կատարելուց: Օրինակ՝ ընթերական վարույթն իրականացնող մարմնի հետ անձնական կախվածության հարաբերությունների մեջ գտնվելու ուժով փաստացի չի ծանոթացել համապատասխան քննչական գործողության արձանագրությանը, չի ներկայացրել համապատասխան դիտողություններ:

Եզրակացություն

ՀՀ Սահմանադրությունում ամրագրված է ապացույցի թույլատրելիությանը վերաբերող երկու նորմ: Առաջինը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասն է, որը պարունակում է ապացույց ձեռք բերող իրավասու սուբյեկտին վերաբերող՝ ապացույցի թույլատրելիության իմպլիցիտ պոզիտիվ կանոն, իսկ երկրորդը ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասն է, որը պարունակում է ապացույց ձեռք բերելիս մարդու հիմնական իրավունքներին վերաբերող՝ ապացույցի թույլատրելիության էքսպլիցիտ նեգատիվ կանոն:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «պատշաճ սուբյեկտին» վերաբերող կանոնի համաձայն՝ քրեադատավարական կարգավիճակ ունեցող պետական մարմինների (ՀՀ դատարանների, դատախազության, քննչական մարմինների և այլն) ու պաշտոնատար անձանց (դատավորի, դատախազի, քննիչի և այլն) հավաքած ապացույցները թույլատրելի են, եթե այդ մարմինները և անձինք Սահմանադրությամբ կամ օրենքներով լիազորված են կատարելու համապատասխան ապացուցողական գործողությունները:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասի տեսանկյունից քրեական դատավարությունում արդար դատաքննության իրավունքի խաթարումը բարձր ինտենսիվության աստիճանի միջամտությամբ կամ լայն մասշտաբի խախտումներն են:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Ղամբարյան Ա., Ղազարյան Ա., Թադևոսյան Ա., Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (օրենսդրությունը, սկզբունքները և սուբյեկտները): Գիտաուսումնական ձեռնարկ / Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան. Եր.: Տիգրան Մեծ, 2024.
Ghambaryan A., Ghazaryan A., Tadevosyan A., Criminal procedure of the Republic of Armenia (legislation, principles and subjects). Scientific study manual / Sci. ed. A. Ghambaryan. Yer.: Tigran Mets, 2024.
2. Ղամբարյան Ա., Ապացույցների թույլատրելիությունը քրեական դատավարությունում (մինչդատական վարույթ): Եր.: «Եգեա», 2004, 132 էջ.
Ghambaryan A., Admissibility of evidence in criminal proceedings (pre-trial proceedings). Yer.: “Egea”, 2004, 132 pages.
3. Ղամբարյան Ա., Քրեական վարույթ նախաձեռնելը (գիտագործնական մեկնաբանություններ): Եր.: Տիգրան Մեծ, 2022, 96 էջ
Ghambaryan A., Initiating of the criminal proceedings (scientific comments). Yer.: Tigran Mets, 2022, 96 pages.
4. Ղամբարյան Ա., Ղազարյան Ա., Դատախազական անհնազանդություն քննչական ենթակայության նկատմամբ (օրենսդրի լռությունը և դատավորի թողությունը) // ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր: 2021, № 1 (101), էջեր 7-40:
Ghambaryan A., Ghazaryan A., Prosecutor’s disobedience to the investigative authority (the silence of the law is the omission of the judge) // Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia. 2021, No. 1 (101), pages 7-40.
5. Ղամբարյան Ա., Ղազարյան Ա., Քննչական ենթակայությունը և ընդդատությունը (գիտագործնական մեկնաբանություններ), Եր.: Մագաղաթ, 2023, 240 էջ:
Ghambaryan A., Ghazaryan A., Investigative subordination and anti-judgment (scientific comments), Yer. Paper 2023, 240 pages.
6. Մելքոնյան Դ., Քրեական գործով ապացույցներն անթույլատրելի ճանաչելու հիմքերը և դատավարական կարգը: Իրավ. գիտ. թեկնած. ստենախոսություն: Եր.: 2006:
Melkonyan D., Grounds and procedure for declaring evidence inadmissible in a criminal case. Candidate of Legal Sciences Dissertation. Yer. 2006
7. Մեղրյան Ս., Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում: Եր.: Արդարադատության ակադեմիա, 2020, 341 էջ:
Meghryan S., Proof and evidence in civil proceedings of the Republic of Armenia. Yer.: Academy of Justice, 2020, 341 pages.

8. Барабанов П. К., Уголовный процесс в США. М.: Изд. «Спутник +», 2023, 731 стр.
Barabanov P. K., Criminal proceedings in the USA. M.: Publishing house. "Sputnik +", 2023, 731 pages
9. Барыгина А. А., Доказывание в уголовном процессе: допустимость доказательств: учебное пособие. 2-е изд., перераб. и доп. М.: Изд. Юрайт, 2019, 204 стр.
Barygina A. A., Proof in criminal proceedings: admissibility of evidence: textbook. 2nd ed., revised. and additional M.: Publishing house. Yurait, 2019, 204 pages.
10. Галлиган Д., Полянский В. В., Старилов Ю. Н., Административное право: история развития и основные современные концепции. М.: Изд. Юристъ, 2002. 410 стр.
Galligan D., Polyansky V. V., Starilov Yu. N., Administrative law: history of development and basic modern concepts. M.: Publishing house. Lawyer, 2002, 410 pages.
11. Дикарев И. С., Правила допустимости доказательств с позитивным характером в уголовном процессе // Вестник Восточно-Сибирского института МВД России. 2019. № 2. С.112-120.
Dikarev I. S., Rules for the admissibility of positive evidence in criminal proceedings // Bulletin of the East Siberian Institute of the Ministry of Internal Affairs of Russia. 2019. No. 2. P.112-120.
12. Ерпылёв И. В. Допустимость доказательств в уголовном процессе России и зарубежных стран. М.: Изд. Юрлитинформ, 2017.
Erpylev I. V., Admissibility of evidence in criminal proceedings in Russia and foreign countries. M.: Publishing house. Yurlitinform, 2017.
13. Защита по уголовному делу: пособие для адвокатов / Под ред. Е. Ю. Львовой. М: Изд. Юристъ, 1999, 219 стр.
Defense in a criminal case: a manual for lawyers / Ed. E. Yu. Lvovoy. M: Ed. Lawyer, 1999, pages 219
14. Кипнис Н. М., Допустимость доказательств в уголовном водстве. М.: Изд. Юристъ, 1995, 128 стр.
Kipnis N. M., Admissibility of evidence in criminal proceedings. M.: Publishing house. Lawyer, 1995, 128 pages.
15. Кокорев Л. Д., Кузнецов Н. П. Уголовный процесс: доказательства и доказывание. Воронеж. Изд. Воронежского университета, 1995, 272 стр.
Kokorev L. D., Kuznetsov N. P. Criminal process: evidence and proof. Voronezh. Ed. Voronezh University, 1995, 272 pages.
16. Костенко Р. В., Понятие и признаки уголовно-процессуальных доказательств. М.: Изд. Юрлитинформ, 2006, 240 стр.

- Kostenko R. V., The concept and signs of criminal procedural evidence. M.: Publishing house. Yurlitinform, 2006, 240 pages.
17. Костенко Р. В., Кравченко М. Е., Допустимость вещественных доказательств в уголовном процессе: монография. М.: Изд. Юрлитинформ, 2018.
Kostenko R. V., Kravchenko M. E., Admissibility of material evidence in criminal proceedings: monograph. M.: Publishing house. Yurlitinform, 2018.
18. Недопустимость доказательств в уголовном процессе Российской Федерации и государств англо-американской и романо-германской правовых семей: учебное пособие. Под науч. ред. А. Г. Волеводза. М.: Изд. Прометей, 2022, 466 стр.
Inadmissibility of evidence in criminal proceedings of the Russian Federation and the states of the Anglo-American and Romano-Germanic legal families: a textbook. Under scientific ed. A. G. Volewodza. M.: Publishing house. Prometheus, 2022, 466 pages.
19. Сильнов М.А. Вопросы обеспечения допустимости доказательств в уголовном процессе (досудебные стадии). М.: Изд. МЗ-Пресс, 2001, 112 стр.
Silnov M.A. Issues of ensuring the admissibility of evidence in criminal proceedings (pre-trial stages). M.: Publishing house. MZ-Press, 2001, 112 pages.
20. Строгович М. С. Курс советского уголовного процесса. Том 1. Основные положения науки советского уголовного процесса. М.: Изд. Наука, 1968, 468 стр.
Strogovich M. S. Course of Soviet criminal procedure. Volume 1. Basic provisions of the science of Soviet criminal procedure. M.: Publishing house. Science, 1968, 468 pages
21. Теория доказательств в советском уголовном процессе. Отв. Ред. Н.В. Жогин, изд. 2-е исп. и доп. М.: Изд. Юридическая литература, 1973, 736 стр.
Theory of evidence in Soviet criminal proceedings. Rep. Ed. N.V. Zhogin, ed. 2nd ispr. and additional M.: Publishing house. Legal literature, 1973, 736 pages.
22. Треушников М.К. Судебные доказательства. М.: Изд. Городец 2004, 272 стр.
Treushnikov M.K. Forensic evidence. M.: Publishing house. Gorodets 2004, 272 pages.
23. Уголовно-процессуальное право Российской Федерации // в 2 ч. Часть 1; под ред. Г. М. Резника. 2-е изд., перераб. и доп. М.: Изд. Юрайт, 2019, 452 стр.
Criminal procedural law of the Russian Federation // in 2 parts. Part 1; edited by G. M. Reznik. 2nd ed., revised. and additional M.: Publishing house. Yurait, 2019, 452 pages.

Artur Ghambaryan

Chairman of the Department of Theory of Law and Constitutional Law at Russian-Armenian University,

Doctor of Juridical Sciences, Professor, Honored Lawyer of the Republic of Armenia, Member of the Editorial Board of the Scientific-Practical Journal “Legality” of the RA Prosecutor’s Office

CONSTITUTIONAL RULES OF ADMISSIBILITY OF CRIMINAL EVIDENCE¹

Abstract

The article discusses the constitutional-legal and criminal procedure bases of admissibility of evidence. The author notes that several groups of evidence admissibility norms are fixed in the Constitution of RA. The first refers to the existence of the authority provided by the law to obtain evidence by an official (Part 1 of Article 6 of the Constitution of the Republic of Armenia), the second refers to the evidence obtained in violation of basic rights or the right to a fair trial (Part 3 of Article 63 of the Constitution of the Republic of Armenia).

The evidence obtained in violation of the rules of investigative subordination is considered in the context of the violation of Article 6, Part 1 of the Constitution of RA, because the rules of investigative subordination are, in fact, provisions that give the investigator the authority to collect evidence (conduct a preliminary investigation) in a given proceeding. The wording “The proceeding (case) is subject to the investigator of the investigative body” is similar to the wording “the investigator of the investigative body is authorized to conduct a preliminary investigation in the given proceeding.” From the point of view of Article 63, Part 3 of the Constitution of RA, the violation of the right to a fair trial should not be equated with any violation of the right to a fair trial. Violations of the right to a fair trial are high-intensity interference or widespread violations.

Keywords: violation of the fundamental rights; evidence; violation of the right to a fair trial; jurisdiction; investigative authority.

¹ The article was presented on 21.06.2024 and was reviewed on 25.10.2024.

Артур Гамбарян

*Заведующий кафедрой теории права и конституционного права
Российско-Армянского (Славянского) Университета, доктор
юридических наук, профессор, заслуженный юрист Республики Армения,
член редакционной коллегии научно-практического журнала
“Законность” Прокуратуры РА*

КОНСТИТУЦИОННЫЕ ПРАВИЛА ДОПУСКА УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫХ ДОКАЗАТЕЛЬСТВ¹

Абстракт

В статье рассматриваются конституционно-правовые и уголовно-процессуальные основы допустимости доказательств. Автор отмечает, что в Конституции РА закреплены несколько групп норм допустимости доказательств. Первое относится к существованию предусмотренных законом полномочий для получения доказательств должностным лицом (часть 1 статьи 6 Конституции Республики Армения), второе - к доказательствам, полученным с нарушением основных прав или права на справедливое судебное разбирательство (часть 3 статьи 63 Конституции Республики Армения).

Доказательства, полученные с нарушением правил следственной субординации, рассматриваются в контексте нарушения части 1 статьи 6 Конституции РА, поскольку правила следственной субординации по сути являются положениями, наделяющими следователя полномочиями собирать доказательства. Доказывание (проведение предварительного следствия) по данному процессуальному делу. Формулировка «Производство (дело) находится в ведении следователя следственного органа» эквивалентна формулировке «Следователь следственного органа уполномочен производить предварительное расследование по данному производству».

С точки зрения части 3 статьи 63 Конституции РА, нарушение права на справедливое судебное разбирательство не должно приравниваться к какому-либо нарушению права на справедливое судебное разбирательство. Нарушения права на справедливое судебное разбирательство представляют собой серьезное вмешательство или широкомасштабные нарушения.

Ключевые слова: нарушение основных прав; доказательства; нарушение права на справедливое судебное разбирательство; подсудность; следственный орган.

¹ Статья была представлена 21.06.2024 и прошла рецензирование 25.10.2024.

Ալիսա Ամիրխանյան

*ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական
և իրավական ապահովման վարչության ավագ դատախազ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ*

ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍԱՑՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ¹

Համառոտագիր

Կոռուպցիան իր ամենատարբեր դրսևորումներով մշտապես եղել և մնում է հասարակության լայն շերտերին անհարմարություն և անհանգստություն պատճառող, քաղաքացիների շրջանում վրդովմունքի, անապահովության և անարդարության զգացումներ առաջացնող երևույթ, որը ծնում է ապօրինությունների ու ամենաթողության միջավայր՝ արժեզրկելով ինչպես անհատի իրավունքների համալիրն ու արժանապատիվ կեցությունը, այնպես էլ հեղինակազրկելով պետությունն ու սպառնալիք ստեղծելով պետականության հիմքերի համար:

Վերջին տարիներին մեր երկրում տեղի ունեցած հասարակական-քաղաքական իրադրության փոփոխման արդյունքում կոռուպցիայի դեմ պայքարը՝ կապված կոռուպցիային հակազդելու աննախադեպ քաղաքական կամքի առկայության հետ, նոր թափ և բովանդակություն է ձեռք բերել: Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելումը և դրա դեմ պայքարը հռչակվել են որպես ռազմավարական նշանակություն ունեցող առաջնահերթություններ:

Նման պայմաններում կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարի միջազգայնորեն ընդունված նոր գործիքների ներդրումը և դրանց շարունակական կատարելագործումը՝ միտված կոռուպցիայի հակազդմանն ինչպես քաղաքացիաիրավական, վարչաիրավական, այնպես էլ քրեաիրավական հարթությունում:

Այս համատեքստում ավելի քան կարևորվում է ապօրինի հարստացման հանցակազմի վերլուծությունը, այդ թվում՝ դրա՝ միջազգային-իրավական ամրագրման համատեքստում:

Ըստ այդմ, հողվածում փորձ է արվել անդրադառնալ ապօրինի հարստացման՝ որպես հանցագործության ամրագրմանը միջազգային-իրավական փաստաթղթերում, ապօրինի հարստացման դեմ պայքարում օտարերկրյա

¹ Հոդվածը ներկայացվել է 07.03.2024 թ., գրախոսվել է 21.05.2024 թ.:

պետությունների կողմից դրսևորված հիմնական մոտեցումներին: Հողվածում ներկայացվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավամեկնաբանությունները՝ կապված ապօրինի հարստացման ինստիտուտի հետ սերտորեն փոխկապակցված անմեղության կանխավարկածի սկզբունքին, ինչպես նաև արդար դատաքննության բաղադրատարր հանդիսացող անձի լռելու և իր դեմ ցուցումներ տալու պարտականությունից ազատված լինելու իրավունքներին՝ ներկայացնելով համապատասխան եզրահանգումներ:

Հիմնաբառեր - ապօրինի հարստացում, կոռուպցիայի դեմ պայքար, «Կոռուպցիայի դեմ կոնվենցիա», անմեղության կանխավարկած, ապօրինի ծագում ունեցող գույք:

Ներածություն

Կոռուպցիան իր ամենատարբեր դրսևորումներով մշտապես եղել և մնում է հասարակության լայն շերտերին անհարմարություն և անհանգստություն պատճառող, քաղաքացիների շրջանում վրդովմունքի, անապահովության և անարդարության զգացումներ առաջացնող երևույթ, որը ծնում է ապօրինությունների ու ամենաթոշուրյան միջավայր՝ արժեզրկելով ինչպես անհատի իրավունքների համալիրն ու արժանապատիվ կեցությունը, այնպես էլ հեղինակագրկելով պետությունն ու սպառնալիք ստեղծելով պետականության հիմքերի համար:

Վերջին տարիներին մեր երկրում տեղի ունեցած հասարակական-քաղաքական իրադրության փոփոխման արդյունքում կոռուպցիայի դեմ պայքարը՝ կապված կոռուպցիային հակազդելու աննախադեպ քաղաքական կամքի առկայության հետ, նոր թափ և բովանդակություն է ձեռք բերել: Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելումը և դրա դեմ պայքարը հռչակվել են որպես ռազմավարական նշանակություն ունեցող առաջնահերթություններ:

Նման պայմաններում կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարի միջազգայնորեն ընդունված նոր գործիքների ներդրումը և դրանց շարունակական կատարելագործումը՝ միտված կոռուպցիայի հակազդման ինչպես քաղաքացիաիրավական, վարչաիրավական, այնպես էլ քրեաիրավական հարթությունում:

Այս համատեքստում ավելի քան կարևորվում է ապօրինի հարստացման հանցակազմի վերլուծությունը՝ այդ թվում, դրա՝ միջազգային-իրավական ամրագրման համատեքստում:

Ըստ այդմ, հողվածում փորձ է արվել անդրադառնալ ապօրինի հարստացման՝ որպես հանցագործության ամրագրմանը միջազգային-իրավական փաստաթղթերում, ապօրինի հարստացման դեմ պայքարում օտարերկրյա պետությունների կողմից դրսևորված հիմնական մոտեցումներին: Հողվածում ներկայացվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավա-

մեկնաբանությունները՝ կապված ապօրինի հարստացման ինստիտուտի հետ սերտորեն փոխկապակցված անմեղության կանխավարկածի սկզբունքին, ինչպես նաև արդար դատաքննության բաղադրատարր հանդիսացող անձի լռելու և իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատված լինելու իրավունքներին:

Ապօրինի հարստացման միջազգային-իրավական ամրագրումը

Կոռուպցիայի դեմ պայքարի կառուցակարգերն արդեն վաղուց դադարել են կարգավորում ստանալ բացառապես ներպետական իրավական կարգավորման տիրույթում և վերածվել միջազգային-իրավական տարբեր փաստաթղթերում հանդիպող հարցադրման՝ նպատակ ունենալով առավել կազմակերպված ձևով պայքարել հիշյալ երևույթի դեմ:

Հիշյալ իրավական փաստաթղթերից է Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան (այսուհետ՝ նաև Կոնվենցիա), որն ընդունվել է 2003 թվականի հոկտեմբերի 31-ին և ուժի մեջ մտել 2005 թվականի դեկտեմբերի 14-ին: Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Կոնվենցիան դեռևս 2005 թվականի մայիսի 19-ին և վավերացրել 2007 թվականի մարտի 8-ին: Համաձայն Կոնվենցիայի 1-ին հոդվածի՝ Կոնվենցիայի նպատակներն են.

ա) կոռուպցիան կանխարգելելուն և դրա դեմ ավելի արդյունավետ և ներգործուն պայքարելուն ուղղված միջոցների խրախուսումը և ուժեղացումը,

բ) կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարում, այդ թվում՝ արժեքների վերադարձման ուղղությամբ միջազգային համագործակցության և տեխնիկական օգնության խրախուսումը, դյուրացումը և օժանդակումը,

գ) պետական գործերի և պետական սեփականության ազնիվ, պատասխանատու և պատշաճ կառավարման խրախուսումը:

Նշված նպատակներին հասնելու համար էլ, ի թիվս այլ կարգավորումների, Կոնվենցիայի 20-րդ հոդվածն ամրագրում է. **«Իր սահմանադրությունը և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքները պահպանելու պայմանով՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ որպես քրեական իրավախախտում ճանաչվի անօրինական հարստացման արարքը, երբ դա կատարվում է դիտավորությամբ, այսինքն՝ պաշտոնատար անձի ակտիվների նշանակալից ավելացումը, որը գերազանցում է նրա օրինական եկամուտները, և որը նա չի կարող խելամտորեն հիմնավորել»:**

Բացի ՄԱԿ-ի կոնվենցիայից, միջազգային մակարդակում ապօրինի հարստացումը՝ որպես հանցանք, սահմանվել է 1996 թվականի «Կոռուպցիայի դեմ» միջամերիկյան կոնվենցիայում և 2003 թվականի «Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Աֆրիկյան միության կոնվենցիայում:

Հատկանշական է, որ ի տարբերություն «Կոռուպցիայի դեմ» միջամերիկյան կոնվենցիայի³, որում ապօրինի հարստացումը քրեականացնելու առումով որդեգրվել է «ազդեհիվ մոտեցում»՝ փաստաթուղթը ստորագրած պետություններին կոչ անելով պարտադիր կերպով այն սահմանել որպես հանցագործություն՝ ՄԱԿ-ի կոնվենցիայում և «Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Աֆրիկյան միության կոնվենցիայում ապօրինի հարստացումը որպես պարտադիր հանցագործություն սահմանելու վերաբերյալ դրույթները պարտավորեցնող բնույթ չունեն⁴: Այսպես՝ ՄԱԿ-ի կոնվենցիայի 20-րդ և «Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Աֆրիկյան միության կոնվենցիայի 8-րդ հոդվածները **կոչ են անում պետություններին իրենց իրավական համակարգի հիմնարար սկզբունքների, ներպետական օրենսդրության դրույթների հաշվառմամբ քննարկել ապօրինի հարստացման քրեականացման անհրաժեշտությունը**:

Միջազգային հակակոռուպցիոն կոնվենցիաները նպաստեցին պետությունների կողմից ապօրինի հարստացման վերաբերյալ օրենքների ընդունումն արագացնելու և դրա միջազգային ճանաչման գործընթացին: Ներկայումս շուրջ 70 երկրներ ընդունել են ապօրինի հարստացման վերաբերյալ օրենքներ, հիմնականում զարգացող երկրները⁵:

Ապօրինի հարստացումն առաջինը քրեականացրել են Արգենտինան և Հնդկաստանը 1960-ական թվականներին⁶:

Ներկայումս ապօրինի հարստացման վերաբերյալ դրույթներ կարելի է գտնել աշխարհի բազմաթիվ տարածաշրջաններում՝ Հյուսիսային Ամերիկայի և Արևմտյան Եվրոպայի մեծ մասի երկրների նշանակալից բացառություններով⁷: Այսպես՝ ուսումնասիրության ենթարկելով ապօրինի հարստացման «քրեականացման աշխարհագրությունը»՝ կարելի է փաստել, որ ներկայումս այն՝ որպես հանցագործություն, սահմանված է նախկին Խորհրդային Միության (Լիտվա, Դոլդգոստան, Մոլդովա, Հայաստան, Ուկրաինա), Արևելյան Եվրոպայի (Մակեդոնիա), Լատինական Ամերիկայի (Արգենտինա, Գայանա, Պերու, Չիլի, Պանամա, Բոլիվիա, Կոլումբիա, Կոստա-Ռիկա, Կուբա, Էկվադոր, Էլ Սալվադոր, Հոնդուրաս, Ջամայկա, Մեքսիկա, Նիկարագուա, Պարագվայ, Վենեսուելա և այլն), Ասիայի (Բանգլադեշ, Բութան, Բրունեյ - Դարուսալամ, Ինդոնեզիա, Լիբանան, Մալայի, Մալազիա, Նեպալ, Պակիստան, Ֆիլիպիններ, Չինաստան, Հոն-

³ Տե՛ս Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Աֆրիկյան միության կոնվենցիայի 8-րդ հոդված:

⁴ Տե՛ս «Չհիմնավորված հարստության քրեականացման հիմնախնդիրը, ապօրինի հարստացման հանցանքը և մարդու իրավունքների խախտումները», Չիֆրի Բոլս, Օրենսդրություն և հանրային քաղաքականություն, [Vol. 17:835 2014], էջ 851:

⁵ Տե՛ս On the take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption, Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, Tammar Berger, p. 8:

⁶ Տե՛ս վերոնշյալ ձեռնարկը, 7-8 էջեր:

⁷ Տե՛ս վերոնշյալ ձեռնարկը, էջ 9:

կոնգ (Չինաստանի հատուկ վարչական շրջան), Հնդկաստան և այլն), Աֆրիկայի (Ալժիր, Անգոլա, Բոտսվանա, Գաբոն, Եգիպտոս, Եթովպիա, Լեսոտո, Մադագասկար, Նիգերիա, Ռուանդա, Սենեգալ, Սիերա Լեոնե, Ուգանդա և այլն), Օվկիանիայի (Ավստրալիա) երկրներում:

Այն պետությունների շարքում, որոնք ընտրել են պաշտոնատար անձանց ապօրինի հարստացումը չքրեականացնելու մոտեցումը, կան բազմաթիվ երկրներ, որոնք նախապատվությունը տվել են խնդրի լուծման այլընտրանքային միջոցներին՝ մասնավորապես հեշտացնելով ապօրինի ձեռք բերված եկամուտների հետապնդման կամ դրանց բռնագանձման գործընթացը⁸:

Այսպես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում ապօրինի հարստացման համար քրեական պատասխանատվության ինստիտուտի փոխարեն գործում է պաշտոնատար անձանց ակտիվների հայտարարագրման գործուն համակարգ՝ զուգակցված հարկային օրենսդրության խստագույն միջոցների կիրառմամբ⁹:

Արևելյան Եվրոպայի որոշ երկրներում, այդ թվում՝ Բելգիայում, Լեհաստանում, ևս փորձ է արվել խնդիրը լուծել պաշտոնատար անձանց եկամուտների և գույքի հայտարարագրման խիստ համակարգի ներդրման միջոցով՝ քրեական պատասխանատվության միջոցներ սահմանելով հայտարարագրում կեղծ տեղեկություններ մտցնելու կամ հայտարարագրման ենթակա գույքը չհայտարարագրելու համար¹⁰:

Մի շարք եվրոպական երկրներում էլ ապօրինի հարստացման համար պատասխանատվության միջոցները գործում են քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական հարթությունում: Այսպես՝ ներկայումս Ռուսիինիայում ապօրինի հարստացման համար գործում են վարչաիրավական պատասխանատվության կառուցակարգեր:

Հատկանշական է, որ մինչ 2010 թվականը Ռուսիինիայում ապօրինի հարստացման համար գործում էր քրեական պատասխանատվություն: 2010 թվականին Ռուսիինիայի սահմանադրական դատարանը որոշում է կայացրել, համաձայն որի՝ Ազգային բարեխղճության մարմնի լիազորությունները, որը ապօրինի հարստացման հանցանքի քննության համար պատասխանատու մարմինն էր, հակասահմանադրական են և հակասում են անմեղության կանխավարկածի սկզբունքին¹¹:

Մլովակիայում ապօրինի հարստացման դեմ պայքարը, մասնավորապես՝ ապօրինի ձեռք բերված գույքի բռնագրավումը, գործում է քաղաքացիաիրավա-

⁸ Տե՛ս վերոնշյալ ձեռնարկը՝ էջ 9:

⁹ Տե՛ս «Չհիմնավորված հարստության քրեականացման հիմնախնդիրը. ապօրինի հարստացման հանցանքը և մարդու իրավունքների խախտումները», Ջիֆրի Բոլս, Օրենսդրություն և հանրային քաղաքականություն, [Vol. 17:835 2014], էջ 875-876:

¹⁰ Տե՛ս վերոնշյալ ձեռնարկը՝ էջ 9:

¹¹ Տե՛ս «Ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծություն» Հայաստանի ՔԿՀ-ների հակակոռուպցիոն կոալիցիա՝ ի դեմս «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, 2016 թվական, Երևան, էջեր 27-28:

կան հարթությունում¹²: Ռուսաստանի Դաշնությունում ևս փորձ է արվել խնդիրը լուծել քաղաքացիաիրավական հարթությունում՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող և այլ անձանց ծախսերի և եկամուտների համապատասխանության նկատմամբ վերահսկողության մասին» 2012 թվականի դեկտեմբերի 3-ի դաշնային օրենքի գործողության շրջանակներում, որի դրույթների ուժով ՌԴ դատախազությանը վերապահվել է քաղաքացիական դատավարությամբ սահմանված կարգով գույքը ՌԴ-ին վերադարձնելու պահանջի վերաբերյալ դատարան հայց ներկայացնելու իրավասությունը, եթե պաշտոնատար կամ այլ անձը չի կարողանում իրեն պատկանող գույքի ծագման աղբյուրի օրինականության վերաբերյալ բավարար տվյալներ ներկայացնել¹³:

Իտալիայում ևս ապօրինի հարստացման համար քրեական պատասխանատվություն առկա չէ, սակայն հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվները պետությանը վերադարձնելու նպատակով գործում է չհիմնավորված հարստացման բռնագանձման ինստիտուտը¹⁴: Ընդ որում, Իտալիան ևս ունեցել է ապօրինի հարստացման դեմ քրեաիրավական միջոցներով պայքարելու փորձառություն, սակայն 1994 թվականին Իտալիայի Սահմանադրական դատարանը հակասահմանադրական է ճանաչել 1992 թվականի N 356 օրենքն այն հիմնավորմամբ, որ «մեղադրյալի կարգավիճակի վրա հիմնված կանխավարկածը խախտում է անմեղության կանխավարկածը»¹⁵:

Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք, կարելի է փաստել, որ ապօրինի հարստացումը՝ որպես քրեաիրավական ինստիտուտ, իր ամրագրումն է ստացել մեծամասամբ Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի և Ասիայի զարգացող երկրներում, որոնց բնորոշ է կամ գոնե արարքի քրեականացման պահին բնորոշ է եղել կոռուպցիայի բարձր մակարդակը, ինչը պետություններին ստիպել է կոռուպցիայի դեմ պայքարում դիմել հարաբերականորեն կոշտ միջոցների: Ապօրինի հարստացման քրեականացման նման «աշխարհագրության» վրա իր ազդեցությունն է ունեցել նաև 1996 թվականի «Կոռուպցիայի դեմ» միջամերիկյան կոնվենցիայի IX հոդվածը, որը, ի տարբերություն ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» և Աֆրիկյան միության «Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիաներում առկա դրույթների, պետություններին **պարտավորեցնում է** ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ՝ ապօրինի հարստացումը որպես հանցագործություն սահմանելու համար:

¹² Տե՛ս վերոնշյալ վերլուծությունը, էջեր 29-30:

¹³ Տե՛ս «Պետական պաշտոններ զբաղեցնող և այլ անձանց ծախսերի և եկամուտների համապատասխանության նկատմամբ վերահսկողության մասին» 2012 թվականի դեկտեմբերի 3-ի ՌԴ դաշնային օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մաս:

¹⁴ Տե՛ս ILLICIT ASSETS RECOVERY IN ITALY; Enhancing Integrity and Effectiveness of illegal asset confiscation; Transparency International Italia; 2013 december:

¹⁵ Տե՛ս On the take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption, Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, Tammar Berger, p. 29:

Ինչ վերաբերում է Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի զարգացած տնտեսական համակարգ և ամուր իրավական ավանդույթներ ունեցող երկրներին, ապա վերջիններն ապօրինի հարստացման դեմ պայքարն իրականացնում են հիմնականում վարչաիրավական կամ քաղաքացիաիրավական հարթությունում՝ գերծ մնալով արարքի քրեականացումից և հիմնական շեշտադրումը դնելով ապօրինի ձեռք բերված գույքի բռնագանձման կառուցակարգերի արդյունավետության վրա:

Վերջին տասնամյակներում ապօրինի հարստացումը քրեականացնելու միտում է նկատվում նաև Արևելյան Եվրոպայի (Մակեդոնիա) և նախկին Խորհրդային Միության (Լիտվա, Ղրղզստան, Մոլդովա, Հայաստան, Ուկրաինա) երկրներում: Հիշյալ երկրներում, որպես ապօրինի հարստացումը քրեականացնելու հիմնական հիմնավորում, նշվում է կոռուպցիայի բարձր մակարդակը և դրա դեմ պայքարում հարաբերականորեն խիստ միջոցների որդեգրման անհրաժեշտությունը, թեպետ հիշյալ երկրներում ինստիտուտի իրավակիրառության արդյունավետության վերաբերյալ դատողություններ անելը որոշ դեպքերում վաղ է, որոշ դեպքերում՝ խիստ վիճելի:

Պետությունների կողմից ապօրինի հարստացման քրեականացման հարցում իրենց որոշակի ազդեցությունն ունեցան նաև միջազգային դատարանների կողմից տրված իրավամեկնաբանությունները՝ մասնավորապես կապված այնպիսի խնդրահարույց հարցադրումների հետ, ինչպիսիք են ինստիտուտի հարաբերակցությունն անմեղության կանխավարկածի սկզբունքին ու արդար դատաքննության բաղադրատարր հանդիսացող անձի լռելու և իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատված լինելու իրավունքներին:

Այսպես՝ թեպետ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) մինչ օրս ուղղակիորեն չի անդրադարձել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի (արդար դատաքննության իրավունք) հետ ապօրինի հարստացման ինստիտուտի հարաբերակցության խնդրին, այդուհանդերձ, իր կողմից կայացրած մի շարք վճիռներում անդրադարձ է կատարել փաստական կանխավարկածներին, մեղադրյալի վրա ապացուցման բեռի տեղափոխման հնարավորությանը և այդ դեպքում անձի լռելու ու իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատված լինելու իրավունքներին:

Այսպես՝ ընդհանուր կանոնի համաձայն՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը խախտվում է, երբ ապացուցման բեռը մեղադրանքի կողմից տեղափոխվում է պաշտպանության կողմի վրա¹⁶: Այնուամենայնիվ, պաշտպանության կողմից կարող է բացատրություն պահանջվել այն բանից հետո, երբ մեղադրան-

¹⁶ Տե՛ս Թեյֆներն ընդդեմ Ավստրիայի, գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2001 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատ թիվ 33501/96, 15-րդ կետ:

քի կողմն առերևույթ հիմնավորել է մեղադրյալին ներկայացվող մեղադրանքը¹⁷:

Եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայում հստակորեն նշվում է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը չի արգելում օրենսդիրներին ստեղծել օրենքով կանխավարկած պարունակող հանցակազմեր, քանի դեռ պատշաճ կերպով պահպանված են ռացիոնալության և համաչափության սկզբունքները¹⁸: Այսպես՝ դեռևս 1988 թվականին կայացված «Մալաբյակուն ընդդեմ Ֆրանսիայի» գործում Եվրոպական դատարանն այն իրավական դիրքորոշումն է արտահայտել, որ «Փաստի կամ օրենքի կանխավարկածները գործում են յուրաքանչյուր իրավական համակարգում և պետությունները պետք է սահմանափակեն կանխավարկածները ողջամիտ սահմաններում, որոնցում հաշվի է առնվում մեղադրյալի համար խիստ կարևոր հանգամանքները և ապահովում վերջինիս պաշտպանության իրավունքը»¹⁹:

Հետագայում կայացված մի շարք վճիռներում Եվրոպական դատարանը կիրառում է փաստի կանխավարկածը և հնարավոր համարում ապացուցման բեռի տեղափոխումը մեղադրյալի վրա, եթե դա կատարվում է վերջինիս պաշտպանության իրավունքի պահպանմամբ և, ի վերջո, բխում է պաշտպանության իրավունքից: Այսպես՝ «Փամ Հոանգն ընդդեմ Ֆրանսիայի» գործով կասկածյալը ձերբակալվել էր Ֆրանսիայի սահմանին՝ թմրամիջոց տեղափոխելիս: Ֆրանսիական օրենսդրությունը սահմանում է, որ արգելված ապրանքներ տեղափոխելը, որոնց շարքն է դասվում նաև հերոինը, համարվում է անօրինական, եթե այդ ապրանքը տեղափոխող անձը չի ապացուցում հակառակը, օրինակ՝ ներկայացնում է արդարացնող բավարար ապացույցներ կամ ապացուցում, որ գործողությունը կատարվել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կամ սխալի հետևանք է, որից խուսափելն անհնար էր: Նշյալ գործում պաշտպանության կողմը չի ներկայացրել արդարացնող ապացույցներ, իսկ մեղադրյալը հրաժարվել է տալ որևէ բացատրություն: Եվրոպական դատարանը, քննելով դիմողի բողոքը, ընդունել է, որ անթույլատրելի ոչինչ չկա այն ենթադրությունում, թե անձը, որը տիրապետում է ընդհանուր առմամբ արգելված որևէ բանի, պարտավոր է բացատրել այդ փաստը, հակառակ դեպքում մեղավոր կճանաչվի²⁰:

¹⁷ Տե՛ս Թելֆներն ընդդեմ Ավստրիայի, 18-րդ կետ, Պոլետանն ու Ազիրովիկն ընդդեմ Մակեդոնիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2016 թվականի մայիսի 12-ի վճիռը, զանգատ թիվ 26711/07, 32786/10 և 34278/10, 63-67 կետեր:

¹⁸ Տե՛ս On the take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption, Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, Tammar Berger, p. xiv:

¹⁹ Տե՛ս Մալաբյակուն ընդդեմ Ֆրանսիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1988 թվականի հոկտեմբերի 7-ի վճիռը, զանգատ թիվ № 10519/83, 28-րդ կետ:

²⁰ Տե՛ս Փամ Հոանգն ընդդեմ Ֆրանսիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1992 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, զանգատ թիվ 13191/87:

Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում²¹ այն իրավական դիրքորոշումն է արտահայտում, որ յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքը ներառում է նաև լռություն պահպանելու և իր մեղքը հաստատող ցուցմունքներ չտալու իրավունքը: «Սանդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով Դատարանն այն իրավական դիրքորոշումն է արտահայտում, համաձայն որի՝ «Ցուցմունքներ չտալու իրավունքը և դրա բաղկացուցիչ մասը՝ իր դեմ ցուցմունքներ չտալու իրավունքը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածում հատուկ հիշատակված չեն, բայց, այնուամենայնիվ, դրանք հանրաճանաչ միջազգային նորմեր են, որոնք ընկած են արդար դատաքննության հասկացության հիմքում, որի մասին խոսվում է 6-րդ հոդվածում: Դրանց իմաստը, *inter alia*, իշխանությունների կողմից չարամիտ հարկադրանքից մեղադրյալին պաշտպանելն է, ինչն օգնում է խուսափել դատական սխալներից և հասնել 6-րդ հոդվածով նախատեսված նպատակներին...: Մասնավորապես, այդ իրավունքը նպաստում է, որ մեղադրանքը չհիմնվի այնպիսի ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել մեղադրյալի կամքին հակառակ՝ հարկադրանքի կամ ճնշման միջոցով: Այս իմաստով, նշված իրավունքը սերտորեն կապված է անմեղության կանխավարկածի հետ, որը նախատեսված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասում»²²:

Մեկ այլ՝ «Ֆանկն ընդդեմ Ֆրանսիայի» գործով Եվրոպական դատարանը, քննարկելով անմեղության կանխավարկածի և լռելու ու իր դեմ ցուցմունք չտալու իրավունքների հարաբերակցության հարցը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում է արձանագրվել այն իրավիճակում, երբ մաքսային ծառայության աշխատակիցները չկարողանալով կամ չցանկանալով այլ միջոցներով ձեռք բերել անձի մեղավորությունը հիմնավորող ապացույցներ, ստիպել են անձին տրամադրել իր մեղավորությունը հիմնավորող փաստաթղթեր:

Մաքսային իրավունքի առանձնահատուկ կարգավորումները Դատարանն անբավարար է գնահատել՝ արդարացնելու համար անձի լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքների սահմանափակումները²³:

Եվրոպական դատարանը «Ցյուլշենն ընդդեմ Բելգիայի» գործով որոշման շրջանակներում ընդգծել է, որ փողերի լվացման հանցակազմի ապացուցման առնչությամբ Վարչակազմի կոնվենցիայով որդեգրված մոտեցումն ինքնին չի կարող դիտարկվել որպես արդար դատաքննության իրավունքի խախտում: Եվրոպական դատարանը, անդրադառնալով դիմումատուի վրա իր գույքային վիճակի վերաբերյալ հավաստի բացատրություն տալու պարտականություն դնելուն,

²¹ Տե՛ս Հենին և ՄաքԳինենսան ընդդեմ Իռլանդիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի դեկտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 34720/97, կետ 40, 59, Ջոն Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության կետ 50, Ֆանկն ընդդեմ Ֆրանսիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1993 թվականի փետրվարի 25-ի վճիռ, գանգատ թիվ 10828/84, կետ 22:

²² Տե՛ս Սանդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1996 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռ, գանգատ թիվ 19187/91:

²³ Տե՛ս Ֆանկն ընդդեմ Ֆրանսիայի, կետ 22:

փաստել է, որ այն ինքնին չի հանդիսանում լռելու իրավունքի խախտում՝ ընդգծելով, որ Կոնվենցիան չի արգելում հաշվի առնել մեղադրյալի լռությունը՝ իր մեղավորությունը պարզելու համար, բացառությամբ, եթե նրա դատապարտումը հիմնված է բացառապես կամ հիմնականում նրա լռության վրա²⁴:

Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքի շրջանակներում իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ՝

- գույքի հանցավոր ծագումը կարող է հաստատվել անուղղակի ապացույցների հիման վրա, այդ թվում՝ եզրահանգումներ անելով այն հանգամանքից, որ մեղադրյալը հրաժարվում է ներկայացնել բացատրություններ գույքի ծագման առնչությամբ²⁵,
- քրեական գործերով արդար դատաքննության հայեցակարգի հետ համատեղելի է դիմումատուի վրա իր գույքային իրավիճակի վերաբերյալ հավաստի բացատրություններ տալու պարտականություն դնելը²⁶:

«Ջոն Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով վճռում Եվրոպական դատարանը քննարկել է «հարկադրանքի աստիճան» հասկացությունը և, վերլուծության ենթարկելով «Ֆանկն ընդդեմ Ֆրանսիայի» գործի փաստական հանգամանքները, արձանագրել է, որ հիշյալ գործում «հարկադրանքը դրսևորվել է քրեական հետապնդում նախաձեռնելու ձևով, հետևաբար հարկադրանքի աստիճանը անհամատեղելի է եղել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին, քանի որ խարխիլ է անձի՝ իր դեմ ցուցմունք չտալու արտոնությունը»²⁷:

Եթե ընդհանրացնելու լինենք, պետք է նկատել, որ Եվրոպական դատարանը անձի լռելու իրավունքի, ինչպես նաև դրա հետ սերտորեն փոխկապված՝ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի խախտում է արձանագրում այն դեպքերում, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմինները **հարկադրում կամ ստիպում են** մեղադրյալին տալ ցուցմունք կամ ներկայացնել մեղավորությունը հաստատող այլ ապացույցներ, իսկ այլ դեպքերում այն դիտարկում է մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման համատեքստում:

Հատկանշական է, որ միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերում ևս նախատեսվում է մեղադրյալի վրա ապացուցման բեռի տեղափոխման հնարավորություն:

²⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ցյուրիչենն ընդդեմ Բելգիայի գործով 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը, գանգատ 23572/07, կետեր 27-30:

²⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ցյուրիչենն ընդդեմ Բելգիայի գործով 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը:

²⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Գրեյսոն և Բիրամն ընդդեմ Միացյալ թագավորության գործով 2008 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը, գանգատներ 19955/05 և 15085/06, կետեր 49, 23: Տե՛ս նաև, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ցյուրիչենն ընդդեմ Բելգիայի գործով 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը, գանգատ 23572/07, կետ 30:

²⁷ Տե՛ս Ջոն Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության, 49-րդ կետ:

Այսպես՝ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 31-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ Մասնակից պետությունները կարող են քննարկել այն մասին պահանջներ սահմանելու հնարավորությունը, որ հանցագործություն կատարած անձը, այն չափով, որքանով այդպիսի պահանջը համապատասխանում է իրենց ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին և դատական ու այլ քննության բնույթին, ապացուցի հանցագործություններից ստացված այնպիսի ենթադրյալ եկամուտների կամ այլ գույքի օրինական ծագումը, որոնք ենթակա են բռնագրավման:

«Անդրազգային կազմակերպված հանցավորության մասին» կոնվենցիայի²⁸ 12-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ Մասնակից պետությունները կարող են քննարկել այն մասին պահանջը պարզելու հնարավորությունը, որ անձը, որը հանցագործություն է կատարել, **ապացուցի հանցագործությունից ստացված ենթադրյալ եկամուտների կամ բռնագրավման ենթակա այլ գույքի օրինական ծագումը՝** այն չափով, որքանով այդպիսի պահանջը համապատասխանում է իրենց ներքին օրենսդրության սկզբունքներին և դատական կամ այլ քննության բնույթին:

Նույնպիսի դրույթ է առկա նաև «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի²⁹ 3-րդ հոդվածի 7-րդ կետում, համաձայն որի՝ Յուրաքանչյուր Կողմ կարող է քննարկել ենթադրյալ եկամուտների կամ բռնագրավման ենթակա այլ սեփականության օրինական ծագումն ապացուցելու բեռի տեղափոխումն ապահովելու հնարավորությունը՝ այն չափով, որքանով այդպիսի միջոցը համապատասխանում է իր ազգային օրենսդրության սկզբունքներին և դատական կամ այլ հետաքննության բնույթին:

Եզրակացություն

Այսպիսով՝ ապօրինի հարստացումը՝ որպես քրեաիրավական ինստիտուտ, իր ամրագրումն է ստացել մեծամասամբ Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի և Ասիայի զարգացող երկրներում, որոնց բնորոշ է կամ գոնե արարքի քրեականացման պահին բնորոշ է եղել կոռուպցիայի բարձր մակարդակը, ինչը պետություններին ստիպել է կոռուպցիայի դեմ պայքարում դիմել հարաբերականորեն կոշտ միջոցների, իսկ Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի զարգացած տնտեսական համակարգ և ամուր իրավական ավանդույթներ ունեցող երկրներն ապօրինի հարստացման դեմ պայքարն իրականացնում են հիմնականում վարչաիրավական կամ քաղաքացիաիրավական հարթությունում՝ զերծ մնալով արար-

²⁸ Ընդունվել և ստորագրվել է 13.12.1957 թվականին, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 29.09.2003 թվականին:

²⁹ Ընդունվել և ստորագրվել է 20.12.1988 թվականին, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 12.12.1993 թվականին:

քի քրեականացումից և հիմնական շեշտադրումը դնելով ապօրինի ձեռք բերված գույքի բռնագանձման կառուցակարգերի արդյունավետության վրա:

Պետությունների կողմից ապօրինի հարստացման քրեականացման հարցում իրենց որոշակի ազդեցությունն են ունեցել նաև միջազգային դատարանների, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արված իրավամեկնաբանությունները՝ մասնավորապես կապված այնպիսի խնդրահարույց հարցադրումների հետ, ինչպիսիք են ինստիտուտի հարաբերակցությունն անմեղության կանխավարկածի սկզբունքին ու անձի լռելու և իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատված լինելու իրավունքներին: Ընդհանուր կանոնի համաձայն՝ Եվրոպական դատարանն անձի լռելու իրավունքի, ինչպես նաև դրա հետ սերտորեն փոխկապված՝ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի խախտում է արձանագրում միայն այն դեպքերում, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմինները **հարկադրում կամ ստիպում են** մեղադրյալին տալ ցուցմունք կամ ներկայացնել մեղավորությունը հաստատող այլ ապացույցներ, իսկ այլ դեպքերում այն դիտարկում է մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման համատեքստում:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի 2003 թվականի կոնվենցիա:
United Nations Convention against Corruption, adopted in 2003.
2. «Կոռուպցիայի դեմ միջամերիկյան կոնվենցիա» (1996 թվական):
The Inter-American Convention against Corruption, adopted in 1996.
3. «Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» 2003 թվականի Աֆրիկյան միության կոնվենցիա:
African Union Convention on Preventing and Combating Corruption, adopted in 2003.
4. «Անդրազգային կազմակերպված հանցավորության մասին» 1957 թվականի կոնվենցիա:
United Nations Convention against Transnational Organised Crime, adopted in 1957.
5. «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի 1998 թվականի կոնվենցիա:
United Nations Convention Against Illicit Traffic in Narcotic Drugs and Psychotropic Substances, adopted in 1998.
6. «Պետական պաշտոններ զբաղեցնող և այլ անձանց ծախսերի և եկամուտների համապատասխանության նկատմամբ վերահսկողության մասին» 2012 թվականի դեկտեմբերի 3-ի ՌԴ դաշնային օրենք:
Federal law of the Russian Federation of December 3, 2012, “On control over compliance of expenses and incomes of public officials and other persons”.
7. «Թելֆներն ընդդեմ Ավստրիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2001 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատ թիվ 33501/96:
The decision of the European Court of Human Rights in the case of Telfner v. Austria on March 20, 2001, application no. 33501/96.
8. «Պոլետանն ու Ազիրովիկն ընդդեմ Մակեդոնիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2016 թվականի մայիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 26711/07, 32786/10 և 34278/10:
The decision of the European Court of Human Rights in the case of Poletan and Azirovik v. the former Yugoslav Republic of Macedonia on May 12, 2016, application no. 6711/07, 32786/10 և 34278/10.
9. «Սալաբակուն ընդդեմ Ֆրանսիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1988 թվականի հոկտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ № 10519/83:
The decision of the European Court of Human Rights in the case of Salabaku v France on October 7, 1988, application no. 10519/83.
10. «Փամ Հոսանգն ընդդեմ Ֆրանսիայի» գործով Մարդու իրավունքների եվրո-

պական դատարանի 1992 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 13191/87:

The decision of the European Court of Human Rights in the case of Pham Hoang v. France on September 25, 1992, application no 13191/87.

11. « Ջոն Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1994 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ, գանգատ թիվ 18731/91:

The decision of the European Court of Human Rights in the case of John Murray v. the United Kingdom on October 28, 1994, application no 18731/91.

12. «Հենին և ՄաքԳիննեսան ընդդեմ Իռլանդիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի դեկտեմբերի 21-ի վճիռ, գանգատ թիվ 34720/97:

The decision of the European Court of Human Rights in the case of Heaney and McGuinness v. Ireland on December 21, 2000, application no 34720/97.

13. «Ֆանկն ընդդեմ Ֆրանսիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1993 թվականի փետրվարի 25-ի վճիռ, գանգատ թիվ 10828/84:

The decision of the European Court of Human Rights in the case of Funk vs France on February 25, 1993, application no 10828/84.

14. «Սանդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1996 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռ, գանգատ թիվ 19187/91:

The decision of the European Court of Human Rights in the case of Saunders v. United Kingdom on December 17, 1996, application no 19187/91.

15. «Ցյուշենն ընդդեմ Բելգիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը, գանգատ 23572/07:

The decision of the European Court of Human Rights in the case of Csyuschen v. Belgium of May 2, 2017, Application no. 23572/07.

16. «Գրեյսոն և Բիրամն ընդդեմ Միացյալ թագավորության» գործով 2008 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը, գանգատներ 19955/05 և 15085/06:

The decision of the European Court of Human Rights in the case of Grayson and Barnham v. United Kingdom, Application no. 19955/05 and 15085/06.

17. «Չիմնավորված հարստության քրեականացման հիմնախնդիրը. ապօրինի հարստացման հանցանքը և մարդու իրավունքների խախտումները», Ջիֆրի Բոլս, Օրենսդրություն և հանրային քաղաքականություն, [ՎՈ. 17:835 2014]: Jeffrey Boles “Criminalizing the Problem of Unexplained Wealth: Illicit Enrichment Offenses and Human Rights Violations” Legislation and Public Policy [Vol. 17:835].

18. On the take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption, Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, Tammar Berger, p. 8.

19. «Ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծություն» Հայաստանի ԶԿՀ-ների հակակոռուպցիոն կոալիցիա՝ ի դեմս «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, 2016 թվական, Երևան:
“Analysis of the expediency of criminalization of illegal enrichment” Anti-corruption coalition, represented by the “Armenian Association of Lawyers” NGO, 2016, Yerevan.
20. ILLICIT ASSETS RECOVERY IN ITALY; Enhancing Integrity and Effectiveness of illegal asset confiscation; Transparency International Italia; 2013 December.

Alisa Amirkhanyan

Senior prosecutor at the Department of Organization, Supervision and Legal Assistance of the Prosecutor General's Office of the Republic of Armenia, Third Rank Counsellor of Justice, Degree applicant of the Department of Criminal Law, Faculty of Law, Yerevan State University

THE INTERNATIONAL-LEGAL REGULATION OF ILLEGAL ENRICHMENT¹

Abstract

In its various manifestations, corruption has always been and remains a phenomenon that causes discomfort and anxiety for the public at large, makes citizens feel indignant, insecure and see injustice, and this entails lawlessness and permissiveness, devaluing both the complex of individual rights and dignified life, as well as discrediting the state, posing a threat to the foundations of statehood.

As a result of the change in the socio-political situation in our country in recent years and due to the unprecedented political will to combat corruption, the fight against corruption has gained new momentum and content. Accordingly, the prevention of corruption and the fight against it in the Republic of Armenia have been declared as priorities of strategic importance.

In such circumstances, it is important to introduce new internationally accepted tools for combating corruption and for their continuous improvement aimed at combating corruption in the civil, administrative and criminal spheres.

In this context, the analysis of the crime of illegal enrichment is more than important, considering the fact that it is new and still insufficiently studied in our legal system.

In this context, the analysis of the crime of illegal enrichment is more than important, particularly in the context of its international legal regulation.

Accordingly, in the article, an attempt was made to address the regulation of illegal enrichment as a crime in international legal documents, the main approaches of foreign states to the fight against illegal enrichment. The article also presents the legal interpretations of the European Court of Human Rights regarding the principle of presumption of innocence, which is closely related to the institution of illegal enrichment, as well as the rights of a person to remain silent and to be relieved of the obligation to testify against him, which is a component of a fair trial and presenting relevant conclusions.

Keywords: illegal enrichment; fight against corruption; "Convention against Corruption"; presumption of innocence; property of illegal origin.

¹ The article was presented on 07.03.2024 and was reviewed on 21.05.2024.

Алиса Амирханян

Старший прокурор управления по организации, контролю и правовому обеспечению, Генеральной прокуратуры Республики Армения, Советник юстиции третьего класса, Соискатель кафедры уголовного права юридического факультета Ереванского государственного университета

МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ НЕЗАКОННОГО ОБОГАЩЕНИЯ¹

Абстракт

Коррупция в различных своих проявлениях всегда была и остается явлением, причиняющим дискомфорт и тревогу у широких слоев общества, вызывающим возмущение, чувства неуверенности и несправедливости у граждан, что создает атмосферу беззакония и вседозволенности, обесценивая как комплекс прав личности и достойное проживание, так и дискредитируя государство и создавая угрозу для основ государственности.

В результате изменения в последние годы общественно-политической обстановки в нашей стране, борьба против коррупции, благодаря беспрецедентной политической воле к борьбе с коррупцией, обрела новый импульс и содержание. Следовательно, предотвращение коррупции и борьба с ней в Республике Армения объявлены в качестве приоритетов стратегического значения.

В подобных условиях становится важным внедрение новых международно признанных инструментов борьбы против коррупции и их постоянное совершенствование, направленное на противодействие коррупции как в гражданско-правовой, административно-правовой, так и в уголовно-правовой сферах.

В этом контексте анализ преступления незаконного обогащения является более чем важным, в том числе в контексте его международно-правового закрепления.

Следовательно, в статье предпринята попытка обратиться к вопросу закрепления в международно-правовых документах незаконного обогащения в качестве преступления, к основным подходам, проявляемым иностранными государствами в борьбе против незаконного обогащения. В статье также представлены правовые толкования Европейского суда по правам человека относительно принципа презумпции невиновности, тесно связанного с институтом незаконного обогащения, а также прав человека хранить молчание и быть освобожденным от обязанности дать против себя показания, являющихся составной частью справедливого судебного разбирательства, представляя соответствующие выводы.

Ключевые слова: незаконное обогащение; борьба с коррупцией; «Конвенция против коррупции»; презумпция невиновности; имущество незаконного происхождения.

¹ Статья была представлена 07.03.2024 и прошла рецензирование 21.05.2024.

Լիլիթ Շիրվանյան

ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերում վարչության ավագ դատախազ

**ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԸ ՉԿԱՏԱՐԵԼԸ ԿԱՐ
ԴՐԱ ԿԱՏԱՐՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏԵԼԸ¹**

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածով նախատեսված՝ դատական ակտը չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու հանցակազմի իրավական որակման հիմնախնդիրներին, ինչը պայմանավորված է նրանով, որ նույնական փաստական հանգամանքների առկայության պայմաններում ՀՀ իրավասու տարբեր մարմինների կողմից ցուցաբերվում են հիշյալ հոդվածով նախատեսված հանցագործության որակման տարբեր մոտեցումներ, որոնք պայմանավորված են բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Օբյեկտիվ պատճառների շարքը պետք է դասել հիմնականում գործող օրենսդրական կարգավորումները, դրանց տարաբնույթ մեկնաբանությունները և կիրառման հետ կապված առանձնահատկությունները:

Սուբյեկտիվ պատճառների շարքը պետք է դասել կոնկրետ քրեական վարույթի փաստական հանգամանքներով պայմանավորված քննության առանձնահատկությունները:

Նշված հանցագործության վերաբերյալ քրեական վարույթների քննության ընթացքում առավել հաճախ խնդիրներ են առաջանում՝ կապված հանցագործությունների որակման, արդյունավետ քննության տակտիկայի ընտրության, պարտադիր կատարման ենթակա քննչական գործողությունների կատարման, պարզաբանման ենթակա հանգամանքների հստակեցման և այլ հարցերի հետ:

Հոդվածում ուսումնասիրվում են նշված հանցակազմի տարրերը և դրանց համատեքստում ներկայացվում են վկայակոչված հանցակազմին իրավական գնահատական տալիս գործնականում ծագած խնդրահարույց իրավիճակները՝ առաջարկելով դրանց հաղթահարման կապակցությամբ համապատասխան իրավական լուծումներ:

Հոդվածում գուգահեռներ են տարվում ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածով նախատեսված՝ դատական ակտը չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու և ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածով նախատեսված՝

¹ Հոդվածը ներկայացվել է 07.03.2024 թ., գրախոսվել է 14.05.2024 թ.:

պաշտոնեական լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցակազմերի միջև, ներկայացվում են դրանց տարանջատման հիմնական չափանիշները:

Կատարված ուսումնասիրությունն ուղղված է ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածով նախատեսված հանցագործության իրավական որակման կապակցությամբ գործնականում միատեսակ կիրառություն ապահովելուն, ինչպես նաև ծագած որոշակի խնդրահարույց իրավիճակները լուծելուն:

Հիմնաբառեր – դատական ակտ, դատական ակտը չկատարելը, դատական ակտի կատարմանը խոչընդոտելը, հարկադիր կատարման միջոցներ, պաշտոնեական լիազորությունների չարաշահում:

Ներածություն

Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) կողմից ընդունված «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկ»-ը, ի թիվս այլնի, Եվրոպայի խորհրդի մասնակից պետություններում իրավունքի գերակայության գնահատման չափանիշ է դիտարկում իրավական որոշակիությունը, որի դրսևորումներից է *res judicata* սկզբունքը: Այս սկզբունքի պահանջն է, ի թիվս այլնի, վերջնական դատական ակտերի կատարման ապահովումը: Դատական ակտը չկատարելու արդյունքում իմաստագրվում է դատական պաշտպանության իրավունքը և իրավունքի գերակայությունը²:

Վենետիկի հանձնաժողովի «Իրավունքի գերակայության մասին զեկույց»-ի³ համաձայն՝ իրավական որոշակիությունը պահանջում է հարգել *res judicata* սկզբունքը, ըստ որի՝ ի թիվս այլնի, ներպետական դատարանների վերջնական դատական ակտերը չպետք է կասկածի տակ դրվեն:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2003 թվականի սեպտեմբերի 9-ի «Դատական ակտերի կատարման մասին» Rec(2003)17 հանձնարարականում ամրագրված է. «Մասնակից պետություններն ունեն պարտականություն՝ երաշխավորելու վերջնական և պարտադիր դատական ակտերի կատարումը»: Հանձնարարականի «Կատարման ընթացակարգերը» բաժնի 1.6 կետի համաձայն՝ որպեսզի կատարման ընթացակարգը լինի հնարավորինս արդյունավետ, դատական ակտերը պետք է կատարվեն կիրառելի օրենքներին ու դատական ակտերին համապատասխան: Ցանկացած օրենք պետք է լինի բավարար չափով մանրամասն՝ ապահովելու համար գործընթացի որոշակիությունն ու թափանցիկությունը, կանխատեսելիությունն ու արդյունավետությունը⁴:

² Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի 2016 թվականի մարտի 18-ի «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկ», CDL-AD(2016)007, 107-րդ կետ:

³ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի 2011 թվականին մարտի 25-26-ի «Իրավունքի գերակայության մասին զեկույց», CDL-AD(2011)003rev), 46-րդ կետ:

⁴ Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2003 թվականի սեպտեմբերի 9-ի «Դատական ակտերի կատարման մասին» հանձնարարական, Rec(2003)17:

Նշված հանձնարարականի արդյունավետ կատարումն ապահովող ուղեցույցի (ընդունված Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից) համաձայն՝ իրավունքի գերակայության ապահովման և դատարանների նկատմամբ վստահության ապահովումը պահանջում է դատական ակտերի կատարման արդյունավետ և արդար գործընթաց:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետևողականորեն ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի⁵ 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրիչն է անձի օգտին կայացված օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումն ապահովելու իրավունքը: Այս առնչությամբ, մասնավորապես, Եվրոպական դատարանը գտել է. «Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը երևակայական կլիներ, եթե պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական ակտերը մնային անկատար՝ ի վնաս կողմի: Դժվար կլիներ պատկերացնել, որ 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները, չպաշտպաներ դատական ակտերի կատարումը. եթե 6-րդ հոդվածը վերաբերեր բացառապես դատարանի մատչելիության իրավունքին ու դատավարությանը, ապա կառաջանային իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակներ: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված դատական ակտի կատարում պետք է դիտվի որպես արդար դատաքննության անբաժանելի մաս՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով⁶»:

Եվրոպական դատարանի հետևողականորեն ձևավորված պրակտիկայում ընդհանուր մոտեցումը հանգում է նրան, որ դատական ակտը չկատարելը սահմանափակում է դատարանի մատչելիության իրավունքը և անձին զրկում արդյունավետ դատական պաշտպանությունից:

Ըստ Եվրոպական դատարանի՝ դատական ակտերի կատարման ներպետական ընթացակարգի բարդությունը կամ պետության բյուջետային համակարգը չի կարող պետությանն ազատել յուրաքանչյուրի՝ ողջամիտ ժամկետում պարտադիր և կատարման ենթակա դատական ակտի կատարման իրավունքը երաշխավորելու պարտականությունից: Մասնակից պետությունների խնդիրն է իրենց իրավական համակարգերը կազմակերպել այնպես, որ կարողանան կատարել իրենց այս պարտականությունը⁷:

⁵ Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, ՀՀ ԱԳՆ ՊՏ 2004.12.20/5(13), ընդունվել է 1950 թվականի նոյեմբերի 4-ին, օրինական ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 26-ին:

⁶ Տե՛ս Hornsby v. Greece թիվ 18357/91 գանգատով Եվրոպական դատարանի 1997 թվականի մարտի 19-ի վճիռը, կետ 40:

⁷ Տե՛ս Burdov v. Russia (No. 2) թիվ 33509/04 գանգատով Եվրոպական դատարանի 2009 թվականի հունվարի 15-ի վճիռը, կետ 68:

Վերը նշված իրավական փաստաթղթերին ու դիրքորոշումներին համահունչ՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի⁸ 13-րդ հոդվածն ամրագրում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի պարտադիրության սկզբունքը: Նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են դրանց հասցեատերերի համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Նշված նորմերն առաջին հերթին ամրագրում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշը: Այնուհետև՝ հստակեցնում են այն սուբյեկտների շրջանակը, որոնց վրա տարածվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի գործողությունը. այդ սուբյեկտները տվյալ դատական ակտի հասցեատերերն են: Միաժամանակ, որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարումն ապահովող իրավական երաշխիք՝ օրենսդիրը նախատեսում է պատասխանատվություն՝ դատական ակտը չկատարելու համար: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված պահանջը դրա հասցեատերերի կողմից չկատարելը կամ այդ պահանջին չհամապատասխանող վարքագիծը ոչ իրավաչափ վարքագիծ է, որն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն: Այսպիսով, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշի դրսևորումը նախևառաջ դրա հասցեատերերի՝ դատական ակտը կատարելու պարտականությունն է⁹:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով դատական ակտի պարտադիրության հատկանիշին, ամրագրել է, որ իրավական որոշակիության սկզբունքը, ըստ էության, երաշխավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, ինչը, ի թիվս այլ հատկանիշների (անհերքելիություն, բացառիկություն, նախադատելիություն), ենթադրում է այդպիսի դատական ակտի պարտադիրությունը: Պարտադիրության հատկանիշը (...) ենթադրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք և քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և իրավունք չունեն տվյալ դատական ակտով կայացված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում¹⁰:

Դատարանի կողմից կայացված դատավճիռները, վճիռները կամ դատական այլ ակտերը ենթակա են պարտադիր կատարման բոլոր քաղաքացիների, պաշ-

⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, ՀՕ-95-Ն, ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, օրինական ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին, ՀՀՊՏ 2018.02.12/10(1368):

⁹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2023 թվականի մարտի 24-ի թիվ ՎԴ/8759/05/19 վարչական գործով որոշումը:

¹⁰ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ԵԱԴԴ/0913/02/13 քաղաքացիական գործով որոշումը:

տոնատար անձանց և կազմակերպությունների կողմից: Առանց դատավճիռների, վճիռների ու որոշումների, իսկ որոշ դեպքերում նաև նախաքննության մարմինների ակտերի կատարումը ապահովող երաշխիքների՝ արդարադատություն չի կարող իրականացվել: Այդպիսի երաշխիքներից մեկն էլ նման ակտերը չկատարելու համար քրեական պատասխանատվության նախատեսումն է:

Դատական մարմինների կողմից կայացված ակտերի պահանջների չկատարման հետ կապված հանցագործությունները դասվում են արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների շարքը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ արդարադատության բնականոն գործունեության բովանդակությունը կազմում են ոչ միայն դատավճիռների, վճիռների կամ այլ դատական ակտերի կայացումը, այլ նաև դրանց կատարումը, որը, կարելի է ասել, արդարադատության իրականացման հանգուցալուծումն է. այն կետը, որին ուղղված է արդարադատության իրականացման ողջ գործընթացը¹¹:

Դատական ակտը չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու հանցակազմի օբյեկտիվ կողմը

Այսպես, «Հ» քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում օրինական ուժի մեջ մտած դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի կատարմանը խոչընդոտելու, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը դրանով սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ այն ուժի մեջ մտնելուց հետո մեկամյա ժամկետում, կամ տվյալ ակտի կատարման շրջանակներում հարկադիր կատարողի սահմանած ժամկետում պարտապանի կամ նրա իրավասու անձի կողմից չկատարելու համար, եթե դրա կատարումը հնարավոր չէ հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ, կամ տվյալ ակտով արգելված գործողությունն այդ արգելքի գործողության ժամանակահատվածում կատարելու համար:

«Հ» քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի 2-րդ մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարելու համար, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով¹²:

Նշված հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հետևյալ գործողությունների կամ անգործության կատարմամբ.

ա) օրինական ուժի մեջ մտած դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի կատարմանը խոչընդոտելով,

¹¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս, Գ. Ղազինյանի խմբ., ԵՊՀ հրատ., 2012 թ., Երևան, 1023 էջ:
¹² Տե՛ս «Հ» քրեական օրենսգրքը, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, օրինական ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին:

բ) օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը դրանով սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում այն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում, կամ տվյալ ակտի կատարման շրջանակներում հարկադիր կատարողի սահմանած ժամկետում պարտապանի կամ նրա իրավասու անձի կողմից չկատարելով, եթե դրա կատարումը հնարավոր չէ հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ,

գ) օրինական ուժի մեջ մտած դատավճռով, վճռով կամ դատական այլ ակտով արգելված գործողությունն այդ արգելքի գործողության ժամանակահատվածում կատարելով:

Անդրադառնալով քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմին՝ հարկ է նշել, որ գիտության մեջ վեճերի առիթ է հարցն առ այն՝ նշված հանցագործությունը կատարվում է գործողությամբ, թե՞ անգործությամբ: Տեսակետներից մեկի համաձայն՝ նշված հանցանքը կարող է կատարվել բացառապես անգործությամբ¹³, ինչը, մեր կարծիքով, իրավաչափ չէ, քանի որ առնվազն օրինական ուժի մեջ մտած դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի կատարմանը խոչընդոտելն արտահայտվում է այնպիսի գործողությունների կատարմամբ, որոնք ուղղված են նշված ակտերի կատարման համար որոշակի արգելքներ, դժվարություններ և այլ խոչընդոտներ առաջացնելուն: Մեկ այլ տեսակետի համաձայն, որին մենք հարում ենք՝ նշված հանցանքը կարող է կատարվել թե՛ անգործությամբ, թե՛ գործողությամբ¹⁴:

Քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը քննարկելիս հարկ է նշել, որ գործնականում տարբերվող իրավական մոտեցումներ են ցուցաբերվում թվարկվածներից «բ» ենթակետով ներկայացված՝ գործողության կամ անգործության իրավական որակման կապակցությամբ, մասնավորապես՝ սույն իրավադրույթի իմաստով.

պայման նախատեսող՝ «եթե դրա կատարումը հնարավոր չէ հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ» իրավակարգավորումը վերաբերում է պարտապանի կամ նրա իրավասու անձի կողմից միայն հարկադիր կատարման փուլում գտնվող օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը չկատարելուն, թե՞ նաև դեռևս հարկադիր կատարման փուլում չգտնվող, սակայն օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը չկատարելուն,

պայման նախատեսող՝ «եթե դրա կատարումը հնարավոր չէ հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ» իրավակարգավորումը վերաբերում է օրինական ուժի մեջ մտած դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի գույքային, թե՞ ոչ գույքային բնույթի պահանջների կատարումն ապահովելուն, ուստի արդյո՞ք նշված իրավական նորմը կարող է քրեական պատասխանատվություն

¹³ Տե՛ս Наумов А. В., Российское уголовное право, курс лекций, том III, Особенная часть, 4-е изд., Москва, 2007 г., էջ 495:

¹⁴ Տե՛ս Курс уголовного права, особенная часть, том 5, под ред. Г. Н. Борзенкова, В. С. Комиссарова, Москва, 2002 г., էջ 205:

նախատեսել օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ գույքային բնույթի պահանջները չկատարելու համար,

օրինական ուժի մեջ մտած դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի պահանջների կատարման կապակցությամբ հարկադիր կատարման ո՞ր միջոցի կամ միջոցների գործադրմամբ է սպառվում դատական ակտերի հարկադիր կատարման հնարավորությունը, ինչին կհետևի արդեն քրեական պատասխանատվությունը:

Անդրադառնալով վերը թվարկված հարցերից առաջինին՝ հարկ է նշել, որ դատավճիռների, վճիռների կամ դատական այլ ակտերի կատարումն այն գործընթացն է, որի անխոչընդոտ իրականացումը, որպես այդպիսին, հիմնականում պայմանավորված է դատական ակտի հասցեատիրոջ՝ դատական ակտի պահանջները կատարելու կապակցությամբ արտահայտած կամքով, ուստի՝ դրսևորած վարքագծով (խոսքը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ դատական ակտի հասցեատերն օբյեկտիվորեն հնարավորություն ունի կատարելու դատական ակտի պահանջները): Գործնականում բազմաթիվ են դեպքերը, երբ դատական ակտի հասցեատերերն այս կամ այն պատճառով հրաժարվում են օրինապահ վարքագիծ դրսևորել, ինչը խնդիրներ է առաջացնում դատական ակտի կատարման գործընթացում: Նշված խնդիրները լուծելու և դատավճիռների, վճիռների կամ դատական այլ ակտերի անխոչընդոտ իրականացումն ապահովելու նպատակով օրենսդրի կողմից նախատեսվել են դատական ակտերի կատարումն ապահովող մի շարք գործուն կառուցակարգեր՝ երաշխիքների կամ հարկադրանքի միջոցների տեսքով, որոնց շնորհիվ պետությունն ապահովում է արդարադատության փաստացի (դե ֆակտո) իրականացումը: Այդպիսի երաշխիքներից խստագույնը դատական ակտերը չկատարելու համար քրեական պատասխանատվության նախատեսումն է: Քրեական պատասխանատվության ենթարկելու գործիքակազմը, կարելի է ասել, վերջին՝ ամենախիստ միջոցն է դատական ակտերի կատարման ապահովման գործընթացում և կիրառվում է բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտի կատարումն այլ՝ ավելի մեղմ գործիքակազմի գործադրմամբ հնարավոր չէ ապահովել: Որպես այդպիսին հանդես է գալիս վարչաիրավական ներգործության միջոցը, որն իրականացվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի¹⁵ (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածով նախատեսված՝ հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ: Նշված գործընթացը չհաջողելու դեպքում միայն պետությունը դիմում է առավել ծանր՝ քրեաիրավական ներգործության մեթոդի կիրառմանը: Այլ կերպ ասած՝ դատական ակտերի չկատարման համար պետությունը, նախևառաջ, գործադրում է վարչաիրավական ներգործության՝ հարկադիր կատարման միջոց-

¹⁵ Տե՛ս «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-221, ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, օրինական ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին, ՀՀԳՏ 1998.06.15/12(45):

ները, որոնց անարդյունավետության դեպքում միայն անցում է կատարում քրեա-իրավական ներգործության միջոցների գործադրմանը՝ խուսափելով անձանց անհարկի քրեական պատասխանատվության ենթարկելուց այն իրավահարաբե-րությունները խախտելու համար, որոնց վերականգնումը հնարավոր է ապահո-վել վարչական ռեսուրսի արդյունավետ կիրառման շնորհիվ:

Վերոգրյալից հետևում է, որ պայման նախատեսող՝ «եթե դրա կատարումը հնարավոր չէ հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ» իրավակարգա-վորումը վերաբերում է ոչ միայն պարտապանի կամ նրա իրավասու անձի կող-մից հարկադիր կատարման փուլում գտնվող օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը չկատարելուն, այլև դեռևս հար-կադիր կատարման փուլում չգտնվող, սակայն օրինական ուժի մեջ մտած դա-տավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը չկատարելուն: Նշվածից հետևում է, որ քանի դեռ դատական ակտի կատարման կապակցությամբ չեն գործադրվել հարկադիր կատարման միջոցները և դրանց գործադրման արդյունքում հնարա-վոր չի եղել ապահովել դատական ակտի կատարումը, խոսք չի կարող լինել դա-տական ակտը չկատարելու համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին:

Անդրադառնալով վերը թվարկված հարցերից երկրորդին՝ հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի 1-ին մասը, քրեական պատասխանատվու-թյուն նախատեսելով օրինական ուժի մեջ մտած դատավճռի, վճռի կամ դատա-կան այլ ակտի չկատարման համար, տարանջատում չի կատարել նշված դատական ակտերի գույքային և ոչ գույքային բնույթի պահանջների չկատար-ման միջև՝ շեշտելով միայն նշված դատական ակտերը հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ կատարելու հնարավորության բացակայության հան-գամանքը, որպիսի պայմաններում հարց է առաջանում՝ հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի ինչպիսի՞ գույքային, թե՞ ոչ գույքային բնույթի պահանջների կատարումն է հնարավոր ապահովել հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ: Այս առումով, նախևառաջ, անհրաժեշտ է պարզել՝ Օրենսդիրը հիշյալ իրավադրույթում պայ-ման նախատեսող՝ «եթե դրա կատարումը հնարավոր չէ հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ» նախադասությունն օգտագործելիս նկատի է ունեցել տակ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարմանն ուղղված որոշա-կի հարկադիր կատարման միջոցների գործադրման հնարավորությունը, թե՞ այնպիսի հարկադիր կատարման միջոցների գործադրման հնարավորությունը, որոնք անվերապահորեն ապահովելու են օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումը: Նշված հարցի պատասխանից էլ բխում է վերը բարձրացված երկրորդ հարցի պատասխանը:

Այս առումով հարկ է նշել, որ Օրենքի 7-րդ գլուխը նվիրված է ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներին, որոնց ընթացքում հարկադիր կատարո-

դի կողմից կարող են կիրառվել Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված համապատասխան հարկադիր կատարման միջոցները, ինչից հետևում է, որ Օրենքը հարկադիր կատարման միջոցներ է նախատեսել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի թե՛ գույքային և թե՛ ոչ գույքային բնույթի պահանջների կատարման կապակցությամբ: Սակայն, եթե օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ գույքային բնույթի պահանջների անվերապահ կատարումը հնարավոր է ապահովել հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ, այլ կերպ ասած՝ նման պայմաններում բացառվում է հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի չկատարման հնարավորությունը (խոսքը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ պարտապանն օբյեկտիվորեն հնարավորություն ունի կատարելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտի գույքային բնույթի պահանջը), նույնը չի կարելի ասել օրինական ուժի մեջ մտած դատական ակտի ոչ գույքային բնույթի պահանջների կատարման կապակցությամբ: Հարկադիր կատարողը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված համապատասխան հարկադիր կատարման միջոցը (օրինակ՝ որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին որոշում կայացնելը) գործադրելուց հետո օրինական ուժի մեջ մտած դատական ակտի ոչ գույքային բնույթի պահանջը չկատարվելու դեպքում դրա անվերապահ կատարումն ապահովելու այլ հնարավորություն չունի, ինչն էլ հանգեցնում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ կատարման անհնարինություն: Այլ կերպ ասած՝ միայն վերջին դեպքում է վրա հասնում ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ «եթե դրա կատարումը հնարավոր չէ հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ» պայմանը:

Վերոգրյալից հետևում է, որ Օրենսդիրը նշված պայմանը կիրառելիս նկատի է ունեցել սոսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարմանն ուղղված որոշակի հարկադիր կատարման միջոցների գործադրման հնարավորությունը՝ վերաբերելով օրինական ուժի մեջ մտած դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի միայն ոչ գույքային բնույթի պահանջների կատարմանը, ուստի անձինք ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածով չեն կարող քրեական պատասխանատվության ենթարկվել օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ գույքային բնույթի պահանջները չկատարելու համար:

Այս առումով հատկանշական է, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի¹⁶ 353-րդ հոդվածը ևս բացառություն էր նախատեսում այն դատական ակտերի պահանջների կատարման կապակցությամբ, որոնք վերաբերում էին գումարի բռնագանձման պահանջին և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորություններին:

¹⁶ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքը, ՀՕ-528-Ն, ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, օրինական ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀԳՏ 2003.05.02/25(260):

Անդրադառնալով վերը թվարկված հարցերից երրորդին՝ հարկ է նշել, որ Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված են հետևյալ հարկադիր կատարման միջոցները՝

- 1) պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով,
- 2) պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելը,
- 3) այլ անձանց մոտ գտնվող պարտապանի դրամական միջոցների և այլ գույքի վրա բռնագանձում տարածելը,
- 4) կատարողական թերթում նշված որոշակի առարկաները պարտապանից առգրավելը և պահանջատիրոջը հանձնելը,
4.1) հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար տուգանք կիրառելը,
- 5) կատարողական թերթի կատարումն ապահովող այլ միջոցներ»:

Այս առումով հարկ է նշել, որ մի շարք դատավարական որոշումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ որպես օրինական ուժի մեջ մտած դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի պահանջների կատարման կապակցությամբ հարկադիր կատարման վերջին միջոց, որի գործադրմամբ սպառվում է դատական ակտերի հարկադիր կատարման հնարավորությունը՝ հիմնականում ներկայացվում է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով նախատեսված՝ հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար տուգանք կիրառելը, որպիսի պայմաններում էլ դատավարական որոշման հեղինակները հանգել են հետևության առ այն, որ քանի դեռ հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար հարկադիր կատարողի կողմից տուգանք չի կիրառվել, դատական ակտի հարկադիր կատարման հնարավորությունը չի սպառվել: Սակայն այս առումով հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Հ օրենսգրքով»¹⁷ հարկադիր կատարողի որոշումները չկատարելը՝ որպես առանձին վարչական իրավախախտում, նախատեսված չէ, ինչը, մեր կարծիքով, օրենքի բաց է: Նման պայմաններում հարկադիր կատարողը գործնականում փաստացի հնարավորություն չունի կիրառելու Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով նախատեսված հարկադիր կատարման միջոցը: Մի շարք դատավարական որոշումների ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ դրանցում նախկինում՝ որպես հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար վարչական պատասխանատվություն նախատեսող դրույթ՝ մատնանշվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Հ օրենսգրքի 206⁹-րդ հոդվածը (դատական ակտը դիտավորությամբ չկատարելը), որը 2022 թվականի հունիսի 9-ից ուժը կորցրել է:

Ի մի բերելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ քանի դեռ Վարչական իրավախախ-

¹⁷ Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Հ օրենսգրքը, ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին, օրինական ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ին, ՀՄՍՀԳՄՍ 1985/23:

տումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում որպես առանձին վարչական իրավախախտում՝ նախատեսված չէ հարկադիր կատարողի որոշումները չկատարելը, հարկադիր կատարողը գրկված է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով նախատեսված հարկադիր կատարման միջոցը գործադրելու հնարավորությունից, որպիսի պայմաններում իրավակիրառ պրակտիկայում խնդիրներ են առաջանում դատական ակտերի հարկադիր կատարման կապակցությամբ հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների կողմից իրականացված միջոցների գործադրումը սպառված համարելու տեսանկյունից: Հետևաբար յուրաքանչյուր առանձին դեպքում անհրաժեշտ է անդրադառնալ տվյալ իրավիճակում հարկադիր կատարողի կողմից գործադրված և գործադրման ենթակա բոլոր հնարավոր հարկադիր կատարման միջոցներին, որոնց սպառմամբ էլ կսպառվի դատական ակտերի հարկադիր կատարման հնարավորությունը:

Դատական ակտը չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու հանցակազմի սուբյեկտը

Նշված հանցակազմի սուբյեկտին անդրադառնալիս հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի դիսպոզիցիայի վերլուծությունից հետևում է, որ որպես սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի սուբյեկտ կարող են հանդես գալ քրեական պատասխանատվության տարիքի հասած, մեղսունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, իսկ 2-րդ մասով նախատեսված հանցակազմի սուբյեկտ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով սահմանված՝ պաշտոնատար անձինք: Ընդ որում, այս առումով հարկ է ընդգծել, որ նշված սուբյեկտները պետք է հանդիսանան դատական ակտերի հասցեատերեր, այլ կերպ ասած՝ դատարանի կողմից դատական ակտով սահմանված պահանջի կատարման պարտականությունը պետք է անմիջապես վերջիններին վրա դրված լինի:

Պաշտոնատար անձանց կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով դատական ակտը չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու դեպքերին իրավական գնահատական տալիս հարց է առաջանում՝ վերջիններիս արարքը ենթակա է որակման պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու համապատասխան՝ քրեական պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ, թե՛ 507-րդ հոդվածով:

Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի 2-րդ մասով և 441-րդ հոդվածով նախատեսված նորմերը հարաբերվում են որպես ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի ընդհանուր և հատուկ նորմեր՝ դրանից բխող իրավական հետևանքներով հանդերձ: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ

հողվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե անձի մեկ արարքում միաժամանակ առկա են սույն օրենսգրքի Հատուկ մասի ընդհանուր և հատուկ նորմեր, ապա արարքը որակվում է միայն հատուկ նորմով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հարկ է փաստել, որ պաշտոնատար անձանց կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ դատական ակտը չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու դեպքերին իրավական գնահատական տալիս անհրաժեշտ է առաջնորդվել հատուկ նորմով, այլ կերպ ասած՝ պաշտոնատար անձանց արարքները որակել ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի 2-րդ մասով:

Մի շարք դատավարական որոշումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ գործնականում հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների կողմից դատական ակտի կատարման ուղղությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելու և դրա արդյունքում դատական ակտի կատարումը չապահովելու դեպքերին ևս իրավական գնահատական է տրվել ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի 2-րդ մասով:

Այս առումով հարկ է անդրադառնալ հետևյալ հարցին. հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների կողմից դատական ակտի կատարման ուղղությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելու և դրա արդյունքում դատական ակտի կատարումը չապահովելու դեպքերում վերջիններիս արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ, թե՛ 507-րդ հոդվածով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է արձանագրել, որ, ինչպես վերը նշվեց, դատական ակտը չկատարելու կամ դատական ակտի կատարմանը խոչընդոտելու հանցակազմի սուբյեկտներն այն անձինք են, որոնք հանդիսանում են համապատասխան դատական ակտերի հասցեատերերը, որոնց վրա էլ (անմիջապես) դատարանի կողմից դրվել է դատական ակտով սահմանված պահանջի կատարման պարտականություն, ինչից հետևում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատարանի կողմից դատական ակտով անմիջապես հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների վրա չի դրվել դատական ակտով սահմանված պահանջի կատարման պարտականություն, վերջիններիս կողմից դատական ակտի կատարման ուղղությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելու և դրա արդյունքում դատական ակտի կատարումը չապահովելու դեպքերը ենթակա են որակման ոչ թե՛ ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածով, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածով:

Այլ է իրավիճակն այն դեպքերում, երբ դատարանը դատական ակտով անմիջապես հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների վրա է դնում դատական ակտով սահմանված պահանջի կատարման պարտականություն, որպիսի պայմաններում վերջիններիս կողմից դատական ակտի կատարման ուղղությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելու և դրա

արդյունքում դատական ակտի կատարումը չապահովելու դեպքերը ենթակա են որակման ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածով:

Վերը նշվածից հետևում է, որ հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների կողմից դատական ակտի կատարման ուղղությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելու և դրա արդյունքում դատական ակտի կատարումը չապահովելու դեպքերին իրավական գնահատական տալիս էականը դատական ակտի հասցեատիրոջ հարցի պարզումն է:

Դատական ակտը չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու հանցակազմի սուբյեկտիվ կողմը

Անդրադառնալով խնդրո առարկա հոդվածով նախաձեռնված վարույթների կարճման դեպքերին և դրանց հիմքերին՝ հարկ է արձանագրել, որ դրանց մեջ զգալի թիվ են կազմում այն դեպքերը, երբ վարույթը կարճվում է հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայության պատճառաբանությամբ, սակայն քիչ չեն նաև դեպքերը, երբ վարույթը կարճվում է հանցակազմի սուբյեկտիվ կողմի բացակայության հիմքով:

Սույն հանցակազմի սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ: Սուբյեկտիվ կողմի մասին խոսելիս հարկ է նշել, որ գիտության մեջ տարածված է նաև կարծիքն առ այն, որ քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել նաև անուղղակի դիտավորությամբ¹⁸:

Այս առումով հարկ է նշել, որ դատական ակտերն ուղղված են կարգավորելու մարդու կենսագործունեության տարատեսակ և տարաբնույթ ոլորտներ, ուստի նաև վերականգնելու դրանցից բխող տարատեսակ և տարաբնույթ խախտված իրավունքներ, ինչի հետևանքով գործնականում քիչ չեն դեպքերը, երբ անձը, չնայած դատարանի կողմից խախտված իրավունքը վերականգնելու պարտականությունն արձանագրելու հանգամանքին, օբյեկտիվորեն հնարավորություն չի ունենում ապահովելու դատական ակտի կատարումը, իսկ մի շարք այլ դեպքերում խախտված իրավունքի վերականգնումը հանգեցնելու է այլ անձանց իրավունքների խախտումների շղթայի (օրինակ՝ դատարանը համապատասխան դատական ակտով պարտապահին պարտավորեցրել է քանդել օրինականացման ոչ ենթակա ինքնական կառուցված շինությունը, որպիսի գործողության կատարումը կարող է հանգեցնել նշված ինքնական կառույցի հարակից հատվածում գտնվող պատմամշակութային շենքի փլուզմանը): Եթե առաջին դեպքում, երբ դատական ակտի հասցեատերն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունենում կատարելու դատական ակտի պահանջները, չնայած նրան, որ առկախվում է դատական ակտի կատարումը, այնուամենայնիվ, փաստվում է անձի մոտ հանցակազմի սուբյեկտիվ կողմի բացակայությունը,

¹⁸ Ст' u Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, особенная часть, под ред. А. В. Наумова, Москва, էջ 735:

ապա այլ է իրավիճակը երկրորդ դեպքում, երբ խախտված իրավունքի վերականգնումը հանգեցնելու է այլ անձանց իրավունքների խախտումների շղթայի: Նման դեպքերում դատական ակտերի հասցեատերերի արարքին քրեաիրավական գնահատական տալը գործնականում հանգեցնում է դժվարությունների և պահանջում իրավական վերլուծություններ և իրավիճակը համակողմանի գնահատելու անհրաժեշտություն: Նշված խնդրահարույց իրավիճակի լուծման կապակցությամբ ներկայումս մշակվում է Օրենքի նախագիծ, որի համաձայն՝ դատական ակտի հասցեատիրոջն առաջարկվելու է խախտված իրավունքի վերականգնման այլընտրանքային եղանակ: Վկայակոչված նախագծի ընդունման պարագայում նկարագրված իրավիճակներին լուծում կտրվի:

Եզրակացություն

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք.

1. դատական ակտը չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու հանցակազմի օբյեկտիվ կողմի մաս կազմող գործողություններին կամ անգործությանն իրավական գնահատական տալիս հարկ է նկատի ունենալ, որ.

- անձը դատական ակտը չկատարելու համար չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության, եթե խոսքը վերաբերում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ գույքային բնույթի պահանջները չկատարելուն,
- անձը դատական ակտը չկատարելու համար չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության, քանի դեռ դատական ակտի կատարման կապակցությամբ չեն գործադրվել հարկադիր կատարման միջոցները և դրանց գործադրման արդյունքում հնարավոր չի եղել ապահովել դատական ակտի կատարումը: Մինևույն ժամանակ, քանի դեռ Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Հ» օրենսգրքում որպես առանձին վարչական իրավախախտում՝ նախատեսված չէ հարկադիր կատարողի որոշումները չկատարելը և հարկադիր կատարողը գրկված է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով նախատեսված հարկադիր կատարման միջոցը գործադրելու հնարավորությունից, որպիսի պայմաններում իրավակիրառ պրակտիկայում խնդիրներ են առաջանում դատական ակտերի հարկադիր կատարման կապակցությամբ հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների կողմից իրականացված միջոցների գործադրումը սպառված համարելու տեսանկյունից, յուրաքանչյուր առանձին դեպքում անհրաժեշտ է անդրադառնալ տվյալ իրավիճակում հարկադիր կատարողի կողմից գործադրված և գործադրման ենթակա բոլոր հնարավոր հարկադիր կատարման միջոցներին, որոնց սպառմամբ էլ կապառվի դատական ակտերի հարկադիր կատարման հնարավորությունը:

2. Պաշտոնատար անձանց կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ դատական ակտը չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու դեպքերին իրավական գնահատական տալիս անհրաժեշտ է առաջնորդվել ոչ թե ընդհանուր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածով, այլ հատուկ նորմով և պաշտոնատար անձանց արարքները որակել ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի 2-րդ մասով:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ դատական ակտը չկատարելու կամ դատական ակտի կատարմանը խոչընդոտելու հանցակազմի սուբյեկտներն այն անձինք են, որոնք հանդիսանում են համապատասխան դատական ակտերի հասցեատերերը, որոնց վրա էլ (անմիջապես) դատարանի կողմից դրվել է դատական ակտով սահմանված պահանջի կատարման պարտականություն, ինչից հետևում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատարանի կողմից դատական ակտով անմիջապես հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների վրա չի դրվել դատական ակտով սահմանված պահանջի կատարման պարտականություն, վերջիններիս կողմից դատական ակտի կատարման ուղղությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելու և դրա արդյունքում դատական ակտի կատարումը չապահովելու դեպքերը ենթակա են որակման ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածով, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածով:

3. Երբ անձը, չնայած դատարանի կողմից խախտված իրավունքը վերականգնելու պարտականությունն արձանագրելու հանգամանքին, օբյեկտիվորեն հնարավորություն չի ունենում ապահովելու դատական ակտի կատարումը, չնայած նրան, որ առկախվում է դատական ակտի կատարումը, այնուամենայնիվ, փաստվում է անձի մոտ հանցակազմի սուբյեկտիվ կողմի բացակայությունը: Սակայն այլ է իրավիճակը այն դեպքերում, երբ խախտված իրավունքի վերականգնումը հանգեցնելու է այլ անձանց իրավունքների խախտումների շղթայի: Նշված խնդրահարույց իրավիճակի լուծման կապակցությամբ ներկայումս մշակվում է օրենքի նախագիծ, որի համաձայն՝ դատական ակտի հասցեատիրոջն առաջարկվելու է խախտված իրավունքի վերականգնման այլընտրանքային եղանակ, ինչը, մեր կարծիքով, կլուծի նկարագրված խնդրահարույց իրավիճակը:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, ՀՕ-95-Ն, ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, օրինական ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին, ՀՀԳՏ 2018.02.12/10(1368):
«Judicial Code of the Republic of Armenia» Constitutional Law of the Republic of Armenia, HO-95-N, adopted on 07.02.2018, entered into force on 09.04.2018, Official Gazette of the Republic of Armenia 2018.02.12/10(1368):
2. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, ընդունվել է 1950 թվականի նոյեմբերի 4-ին, օրինական ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 26-ին, ՀՀԱԳՆԳՏ 2004.12.20/5(13):
European Convention «On the Protection of Human Rights and Fundamental Freedoms», adopted on 04.11.1950, entered into force on 26.04.2002, Official Gazette of the Republic of Armenia 2004.12.20/5(13):
3. Վենետիկի հանձնաժողովի 2016 թվականի մարտի 18-ի «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկ», CDL-AD(2016)007:
«Rule of Law Checklist» of the Venice Commission, March 18, 2016, CDL-AD(2016)007:
4. Վենետիկի հանձնաժողովի 2011 թվականի մարտի 25-26-ի «Իրավունքի գերակայության մասին զեկույց», CDL-AD(2011)003rev:
«Rule of Law Report» of the Venice Commission», March 25-26, 2011, CDL-AD(2011)003rev:
5. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2003 թվականի սեպտեմբերի 9-ի «Դատական ակտերի կատարման մասին» հանձնարարական, Rec(2003)17:
Recommendation of the Committee of Ministers of the Council of Europe «On the Execution of Judicial Acts», September 9, 2003, Rec(2003)17:
6. ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, օրինական ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին:
«Criminal Code of the Republic of Armenia», HO-199-N, adopted on 05.05.2021, entered into force on 01.07.2022:
7. ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, օրինական ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀԳՏ 2003.05.02/25(260):
«Criminal Code of the Republic of Armenia», HO-528-N, adopted on 18.04.2003, entered into force on 01.08.2003, expired on 01.07.2022, Official Gazette of the Republic of Armenia 2003.05.02/25(260):
8. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին, օրինական ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ին, ՀՍՍՀԳՍ 1985/23:

«Code on Administrative Offenses of the Republic of Armenia», adopted on 06.12.1985, entered into force on 01.06.1986, Official Gazette of the Republic of Armenia 1985/23:

9. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-221, ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, օրինական ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին, ՀՀՊՏ 1998.06.15/12(45):
Law of the Republic of Armenia «On Enforcement of Judicial Acts», HO-221-N, adopted on 05.05.1998, entered into force on 01.01.1999, Official Gazette of the Republic of Armenia 1998.06.15/12(45):
10. Hornsby v. Greece, թիվ 18357/91 գանգատով Եվրոպական դատարանի՝ 1997 թվականի մարտի 19-ի վճիռը:
Hornsby v. Greece, Judgment of the European Court of Justice on March 19, 1997 in complaint No. 18357/91:
11. Burdov v. Russia, (No. 2) թիվ 33509/04 գանգատով Եվրոպական դատարանի 2009 թվականի հունվարի 15-ի վճիռը:
Burdov v. Russia, Judgment of the European Court of Justice on January 15, 2009 in complaint No. 33509/04:
12. ՀՀ վճռաբեկ դատարանի 2023 թվականի մարտի 24-ի թիվ ՎԴ/8759/05/19 վարչական գործով որոշում:
Decision of the RA Court of Cassation on administrative case No. VD/8759/05/19 of March 24, 2023:
13. ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ԵԱԴԴ/0913/02/13 քաղաքացիական գործով որոշում:
Decision of the RA Court of Cassation on civil case No. EADD/0913/02/13 of December 25, 2015:
14. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս, Գ. Ղազինյանի խմբ., ԵՊՀ հրատ., Երևան, 2012:
Criminal Law of the Republic of Armenia, Special part, G. Ghazinyan ed., YSU pub. house, Yerevan, 2012:
15. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, особенная часть, под ред. А.В. Наумова, Москва:
Commentary on the Criminal Code of the Russian Federation, Special part, A.V. Naumov ed., Moscow:
16. Курс уголовного права, особенная часть, том 5, под ред. Г.Н. Борзенкова, В.С. Комиссарова, Москва, 2002 г.:
Criminal Law Course, Special part, Volume 5, G.N. Borzenkova, V. S. Komisarova ed., Moscow, 2002:
17. Наумов А.В., Российское уголовное право, курс лекций, том III, особенная часть, 4-е изд., Москва, 2007 г.:
A.V. Naumov, Criminal Law of the Russian Federation, Course of Lectures, Volume 3, Special part, 4 ed., Moscow, 2007:

Lilit Shirvanyan

Senior Prosecutor at the Department for Cases of Crimes against State Power of the Prosecutor General's Office of the Republic of Armenia

FAILURE TO PERFORM A JUDICIAL ACT OR OBSTRUCTING ITS PERFORMANCE¹

Abstract

The article is devoted to the issues of legal classification of the crime of failure to execute a judicial act or obstructing its execution provided for by Article 507 of the Criminal Code of the RA, which is due to the fact that, in the presence of identical factual circumstances, different competent authorities of the RA show various approaches to classification of the crime provided for in the aforementioned article, which, in its turn, is due to many objective and subjective reasons. What should be included among the objective reasons are the primarily existing legal regulations, their various interpretations and the specifics related to their application.

Among the subjective reasons are the specifics of the examination determined by the factual circumstances of a specific criminal proceeding.

During the investigation of criminal cases regarding the mentioned crime, the arising problems are most often related to the classification of crimes, the choice of effective investigation tactics, the execution of mandatory investigative actions, the clarification of the circumstances to be clarified and other issues.

The article examines the elements of the mentioned crime and, in their context, presents the legal assessment of the crime in question and the problematic situations that have arisen in practice, providing appropriate legal solutions to overcome them.

The article draws parallels between the offenses of failing to execute a judicial act or obstructing its execution under Article 507 of the RA Criminal Code and the offenses of abusing or exceeding official powers under Article 441 of the RA Criminal Code, and presents the main criteria for their distinction.

The conducted study is aimed at ensuring a practically uniform application with regard to the legal qualification of the crime provided for by Article 507 of the RA Criminal Code, as well as solving certain problematic situations that have arisen.

Keywords: judicial act; non-execution of the judicial act; obstructing the execution of the judicial act; enforcement measures; abuse of official powers.

¹ The article was presented on 07.03.2024 and was reviewed on 14.05.2024.

Лилит Ширванян

Старший прокурор управления по преступлениям против государственной власти Генеральной прокуратуры Республики Армения

НЕИСПОЛНЕНИЕ СУДЕБНОГО АКТА ИЛИ ВОСПРЕПЯТСТВОВАНИЕ ИХ ИСПОЛНЕНИЮ¹

Абстракт

Статья посвящена вопросам правовой квалификации преступления, предусмотренного статьей 507 УК РА, что обусловлено тем, что при наличии тождественных фактических обстоятельств разные компетентные органы РА демонстрируют разные подходы к квалификации преступления, предусмотренного вышеупомянутой статьей, что в свою очередь обусловлено многими объективными и субъективными причинами. К объективным причинам следует отнести преимущественно существующие правовые нормы, их различные толкования и особенности их применения.

К числу субъективных причин следует отнести особенности проведения расследования, определяемые фактическими обстоятельствами конкретного уголовного дела. При расследовании уголовных дел по указанным преступлениям чаще всего возникают проблемы, связанные с квалификацией преступлений, выбором эффективной тактики расследования, выполнением обязательных следственных действий, выяснением обстоятельств, подлежащих выяснению, и другими вопросами.

В статье рассматриваются составы указанного преступления и в их контексте представлена правовая оценка указанного преступления и проблемных ситуаций, возникших на практике, предлагаются соответствующие правовые пути их преодоления.

В статье проводятся параллели между преступлениями неисполнения судебного акта или воспрепятствования его исполнению, предусмотренного статьей 507 УК РА, и преступлениями злоупотребления служебных полномочий, предусмотренного статьей 441 УК РА, и представлены основные критерии их разделения.

Проведенное исследование направлено на обеспечение практически единого образного применения в связи с правовой квалификацией преступления, предусмотренной статьей 507 УК РА, а также на решение некоторых возникших проблемных ситуаций.

Ключевые слова: судебный акт; неисполнение судебного акта; воспрепятствование исполнению судебного акта; меры принуждения; злоупотребление должностными полномочиями.

¹ Статья была представлена 07.03.2024 и прошла рецензирование 14.05.2024.

Արշակ Մարտիրոսյան

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժնի պետ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆՆՈՒՄՆԵՐԸ¹

Համառոտագիր

Հոդվածի հիմնական նպատակն է եղել ուսումնասիրել համագործակցության վարույթի քրեադատավարական ասպեկտները, առկա հիմնախնդիրները: Քրեական դատավարությունում դատավարական ձևի տարբերակման հիմնահարցը եղել և մնում է դատավարագետների ուշադրության կենտրոնում: Այն առավել արդիական դարձավ քրեադատավարական բարեփոխումների ներկայիս փուլում, որի նպատակն է ունենալ արդյունավետ, խնայողական, միջազգային չափանիշներին համապատասխանող քրեական դատավարություն: Նոր օրենսգիրքը ոչ միայն սահմանեց քրեադատավարական ձևի տարբերակման գաղափարը կամ ուղենշեց այս առումով քրեադատավարական օրենսդրության զարգացման տրամաբանությունը, այլև հստակ առանձնացրեց այս ուղղությամբ զարգացման սպասվելիք դրսևորումները՝ ի դեմս պարզեցված նախաքննության, համաձայնեցման վարույթի, համագործակցության վարույթի և մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի:

Ընդհանրացնելով կատարված ուսումնասիրությունները՝ կարող ենք նշել, որ, չնայած բոլոր թերություններին, համագործակցության ինստիտուտը պահանջված է և անհրաժեշտ: Նոր օրենսգրքով դրա նախատեսումը պայմանավորված է ծայրաստիճան հիմնավոր փաստարկումներով: Պետք է նաև հաշվի առնել, որ համագործակցության վարույթը նախատեսված չէ համատարած կիրառման համար. այն ուղղված է առավել կազմակերպված և վտանգավոր հանցագործությունների դեմ արդյունավետ պայքար ասպահովելուն:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի ինստիտուտը իրավամբ գործուն միջոց է շարունակ զարգացող հանցավորության դեմ պայքարում: Դրա կարևորությունը զգալի է հատկապես կազմակերպված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների դեմ պայքարում:

¹ Հոդվածը ներկայացվել է 27.03.2024 թ., գրախոսվել է 01.11.2024 թ.:

Հիմնաբառեր - հանցագործություն, համագործակցության վարույթ, մինչ-դատական համաձայնագիր, միջնորդություն, քրեական դատավարության օրենսգիրք:

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության նոր օրենսգիրքը (այսուհետ՝ Նոր Օրենսգիրք), ի թիվս այլնի, բնութագրվում է նաև տարբերակված վարույթների շրջանակի ընդլայնմամբ, հստակ ուրվագծվեց դեռևս Նոր Օրենսգրքի նախագծում: Ընդ որում՝ Օրենսգրքի նախագծից պարզ էր, որ տարբերակված վարույթների շրջանակի ընդլայնումը քրեական դատավարության խնդիրների լուծման սուկ տեխնիկական միջոց չէ: Առանձին կատեգորիայի գործերի քննության և լուծման պարզեցված ընթացակարգերի մշակումն առաջ քաշվեց որպես հայեցակարգային խնդիր, որի լուծումը պետք է ապահովեր մարդկային ռեսուրսների, միջոցների և ժամանակի արդարացված խնայողություն:

Հետազոտության հիպոթեզը: Նոր օրենսգիրքը ոչ միայն սահմանեց քրեադատավարական ձևի տարբերակման գաղափարը կամ ուղենշեց այս առումով քրեադատավարական օրենսդրության զարգացման տրամաբանությունը, այլև հստակ առանձնացրեց այս ուղղությամբ զարգացման սպասվելիք դրսևորումները՝ ի դեմս պարզեցված նախաքննության, համաձայնեցման վարույթի, համագործակցության վարույթի և մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի: Պետք է նաև հաշվի առնել, որ համագործակցության վարույթը նախատեսված չէ համատարած կիրառման համար. այն ուղղված է առավել կազմակերպված և վտանգավոր հանցագործությունների դեմ արդյունավետ պայքար ապահովելուն:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության օբյեկտ է հանդիսացել Նոր Օրենսգիրքը, իսկ առարկան՝ դրանում ներկայացված համագործակցության վարույթի քրեադատավարական ասպեկտների, առկա հիմնախնդիրների ուսումնասիրությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն հետազոտությունը նպատակ է հետապնդում ներկայացնել համագործակցության վարույթը, բացահայտել վերոնշյալ ինստիտուտի տեղը տարբերակված վարույթների համակարգում, ներկայացնել վարույթի քրեադատավարական ասպեկտները, նպատակային նշանակությունը և առկա հիմնախնդիրները: Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել համագործակցության վարույթի կիրառման կարգի սկզբունքային առանձնահատկությունները վարույթի ընդհանուր կարգի համեմատ,
- ներկայացնել վարույթի նախաձեռնմանը պաշտպանի պարտադիր մասնակցությունը,

- ներկայացնել վարույթի՝ պաշտպանի կողմից նախաձեռնման կարգը,
- ուսումնասիրել քննիչի մասնակցությունը միջնորդության ներկայացմանը և դրա լուծմանը մասնակցելու դատախազի իրավասությունը:

Հետազոտության տեսամեթոդական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները: Հետազոտության ընթացքում կիրառվել են պատմական և համեմատության մեթոդները:

1. Համագործակցության վարույթի կիրառման շրջանակն ըստ ՀՀ Քրեական դատավարության նոր օրենսգրքի

Քրեական դատավարությունում դատավարական ձևի տարբերակման հիմնահարցը եղել և մնում է դատավարագետների ուշադրության կենտրոնում: Այսօր մի շարք երկրների քրեական դատավարության օրենսգրքերը որդեգրել են օպտիմալացման ճանապարհը՝ հետևողականորեն քրեական դատավարություններում ծեղվող տարբերակված վարույթները, հնարավորինս կրճատելով մինչդատական վարույթը: Դատավարական ձևի պարզեցումը ինչպես հանցագործություններին առավել արագ և օպերատիվ արձագանքելու, այնպես էլ առավելագույն տնտեսման պայմաններում գործերն արագ և արդյունավետ քննելու ու լուծելու նպատակ է հետապնդում²:

Մեղադրյալի հետ համագործակցության վերաբերյալ համաձայնագիրն այսօր լայնորեն կիրառվում է արտասահմանյան երկրների քրեադատավարական համակարգերում: Այն կոչված է լուծելու խնդիրները, որոնք վերաբերում են այն հանցավոր խմբերի գործունեության քննությանը, որոնց անդամները, որպես կանոն, հրաժարվում են իրենց հանցակիցների և հանցագործությունների կազմակերպիչների վերաբերյալ ցուցմունք տալուց:

«Արդարադատության հետ գործարք» կոչվող իրավական ինստիտուտը հայտնի էր դեռևս միջին դարերում Բրիտանիայում՝ «մեղանշողի գործի վերանայում» անվամբ³: Այս իրավական ինստիտուտը լայն տարածում ունի ԱՄՆ-ի պրակտիկայում՝ սկսած 19-րդ դարից, որտեղ այն կոչվում է «մեղքի ընդունման գործարք» (plea bargaining): Մի շարք երկրների (ԱՄՆ, Ֆրանսիա, Բուլղարիա, Լատվիա, Լիտվա, Մոլդովա, ՌԴ, Վրաստան և այլն) փորձի ուսումնասիրությունը հաստատում է այս ինստիտուտի կիրառման անհրաժեշտությունը:

ՀՀ քրեական դատավարությունում տարբերակված դատավարական ձևի ներմուծման փորձ կարելի է դիտել ՀՀ քրեական դատավարության գործող օրենս-

² Հախվերդյան Ա., Համագործակցության վարույթի ինստիտուտը Քրեական Դատավարության նոր օրենսգրքի նախագծում, ԵՊՀ ՈԲԳԸ, 2015 թ., էջ 44

³ Звечаровский И., Юридическая природа института досудебного соглашения о сотрудничестве // Законность, № 9, 2009, стр. 14-16

գրքում նախատեսված դատական քննության արագացված կարգի կիրառումը առաջադրված մեղադրանքի հետ ամբաստանյալի կամ մեղադրյալի համաձայնության դեպքում, սակայն, կարծում ենք, որ գործող օրենսգրքի այս ինստիտուտը հեռու է կատարելությունից:

Ուսումնասիրելով համագործակցության մինչդատական համաձայնության քրեադատավարական մեխանիզմի նշանակման հարցը՝ չի կարելի բացառել դրա ուղղիչ դերը: Այսպես, արդեն նախաքննության փուլում հանցանք կատարած անձի մոտ իրական հնարավորություն է առաջանում ձեռնամուխ լինել ուղղման ճանապարհին, ինչն իր հերթին դրական պահ է ինչպես իր համար (պատժի ժամկետը կամ չափը նվազեցնելու հնարավորությունը), այնպես էլ հասարակության, պետության համար (քրեական պատժի նպատակներից մեկի հասնելը դատապարտյալի ուղղումն է): Ուղղիչ նպատակների հետ սերտ կապի մեջ է հետազոտվող քրեադատավարական տվյալ մեխանիզմի կանխարգելիչ նշանակությունը:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել օրենսդրության այս նորամուծության ընդհանուր և անհատական գերազանցումը:

Մեր կարծիքով՝ որոշակի վերապահումներով թույլատրելի է համագործակցության կիրառումը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ, երբ կազմակերպված խմբի անդամը, որը խմբի կազմում կատարել է ծանր հանցագործություն, ցանկություն է հայտնում համագործակցել՝ կազմակերպված խմբի բոլոր անդամների ու բոլոր արարքների մասին տեղեկություններ հաղորդելով:

Ուստի ավելի արդյունավետ կլինի ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ կատարողներին նույնպես տալ համագործակցելու հնարավորություն, իհարկե ավելի խիստ պայմաններով, օրինակ՝ եթե օրենսդիրը սահմանի, որ ծանր հանցագործությունների դեպքում պատիժ չի կարող նշանակվել սանկցիայով նախատեսված պատժի երկու երրորդից ավելի, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում, օրինակ, երեք քառորդից ավելի: Տեսական գրականության մեջ նաև քննարկվում է այն հարցը, թե քննարկվող վարույթի կիրառման համար արդյոք պարտադիր պայման է մեղադրյալի կողմից իր մեղքի ընդունումը:

Այսպես, Ա. Սմիրնովը կարծում է, որ համագործակցության իրականացման համար մեղադրյալից պահանջվում է միայն համագործակցության ցանկություն⁴: Նրա հետ համակարծիք լինելով՝ Ի. Չվեչարովսկին հավելում է, որ այս ինստիտուտի նպատակը ոչ թե հանցավորի մեղքի ընդունումն է, այլ նրան հորդորելն է դրանորել հետկրիմինալ դրական վարքագիծ⁵:

Ի հակադրություն այս կարծիքի՝ Ս. Պոզոդինը և Ա. Բախնովսկին նշում են,

⁴ Смирнов А., Особый порядок судебного решения при заключении досудебного соглашения о сотрудничестве, “Уголовный процесс”, 2009, № 11, с. 15:

⁵ Звечаровский И., Юридическая природа института досудебного соглашения о сотрудничестве, “Законность”, 2009, № 9, с. 26:

որ հանցագործության համար պատժի նվազեցումը հնարավոր է միայն անձի կողմից իր մեղքի ընդունման և գոյման պարագայում⁶: Մենք կհաւում ենք Ա. Սմիրնովի և Ի. Չվեչարովսկու կարծիքը, քանի որ մեզ հետաքրքրում է ոչ թե այն հանգամանքը՝ արդյոք մեղադրյալն ընդունում է իր մեղքը, այլ այն, որ նա պատրաստակամություն է հայտնում՝ օժանդակելու իրավապահպան մարմիններին: Հնարավոր են դեպքեր, երբ մեղադրյալը չի ընդունում մեղքը, սակայն հասկանում է, որ գործով բոլոր ապացույցներն իր դեմ են, և օբյեկտիվորեն արդարացվելու հնարավորությունը շատ փոքր է, ուստի պատրաստակամություն է հայտնում համագործակցել՝ ավելի մեղմ պատիժ ակնկալելով:

Ներկայում Հայաստանում ընթանում է քրեադատավարական օրենսդրության բարեփոխման ակտիվ գործընթաց: 2021 թ. ընդունվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը, որն ուժի մեջ է մտել 2022 թ. հուլիսի 1-ից, բնութագրվում է մի շարք հիմնարար, սկզբունքային նորամուծություններով՝ միտված քրեադատավարական գործող համակարգն էապես բարելավելուն, կատարելագործելուն և քրեական արդարադատության արդյունավետության բարձրացմանը նպաստելուն⁷:

Քրեադատավարական այս խնդիրների լուծմանն է ուղղված ՀՀ Քրեական դատավարության նոր օրենսգրքի 13-րդ բաժինը, որը նվիրված է առանձին տեսակի վարույթների իրականացման առանձնահատկություններին. դրանք են՝ մասնավոր մեղադրանքով վարույթը, համաձայնեցման վարույթը և համագործակցության վարույթը:

Անհրաժեշտ ենք համարել անդրադառնալ համաձայնեցման և համագործակցության վարույթների հարաբերակցությանը, քանի որ այս երկու սկզբունքորեն նոր ինստիտուտները սկզբնական շրջանում կարող են տարբերակման լուրջ խնդիրներ առաջացնել: Այսպես, Օրենսգրքի 458-րդ հոդվածի համաձայն՝ «դատարանը համաձայնեցման վարույթ կիրառում է հանրային մեղադրանքով նախնական դատալուսման ընթացքում՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության մեջ մեղադրվող մեղադրյալի միջնորդության հիման վրա»:

Ի տարբերություն համաձայնեցման վարույթի՝ համագործակցության վարույթ կարող է նախաձեռնվել ոչ միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության, այլ նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության օժանդակության համար մեղադրվող անձի կողմից մինչդատական համաձայնագիր կնքելու մասին գրավոր միջնորդություն (այսուհետ՝ համագործակցության միջնորդություն) ներկայացնելու դեպքում:

Բացի այդ, լուրջ տարբերություն է առկա այս երկու վարույթների կիրառման դատավարական փուլերի միջև. եթե համագործակցության միջնորդություն-

⁶ Погодин С., Некоторые актуальные проблемы применения особого порядка судебного разбирательства в состязательном уголовном процессе, «Российская юстиция», 2009, № 9, с. 25.

⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=154763>

նը կարող է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու պահից մինչև նախաքննության ավարտի մասին հայտարարելը, սպա համաձայնեցման վարույթը կիրառվում է նախնական դատախազների ընթացքում, դատավորին միջնորդություն ներկայացնելու միջոցով՝ ի տարբերություն համագործակցության միջնորդության, որը հասցեագրվում է հսկող դատախազին: Եթե համագործակցության վարույթում քննիչի վրա պարտականություն է դրվում համագործակցության միջնորդություն ներկայացնելու դեպքում միջոցներ ձեռնարկել վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, սպա համաձայնեցման վարույթի դեպքում պարզապես նշվում է, որ այն չի կարող կիրառվել, եթե մեղադրյալը չունի պաշտպան, կամ միջնորդությունը ներկայացվել է առանց պաշտպանի հետ խորհրդակցելու:

Տարբեր են նաև պատժի առումով մեղադրյալի համար այս վարույթների կիրառման հետևանքները: Նոր Օրենսգրքում մասնավորապես, նշվում է, որ համաձայնության արդյունքում չի կարող սահմանվել այնպիսի պատժաչափ, որը կգերազանցի տվյալ հանցագործության համար սահմանված առավելագույն պատժի կեսը, իսկ համագործակցության վարույթի պարագայում նշանակվում է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, կամ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում: Ամփոփելով կարող ենք նշել, որ եթե համագործակցության վարույթի նպատակը մեղադրյալից հանցագործության վերաբերյալ տվյալների ստացումն է, սպա համաձայնեցման վարույթը հիմնվում է մեղադրյալի կողմից իր մեղքի ընդունման վրա:

Այսպես, Նոր Օրենսգրքով հստակ սահմանվել է համագործակցության վարույթի նպատակը. այն կիրառվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտումը և դրանք կատարած անձանց պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելու նպատակով: Համագործակցության վարույթ կարող է նախաձեռնվել ոչ միայն միջին ծանրության հանցագործության մեջ, այլ նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության օժանդակության համար մեղադրվող անձի կողմից համագործակցության միջնորդություն ներկայացնելու դեպքում:

2. Համագործակցության վարույթի կիրառման դատավարական կարգը

Համագործակցության միջնորդությունը մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից հսկող դատախազին հանձնվում է քննիչի միջոցով: Եթե միջնորդությունը ներկայացնելու պահին մեղադրյալը պաշտպան չունի, սպա քննիչը միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար և մեղադրյալին հնարավորություն է ընձեռում պաշտպանի հետ քննարկել միջնորդությունը:

Համագործակցության միջնորդությունը բավարարելու դեպքում հսկող դատախազը քննիչի, մեղադրյալի և նրա պաշտպանի մասնակցությամբ կազմում է

համագործակցության համաձայնագիր⁸: Հարկ է նշել, որ համաձայնեցված վարությամբ նախաքննությունն իրականացվում է ընդհանուր կարգով, սակայն համաձայնագիր կազմելուց հետո մեղադրյալի վերաբերյալ վարությամբ անջատվում է: Համագործակցության վարույթի ընթացքում հսկող դատախազն իրավունք ունի քննիչի միջնորդությամբ որոշում կայացնել քրեական հետապնդումը կասեցնելու մասին՝ մինչև այս վարությամբ առաջին ատյանի դատարանի այն եզրափակիչ դատական ակտի հրապարակելը, որի կապակցությամբ մեղադրյալը համագործակցության պարտականություն է ստանձնել: Մեղադրական եզրակացությունը (ընդհանուր կարգով սահմանված կարգով և ժամկետներում) հաստատելուց հետո հսկող դատախազը միջնորդություն է ներկայացնում իրավասու դատարան՝ մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին, կամ որոշմամբ մերժում է այդպիսի միջնորդությամբ քրեական գործը դատարանին հանձնելը, եթե մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած պարտականությունները չեն կատարվել կամ կատարվել են ոչ պատշաճ: Դատարանը բավարարում է դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու միջնորդությունը և որոշում կայացնում լրացուցիչ դատալսումներ անցկացնելու մասին, իսկ ՔՕ 472-րդ 2-րդ մասում թվարկված պայմաններից անգամ մեկի բացակայության դեպքում դատարանը որոշում է կայացնում դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատալսումներն ընդհանուր կարգով շարունակելու մասին: Համագործակցության վարություն չեն հետազոտվում մեղադրյալի մեղավորությունը հաստատող ապացույցները:

Համաձայն 473-րդ հոդվածի՝ համագործակցության վարությամբ լրացուցիչ դատալսումներն անցկացվում են մեղադրյալի, նրա պաշտպանի, հանրային մեղադրողի և տուժողի (եթե կայացվելիք դատավճիռը կարող է շոշափել նրա շահերը) պարտադիր մասնակցությամբ:

Լրացուցիչ դատալսումների սկզբում հանրային մեղադրողը ներկայացնում է մեղադրանքի փաստական հիմքը, մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը, որից հետո հաստատում է մեղադրյալի համագործակցության փաստը և պարզաբանում դատարանին, թե հատկապես ինչում է դա արտահայտվել:

Մեղադրյալը և պաշտպանն իրավունք ունեն իրենց նկատառումները հայտնելու մեղադրյալի համագործակցության բնույթի և այլ էական հանգամանքների վերաբերյալ:

Համագործակցության վարույթի արդյունքում դատարանը կայացնում է մեղադրական դատավճիռ՝ նշանակելով օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կամ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով: Իսպանիայում այս վարույթի դեպքում նշանակվող պատիժը չի կարող գերազանցել վեց

⁸ Համագործակցության համաձայնագիր կազմելու կարգ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 468-րդ հարված:

տարի ազատագրվումը, իսկ Իտալիայում այն իջեցվում է մինչև ազատագրվման ժամկետի մեկ երրորդը:

Օրենսդիրը կարգավորել է նաև համագործակցության վարույթի դեպքում դատավճի բողոքարկման հարցի հետ կապված որոշակի առանձնահատկություններ: Այսպես, համագործակցության վարույթով կայացված դատավճի՞նը կարող է բողոքարկվել ընդհանուր կարգով, սակայն չի կարող բողոքարկվել հետևյալ հիմքերով:

Համագործակցության վարույթով կայացված դատավճի՞նը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով, սակայն այն չի կարող բողոքարկվել սույն օրենսգրքի 373-րդ հոդվածով և 375-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված հիմքերով:

Եթե մեղադրյալի նկատմամբ սույն գլխի կանոններին համապատասխան կայացված դատավճի՞նն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերվում է, որ նա նախաքննության մարմնին դիտավորյալ հայտնել է սուտ տեղեկություններ կամ թաքցրել է որևէ էական տեղեկություն, ապա դատավճի՞նը ենթակա է վերանայման սույն օրենսգրքի 49-րդ գլխով սահմանված կարգով:

Սակայն, եթե մեղադրյալի նկատմամբ համապատասխան պատիժ կիրառելուց հետո հայտնաբերվում է, որ նա նախաքննության մարմնին դիտավորյալ հայտնել է սուտ տեղեկություններ կամ թաքցրել է որևէ էական տեղեկություն, ապա դատավճի՞նը ենթակա է վերանայման՝ բացառիկ վերանայման համար սահմանված կարգով: Տեսության մեջ նաև քննարկվում է այն հարցը, թե արդյոք համագործակցության վարույթը չի սահմանափակում դատարանի անկախությունը:

Կարծում ենք՝ որևէ պարագայում չի կարող կասկածի տակ դրվել դատարանի անկախությունը, քանի որ դատարանը կաշկանդված չէ համագործակցության միջնորդությամբ. նա պարտավոր է մերժել միջնորդությունը և գործի քննությունն իրականացնել ընդհանուր կարգով, եթե պարզում է, որ այն անհիմն է: Եթե նույնիսկ դատարանը բավարարել է միջնորդությունը և անցկացրել լրացուցիչ դատաքննություն, նա չպետք է կայացնի դատավճի՞ն վերոնշյալ նույն հիմքերով և պետք է որոշում կայացնի նախնական դատալսումները վերսկսելու մասին:

Տեսության մեջ բուռն քննարկվում և տարակարծությունների տեղիք է տալիս համագործակցության վարույթի կիրառման դեպքում տուժողի իրավունքների պաշտպանության հարցը:

Ինչպես նկատում ենք, Օրենսգրքի կարգավորումներում հստակ են այն պահանջները, որոնք պետք է նշվեն միջնորդության մեջ: Մեղադրյալի համար կարևոր դատավարական երաշխիք է այն, որ վերջինս և նրա պաշտպանը վերահաս դատախազին կարող են բողոքարկել դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդությամբ քրեական գործը դատարանին հանձնելը մերժելու մասին որոշումը, իսկ մինչև բողոքի լուծումը քրեական գործը չի կարող ուղարկվել դատարան:

Ի տարբերություն ամերիկյան մոդելի՝ դատավորը կաշկանդված չէ նախաքննության ընթացքում մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև կնքված համագործակցության համաձայնագրով. դատարանը մեխանիկորեն չի բավարարում համագործակցության համաձայնագիր կնքած մեղադրյալի նկատմամբ դատաքննությունը հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդությունը:

Դատախազի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը որոշում է կայացնում լրացուցիչ դատալսումներ անցկացնելու մասին: Դատալսումներն անցկացվում են մեղադրյալի, նրա պաշտպանի, հանրային մեղադրողի և տուժողի (եթե կայացվելիք դատավճիռը կարող է շոշափել նրա շահերը) պարտադիր մասնակցությամբ: Լրացուցիչ դատալսումների սկզբում հանրային մեղադրողը ներկայացնում է մեղադրանքի փաստական հիմքը, մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը, որից հետո հաստատում է մեղադրյալի համագործակցության փաստը և պարզաբանում դատարանին, թե հատկապես ինչում է դա արտահայտվել: Մեղադրյալը և պաշտպանն իրավունք ունեն իրենց նկատառումները հայտնել մեղադրյալի համագործակցության բնույթի և այլ էական հանգամանքների վերաբերյալ:

Համագործակցության վարույթի արդյունքում դատարանը կայացնում է մեղադրական դատավճիռ: Հետագոտված սպացույցներով մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած իր պարտականությունների կատարումը, ինչպես նաև համագործակցության նպատակի նվաճումը հաստատված համարելու դեպքում դատարանը, հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները, նշանակում է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կամ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառում:

Դատավճիռը հրապարակելուց հետո դատավորը կողմերին պարզաբանում է նաև դատավճիռը բողոքարկելու սահմանափակումները, մասնավորապես՝ համագործակցության վարույթով կայացված դատավճիռը չի կարող բողոքարկվել Օրենսգրքի 373-րդ հոդվածով և 375-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված հիմքերով:

Այսինքն՝ դատապարտված մեղադրյալը չի կարողանա բողոքարկել իր նկատմամբ կայացված դատական ակտը փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված հետևությունների հետագոտված սպացույցներին անհամապատասխանության և արարքի սխալ իրավական գնահատականի հիմքով: Եթե մեղադրյալի նկատմամբ սույն գլխի կանոններին համապատասխան պատիժ նշանակելուց հետո հայտնաբերվում է, որ նա նախաքննության մարմնին դիտավորյալ հայտնել է սուտ տեղեկություններ կամ թաքցրել է որևէ էական տեղեկություն, ապա դատավճիռը ենթակա է վերանայման:

Ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ, չնայած բոլոր թերություններին, համագործակցության ինստիտուտը պահանջված է և անհրաժեշտ: Նոր օրենսգրքով դրա նախատեսումը պայմանավորված է ծայրաստիճան հիմնավոր փաս-

տարկումներով: Պետք է նաև հաշվի առնել, որ համագործակցության վարույթը նախատեսված չէ համատարած կիրառման համար. այն ուղղված է առավել կազմակերպված և վտանգավոր հանցագործությունների դեմ արդյունավետ պայքար ապահովելուն:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ նման հանցագործություններից հասարակությունը և պետությունը պաշտպանելու այլ գործուն մեխանիզմներ դեռ չեն գտնվել: Պետությունը, հայտնվելով հանցավոր աշխարհից պաշտպանվելու անհրաժեշտության վիճակում, ստիպված է դիմել ոչ ավանդական իրավական տարրեր միջոցների, որոնցից է համագործակցության վարույթը, հատկապես որ արտասահմանյան երկրներում առկա է դրա կիրառման դրական փորձ:

3. Քննիչի մասնակցությունը միջնորդության ներկայացմանը և դրա լուծմանը մասնակցելու դատախազի իրավասությունը

Քրեական վարույթի մինչդատական փուլում, ինչպես նաև դատական քննության փուլում դատախազի ունեցած գործառնական կարգավիճակը մեծապես պայմանավորված է քննիչի ունեցած դատավարական կարգավիճակով: Այս առումով քրեական արդարադատության ինստիտուցիոնալ լիազորվածության հիմնական հարցը հետևյալն է՝ ո՞վ է քննիչը: Այդ հարցի լուծումը կարող է տրվել հետևյալ երեք մոդելներից մեկով՝

1. Մաքուր ինկվիզիցիոն, քննիչակենտրոն մոդել, որն իր առավել հետևողական արտացոլումն է ստացել խորհրդային քրեական դատավարության մեջ. քննիչը՝ որպես մինչդատական վարույթի դատավոր, որը որպես մինչդատական վարույթում նշանակությամբ 2-րդ, իսկ ժամանակագրական առումով 1-ին իրավաբանն⁹ է, ընդունում է հիմնական դատավարական որոշումները՝ մեղադրանքի առաջադրում, մեղադրանքի ծավալի փոփոխություն և քրեական հետապնդման դադարեցում/քրեական գործի վարույթի կարճում: Այս մոդելին բնորոշ է այն, որ քննիչը իրավունք ունի դատախազի որոշումը բողոքարկել նրա վերադաս դատախազին՝ կատարելով դատախազի որոշումը/ցուցումները, իսկ առանձին, ստորև քննարկվող որոշումների առթիվ տրված ցուցումները՝ նաև առանց դրանք կատարելու: Այս մոդելին նաև բնորոշ է, որ քննիչը իրավունք ունի անձի սահմանադրական իրավունքների սահմանափակման (խուզարկություն, հեռախոսային

⁹ Այս եզրույթի տակ նկատի է ունեցվում քրեական նյութական և դատավարական օրենքը կիրառելու իրավասություն ունեցող անձը, որի համար՝ նման լիազորվածության բերումով պարտադիր է իրավաբանի կրթություն ունենալը: Այսինքն՝ ոչ իրավաբան ասելով, ի նկատի է ունեցվում, որ իրավաբանական կրթությունը այս պաշտոնների համար պարտադիր չէ: Նրանք, իհարկե, կարող են լինել իրավաբաններ, սակայն ԱՄՆ-ի օրինակով, կարող են ունենալ նաև տնտեսագետի որակավորում, այլ մասնագիտություններ, որոնք կօգնեն կամ կպահանջվեն մասնագիտական որակավորում պահանջող քննությունների դեպքում, օր.՝ հաշվապահ-քննիչներ ֆինանսական հանցագործությունների համար և այլն:

խոսակցությունների վերահսկման թույլտվություն, կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և այլնի) համար թույլտվություն ստանալու միջնորդությամբ անձամբ դիմելու դատարան: Նաև քննիչը հանձնարարություններ է տալիս օպերատիվ-հետախուզական ու հետաքննության մարմիններին:

Այս մոդելի կարևորագույն բնութագրիչ գիծն այն է, որ, քննիչը, ինչպես նաև վարույթ իրականացրած ցանկացած անձ, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն, չեն կարող կանչվել որպես վկա, իսկ նրանց կողմից կազմված խուզարկության և այլ քննչական, այն է՝ ապացույցների ձեռք բերմանն ուղղված գործողությունների արձանագրությունները ինքնուրույն և ինքնաթույլատրելիորեն (self-authenticably) ապացույց են, ապացույցի տեսակ են՝ դեռևս մինչև դրանք դատարանում քննության առնչվելը: Իրականում, գործում է, և սա ընդհանուր խորհրդային իրավագիտության մոտեցումն է ցարական Ռուսաստանից, մինչ այդ էլ՝ Փրանսիայից եկող ու ադավաղված, ըստ որի՝ նախաքննության մարմինների գործունեության արդյունքները, տվյալ դեպքում՝ ապացույցները և դատավարական, այդ թվում՝ դատավարական հարկադրանքի գործողությունների (օր.՝ նույն ձերբակալության) արձանագրությունները, մեղադրական եզրակացությունը և այլն, ունեն հիմնավորվածության որոշակի կանխավարկած, որը կարող է հերքվել դատարանում: Ինչ խոսք, սա ուղղակիորեն հակասում է անմեղության կանխավարկածին, որը ենթադրում է հակառակը և հանդիսանում է խորհրդային դատավարության՝ որպես ճանաչողության պրոցեսի, ինտելեկտուալ անազնվության աստիճանի հասնող ընթացակարգային թերություն (procedural flow on the level of intellectual dishonesty)¹⁰:

2. Մաքուր մրցակցային դատարանակենտրոն մոդել. քննիչը՝ որպես մինչդատական վարույթի միակ իրավաբանի՝ դատախազի խուզարկու (сыщик), որը ապահովում է մեղադրանքի փաստական բազան՝ ապացույցների ձեռք բերում և այլն, իսկ դատախազը կատարում է օրենքի կիրառման/դատավարական պահանջների պահպանման հետ կապված բոլոր գործառնությունները՝ մեղադրանքի առաջադրում և վերը նշված այլ հարցերի լուծումը: Այս մոդելի համար, ուր քննիչը լինի իրավաբան, պարտադիր չէ, բնորոշ է այն, որ քննիչը, բացի գործը քննելուց, նաև միշտ պատրաստվում է իր կատարած գործողությունների համար որպես մեղադրանքի կողմի վկա ապագայում հանդես գալ դատարանում՝ նախնական դատալուծումների ու դատական քննության ընթացքում, որտեղ հանրային մեղադրող դատախազը, որը նույն անձն է, որը մասնակցել է «նախաքննությանը», քննիչին ենթարկում է ուղիղ հարցաքննության (direct examination), իսկ պաշտպանական կողմը՝ հակընդդեմ կամ այլ կերպ ասած՝ խաչաձև հարցաքննության (cross examination): Նույնը վերաբերում է նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն և հետաքննություն իրականացրած անձանց՝ իհարկե ոչ վերջիններիս

¹⁰ <https://www.investigative.am/news/view/haxordum-2019-tvakan.html>

ֆունկցիաների ու ինստիտուտների այն արհեստական տարանջատմամբ, որ գործում է առաջին մոդելում¹¹:

Մոդելին բնորոշ է նաև այն, որ մեղադրյալի պաշտպանի կողմից արված համագործակցության առաջարկը քննարկվում և ընդունվում է բացառապես դատախազի կողմից: Այս մոդելի կարևորագույն բնութագրիչ այն է, որ քննչական ու դատավարչական գործողությունների և ընդհանրապես դատարանից, ավելի ճիշտ դատաքննությունից (trial), կամ այլ կերպ ասած՝ ապացույցների դատական հետազոտումից դուրս արված գործողությունների ցանկացած արդյունք՝ վկայի հարցաքննության, բնակարանի խուզարկության կամ որևէ այլ գործողության արձանագրություն, համարվում է «ասեկոսե» (hearsay) և չի կարող որպես ապացույց դիտվել, քանի դեռ այն կազմած անձը՝ քննիչը կամ օպերատիվ աշխատակիցը կամ հետաքննիչը դրա առթիվ չհարցաքննվի որպես վկա դատաքննության ժամանակ: Այլ խոսքերով՝ այս մոդելում չկան գրավոր ապացույցներ, և ապացույց է միայն այն, ինչը ոչ թե պարզապես հետազոտվել է, այլ ձեռք է բերվել դատարանում՝ լսվելով բանավոր հանդես եկող վկայի շուրթերից: Այս մոդելում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը և այլ սահմանադրական իրավունքների սահմանափակմանն ուղղված միջնորդությունները դատարանին ներկայացնելու իրավունք ունի բացառապես դատախազը:

Որոշ դեպքերում դատախազն ինքն է թույլատրում իրավունքների որոշակի սահմանափակում քննիչի միջնորդությամբ, օրինակ՝ ԱՄՆ-ում դատախազը կարող է դիմել բջջային օպերատորին պարտադիր կատարման ենթակա հրահանգով (subpoena)՝ խնդրելով իրեն ներկայացնել անձի հեռախոսագանգերի ելքային և մուտքային զանգերի հեռախոսահամարները կամ էլեկտրոնային մտից կամ էլից նամակների հասցեները: Սակայն նշված զանգերի բովանդակությունը լսելու, վերահսկելու համար, բնականաբար, դատախազը դիմում է դատարանին՝ համապատասխան միջնորդությամբ: Նույն միջնորդությամբ՝ էլեկտրոնային փոստարկղի խուզարկության միջնորդությամբ, դատախազը դիմում է էլեկտրոնային նամակների բովանդակությունը ձեռք բերելու համար:

3. Իսաաքը մոդել, որն ընտրվել է ԲԴՕ Նախագծով, որը զգուշորեն փորձում է գնալ դեպի 2-րդ՝ առավել արդյունավետ մոդելը:

Մասնավորապես, այս հիբրիդային նախագծով առաջարկվող մոդելում՝

- երկու իրավաբանի առկայությունը մինչդատական վարույթում պահպանվում է,
- վերը նշված հիմնական դատավարական որոշումները կազմվում են քննիչի, բայց հաստատվում դատախազի կողմից,
- քննիչը կարող է հարցաքննվել որպես վկա ապացույցի թույլատրելիության և դատավարական այլ գործողության իրավաչափության առթիվ՝

¹¹ Ղամբարյան Ա., Մինչդատական վարույթի բարեփոխումները << քրեական դատավարությունում, Երևան, 2010, էջ 69:

դատարանի նախաձեռնությամբ կամ դատարանի որոշմամբ՝ կողմերի միջնորդության հիման վրա (հոդված 57, մաս 3, կետ 5 և հոդված 331, մաս 4):

Հիբրիդայնությունն այստեղ այն է, որ կարծես թե գործող ՔԳՕ 86-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով հաստատված՝ վարույթ իրականացնող անձանց հարցաքննելու արգելքի կանոնը չի փոխվում՝ քննիչը միայն որոշակի դեպքերում է հրավիրվելու որպես վկա¹², սակայն, ուշադիր դիտարկման դեպքում պարզվում է, որ շատ չնչին կարող է լինել այն դեպքերի թիվը, երբ պաշտպանը քննիչին ցանկություն ունենա հարցաքննել որևէ այլ նպատակով, քան ապացույցի թույլատրելիության կամ դատավարական այլ գործողության իրավաչափության վիճարկումն է (օրինակ՝ որ չի եղել հիմնավոր կասկած վերահսկիչ գնման կամ ձերբակալման համար և այլն): Ինչ վերաբերում է հետաքննիչին, ապա նրա հարցաքննությունը արդեն իսկ նախատեսվում է որպես ընդհանուր կանոն՝ 2-րդ մոդելի նման:

Փաստորեն, կարող ենք ասել, որ Օրենսգիրքը գործնականում գնում է 2-րդ՝ ամերիկյան մոդելով, մինչդեռ արտաքննապես պահպանվում է որոշակի «հարգանքը» իրավաբան հանդիսացող քննիչի նկատմամբ. - համագործակցության առաջարկի ընդունումը արվում է դատախազի կողմից, սակայն քննիչը իր կարծիքն է հայտնում: Այս հարցերը մանրամասն քննարկվելու են համապատասխան պարագրաֆներում: Սակայն այստեղ շատ կարևոր է նշել, որ ինստիտուցիոնալ բոլոր ընդհարումները դատախազության և քննչական/հետաքննության մարմինների միջև միշտ եղել են գործով նրանց կողմից տրվող իրավական գնահատականների և դրանց ու դրանց հիմքում ընկած նյութերի/ապացույցների ինքնա-աուտենտիկության/ճշգրտության կանխավարկածի և այն մեկ այլ իրավաբան մասնագետի կողմից արդյունավետորեն վիճարկելու և վերանայելու անթույլատրելիության առթիվ:

Ստավորապես, քննիչն ասել է. «Ինչո՞վ է ավել դատախազը, որ վիճարկի իմ գնահատականը»: Նույնը՝ դատախազ-դատավոր հարաբերություններում: Սա է միշտ եղել պատճառը, որ դատախազները միշտ դժգոհել են արդարացման դատավճիռներից, կալանավորումը մերժելու որոշումներից, ու նաև նրա պատճառը, որ քննիչները իրավունք են ստացել ու բողոքարկել են դատախազի ցուցումները:¹³

Այդ նորամուծությունը քննիչի ու դատախազի, ապա դատարանի կողմից

¹² Երբ իրեղեն ապացույցի, ապացուցողական կամ այլ վարույթային գործողության արձանագրության կամ արտավարույթային փաստաթղթի հետազոտման արդյունքում կողմը վիճարկում է դրա թույլատրելիությունը, կամ դատարանի մոտ հիմնավոր կասկածներ են առաջանում համապատասխան ապացույցի հավաստիության վերաբերյալ (հոդված 331, մաս 4):

¹³ Головинская И. В., “Расширения перечня особых порядков судебного разбирательства в отечественном уголовном процессе. досудебное соглашение о сотрудничестве”, Вестник Владимирского юридического института, N 3(12), 2009, С. 57.

կայացվող որոշումների համար անհրաժեշտ ապացուցողական շեմերի տարբերակումն է՝ հավանականությունների գերակշռումից սկսած (preponderance of evidence), երբ քննիչը մեղադրական եզրակացությունը կազմում և ուղարկում է դատախազին, եթե «մինչդատական վարույթում հավաքված բոլոր ապացույցները գնահատելով՝ քննիչը հանգում է հետևության, որ մեղադրյալին վերագրվող հանցանքի համար իրավասու դատարանի կողմից նրա դատապարտումը մեծապես հավանական է» (հոդված 199, մաս 1-ին), մինչդեռ գործող օրենսգրքում մինչդատական վարույթի շրջանակներում միշտ օգտագործվում է՝ եթե «բավարար ապացույցներ»):

Դատավճռի համար ԶԴՕ-ով նախատեսված է ամենաբարձր՝ «ողջամիտ կասկածից վեր» շեմը (beyond a reasonable doubt), որը հենց նշանակում է, որ օրենսդիրն այլևս չի ենթադրում, որ քննչական գործողությունների արդյունքները կասկած չեն հարուցում. պարզապես քննիչը սուբյեկտիվորեն համոզված է անձի մեղավորության կամ այլ փաստի մեջ (որպես կասկածյալ ներգրավելու, մեղադրանք առաջադրելու և այլ անհրաժեշտության մեջ), սակայն այդ համոզմունքի անկեղծությունը բավարար չէ ապացուցողական շեմի բավարարված լինելու փաստը գնահատող ողջամիտ դիտորդին համոզելու համար: Դա անելու համար անհրաժեշտ է դատական պրոցես¹⁴:

Քննիչը մասնակցում է միջնորդության ներկայացմանը, իսկ լուծմանը՝ միայն դատախազը (Հոդված 462, Համագործակցության միջնորդության լուծումը): Քննիչը «մեղադրյալի և պաշտպանի կողմից ստորագրված միջնորդությունը ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում... այն հանձնում է հսկող դատախազին՝ կցելով դրա բավարարման կամ մերժման վերաբերյալ իր գրավոր կարծիքը» (Հոդված 461, մաս 5-րդ), իսկ դատախազը՝ «համագործակցության միջնորդությունը և դրա վերաբերյալ քննիչի կարծիքը ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում, հսկող դատախազը որոշում է կայացնում համագործակցության միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին» (Հոդված 461, մաս 1-ին): Ինչպես տեսնում ենք, քննիչի համար իմպերատիվ նորմ է ներկայացված միջնորդությունն ուղարկել հսկող դատախազին, և նա չունի որևէ հայեցողական լիազորություն՝ այլ կերպ վարվելու: Բավարարման կամ մերժման լիազորությունը տրված է միայն հսկող դատախազին, և քննիչը մասնավորապես միջնորդություն ներկայացվելու դեպքում չի կարող պաշտպանական կողմի վրա որևէ կերպ ազդել (օրինակ՝ միջնորդությունը հետ վերցնելու համար)՝ պնդելով, որ իրականում դատախազի հայեցողական լիազորությունը իրականացվում է իր՝ քննիչի կարծիքի հիման վրա: Վերջին երկու բառը շատ կարևոր է՝ այս հարցում քննիչի և հսկող դատախազի դատավարական հարաբերությունների օրենսդրական կարգավորման ճիշտ ընկալման առումով:

¹⁴ CASE OF FOX, CAMPBELL AND HARTLEY v. THE UNITED KINGDOM, JUDGMENT 30 August 1990, rate A, Art.-182, point 35, p. 932

Այսպիսով, ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ համագործակցության վարույթում տուժողի կարծիքի վերաբերյալ չկա որևէ կարգավորում: Նոր Օրենսգրքի քննարկվող ամբողջ գլխում միայն մեկ նորմ է Օրենսդիրն ամրագրել (468-րդ հո. 3-րդ մաս), ըստ որի՝ « Եթե չհատուցված վնասը տուժողին պատճառվել է միայն մեղադրյալին մեղսագրվող արարքով, ապա համաձայնագրում նշվում է նաև այդ վնասը լրիվ հատուցելու մեղադրյալի պարտականությունը»: Այլ որևէ նորմ առկա չէ, որը կապշտպանի և կերաշխավորի տուժողի իրավունքները՝ վերջինիս կարծիքը գոնե ունենալու համար:

Եզրակացություն

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունը՝ կարող ենք փաստել, որ քրեադատավարական նոր ինստիտուտը կարող է դիտարկվել տարբեր ասպեկտներով, մասնավորապես՝ որպես հանցավորության դեմ պայքարի գործուն միջոց կամ նոր խթան մեղադրյալի համար՝ իր հետկրիմինալ վարքագիծը փոխելու համար: Միաժամանակ այն արդյունավետ միջոց է դատական ծախսերն ու ժամանակը խնայելու և վարույթն իրականացնող մարմիններին ավելորդ ծանրաբեռնվածությունից զերծ պահելու համար: Դրա հետ մեկտեղ այս ինստիտուտի կիրառելիությունը չի կարող տարածական բնույթ կրել:

Այսպես, Քրեական դատավարության նոր օրենսգրքով հստակ սահմանվել է համագործակցության վարույթի նպատակը. այն կիրառվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտումը և դրանք կատարած անձանց պատասխանատվության անխուսափելիությունը ապահովելու նպատակով: Համագործակցության վարույթ կարող է նախաձեռնվել ոչ միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության մեջ, այլ նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության օժանդակության համար մեղադրվող անձի կողմից համագործակցության միջնորդություն ներկայացնելու դեպքում:

Քրեական գործի քննությունը համագործակցության վարույթի կարգով արդարացի իրականացնելու համար նոր օրենսգիրքը սահմանում է մի շարք երաշխիքներ, ինչպիսիք են, օրինակ, մեղադրյալի կողմից միջնորդությունը ներկայացնելու կամավորությունը և պաշտպանի պարտադիր մասնակցությունը, հսկող դատախազի կողմից համագործակցության միջնորդության ուսումնասիրությունն ու դրա բավարարումը կամ մերժումը (որը նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու սահմանադրական գործառնության դրսևորում է), դատարանի կողմից հատուկ կարգով գործի քննություն նշանակելու մասին միջնորդության բավարարումը կամ մերժումը (որն էլ, ըստ էության, դատական հսկողության յուրօրինակ դրսևորում է):

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ, չնայած բոլոր թերություններին, համագործակցության ինստիտուտը պահանջված է և անհրաժեշտ: Նոր օրենս-

գրքով դրա նախատեսումը պայմանավորված է ծայրաստիճան հիմնավոր փաստարկումներով: Պետք է նաև հաշվի առնել, որ համագործակցության վարույթը նախատեսված չէ համատարած կիրառման համար. այն ուղղված է առավել կազմակերպված և վտանգավոր հանցագործությունների դեմ արդյունավետ պայքար ապահովելուն:

Բացի այդ, քրեադատավարական օրենքով նախատեսվում է օրինական ուժի մեջ մտած դատավճռի վերանայման հնարավորություն այն դեպքում, երբ ի հատ է գալիս, որ մեղադրյալը դիտավորյալ հայտնել է կեղծ տեղեկություններ կամ դիտավորությամբ քննությունից թաքցրել է որևէ հանգամանք:

Այսպիսով, նշենք, որ համագործակցության վերաբերյալ մինչդաստական համաձայնագրի ինստիտուտը իրավամբ գործուն միջոց է շարունակ զարգացող հանցավորության դեմ պայքարում: Դրա կարևորությունը զգալի է հատկապես կազմակերպված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների դեմ պայքարում:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ նման հանցագործություններից հասարակությունը և պետությունը պաշտպանելու այլ գործուն մեխանիզմներ դեռ չեն գտնվել: Պետությունը, հայտնվելով հանցավոր աշխարհից պաշտպանվելու անհրաժեշտության վիճակում, ստիպված է դիմել ոչ ավանդական իրավական տարբեր միջոցների, որոնցից է համագործակցության վարույթը, հատկապես որ արտասահմանյան երկրներում առկա է դրա կիրառման դրական փորձ:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 2021 թ.
RA Criminal Procedure Code, 2021.
2. Հախվերդյան Ա., Համագործակցության վարույթի ինստիտուտը Քրեական Դատավարության նոր օրենսգրքի նախագծում, ԵՊՀ ՈԻԳԸ, 2015 թ.
Hakhverdyan A. “The Institute of Cooperation Proceedings in the Drafting of the New Code of Criminal Procedure”, YSU SSS, 2015.
3. Դամբարյան Ա., Մինչդատական վարույթի բարեփոխումները ՀՀ քրեական դատավարությունում, Երևան, 2010 թ.
Ghambaryan A. “Reforms of Pre-Trial Proceedings in RA Criminal Proceedings”, Yerevan, 2010.
4. CASE OF FOX, CAMPBELL AND HARTLEY v. THE UNITED KINGDOM, JUDGMENT 30 August 1990, rate A, Art.-182, point 35
5. Головинская И. В. “Расширения перечня особых порядков судебного разбирательства в отечественном уголовном процессе. досудебное соглашение о сотрудничестве”, Вестник Владимирского юридического института, N 3(12), 2009.
Golovinskaya I.V. “Expansion of the List of Special Procedures for Judicial Proceedings in Domestic Criminal Proceedings: Pre-Trial Cooperation Agreement”. Bulletin of Vladimir Law Institute, N 3(12), 2009.
6. Звечаровский И. “Юридическая природа института досудебного соглашения о сотрудничестве”, Законность, № 9, 2009.
Zvecharovsky I. “Legal Nature of the Institution of Pre-Trial Cooperation Agreement”, Legality, No. 9, 2009.
7. Погодин С. “Некоторые актуальные проблемы применения особого порядка судебного разбирательства в состязательном уголовном процессе”, “Российская юстиция”, 2009, № 9.
Pogodin S. “Some Current Problems of Applying a Special Procedure for Trial in Adversarial Criminal Proceedings”, “Russian Justice”, 2009, No. 9.
8. Смирнов А. “Особый порядок судебного решения при заключении досудебного соглашения о сотрудничестве”, “Уголовный процесс”, 2009, № 11
Smirnov A. “Special Procedure for a Court Decision when Concluding a Pre-Trial Agreement on Cooperation”, “Criminal Process”, 2009, No. 11.
9. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=154763>
10. <https://www.investigative.am/news/view/haxordum-2019-tvakan.html>

Arshak Martirosyan

Head of a Division for Supervision over the Investigation of Especially Important Cases against Military Service of the Central Military Prosecutor's Office of the Republic of Armenia

CRIMINAL PROCEDURE ASPECTS OF COOPERATION PROCEEDINGS AND CURRENT ISSUES¹

Abstract

The main purpose of the article is to study the criminal procedure aspects of cooperation proceedings and the existing problems. The issue of distinguishing the procedural form in criminal proceedings has been and remains in the focus of litigators. It became more relevant in the current phase of criminal justice reforms, the goal of which is to have an efficient, economic, criminal trial that meets international standards. The new Code not only defined the idea of differentiating the criminal procedure form or pointed out the logic of the development of criminal law in this regard, but also clearly identified the anticipated manifestations of development in this direction in the form of simplified preliminary investigation, agreement proceedings, cooperation proceedings and private accusation proceedings.

Summing up the studies, it is safe to note that, in spite of all the shortcomings, the institute of cooperation is in demand and necessary. Its provision by the new Code is conditioned by extremely valid arguments. What should also be taken into account is that the cooperation procedure is not intended for widespread use; it is aimed at ensuring an effective fight against the most organized and dangerous crimes.

Thus, it is safe to state that the institution of pre-trial agreement on cooperation is a rightfully effective tool in the fight against continuously developing crime. Its importance is significant especially in the fight against moderate, grave or particularly grave organized crimes.

Keywords: crime; cooperation proceedings; pre-trial agreement; mediation; Criminal Procedure Code.

¹ The article was presented on 27.03.2024 and was reviewed on 01.11.2024.

Аршак Мартиросян

Начальник отдела по надзору за расследованием особо важных дел против военной службы Центральной военной прокуратуры Республики Армения

УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫЕ АСПЕКТЫ ПРОИЗВОДСТВА ПО ДЕЛУ О СОТРУДНИЧЕСТВЕ И АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ¹

Абстракт

Основной целью статьи является изучение уголовно-процессуальных аспектов производства о сотрудничестве, существующих проблем. Вопрос о различении процессуальной формы в уголовном судопроизводстве был и остается в центре внимания юристов. Это стало более актуальным на нынешнем этапе реформ уголовного правосудия, целью которых является проведение эффективного, экономичного уголовного процесса, соответствующего международным стандартам. Новый Кодекс не только определил идею дифференциации уголовно-процессуальной формы или указал логику развития уголовного права, но и четко определил ожидаемые проявления развития в этом направлении в виде упрощенного предварительного расследования, производства по соглашению, производства по сотрудничеству и производства по частному обвинению.

Подводя итог проведенным исследованиям, можно отметить, что, несмотря на все недостатки, институт сотрудничества востребован и необходим. Его предоставление новым кодексом обусловлено чрезвычайно вескими аргументами. Следует также учитывать, что процедура сотрудничества не предназначена для широкого использования: она направлена на обеспечение эффективной борьбы с наиболее организованными и опасными преступлениями.

Таким образом, мы можем констатировать, что институт досудебного соглашения о сотрудничестве по праву является эффективным инструментом в борьбе с постоянно развивающейся преступностью. Его важность значительна, особенно в борьбе с организованной преступностью средней тяжести, тяжкой или особо тяжкой.

Ключевые слова: преступление; производство по делу о сотрудничестве; досудебное соглашение; медиация; уголовно-процессуальный кодекс.

¹ Статья была представлена 27.03.2024 и прошла рецензирование 01.11.2024.

Էդգար Պողոսյան

Երևան քաղաքի Շենգավիթ փառչական շրջանի դատախազի տեղակալ

ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԵՂԱԴԻԱՆՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊԻՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ¹

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում նախկին և գործող քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված՝ դատարանի կողմից մեղադրանքը փոխելու ընթացակարգերին և քննարկման առարկա է դարձնում դրանց բացասական և դրական կողմերը՝ ենթարկելով համեմատական վերլուծության:

Հոդվածի շրջանակներում վեր են հանվել անձին ներկայացված մեղադրանքը դատարանի կողմից վատթարացնող հետևանքով փոխելու քրեադատավարական նոր ինստիտուտի վերաբերյալ տարբերվող մոտեցումները, ինստիտուտի հարաբերակցությունը մրցակցության սկզբունքի և դատարանի արդարադատության ֆունկցիայի հետ՝ անդրադարձ կատարելով նաև դրա բացակայության հետևանքներին արդարադատություն իրականացնող մարմնի լիազորությունների շրջանակներում:

Ընդունելով դատարանի կողմից մեղադրանքի իրավական գնահատականը, այդ թվում՝ անձի համար ծանրացնող հետևանքով փոխելու լիազորության կարևորությունն ու ժամանակի ընթացքում առաջացած անհրաժեշտությունը՝ աշխատանքում քննարկվել է այն իրացնելու դատավարական ընթացակարգը, ամրագրման եղանակը և հիմնավորվել դրանում որոշակի շտկում կատարելու անհրաժեշտությունը, որի հիման վրա հեղինակն առաջարկել է փոփոխություն կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 344-րդ հոդվածում:

Հիմնաբառեր - դատական քննության սահմաններ, մեղադրանք, մեղադրանքի փաստական և իրավական կողմեր, մրցակցություն, մեղադրանք փոխել, վերդիկտ:

Ներածություն

Դատական քննության սահմանները դատական վարույթի այն ուրվագիծն են, որոնցով սահմանափակված է վարույթն իրականացնող դատարանը ողջ դա-

¹ Հոդվածը ներկայացվել է 10.02.2024 թ., գրախոսվել է 25.03.2024 թ.:

տաքննության ընթացքում: Դրանք կանխորոշում են գործի հետագա քննությունը՝ այն կապելով մեղադրյալի կարգավիճակում գտնվող անձի և նրան ներկայացված մեղադրանքի հետ:

Դատական քննության սահմանները դատական վարույթի կարևորագույն ընդհանուր պայման են: Դրանք ուրվագծում են դատարանի կողմից քրեական գործի քննության և դրա արդյունքում կայացվելիք դատավճռի սահմանները, որոնք, իրենց հերթին, կանխորոշվում են մեղադրյալին մինչդատական վարույթի ընթացքում ներկայացված մեղադրանքով, դատախազի կողմից հաստատված մեղադրական եզրակացությամբ և դատական քննության ընթացքում դատախազի պաշտպանած մեղադրանքով²:

Դատական քննության սահմանների հետ սերտ առնչություն ունի վարույթն իրականացնող դատարանի կողմից մեղադրանքը փոխելու ընթացակարգը, և սույն հոդվածի քննարկման առարկա է նշված ընթացակարգով մեղադրանքը փոխելու առանձնահատկությունները, ինչպես նաև դրա դրական և բացասական կողմերը:

Աշխատանքի շրջանակներում կատարված վերլուծությամբ հեղինակի կողմից խնդիր է դրվել պարզել չ՛քրեական դատավարության օրենսգրքի 276-րդ հոդվածի շրջանակներում ներառված յուրօրինակ նոր ինստիտուտ հանդիսացող դատարանի կողմից մեղադրանքի իրավական գնահատականն առավել ծանրով փոխելու հարաբերակցությունը մրցակցության սկզբունքի հետ:

Դատական քննության սահմանների ընդհանուր պայմանները

Չ՛քրեական դատավարության օրենսգրքի «այսուհետ նաև՝ Օրենսգիրք» 276-րդ հոդվածով սահմանված է, որ առաջին ատյանի դատարանում վարույթն իրականացվում է միայն մեղադրյալի նկատմամբ և միայն նրան ներկայացված մեղադրանքով:

Չ՛Սահմանադրության 63-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի «այսուհետ նաև՝ Կոնվենցիա» 6-րդ հոդվածներն ամրագրում և երաշխավորում են անձի՝ իր վերաբերյալ գործի արդար դատաքննության իրավունքը: Չ՛Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պաշտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

² St' u Бравилого Е. А., Пределы судебного разбирательства: дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 2004, էջ 154.

Գողերի գործով³ անդրադառնալով Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան» մատնանշել է, որ «6-րդ հոդվածով ամրագրված են առանձին իրավունքներ, որոնք, սակայն, քիտում են նույն հիմնարար գաղափարից և համակցության մեջ վերցրած՝ կազմում են մեկ միասնական իրավունք, որն առանձին եզրույթով հասակ սահմանված չէ»:

Մեջբերված սահմանադրական և կոնվենցիոն նորմերի ու Եվրոպական դատարանի դիրքորոշման լույսի ներքո կարելի է արձանագրել, որ արդար դատաքննության իրավունքի գաղափարի անկյունաքարային հիմքում ընկած է անձը, որի վերաբերյալ քննություն է իրականացվում, և մեղադրանքը, որը նրան ներկայացված է:

Առաջին ատյանի դատարանում գործերի քննության սահմանները կանխորոշող այս երկու առանցքային միավորները սերտորեն կապված և արտացոլված են արդար դատաքննության իրավունքը երաշխավորող ինչպես սահմանադրական, այնպես էլ կոնվենցիոն նորմերում: Նշված սահմանների անցումը, այսինքն՝ գործի քննության ընթացքում տվյալ գործով մեղադրյալի և վերջինիս ներկայացված մեղադրանքի փաստակազմի շրջանակներից դուրս գալը, մեծ հավանականությամբ, կհանգեցնի արդար դատաքննության իրավունքի խախտման:

Դատական քննության սահմանները կանխորոշում են քրեական գործով դատական հետազոտման առարկան, որի սահմաններից դուրս դատարանն այդ գործով արդարադատություն չի իրականացնում: Դրանք քրեական գործով դատական հետազոտման ծավալն են, որոնց շրջանակներում է միայն դատարանը գործի քննության արդյունքում որոշում մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը⁴:

Այսպիսով, դատական քննության սահմաններն այն իրավական շրջանակներն են, որոնցով իրականացվում է տվյալ գործով արդարադատությունը: Գործը քննող դատարանը սահմանափակված է մեղադրանքի կողմից դատարան ներկայացված փաստակազմով, և դրանից դուրս գալը ողջամտորեն կարող է հանգեցնել արդար դատաքննության իրավունքի առնվազն ոտնահարման, ինչպես նաև Օրենսգրքով նախատեսված մրցակցության սկզբունքի խախտման: Ըստ այդմ, կարելի է փաստել, որ դատական քննության սահմանները պաշտպանության կողմին հնարավորություն են տալիս ունենալ մեղադրանքի փաստական և իրավական այն հատկանիշները, որոնց շրջանակներում կողմերը վիճելու են մրցակցային դատական վարույթի փուլում, իսկ դատարանն իրականացնելու է արդարադատություն, ճիշտ ընտրել պաշտպանական մարտավարություն՝ հնարավորություն ստանալով արդյունավետ իրացնել իր պաշտպանության իրավուն-

³ St' u Golder c. Royaume-Uni, 21 février 1975, էջ 29:

⁴ St' u Печников Н. П., Уголовный процесс (Особенная часть): конспект лекций. Тамбов: Изд-во Тамб. гос.техн. ун-та, 2005, էջ 113:

քը, կանխորոշելով առաջիկա դատական քննության ընթացքում հետազոտման օբյեկտը:

Գրականության մեջ առանձնացվում է դատական քննության սահմանների պատմական երեք մոդել.

1. ստատիկ (կոշտ, անփոփոխ) սահմանների մոդել (չի նախատեսում արդեն իսկ սկսված վարույթում մեղադրանքի փոփոխման հնարավորություն),
2. ազատ սահմանների մոդել (բնորոշվում է մեղադրանքի սահմանների բացակայությամբ. այն կարող է կամայական ընդարձակվել, փոփոխվել դատական քննության ընթացքում),
3. հարաբերական-փոփոխելի (հարաբերական-ազատ կամ հարաբերական կոշտ) սահմանների մոդել (մեղադրանքը կարող է փոփոխվել օրենքով խիստ սահմանափակված դեպքերում՝ որոշակի պայմանների և ամբաստանյալի իրավունքների պաշտպանության երաշխիքների պահպանմամբ)⁵:

Կարծում ենք, որ ՀՀ-ում գործող կարգավորումներն ամրագրում են դատական քննության սահմանների հարաբերական փոփոխելի մոդել, քանի որ Օրենսգրքի 276-րդ հոդվածը հնարավորություն է տալիս խիստ որոշակի կանոնների պահպանմամբ փոփոխել ներկայացված մեղադրանքը:

Դատական քննության սահմաններն առաջին աստիճանի դատարանում իրենց ամրագրումը ստանում են մեղադրական եզրակացությամբ, որը թե՛ մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված տվյալների ամփոփման և թե՛ գործի դատական քննության սահմանների որոշման համար ունի անփոխարինելի նշանակություն: Նման պայմաններում մինչդատական վարույթն իրականացնող մարմինը գործի քննության տվյալ փուլն ամփոփելիս պետք է կազմի նախաքննություն, ըստ էության, «ներկայացնող» դատավարական ամփոփ փաստաթուղթ:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ կոնկրետ գործի շրջանակներում քրեական դատավարությունը ճանաչողական, տրամաբանորեն միմյանց հաջորդող դատավարական գործողությունների ամբողջություն է, և Օրենսդիրը վարույթն իրականացնող մարմինն օժտել է դատավարական այնպիսի առանձնահատուկ մեխանիզմներով, որ նախորդ փուլում թույլ տրված սխալների արդյունքում չտուժեն քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի շահերը:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ մեղադրանքը փոփոխելու գործիքակազմերը նախատեսվել են քրեական գործի շարունակական զարգացման վիճակում լինելու գաղափարի համատեքստում: Այդ տրամաբանությամբ, քրեադատավարական ճանապարհով ձեռք բերված փաստական նոր տվյալներ-

⁵ Стіу Хохряков М. А., Пределы судебного разбирательства уголовных дел в суде первой инстанции: законодательство, теория, практика. Автореф. дисс. ... канд. юрид. наук. М., 2013, էջ 16:

րով փոփոխվում կամ լրացվում են գործի քննության առարկա մեղադրանքի փաստակազմը, փոխկապակցված նաև մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը:

Ամփոփելով դատական քննության սահմանների վերաբերյալ ներկայացված ընդհանուր դիրքորոշումները՝ կարելի է առանձնացնել այդ ինստիտուտի ներքոնշյալ հատկանիշները.

1. դատական քննության սահմանները վերաբերում են դատարանում քննության ենթակա բոլոր քրեական գործերին, կանխորոշում են դատարանում գործի քննության և կայացվելիք դատական ակտի շրջանակները,
2. դատական քննության սահմաններն այն ուրվագիծն են, որոնց շրջանակներում դատարանն իրականացնում է արդարադատություն, և տվյալ գործով դրանցից դուրս արդարադատություն չի կարող իրականացվել,
3. դատական քննության սահմանները հնարավորություն են տալիս անձին ճիշտ ընտրել պաշտպանական մարտավարություն և արդյունավետ իրացնել իր պաշտպանության իրավունքը,
4. դատական քննության սահմանները կանխորոշվում են նախաքննության արդյունքներն ամփոփող, քննիչի կողմից կազմված և դատախազի կողմից հաստատված մեղադրական եզրակացությամբ,
5. դատարանում գործի ըստ էության քննության ընթացքում դատական քննության սահմանների փոփոխություն հնարավոր է դատարանի կամ դատախազի նախաձեռնությամբ՝ բացառապես քրեադատավարական օրենքով հստակ սահմանված կանոնների պահպանմամբ:

Դատարանի կողմից մեղադրանք փոխելու լիազորությունը և դրա հարաբերակցությունը մրցակցության սկզբունքի հետ

«Հ» քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով ամրագրված և երաշխավորված է կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքը, որի շրջանակներում Օրենսդիրը վարույթն իրականացնող դատարանին սահմանափակել է բացառապես մեղադրանքի հիմքում դրված փաստական կողմով՝ ստեղծելով մի իրադրություն, որ դատարանը, առանց մեղադրանքի կողմի դիրքորոշումը հաշվի առնելու պարտադիր պահանջի, պահպանելով դատավարական կարգը, կարող է մեղադրանքին տրված իրավական գնահատականը փոփոխության ենթարկել, այդ թվում՝ անձի իրավավիճակը ծանրացնող հետևանքով: Քննարկվող սկզբունքի իմաստով՝ դատավարությունն իրականացվում է մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև առաջացած վեճի շրջանակներում մրցակցության սկզբունքի հիման վրա, որի էությունն այն է, որ մեղադրանքի կողմի գործառույթներն իրականացնող պետական մարմինները «քննիչ, դատախազ», գտնելով, որ անձը կատարել է քրեական օրենքի կոնկրետ հոդվածով նախատեսված արարք և իրավական վեճի մեջ մտնելով պաշտպանական կողմի

հետ, քրեական վարույթի նյութերն ուղարկում են դատարան՝ արդարադատության իրականացնող մարմնից ակնկալելով վեճի լուծում:

Օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի ուժով մրցակցության սկզբունքից որպես բացառություն գնահատել է այնպիսի ինստիտուտներ, որոնք մեղադրյալի իրավավիճակի համար ունեն բարելավող նշանակություն «օրինակ՝ համաձայնեցման կամ արագացված վարույթներում մեղմ պատժի ակնկալիք», որոնց մեջ ներառված չէ դատարանի կողմից արարքին առավել ծանր իրավական գնահատական տալու դեպքը, ինչը, մեր կարծիքով, ևս քրեադատավարական մրցակցության սկզբունքին անհամապատասխան է կամ առնվազն բացառություն է դրանից, որի դեպքում դատարանը, ծանրացնելով մեղադրյալի իրավավիճակը, նրա համար ստեղծում է վատթարացնող իրադրություն:

Այս մոտեցման կողմնակիցների համոզմամբ՝ մրցակցության սկզբունքի տիրույթում բացարձակ չէ մեղադրող դատախազի կարծիքը «արարքին տրված իրավական գնահատական» մեղադրանքի իրավական կողմի վերաբերյալ, և այն անձի մեղավորության հարց քննարկող դատարանի համար չունի սահմանափակող նշանակություն:

Դատական վարույթի սահմանների, մրցակցության սկզբունքի և ըստ այդմ՝ մեղադրանքի փոփոխության վերաբերյալ արտասահմանյան փորձի ուսումնասիրությամբ կարելի է արձանագրել, որ անգլո-սաքսոնական քրեադատավարական օրենսդրությունը թույլ չի տալիս մեղադրանքի ամբողջական կամ էական փոփոխություն, ինչպես նաև մեղադրանքի փոփոխություն՝ մեղադրյալի վիճակը ծանրացնելու ուղղությամբ, միևնույն ժամանակ, ի շահ տուժողի և արդարադատության նախատեսված են կանոններ և միջոցներ, որոնք որոշակիորեն կոմպենսացնում են մեղադրանքի փոփոխության անհնարինությունը:

Մայրցամաքային քրեադատավարական օրենսդրության շրջանակներում այս նպատակների համար առկա են ընթացակարգեր, որոնք չեն բացառում առաջին աստիճանի դատարանում մեղադրանքն ավելի ծանրով փոփոխելու հնարավորությունը:

Անգլիական քրեական դատավարությունում մեղադրանքի կողմը պետք է ապացուցի, որ մեղադրյալը, առանց որևէ «հիմնավոր կասկածների», մեղավոր է (beyond all reasonable doubt/բոլոր ողջամիտ կասկածներից դուրս): Ինչպես նշում է Լ. Վ. Գոլովկոն⁶, խոսքը միայն հավանականության առավելագույն աստիճանի մասին է: Անգլիայում դատական գործընթացների համար, օբյեկտիվ ճշմարտության հաստատումից զատ, առավել կարևոր է հանցագործության կատարման հետ կապված առկա վեճի լուծումը, ինչպես նաև հավասար դատավարական իրավունքներ ունեցող կողմերի մասնակցությամբ անաչառ դատավարության ապահովումը:

⁶ St'u Гученко К. Ф., Головки В., Филимонов Б. А., Уголовный процесс западных государств, М., 2001, էջ 97:

Օրենսդրական մակարդակով մեղադրանքի ամբողջական անփոփոխության սկզբունքի սահմանափակումն առաջին անգամ գործի դրվեց Անգլիայում, ինչը մեծապես պարզեցրեց մեղադրական եզրակացության կազմումը և հիմք դրեց դրա ուղղման գործընթացին:

Ֆրանսիայի քրեադատավարական կարգավորումները⁷ դատարանում քննվող գործերով, եթե ի հայտ են գալիս մեկ կամ մի քանի ծանրացուցիչ հանգամանքներ, հնարավորություն են տալիս դատարանին քննարկման առարկա դարձնել դրանք:

Համաձայն Գերմանիայի քրեական դատավարության⁸ օրենսգրքի՝ ամբաստանյալը չի կարող դատապարտվել քրեական օրենքի այն հոդվածի հիման վրա, որը չի արտացոլվել դատարան ուղարկված սկզբնական մեղադրանքում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրան հնարավորություն է տրվել պաշտպանել իրեն:

Ընդհանուր առմամբ, կարելի է պնդել, որ արտասահմանյան երկրներում դատական քննության սահմանների կառուցակարգերը համահունչ են ինստիտուտի պայմանականորեն փոփոխվող սահմանների մոդելին, քանի որ հնարավորություն են տալիս փոփոխել վարույթի առարկան՝ ելնելով հետևյալ պայմաններից.

1. մեղադրյալը պետք է իմանա, թե ինչում են իրեն մեղադրում և բավարար հնարավորություն և ժամանակ ունենա նախապատրաստել իր պաշտպանությունը նոր մեղադրանքից,
2. դատական վարույթի ընթացքում կարող է փոխվել միայն մեղադրանքի իրավական որակումը, իսկ փաստական կողմը պետք է մնա անփոփոխ:

Կատարված հնարավորինս սեղմ ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ գործող քրեադատավարական օրենսգիրքը որդեգրել է պաշտպանության իրավունքի ապահովմամբ և երաշխավորմամբ դատարանի կողմից մեղադրանքը փոփոխելու մի յուրօրինակ մոդել, որի գործարկումը կապել է առավելապես գործը քննող դատարանի իրավական դիրքորոշման հետ, ինչը համահունչ է նաև արտասահմանյան մի շարք երկրներում գործող քրեադատավարական կառուցակարգերին:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխություն թույլատրվում է, եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը»:*

Դատարանի կողմից մեղադրանքը փոխելու ընթացակարգի առումով Օրենս-

⁷ Տե՛ս Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգիրք, URL: http://www.legifrance.gouv.fr/content/download/! 958/13719/version/3/file/Code_34.pdf

⁸ Տե՛ս, Գերմանիայի քրեական դատավարության օրենսգիրք, URL: http://www.gesetze-iminternet.de/englisch_stpo/englisch_stpo.html

գիրքը որդեգրել է նախկին ընթացակարգից արմատական տարբերություններ ունեցող նոր մոդել: Մեղադրանքը փոփոխելու գործող օրենսգրքի ձևակերպումից կարելի է պնդել, որ դատական քննության սահմանները սահմանափակված են զուտ մեղադրյալին մեղսագրվող արարքի փաստական հանգամանքներով, և կողմերի հետ քննարկման դեպքում, փաստորեն, դատարանը ևս իրավասու է փոխել արարքին տրված իրավական գնահատականը, այդ թվում՝ մեղադրյալի իրավավիճակը վատթարացնող հետևանքով:

Տեսական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ մեղադրանքը համարվում է խստացման առումով փոփոխված, եթե ի համեմատ սկզբնական մեղադրանքի, այն նախատեսում է ավելի ծանր պատժի նշանակման հնարավորություն կամ հանգեցնում է ավելի ծանր քրեաիրավական կամ քրեադատավարական հետևանքների⁹: Պրոֆեսոր Ֆ. Ֆակտուլլինի կարծիքով՝ մեղադրանքը պետք է համարվի խստացման առումով փոփոխված, երբ լրացվում է նոր փաստական և իրավական հանգամանքներով, կամ երբ արարքի իրավաբանական որակման արդյունքում անձի վիճակը վատթարանում է այլ՝ պատժի խստության հետ չկապված պատճառներով¹⁰: Մեղադրանքը փոփոխվում է խստացման առումով, եթե մեղադրանքի փոփոխման արդյունքում կիրառվում է քրեական օրենսգրքի այլ հոդված կամ հոդվածի մաս կամ կետ, որի սանկցիան նախատեսում է ավելի խիստ պատիժ¹¹ կամ ավելի բարձր պատժաչափ, սկզբնական մեղադրանքի համեմատ նախատեսում է լրացուցիչ պատիժ, կամ որպես այլընտրանք չի նախատեսում պատժի ավելի մեղմ տեսակներ, կամ երբ ներառվում է արարքը որակյալ դարձնող ծանրացնող հանգամանք, կամ մեծացվում է հանցագործությանը պատճառված վնասը¹²:

Գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակման փոփոխությունը դրսևորվում է՝

1. քրեական օրենսգրքի մեկ հոդվածը մյուսով փոխարինելով,
2. քրեական օրենսգրքի միևնույն հոդվածի կետերը կամ մասերը փոխելով,
3. քրեական օրենսգրքի մեկ կամ մի քանի հոդվածները հանելով, եթե նախկինում մեղադրյալին մեղսագրվող արարքը որակված է եղել մի քանի հոդվածներով,
4. արարքը մի քանի հոդվածներով որակելով, եթե նախկինում որակված է եղել մեկով¹³:

⁹ Տե՛ս Михайлов А. А., Изменение прокурором обвинения и отказ прокурора от обвинения в суде первой инстанции. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Томск, էջ 99:

¹⁰ Տե՛ս Фактуллин Ф. Н., Изменение обвинения. М., 1971, էջ 47:

¹¹ Տե՛ս Блум М. И., О том, какое наказание считать более строгим, см.: Обратная сила закона, М., 1969, էջ 112, Бравилова Е. А., Пределы судебного разбирательства: дис... к. ю. н., Екатеринбург, 2004, էջ 141-148:

¹² Տե՛ս Постановление пленума Верховного суда Российской Федерации, 29.04.1996, N 1, 9 пункт, էջ 5:

¹³ Տե՛ս Добровольская Т. Н., Изменение обвинения в судебных стадиях советского процесса. М., Юрид. Лит., 1997, էջ 29.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 276-րդ հոդվածով սահմանված է դատական քննության ընթացքում մեղադրյալին ներկայացված մեղադրանքը փոխելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը, ինչպես նաև հիմքերը, որի 4-րդ մասի համաձայն՝ *«Դատարանն իրավասու է հաստատված կամ հերքված համարելու միայն մեղադրյալին ներկայացված մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքները: Վերդիկտ կայացնելիս դատարանը, դուրս չգալով մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների շրջանակից, կարող է փոխել մեղադրյալին վերագրվող արարքին տրված իրավական գնահատականը, եթե տարբերվող իրավական գնահատականի հարցը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում քննարկել է կողմերի հետ»:*

Կարելի է արձանագրել, որ դատարանի կողմից մեղադրանքին տրված գնահատականը դատավարական իմաստով «մեղադրանքի փոփոխություն» կարող է դիտարկվել ոչ թե հսկող դատախազի կողմից հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման փաստական կողմի որոշակի մասի հերքումը, այլև դրան տրված իրավական գնահատականի հետ անհամաձայնությունը, որը չի հանգեցնում անձի արդարացման:

Կարելի է փաստել, որ ի տարբերություն գործող քրեադատավարական օրենքի՝ մինչև 01.07.2022 թ.-ը դատարանը կարող էր մեղադրանքը փոփոխել, եթե այդ փոփոխությամբ չէր խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը, և չէր վատթարանում վերջինիս իրավավիճակը: Այսինքն՝ նախկին քրեական դատավարության օրենսգրքի տրամաբանությամբ՝ անկախ իր ներքին համոզմունքից դատարանը, անձին առաջադրված մեղադրանքը փոխելով, չէր կարող վերջինիս համար ստեղծել վատթարացնող հետևանք՝ այդպիսով լինելով ամբաստանյալին առավել ծանր իրավավիճակից զերծ պահող և երաշխավորող վարույթի մասնակից:

Մեջբերված հոդվածների պարզ համեմատական ընթերցումն անգամ հնարավորություն է տալիս պնդելու, որ ի տարբերություն 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը մեղադրանքին տրված իրավական գնահատականը փոփոխելու առումով վարույթն իրականացնող դատարանին տվել է առավել լայն լիազորություններ:

Առաջին հայացքից կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, որ գործող կարգավորումները մեղադրանքի կողմի առջև խնդիր են դրել պարզել և հաստատել կատարված հանցագործության ողջ փաստական հանգամանքները, իսկ դրան իրավական գնահատական տալու իրավասությամբ օժտել են արդարադատություն իրականացնող մարմնին, մինչդեռ այս ինստիտուտի գործարկումը վարույթի ընթացքում արդարադատության իրականացումն առավել դյուրին դարձնելու իրավաչափ նպատակ է հետապնդում:

Մյուս տեսանկյունից՝ գործող կարգավորումների կողմնակիցների համոզմամբ¹⁴ մեղադրանքի սուբյեկտիվ բաղադրիչը՝ արարքի իրավական գնահատականը (կամ արարքի որակմանը) իրավաբանի (տվյալ դեպքում՝ քննիչի և դատախազի) մասնագիտական որակների վրա հիմնված անհատական դատողություն կամ եզրահանգում է, որն արդարադատություն իրականացնող պրոֆեսիոնալ դատավորի համար չի կարող կաշկանդող լինել: Այս դեպքում գործում է *Jura novit curia* (դատարանը գիտե օրենքը) հայտնի սկզբունքը, ըստ որի՝ դատարանը և դատավորն ազատ են ընտրելու, թե ինչ օրենք է անհրաժեշտ կիրառել քննվող վեճը լուծելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե համապատասխան օրենքի վրա կողմերը հղում արել են, թե՛ ոչ:

Այս մոտեցման ընդդիմախոսների¹⁵ փաստարկների հիմքը մեղադրանք հասկացության կատարյալ միասնականության գաղափարն է, որը ենթադրում է, որ թե՛ իրավական և թե՛ փաստական կողմի փոփոխությունը ենթադրում է մեղադրանքի փոփոխություն, իսկ մեղադրանքը խստացման առումով փոփոխելը բնորոշ է մեղադրանքի կողմին և հետևաբար հարիր չէ դատարանի կարգավիճակին: Այս մոտեցման հիմնական էությունը, կարծում ենք, որ առավելապես հիմնված է մրցակցության սկզբունքի տրամաբանությունը խիստ պահպանելու առաջնահերթության վրա:

Պետք չէ հերքել, որ քննարկվող լիազորությունը արդարադատություն իրականացնող և մեղադրանքի ու պաշտպանության կողմերի միջև առաջացած իրավական կամ փաստական վեճին՝ բացառապես առաջացած վեճի շրջանակներում գնահատական տվող մարմնին կարող է բնորոշ չլինել այն պարզ պատճառով, որ մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձը, որի վերաբերյալ քրեական վարույթն ուղարկվել է դատարան, ողջամիտ ակնկալիք կարող է ունենալ պետությունից արդարադատություն իրականացնող մարմնի կողմից առավել խիստ պատասխանատվություն նախատեսող հողվածով չդատապարտվելու կամ առնվազն իր իրավավիճակը չվատթարացնելու առումով:

Կարելի է պնդել, որ դատարանը, հանդես գալով որպես մեղադրանքի պաշտպանության կողմերից անկախ գործի լուծման ֆունկցիա իրականացնող մարմին, գնահատում է վերջիններիս կողմից իրավական վեճի առարկա խնդիրը ներկայացվող փաստերի դաշտում:

Վերլուծություն ենթարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 276-րդ հոդվածի 4-րդ մասը՝ կարելի է արձանագրել դատարանի կողմից մեղադրանքը փոփոխելու ինստիտուտի հետևյալ հատկանիշները.

¹⁴ Տե՛ս Հ. Ղուկասյան, Գ. Մելքոնյան, Ա. Նիկողոսյան, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարական մոտեցումների և հիմնական սկզբունքների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022 թ., էջ 70-71.

¹⁵ Տե՛ս Головкин Л. В., Институты отказа прокурора от обвинения и изменения обвинения в суде: остсоветские перспективы в условиях теоретических заблуждений. // Государство и право, 2/ 2012, էջ 50-67:

1. դատարանը կարող է ներկայացված մեղադրանքը փոփոխել միայն իրավական գնահատականի մասով,
2. փաստական մասով մեղադրանքի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելիս դատարանը կարող է հերքված կամ հաստատված համարել մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքները,
3. դատարանը չի կարող հաստատված համարել քրեական գործի քննության ընթացքում հաստատված, սակայն մեղադրանքի հիմքում չընդգրկված փաստական հանգամանքները,
4. իրավական գնահատականի մասով մեղադրանքը փոխելու հարցը դատարանը քննարկում է առանձին սենյակում՝ վերդիկտ կայացնելիս,
5. դատարանն արարքին տրված իրավական գնահատականին անդրադառնում է միայն փաստական կողմը հաստատված համարելուց հետո և իրավական գնահատական տալիս չի կարող դուրս գալ դրա սահմաններից,
6. մինչ վերդիկտ կայացնելը դատարանը պարտավոր է պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում քննարկման առարկա դարձնել արարքին տրված իրավական գնահատականը կողմերի հետ:

Ի տարբերություն նախկին քրեական դատավարության օրենսգրքի՝ գործող քրեադատավարական կարգավորումներով սահմանվել է երաշխիք առ այն, որ դատարանը վերդիկտ կայացնելիս կարող է մեղադրանքի իրավական գնահատականը փոփոխել միայն այն դեպքում, եթե տարբերվող իրավական գնահատականի հարցը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում քննարկել է կողմերի հետ: Նշվածի պրեցեդուալ կիրառումը, կարծում ենք, տեղ է գտել Օրենսգրքի 338-րդ հոդվածում, որի ուժով դատարանը կարող է օրենքի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ խորհրդակցություն անցկացնել հանրային մեղադրողի, պաշտպանի, իսկ առկայության դեպքում՝ նաև տուժողի լիազոր ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ: Այսինքն՝ արարքի իրավական գնահատականի վերաբերյալ մեղադրանքի կողմի դիրքորոշման հետ անհամաձայնության դեպքում դատարանն այն պարտավոր է քննարկել դատավարության պրոֆեսիոնալ մասնակիցների հետ: Հատկանշական է, որ նշված քննարկման ընթացքում Օրենսդիրը, որպես երաշխիք, պարտավորեցրել է դատարանին զերծ մնալ մեղադրանքի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելուց:

Կարծում ենք, որ մեղադրանքը հատկապես խստացման առումով փոփոխելու դատարանի լիազորության իրականացման համար նման երաշխիքի նախատեսումը կարող է պաշտպանության իրավունքը երաշխավորող գործուն մեխանիզմ հանդիսանալ, քանի որ անհրաժեշտ և բավարար հնարավորություն է նախատեսում անձի համար իր պաշտպանությունը կազմակերպելու համար:

Որոշակի առումով խնդրահարույց է օրենքի կիրառման և մեկնաբանման հարցի քննարկման ընթացքում դատարանի կողմից «մեղադրանքի վերաբերյալ

դիրքորոշում արտահայտելուց զերծ մնալ» ձևակերպումն այն հարցի առումով, թե արդյո՞ք գործնականում հնարավոր է քննարկել մեղադրանքի իրավական կողմի վերաբերյալ հարց և զերծ մնալ դրա վերաբերյալ որևէ դիրքորոշում հայտնելուց: Այս առումով գտնում ենք, որ պետք չէ անտեսել այն փաստը, որ օրենքի կիրառման և մեկնաբանման հարցը կողմերը քննարկում են ապացույցների ողջ ծավալի հետազոտումից հետո միայն, ուստի կարելի է եզրակացնել, որ նշվածը մեղադրյալի անմեղության կանխավարկածի ապահովման երաշխավորմանն է ուղղված, և որ դատարանը կարող է մեղադրանքի վերաբերյալ դիրքորոշում արտահայտել այնքանով, որքանով չի խախտում և ոտնահարում անմեղության կանխավարկածի սկզբունքը: Ամեն դեպքում, կարծում ենք, որ առավել նպատակահարմար կլիներ պարտականություն սահմանել դատարանի համար զերծ մնալ ոչ թե մեղադրանքի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելուց՝ ընդհանրապես, այլ մեղադրանքի փաստական կողմի վերաբերյալ՝ մասնավորապես:

Պետք է համաձայնել այն կարծիքի հետ, որ գործող կարգավորումներով տրված լուծումը ժամանակի ընթացքում առաջացած գործնական խնդիրներով պայմանավորված անհրաժեշտություն է¹⁶, որը առաջ է գալիս այնպիսի պայմաններում, երբ արդարադատություն իրականացնող մարմնի կարծիքով կատարվել է իրավական գնահատականի առումով այլ հանցանք (օրինակ՝ ոչ հազվադեպ հանդիպող արարքը գողություն-կողոպուտ որակելու խնդիրներ), սակայն մեղադրողը չի փոխում առաջադրված մեղադրանքի իրավական գնահատականը: Այս դեպքում դատարանը կանգնում է երկու անընդունելի լուծումների երկընտրանքի առաջ՝ արդարացնել ամբաստանյալին՝ փաստերի կոնկրետ նկարագրությամբ և իրավական կոնկրետ գնահատականով առաջադրված մեղադրանքում նրա մեղքը հաստատված չլինելու պատճառով, կամ կայացնել մեղադրական դատավճիռ՝ հակառակ իր դիրքորոշմանը:

Գտնում ենք, որ նշված խնդիրներն էլ ունեն իրենցից բխող անընդունելի հետևանքներ: Առաջինի դեպքում հնարավոր չէ զերծ մնալ այնպիսի դեպքերից, երբ գործը քննող դատարանը կարող է «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշով համոզված լինել, որ մեղադրյալը կատարել է քրեական օրենքով նախատեսված արարք, որը վերջինիս ներկայացված մեղադրանքից ավելի խիստ պատասխանատվություն ենթադրող հոդվածով է նախատեսված, սակայն մեղադրողի կողմից մեղադրանքը չի փոփոխվում: Այդ դեպքում դատարանը կարող է արդարացնել նրան, որը բացարձակ մրցակցության տեսանկյունից արդարացված է, սակայն հոյ է «հանցագործին» քրեական պատժի չենթարկելու արդյունքում վերջինի նպատակները չիրականանալու և ըստ այդմ՝ հանցավորու-

¹⁶ Տե՛ս Գևորգ Բաղդասարյան, Դատական վարույթների ընդհանուր պայմանների բնութագիրն ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Եր., ՀՀ իրավաբանների միություն, 2014, էջ 285:

թյան անճի, սոցիալական անարդարության հանգեցնելու և հանցանք կատարած անձի չուղղվելու ռիսկերով:

Մյուս կողմից՝ կայացնելով մեղադրական դատական ակտ իր ներքին համոզմունքին հակառակ՝ դատարանը կարող է վերաձվել արդարադատություն չիրականացնող և սեփական դիրքորոշումը հիմնավորելու հնարավորությունից զրկված մարմնի, ինչը խաթարում է տվյալ մարմնի գործունեության անկախության սահմանադրական առաքելությունը:

Մեր կարծիքով՝ Օրենսդրի ընտրած մոտեցումը նշված երկու խնդիրները շրջանցող լավագույն տարբերակն է, որն էլ ավելի կատարելագործելու համար պահանջվում են լրացուցիչ երաշխիքներ:

3. Դատարանի կողմից մեղադրանք փոխելու դատավարական ամրագրման եղանակը և դրա արդյունավետությունը գործնականում մեղադրանքի պաշտպանության գործառույթի հետ հարաբերակցությամբ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով՝ դատարանի քննարկվող լիազորությունն իրացնելու համար սահմանված է դատարանի կողմից նշված հարցի քննարկման պարտադիր պահանջ, որը կարող է իրականացվել հիմնական դատախուզների՝ օրենքի կիրառման և մեկնաբանման հարցի քննարկման փուլում, որից հետո դատարանը հեռանում է առանձին սենյակ՝ վերդիկտ կայացնելու, որտեղ, ի թիվս այլնի, որոշում է, թե որ օրենքն է ենթակա կիրառման, որից հետո կազմվում է համապատասխան գրավոր վերդիկտ, որը հրապարակվում է դատական նիստում:

Մեր կարծիքով՝ մեղադրանքի կողմից դատարան ներկայացված արարքին տրված իրավական գնահատականի փոփոխության դեպքում առկա է գրավոր վերդիկտը հիմնավորված կերպով կազմելու և այն դատավարության մասնակիցներին տրամադրելու անհրաժեշտություն:

Բանն այն է, որ լրացուցիչ դատախուզների ընթացքում, որտեղ դատարանը լսում է կողմերի կարծիքը, այդ թվում՝ նշանակվելիք պատժի վերաբերյալ, դատական նիստի օրվա և ժամի մասին պատշաճ ծանուցված կողմի բացակայությունը խոչընդոտ չէ դատական նիստը շարունակելու համար, իսկ այն դեպքում, երբ դատարանը առավել ևս իրավական կողմից խստացրել է մեղադրյալին մեղսագրվող արարքը, մեղադրողի մասնակցությունը տվյալ դատական նիստին դառնում է խիստ առարկայագուրկ այն պարզ պատճառով, որ մեղադրողը, ծանոթ չլինելով դատարանի՝ մեղադրանքի իրավական գնահատականը «ծանրացնելու» հիմքում դրված փաստարկներին և պատճառաբանություններին, մի կողմից՝ զրկված է իր կողմից դատարան ներկայացված մեղադրանքի շրջանակներում պատժի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելուց, քանի որ բացակայում է այդպիսի իրավական գնահատականով մեղադրանք, մյուս կողմից՝ հնարավորու-

թյուն չունի ծանոթանալու դատարանի փաստարկների հետ և չի կարող ո՛չ իր համաձայնությունը և ո՛չ էլ անհամաձայնությունը հայտնել դրան:

Ստացվում է դատավարական մի իրադրություն, որ մեղադրողը մեղադրական վերդիկտ կայացնելու դեպքում մի կողմից՝ գրկված է իր կողմից դատարան ներկայացված մեղադրանքի շրջանակներում պատիժ «պահանջելու» հնարավորությունից, մյուս կողմից՝ տեղյակ չէ մեղադրանքն իրավական մասով փոփոխելու վերաբերյալ դատարանի փաստարկներին, ինչը տվյալ դեպքում հանգեցնում է մեղադրողի համար «դատավարական անորոշության»:

Պետք է արձանագրել, որ դատավարական օրենսգիրքը պարտադրում է վերդիկտ կայացնելուց հետո դատական նիստը լրացուցիչ դատալսումների համար հետաձգել 2 շաբաթ ժամկետով, իսկ վերդիկտ կայացնելու փուլում մեղադրողի համար «անորոշ փաստարկները» ներկայացնել դատավճռի շրջանակներում:

Մեր կարծիքով, առավել նպատակահարմար է մեղադրական վերդիկտ կայացնելու և արարքին տրված իրավական գնահատականը փոխելու դեպքում սահմանել պարտադիր պահանջ դրա շրջանակներում ներկայացնելու համապատասխան հիմնավորումներ և պատճառաբանություններ և այն տրամադրել դատավարության կողմերին, որը հնարավորություն կտա թե՛ մեղադրանքի և թե՛ պաշտպանության կողմին իրենց դիրքորոշումը ձևավորել փոփոխված մեղադրանքի իրավական կողմի մասին դատարանի փաստարկների վերաբերյալ և ըստ այդմ՝ հանդես գալ լրացուցիչ դատալսումների փուլում:

Այս մոտեցումը, կարծում ենք, առավել ընդունելի է դատավարության բոլոր մասնակիցների համար՝ հաշվի առնելով ներքոնշյալ հանգամանքները.

1. եղադրանքը փոփոխելու վերաբերյալ դատարանի դիրքորոշումը և դրա հիմնավորումները ներկայացվում են վերդիկտի շրջանակներում՝ դատավարության առավել վաղ փուլում, որից ըստ էության, դատարանը չի տուժում,
2. դատարանն ունի բավարար ժամանակ և հնարավորություն երկշաբաթյա ժամկետում պատճառաբանել իր դիրքորոշումը և այն ներկայացնել դատավարության մասնակիցներին,
3. պաշտպանական կողմը լրացուցիչ դատալսումների փուլում հնարավորություն է ունենում տեսնել դատարանի դիրքորոշումը մեղադրանքի փոփոխության, այդ թվում՝ փոփոխված իրավական գնահատականի վերաբերյալ,
4. մեղադրանքի կողմը, տեսնելով դատարանի պատճառաբանությունները փոփոխված և խստացված մեղադրանքի վերաբերյալ, հնարավորություն է ունենում գնահատել դրա հիմնավորվածությունը և ձևավորել դրա վերաբերյալ դիրքորոշում, այդ թվում՝ համաձայնել դրա հետ, ըստ այդմ՝ ներկայացնելով համապատասխան դիրքորոշում պատժի վերաբերյալ:

Եզրակացություն

Նշված պատճառաբանությամբ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 344-րդ հոդվածում սահմանել իրավակարգավորում հետևյալ ձևակերպմամբ.

«Ներկայացված մեղադրանքի իրավական զնահատականը փոփոխելու դեպքում դատարանը կազմում է պատճառաբանված գրավոր վերդիկտ, որը մինչև լրացուցիչ դատախոսմանը սկսելը տրամադրում է դատավարության կողմերին»:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Հ. Ղուկասյան, Գ. Մելքոնյան, Ա. Նիկողոսյան, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարական մոտեցումների և հիմնական սկզբունքների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022 թ.
H. Ghukasyan, D. Melkonyan, A. Nikoghosyan, A practical guide to the interpretation of conceptual solutions, innovative approaches and basic principles of the new RA Criminal Procedure Code, 2022.
2. Գևորգ Բաղդասարյան, Դատական վարույթների ընդհանուր պայմանների բնութագիրն ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Եր., ՀՀ իրավաբանների միություն, 2014, էջ 285
Gevorg Baghdasaryan, Characteristics of general conditions of court proceedings according to the draft of the new RA Criminal Procedure Code. A collection of scientific articles dedicated to the issues of the RA Criminal Procedure Code project. S.: RA Union of Lawyers, 2014. p. 285.
3. Бравилого Е.А. Пределы судебного разбирательства: дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 2004.
Bravily E.A. The limits of litigation: diss. cand. legal Sciences. Yekaterinburg, 2004.
4. Golder c. Royaume-Uni, 21 février 1975.
5. Печников Н.П.. Уголовный процесс (Особенная часть): конспект лекций. Тамбов: Изд-во Тамб. гос.техн. ун-та, 2005.
Pechnikov N.P. Criminal process (Special part): lecture notes. Tambov: Tambov Publishing House. state technical un-ta, 2005.
6. Хохряков М. А. Пределы судебного разбирательства уголовных дел в суде первой инстанции: законодательство, теория, практика. Автореф. дисс. ... канд. юрид. наук. М., 2013.
Khokhryakov M.A. Limits of the trial of criminal cases in the court of first instance: legislation, theory, practice. Abstract diss. ... cand. legal Sciences. M., 2013.
7. Добровольская Т. Н. Изменение обвинения в судебных стадиях советского процесса. М., Юрид. Лит., 1997.
Dobrovolskaya T. N. Change of charges in the judicial stages of the Soviet process. M., Law. Lit., 1997.
8. Головки Л. В. Институты отказа прокурора от обвинения и изменения обвинения в суде: остсоветские перспективы в условиях теоретических заблуждений. // Государство и право, 2/ 2012.

- Golovko L. V. Institutes of the prosecutor's refusal to charge and change of charges in court.// State and law, 2/ 2012.
9. Михайлов А. А., Изменение прокурором обвинения и отказ прокурора от обвинения в суде первой инстанции. Автореф. дисс., Томск, 2008.
Mikhailov A. A., Change of charges by the prosecutor and refusal of the prosecutor to charge in the court of first instance. Author's abstract. diss., Tomsk, 2008.
 10. Фактуллин Ф. Н., Изменение обвинения. М., 1971.
Faktullin F.N., Change of charges. М., 1971.
 11. Блум М. И., О том, какое наказание считать более строгим: Обратная сила закона. М.. 1969.
Bloom M.I., For information on which punishment is considered more severe, see: Retroactive force of the law. М.. 1969.
 12. Бравилова Е. А., Пределы судебного разбирательства: дис., Екатеринбург, 2004.
Bravilova E. A., Limits of trial: dis., Ekaterinburg, 2004.
 13. Гуценко К.Ф., Головки.В, Филимонов Б.А. Уголовный процесс западных государств. М., 2001.
Gutsenko K.F., Golovko.V, Filimonov B.A. The criminal process of Western states. М., 2001.
 14. Постановление пленума Верховного суда Российской Федерации, 29.04.1996, N 1, 9 пункт, страница 5.
Resolution of the plenum of the Supreme Court of the Russian Federation, 04/29/1996, No. 1, paragraph 9, page 5.
 15. URL:http://www.legifrance.gouv.fr/content/download/!958/13719/version/3/file/Code_34.pdf
URL:http://www.gesetze-iminternet.de/englisch_stpo/englisch_stpo.html

Edgar Poghosyan

*Deputy Prosecutor of Prosecutor's Office of Shengavit
Administrative District of Yerevan City*

SPECIFICITIES OF CHANGE OF COURT'S CHARGE WITHIN THE CONTEXT OF THE CODE OF THE NEW CRIMINAL TRIAL PROCESS¹

Abstract

The article is devoted to the procedure of the change of court's charge defined by the past and present codes of the criminal trial process of the Republic of Armenia. It discusses their positive and negative sides and subjects them to comparative analysis.

Within the scope of the article diverse approaches to the change with deteriorative consequence of the court's charge to an individual of the new criminal trial institute, correlation of the institute and competition principle as well as court function are outlined, by discussing the consequences of its absence in the frameworks of the authorities of the body realising jurisprudence.

Admitting the juridical evaluation of the importance of the jurisdiction and time-dictated necessity of the change of court's charge including the one with aggravating consequence, its court trial implementation procedure, consolidation manner are discussed within the work. Introduction of certain adjustments to it are substantiated, on the basis of which the author suggests to make modifications within Article 344 of the Code of Criminal Trial Process of the RA.

Keywords: limits of judicial investigation; charge; factual and legal sides of charge; competition; change of charge; verdict.

¹ The article was presented on 10.02.2024 and was reviewed on 25.03.2024.

Эдгар Погосян

*Заместитель прокурора административного округа Шенгавит
города Ереван*

ОСОБЕННОСТИ ИЗМЕНЕНИЯ СУДЕБНОГО ОБВИНЕНИЯ В КОНТЕКСТЕ НОВОГО КОДЕКСА УГОЛОВНОГО СУДОПРОИЗВОДСТВА¹

Абстракт

Данная статья посвящена порядку изменения судебного обвинения, определенного прошедшим и действующим кодексом уголовного судопроизводства Республики Армения, и рассмотрению их положительных и отрицательных сторон, подвергая их сравнительному анализу.

Различные подходы к изменению судебного обвинения с ухудшающим последствием нового уголовно судопроизводительного института, соотношение института к принципу соревнования и функции суда выявлены в рамках статьи с рассмотрением также последствий ее отсутствия в пределах полномочий органов, осуществляющих правосудие.

Принимая юридическую оценку важности и обоснованную временем необходимости изменения судебного обвинения, в том числе и с отягчающими последствиями, судебный порядок его осуществления, метод закрепления рассмотрены в работе, а также обоснована необходимость внедрения определенной коррективы в нем, на основе которого автор предлагает внести изменение в статье 344 Кодекса уголовного судопроизводства РА.

Ключевые слова: пределы судебного расследования; обвинение; фактические и юридические стороны обвинения; соревнование; изменение обвинения; вердикт.

¹ Статья была представлена 10.02.2024 и прошла рецензирование 25.03.2024.

Կարեն Սուրիասյան

Երևան քաղաքի դատախազության ախազ դատախազ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ¹

Համառոտագիր

Հոդվածը վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքում հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու վերաբերյալ որոշ գործնական հարցերի քննարկմանը: Թեև քրեական օրենսդրության զարգացմանը զուգահեռ՝ հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու վերաբերյալ խնդրահարույց հարցերի զգալի մասը կարգավորվել է, այնուամենայնիվ ՀՀ քրեական օրենսգրքում դեռևս առկա են որոշ հարցեր, որոնք հստակ կարգավորված չեն կամ բովանդակային առումով ոչ միանշանակ են ընկալվում:

Հաշվի առնելով նշվածը՝ հոդվածում անդրադարձ է կատարվել հանցագործությունների համակցության դեպքում պատիժները լրիվ կամ մասնակի գումարելու կանոններին, հանցագործությունների համակցության դեպքում լրացուցիչ պատիժներ նշանակելու և դրանք հիմնական պատիժների հետ վերջնական պատժին գումարելու որոշ հարցերին, պատիժները գումարելիս դրանք որոշելու վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքում առկա կարգավորումներին: Քննարկվել է նաև նախքան առաջին դատավճիռ կայացնելը կատարած մեկ այլ հանցանքի համար դատապարտվելու դեպքում պատժի կրման սկիզբը հաշվելու կարգին վերաբերող կարգավորումը: Ներկայացվել են նաև հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումները:

Նշված ուսումնասիրությունը կատարելիս վեր են հանվել օրենսդրական թերի, տարամեկնաբանման տեղիք տվող կարգավորումները և դրանց վերաբերյալ ներկայացվել են հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու գործընթացի օրենսդրական կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Հիմնաբառեր - հանցագործությունների համակցություն, պատժի տեսակները, պատիժ նշանակելը, պատժի նպատակները, պատիժները գումարելը, պատժի կրման սկիզբը, լրացուցիչ պատիժներ, ցմահ ազատազրկում:

¹ Հոդվածը ներկայացվել է 01.03.2024 թ., գրախոսվել է 14.05.2024 թ.:

Ներածություն

Պատիժ նշանակելը քրեական արդարադատության հիմնական փուլերից է, որի ընթացքում գործնականում առաջանում են մի շարք խնդիրներ: Ընդ որում՝ ՀՀ քրեական օրենսդրության սկզբունքների, այդ թվում՝ պատժի նշանակման ընդհանուր սկզբունքների պահպանման և պատժի նպատակների կենսագործման տեսանկյունից կարևոր է ոչ միայն յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ նշանակելը, այլ նաև անձի կողմից մի քանի հանցանք կատարելու դեպքում այդ պատիժները գումարելու կանոնների որոշումը (հանցագործությունների, թե դատավճիռների համակցություն) և դրանք ճիշտ կիրառելը:

Թեև քրեական օրենսդրության զարգացմանը զուգահեռ՝ հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու վերաբերյալ խնդրահարույց հարցերի զգալի մասը կարգավորվել է, այնուամենայնիվ՝ ՀՀ քրեական օրենսգրքում դեռևս առկա են որոշ հարցեր, որոնք իրենց հստակ կարգավորումը չեն ստացել, իսկ համակցությամբ պատիժ նշանակելու կանոնները սահմանող որոշ նորմեր բովանդակային առումով ոչ միանշանակ են ընկալվում:

Նման պայմաններում, հատկապես հաշվի առնելով, որ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգրքի կիրառության ընթացքում իրավակիրառ պրակտիկայում առաջանում են մի շարք տարամեկնաբանություններ և խնդիրներ՝ սույն աշխատանքը միտված է որոշ այդպիսի հարցեր վեր հանելուն, վերլուծելուն, դրանց օրենսդրական նորմերի կատարելագործման վերաբերյալ առաջարկներ ներկայացնելուն:

Հանցագործությունների համակցության դեպքում պատիժները գումարելու վերաբերյալ հարցեր

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք կամ ՀՀ գործող քրեական օրենսգրք)² 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործությունների համակցությամբ յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ (հիմնական և լրացուցիչ) նշանակելով՝ դատարանը վերջնական պատիժը որոշում է նշանակված պատիժները **լրիվ կամ մասնակիորեն** գումարելու միջոցով»:

Նշվածից հետևում է, որ հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս դատարանը նախ պետք է համակցություն կազմող յուրաքանչյուր հանցանքի համար նշանակի առանձին պատիժ, որից հետո պետք է որոշի դրանք գումարելու և վերջնական պատիժ նշանակելու հարցը:

Իրավաբանական գրականության մեջ իրավացիորեն նշվում է, որ համակցության մեջ մտնող յուրաքանչյուր հանցագործության համար պատժի նշանակումը պետք է կատարվի պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խիստ

² Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ մտել՝ 01.07.2022 թ.:

պահպանմամբ: Սկզբնական փուլում դատարանը յուրաքանչյուր հանցանքի համար առանձին պատիժ նշանակելիս պարտավոր է ղեկավարվել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, այսինքն՝ պետք է հաշվի առնի կոնկրետ հանցագործության հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, և առանձին հանցանքների դեպքում այլ հանգամանքներ³:

Համակցություն կազմող հանցանքների համար առանձին պատիժ նշանակելն ապահովում է հանրային վտանգավորության բնույթին և աստիճանին, հանցանք կատարած անձի մեղքին համապատասխան պատիժն անհատականացնելու հնարավորությունը, բարձրացնում է պատժի նշանակման գործընթացի կանխարգելիչ և դաստիարակչական նշանակությունը: Բացի այդ, նշված կարգն ապահովում է վերադաս դատական աստիճանի կողմից դատավճռի ստուգման հնարավորությունը, հատկապես, երբ հանցագործություններից մեկի մասով դատավճիռը բեկանվում կամ փոփոխվում է, բացի այդ ազդում է քրեական պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքի ճիշտ կիրառության վրա⁴:

Ընդհանուր առմամբ համակարծիք լինելով մեջբերված դիրքորոշումների հետ՝ կարծում ենք, որ համակցություն կազմող հանցանքներից յուրաքանչյուրի համար պատիժ նշանակելիս դատարանը պետք է ղեկավարվի պատժի ընդհանուր սկզբունքներով, պատժի նպատակներով և յուրաքանչյուր հանցանքի համար պատժի նշանակման առանձնահատուկ կանոններով (օրինակ՝ պատիժ նշանակելը չավարտված հանցագործության համար, ռեցիդիվի դեպքում, օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ նշանակելը և այլն):

Համանման դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՄԳՅ/0046/01/13 որոշմամբ, որի համաձայն՝ «(...) հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելը բաղկացած է միմյանց հաջորդող հետևյալ երկու փուլերից.

1) Համակցության մեջ մտնող յուրաքանչյուր հանցագործության համար հիմնական և լրացուցիչ պատիժ նշանակելը: Այս փուլում դատարանը, ղեկավարվելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով և հատուկ կանոններով, հանցանքների համակցության մեջ մտնող յուրաքանչյուր հանցագործության համար նշանակում է ռեալ պատիժ: Հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու այս փուլում դատարանը չի քննարկում պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը:

2) Համակցության մեջ մտնող հանցագործությունների համար վերջնական պատիժ սահմանելը, որն իրականացվում է յուրաքանչյուր հանցագործության

³ Ст'ю М. Н. Становский. Назначение наказания. СПб., 1999, էջ 321, կամ М. И. Божанов. Назначение наказания по советскому уголовному праву. Киев, 1980, էջեր 97-98.

⁴ Ст'ю М. Н. Становский. Назначение наказания. СПб., 1999, էջ 323.

համար առանձին նշանակված ռեալ պատիժները մասնակիորեն կամ լրիվ գումարելու, իսկ այն դեպքում, երբ համակցության մեջ մտնող հանցանքներից մեկի համար նշանակվել է ցմահ ազատազրկում, ապա կլանելու միջոցով: Նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական ռեալ պատիժ նշանակելուց հետո դատարանը քննարկում է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը (...)⁵»:

Մինչ չ՛ գործող քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելը իրավակիրառ պրակտիկայում խնդրահարույց էր այն հարցը, թե արդյոք պատիժները մասնակի գումարելիս հնարավոր է դրանք գումարել կոնկրետ պատժատեսակի՝ Ընդհանուր մատով սահմանված նվազագույն չափերից պակաս չափով կամ ժամկետով:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված չ՛ քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ չ՛ նախկին քրեական օրենսգիրք)⁶ չէր կարգավորում այն հարցը, թե պատիժները մասնակի գումարելու դեպքում կա՞րդյոք պատժի նվազագույն սահման, որից պակաս դատարանն իրավունք չունի գումարել և արդյո՞ք պատիժները մասնակի գումարելիս դատարանները կաշկանդված են չ՛ քրեական օրենսգրքի Ընդհանուր մատով տվյալ պատժատեսակի համար սահմանված նվազագույն չափով:

Նշված օրենսդրական խնդիրը լուծվել է չ՛ քրեական գործող օրենսգրքով, որի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «չանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը որոշելիս մասնակի գումարվող պատիժը չի կարող պակաս լինել տվյալ պատժատեսակի համար սույն օրենսգրքով նախատեսված նվազագույն չափից կամ ժամկետից, սակայն վերջնական պատիժը չի կարող գերազանցել սույն հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 9-րդ մասերով նախատեսված առավելագույն չափը կամ ժամկետը»:

Այսինքն՝ նշված կարգավորումից, ըստ էության, բխում է, որ մասնակի գումարվող պատիժը չի կարող պակաս լինել այդ պատժատեսակի՝ Ընդհանուր մատով նախատեսված նվազագույն չափից կամ ժամկետից:

Վերը նշված կարգավորումների պայմաններում, այնուամենայնիվ, հարց է առաջանում, եթե մասնակի գումարման դեպքում տվյալ պատժատեսակի համար սահմանված նվազագույն չափերը գումարելիս ստացված պատիժը գերազանցում է չ՛ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 9-րդ մասերով նախատեսված առավելագույն չափը կամ ժամկետը, ապա դատարանն ինչպե՞ս պետք է գումարի նշանակված պատիժները. Արդյո՞ք դատարանը պետք է Ընդհանուր մատում տվյալ պատժատեսակի համար սահմանված նվազագույն ժամկետից կամ չափից պակաս գումարի պատիժները, որպեսզի պահպանի համակցությամբ պատիժ նշանակելու համար սահմանված առավելագույն

⁵ Տե՛ս չ՛ վճռաբեկ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴ3/0046/01/13 որոշումը:

⁶ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք չ՛O-528-Ն, ընդունվել է 18.04.2003 թ., ուժի մեջ է մտել 01.08.2003 թ.:

սահմանը, թե՞ պատիժները պետք է գումարի դրա համար Ընդհանուր մասով նախատեսված նվազագույն ժամկետով կամ չափով և արդյունքում ստացված վերջնական պատիժը պետք է նվազեցնի՝ հավասարեցնելով ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 9-րդ մասերով նախատեսված առավելագույն սահմաններին:

Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Եթե հանցագործությունների համակցությունն ընդգրկում է միայն ոչ մեծ ծանրության հանցանքներ, ապա ազատազրկման ձևով վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Գումարելիս ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել 5 տարին»:

Օրինակ, եթե անձը կատարել է 21 դրվագ ոչ մեծ ծանրության հանցանք, որոնցից յուրաքանչյուրի համար դատարանը որպես պատիժ նշանակել է 6 ամիս ժամկետով ազատազրկում, ապա հանցագործությունների համակցության կանոններով պատիժները մասնակի՝ բոլոր հանցանքների համար նշանակված պատիժներից 3-ական ամիս ժամկետով ազատազրկում գումարելիս ստացվում է 5 տարի 3 ամիս ժամկետով ազատազրկում, մինչդեռ վերը մեջբերված կարգավորման համաձայն՝ տվյալ դեպքում վերջնական պատիժը չի կարող գերազանցել 5 տարի ժամկետով ազատազրկումը: Հետևաբար, հարց է առաջանում, թե դատարանը տվյալ դեպքում պետք է 3-ական ամիս գումարի պատիժները՝ վերջնական պատիժ նշանակելով 5 տարի 3 ամիս ժամկետով ազատազրկում, այնուհետև ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ այն նվազեցնի և վերջնական պատիժ նշանակի 5 տարի ժամկետով ազատազրկում, թե՞ ի սկզբանե պատիժները 3 ամսից քիչ՝ այն չափով պետք է գումարի, որ ստացված պատիժը չգերազանցի 5 տարի ժամկետով ազատազրկումը:

Այս առումով հարկ է ընդգծել, որ 74-րդ հոդվածի 1-ին մասում հստակ սահմանված է, որ մասնակի գումարվող պատիժը չի կարող պակաս լինել տվյալ պատժատեսակի համար սույն օրենսգրքով նախատեսված նվազագույն չափից կամ ժամկետից, ինչն էլ նշանակում է, որ որևէ պարագայում այն չի կարող դրանից քիչ գումարվել:

Բացի այդ, հատկանշական է, որ վերը նշված հոդվածում օգտագործվում է «սակայն», այլ ոչ թե «բացառությամբ» ձևակերպումը, մասնավորապես՝ 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը որոշելիս մասնակի գումարվող պատիժը չի կարող պակաս լինել տվյալ պատժատեսակի համար սույն օրենսգրքով նախատեսված նվազագույն չափից կամ ժամկետից, **սակայն** վերջնական պատիժը չի կարող գերազանցել սույն հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 9-րդ մասերով նախատեսված առավելագույն չափը կամ ժամկետը:

Այսինքն՝ մեջբերված կարգավորումից հետևում է, որ «**սակայն**» շաղկապով

առանձնացված հատվածը չի թվարկում նշված կանոնից բացառություն և դրանից շեղվելու հնարավորություն: Հետևաբար, կարծում ենք, որ քննարկվող դեպքում պատիժները տվյալ պատժատեսակի համար Ընդհանուր մասով նախատեսված նվազագույն չափով պետք է գումարվեն, իսկ գումարման արդյունքում վերջնական պատիժը << քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 9-րդ մասերով նախատեսված առավելագույն չափից կամ ժամկետից ավելի ստացվելու դեպքում 74-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ վերջնական պատիժը պետք է նվազեցվի և հավասարեցվի << քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 9-րդ մասերով նշված առավելագույն չափերին:

Նշված կարգով վերջնական պատիժ նշանակելը հնարավորություն է տալիս, հանցավորությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի ուժի մեջ մտնելու, համաներում ընդունելու, համակցություն կազմող հանցագործություններից որևէ մեկով քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետները լրանալու, տուժողի հետ հաշտվելու, ինչպես նաև վերադաս աստիճանների կողմից համակցություն կազմող հանցագործություններից որևէ մեկով արդարացման ակտ կայացնելու և նման այլ դեպքերում որոշել, թե արդյո՞ք հանցանք կատարած անձի նկատմամբ վերջնական պատիժը պետք է փոփոխվի և ինչ չափով:

Սույն աշխատանքում հարկ ենք համարում նաև անդրադառնալ պատիժները մասնակի գումարելիս վերջնական պատժի նվազագույն չափը սահմանելու վերաբերյալ << քրեական օրենսգրքի կարգավորմանը:

Իրավաբանական գրականության մեջ իրավացիորեն նշվում է, որ հանցագործությունների համակցության վտանգավորությունը կախված է այն կազմող հանցանքների հանրային վտանգավորությունից, ուստի համակցությունը չի կարող ավելի նվազ վտանգավոր լինել այն կազմող արարքների հանրային վտանգավորությունից⁷:

Նշված տրամաբանությունից ելնելով՝ << քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մասնակի գումարման դեպքում վերջնական պատիժը պետք է ավելի լինի, քան համակցության մեջ մտնող հանցագործությունների համար նշանակված առավել խիստ պատիժը:

Հատկանշական է, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված << քրեական օրենսգրքում նման կարգավորում նախատեսված չէր, ինչն այնպիսի տպավորություն էր ստեղծում, որ վերջնական պատիժը կարող էր նշանակվել հավասար կամ պակաս, քան համակցություն կազմող հանցանքների համար նշանակված պատիժներն են, ինչը բնականաբար արդարացի չէ:

Իրավաբանական գրականության մեջ քննարկվում է նաև այն հարցը, թե արդյո՞ք նույն պատժատեսակներն իրար գումարելիս դատարանները կաշկանդված են այդ պատժատեսակի համար օրենսգրքի Ընդհանուր մասով սահմանված

⁷ Стів Ларина Л. Ю., Человек: Преступление и наказание. Определение максимального предела наказания по совокупности преступлений. N 1 (68), 2010, էջ 31:

առավելագույն ժամկետով, թե՛ գումարման արդյունքում դատարանը կարող է դուրս գալ պատժատեսակի առավելագույն շեմից: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային աշխատանքները կարող են նշանակվել 60-270 ժամ տևողությամբ, ուստի, եթե դատարանը համակցության մեջ մտնող երկու արարքների համար նշանակի հանրային աշխատանքներ, ապա դրանք գումարելու արդյունքում կարո՞ղ է արդյոք նշանակել 270 ժամից ավելի հանրային աշխատանքներ:

Բ. Չորավոմիսյուլի կարծիքով՝ նշված դեպքերում դատարանը չի կարող դուրս գալ կոնկրետ պատժատեսակի վերին սահմանից⁸:

Ի. Բ. Ազանը նշել է, որ հանցանքների համակցության դեպքում վերջնական պատիժ նշանակելիս դատարանը չպետք է կաշկանդված լինի որևէ սահմաններով⁹:

Մի խումբ այլ հեղինակներ, հաշվի առնելով, որ ազատագրվում պատժատեսակը հնարավոր է նշանակվել առավելագույն ժամկետից ավել չափով, քան այդ պատժատեսակի համար սահմանված է քրեական օրենսգրքի Ընդհանուր մասով, գտնում են, որ տրամաբանորեն նշված կարգը պետք է գործի նաև այլ պատժատեսակների դեպքում¹⁰:

Ի. Մ. Ցոկունևան առաջարկում է սահմանել, որ հանցագործությունների համակցության դեպքում վերջնական պատիժը չի կարող գերազանցել տվյալ պատժատեսակի կրկնակին, իսկ դատավճիռների համակցության դեպքում՝ եռակին, բացառությամբ ազատությունից զրկելուն, որի ժամկետներն արդեն իսկ օրենսդրությամբ սահմանված են¹¹:

Հարկ է նշել, որ, ի տարբերություն ՀՀ քրեական նախկին օրենսգրքի, ՀՀ քրեական գործող օրենսգրքով կարգավորվել է նշված հարցը: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հանցագործությունների համակցության դեպքում մյուս պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում նշանակվող վերջնական պատիժը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը:

Թեև իրավական որոշակիության առումով ողջունելի է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածում օրենսդրորեն հստակ լուծվել է վերը նշված տարամեկնաբանությունների հարցը, այնուամենայնիվ մենք համակարծիք ենք այն հե-

⁸ Ст'у Уголовное право Российской Федерации. Особенная часть/ ред. Б.Здравомыслов. - М. : Юрист, 1996, էջ 560 // С. И. Вележев, В. П. Марков, И. Л. Третьяков. Назначение наказания в виде обязательных работ по совокупности преступлений. Вестник Санкт-Петербургского университета МВД России N 1 (29) 2006, էջ 175:

⁹ Ст'у И. Б. Агаев. Совокупность преступлений: понятие, виды и наказуемость. М., 2003, էջ 187:

¹⁰ Ст'у С. И. Вележев, В. П. Марков, И. Л. Третьяков. Назначение наказания в виде обязательных работ по совокупности преступлений. Вестник Санкт-Петербургского университета МВД России N 1 (29) 2006, էջեր 174-176:

¹¹ Ст'у И. М. Цокунова. Уголовные наказания имущественного характера: виды, эволюция, перспективы: Автореф. дис. ... канд. юрид. наук. Краснодар, 1997, էջեր 12-13:

դինակների հետ, որոնք առաջարկում են նախատեսել ազատագրկումից բացի այլ պատժատեսակների դեպքում նույնպես այդ պատժատեսակի առավելագույն սահմանն անցնելու հնարավորություն: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ, եթե դատարանը համակցություն կազմող հանցանքներից մեկի համար նշանակի այդ պատժատեսակի առավելագույն ժամկետը կամ չափը, ապա անկախ այն հանգամանքից, թե մյուս հանցանքների համար ինչ պատիժ կնշանակվի, միևնույն է վերջնական պատիժը չի կարող գերազանցել արդեն իսկ մեկ հանցանքի համար նշանակված պատիժը: Օրինակ, եթե անձը կատարել է 4 հանցանք, որոնցից մեկի համար դատարանը նշանակել է հանրային աշխատանքներ՝ 270 ժամ տևողությամբ, ապա անկախ մյուս պատժատեսակների համար նշանակված հանրային աշխատանքների ժամկետից, միևնույն է դատարանը համակցության արդյունքում չի կարող նշանակել 270 ժամից ավելի հանրային աշխատանքներ, ինչը, մեր կարծիքով, չի ապահովում պատժի նպատակների իրականացումը և չի բխում պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից:

Ավելին՝ հատկանշական է, որ ինչպես արդեն իսկ նշել ենք, ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակի գումարման դեպքում վերջնական պատիժը պետք է ավելի լինի, քան համակցության մեջ մտնող հանցագործությունների համար նշանակված առավել խիստ պատիժը, սակայն մեր կողմից նշված օրինակում չի պահպանվում նաև վերջնական պատժի ժամկետի կամ չափի վերաբերյալ նշված կանոնը:

Ուստի առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 9-րդ մասում նախատեսել հնարավորություն հանցագործությունների համակցության դեպքում մյուս պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում նշանակվող վերջնական պատիժն Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը գերազանցելու հնարավորություն: Մասնավորապես՝ հանցագործությունների համակցության դեպքում մյուս պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում նշանակվող վերջնական պատիժը կարող է գերազանցել սույն օրենսգրքի Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը՝ դրա մեկ երրորդի չափով¹²:

Հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու հետ կապված հաջորդ խնդիրն այն է, որ թեև օրենսդրական հստակ պահանջ առկա չէ, սակայն կարծում ենք, որ հանցագործությունների համակցության դեպքում վերջնական պատիժ նշանակելիս դատարանները պարտավոր են նշել, թե համակցություն կազմող հանցագործության համար նշանակված պատիժներից յուրաքանչյուրից ո՞ր չափը կամ ժամկետն է գումարվում:

Նշվածը բխում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից: Մասնա-

¹² Հարկ է նշել, որ պատժի առավելագույն ժամկետը կամ չափը գերազանցելու չափն ընտրվել է պայմանականորեն:

վորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը Ֆ. Գալստյանի գործով կայացված որոշմամբ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Դատական ակտն օրինական է, եթե կայացվել է գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ, և հիմնավորված է, եթե դրանում արված հետևությունները հիմնված են դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա: Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչո՞ւ է դատարանը եկել այս կամ այն հետևության, ո՞ր իրավանորմերով է դեկլարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

(...) Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

(...) Շարադրված մոտեցմանը համահունչ իրավական դիրքորոշում է հայտնել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը դիտելով որպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի արդար դատական քննության իրավունքի խախտում (տե՛ս «Մալովն ընդդեմ Ուկրաինայի» (Salov v. Ukraine) 06.09.2005 թվականի որոշումը, գանգատ թիվ 65518/01, «Բոլդեան ընդդեմ Ռումինիայի» (Boldea v. Romania) 15.02.2007 թվականի որոշումը, գանգատ թիվ 19997/02, «Գրադինարն ընդդեմ Մոլդովայի» (Gradinar v. Moldova) 08.04.2008 թվականի որոշումը, գանգատ թիվ 7170/02)»¹³:

Հատկանշական է, որ իրավակիրառ պրակտիկայում, որպես կանոն, դատարանները յուրաքանչյուր հանցանքի համար նշանակում են առանձին պատիժ, իսկ վերջնական պատիժները գումարելիս չեն նշում, թե որ պատժից ինչ չափով պետք է գումարել, այլ ընդամենը նշում են, որ նշանակված պատիժները հանցագործությունների համակցության կանոններով մասնակի գումարելով պետք է վերջնական պատիժ նշանակել կոնկրետ ժամկետով ազատագրելով¹⁴:

¹³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԲ/0058/11/09 որոշումը:

¹⁴ Տե՛ս, օրինակ, թիվ ԵԲ/0321/01/18, թիվ ԱՎԲ1/0068/01/21, թիվ ԵԲ/1141/01/19, թիվ ԵԾԲ/0073/01/13, թիվ ԵԿԲ/0116/01/12, թիվ ԵԱԶԲ/0065/01/14, թիվ ԵԲ1/0335/01/23, թիվ ԱՎԲ/0064/01/16, թիվ ԵԷԲ/0054/01/13, թիվ ԵԲ/0864/01/20, թիվ ԵԲ/0050/01/19, թիվ ԿԲ/0167/01/20 քրեական գործերով դատարանի դատավճիռները: www.datalex.am (մուտք՝ 26.02.2024):

Հարկ է արձանագրել, որ մեր կողմից բարձրացված հարցն ունի նաև գործնական նշանակություն: Մասնավորապես՝ տվյալ դեպքում նույնպես նշվածը հնարավորություն է տալիս, վերադաս ստյանների կողմից համակցություն կազմող հանցագործություններից որևէ մեկով արդարացման ակտ կայացնելու դեպքում, կամ հանցավորությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի ուժի մեջ մտնելու կամ համաներում ընդունելու, համակցություն կազմող հանցագործություններից որևէ մեկով քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետները լրանալու, տուժողի հետ հաշտվելու և նման այլ դեպքերում որոշել, թե արդյո՞ք հանցանք կատարած անձի նկատմամբ վերջնական պատիժը պետք է փոփոխվի և ինչ չափով:

Հանցագործությունների համակցության դեպքում լրացուցիչ պատիժներ նշանակելու վերաբերյալ որոշ հարցեր

ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ «Հանցագործությունների համակցության դեպքում նշանակված հիմնական պատժին կարող են միացվել համակցությունը կազմող հանցանքների համար նշանակված լրացուցիչ պատիժները»:

Նշված օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ վերջնական պատժին կարող են միացվել լրացուցիչ պատիժներ միայն այն դեպքում, երբ դատարանը համակցություն կազմող հանցանքներից գոնե մեկի համար նշանակել է լրացուցիչ պատիժ: Այսինքն՝ հնարավոր չէ լրացուցիչ պատիժ նշանակել, եթե համակցություն կազմող արարքներից ոչ մեկի համար այն չի նշանակվել:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 10-րդ մասում օգտագործվում է «հիմնական պատժին **կարող են** միացվել լրացուցիչ պատիժներ» ձևակերպումը, ինչից ստացվում է, որ դատարանը, համակցություն կազմող հանցանքների կամ դրանցից մեկի համար լրացուցիչ պատիժ նշանակելիս, կարող է և այն չգումարել վերջնական պատժին:

Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, հանցագործությունների համակցության դեպքում դատարանը յուրաքանչյուր հանցագործության համար նշանակում է հանցանք կատարած անձին և նրա կատարած արարքին համաչափ պատիժ՝ հիմնական և լրացուցիչ, որն անհրաժեշտ և բավարար է պատժի նպատակների իրագործումն ապահովելու համար, ուստի եթե դրանք չեն գումարվում վերջնական պատժին, ապա անիմաստ է դառնում և ձևական բնույթ է կրում համակցություն կազմող առանձին արարքի համար լրացուցիչ պատիժ նշանակելը:

Նման պայմաններում կարող է ստեղծվել մի իրավիճակ, որ, եթե անձը կատարի մեկ հանցանք, ապա պետք է կրի իր նկատմամբ նշանակված լրացուցիչ պատիժը, իսկ համակցության դեպքում, երբ, որպես կանոն, անձն ավելի մեծ վտանգավորություն է ունենում, քանի որ կատարել է մեկից ավելի հանցանքներ, համակցության կանոններով վերջնական պատիժ նշանակելիս փաստացի կա-

րող է ազատվել առանձին հանցանքի համար նշանակված լրացուցիչ պատիժը կրելուց:

Բացի այդ, հարկ է արձանագրել, որ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելը համակցություն կազմող հանցանքների համար նշանակված առանձին պատիժների գումարման եղանակ է, ուստի առանձին պատիժների գումարման արդյունքում անձը չի կարող այդ համակցությունը կազմող հանցագործություններից որևէ մեկի համար նշանակված պատժից ազատվել¹⁵:

Հետևաբար, առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 10-րդ մասը սահմանել հետևյալ կերպ.

«Հանցագործությունների համակցության դեպքում նշանակված հիմնական պատժին միացվում են համակցությունը կազմող հանցանքների համար նշանակված լրացուցիչ պատիժները»:

Պատժի ժամկետները որոշելը դրանք գումարելիս

Թեև հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնները սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածում նշված չէ, այնուամենայնիվ մեկ այլ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածում սահմանված են պատիժները գումարելիս դրանց ժամկետները որոշելուն վերաբերող հարցերը, այսինքն՝ նշված հոդվածը կարգավորում է տարբեր պատժատեսակներ միմյանց գումարելու կարգը: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածը սահմանում է, թե պատիժները միմյանց գումարելիս որ դեպքում դրանք պետք է ի կատար ածվեն առանձին, իսկ որ դեպքում՝ ոչ:

Այս առումով ՀՀ վճարելի դատարանը, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի համանման կարգավորման վերաբերյալ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՄԴ3/0046/01/13 որոշմամբ նույնպես արձանագրել է, որ «(...) Մեջբերված քրեափրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ այն սահմանում է հանցանքների համակցությամբ վերջնական պատիժ նշանակելիս տարբեր պատժատեսակների գումարման կարգը: Դրանում, մասնավորապես, սպառիչ թվարկված են այն պատժատեսակները, որոնք կարող են լրիվ կամ մասնակիորեն գումարվել, ինչպես նաև սահմանված են այդ պատժատեսակների չափերի գումարման կանոնները (...)»¹⁶:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցանքների համակցությամբ և դատավճիռների համակցությամբ պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելիս ազատագրկման 1 օրվան համապատասխանում է՝

1) կարճաժամկետ ազատագրկման 1 օրը,

¹⁵ Որոշակի վերապահում առկա է միայն ցմահ ազատագրկման դեպքում, երբ համակցություն կազմող հանցագործություններից մեկի համար ցմահ ազատագրկում նշանակելիս վերջական հիմնական պատիժ է նշանակվում ցմահ ազատագրկումը:

¹⁶ Տե՛ս ՀՀ վճարելի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՄԴ3/0046/01/13 որոշումը:

- 2) կարգապահական գումարտակում պահելու 1 օրը,
- 3) ազատության սահմանափակման 2 օրը,
- 4) հանրային աշխատանքների 8 ժամը:

2. Պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելու, տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու, ինչպես նաև զինվորական ծառայության մեջ սահմանափակման ձևով պատիժները հանրային աշխատանքների, ազատության սահմանափակման, կարճաժամկետ ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու, ազատազրկման կամ ցմահ ազատազրկման հետ գումարելիս ի կատար են ածվում առանձին»:

Կարծում ենք, որ մեջբերված նորմը կիրառման տեսանկյունից կարող է առաջացնել մի շարք խնդիրներ:

Մասնավորապես՝ նշված հոդվածից ստացվում է, որ համակցություն կազմող հանցանքների համար նշանակված որոշ պատժատեսակներ գումարելիս դրանք պետք է «վերածվեն» ազատազրկման, իսկ որոշ պատժատեսակներ պետք է ի կատար ածվեն առանձին:

Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կարճաժամկետ ազատազրկում, կարգապահական գումարտակում պահել, ազատության սահմանափակում և հանրային աշխատանքներ պատժատեսակները միմյանց գումարելիս պետք է համապատասխանեցվեն ազատազրկման համապատասխան օրերի:

Միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ քննարկվող հոդվածի վերլուծությունից հետևում է, որ որպես նշված կանոնը կիրառելու պայման նախատեսված չէ հանցանքների համակցություն կազմող արարքներից որևէ մեկի համար ազատազրկում պատժատեսակ նշանակված լինելու պահանջ: Այսինքն՝ նշվածից հետևում է, որ հանցագործությունների համակցություն կազմող արարքների համար կարճաժամկետ ազատազրկում, կարգապահական գումարտակում պահել, ազատության սահմանափակում և հանրային աշխատանքներ պատժատեսակները նշանակելու դեպքում դրանք միմյանց գումարելիս պետք է վերածվեն ազատազրկման՝ անկախ այն հանգամանքից, թե համակցություն կազմող գոնե մեկ հանցանքի համար նշանակվել է ազատազրկում պատժատեսակը, թե ոչ:

Հետևաբար, դրանց չափը կամ ժամկետը պետք է համապատասխանեցվի ազատազրկման 1 օրվան ինչպես այն դեպքում, երբ համակցություն կազմող հանցանքներից որևէ մեկի համար նշանակվել է ազատազրկում, այնպես էլ այն դեպքում, երբ ազատազրկում չի նշանակվել:

Այսինքն՝ ստացվում է, որ օրինակ, եթե հանցանք կատարած անձի նկատ-

մամբ մի արարքի համար նշանակվել է կարճաժամկետ ազատազրկում, իսկ մյուսի համար՝ ազատազրկում, ապա դրանք գումարելիս կարճաժամկետ ազատազրկման համապատասխան օրերը պետք է վերածվեն ազատազրկման օրերի և գումարման արդյունքում վերջնական պատիժ պետք է նշանակվի ազատազրկումը: Կամ, եթե համակցություն կազմող հանցանքներից մեկի համար նշանակվել է հանրային աշխատանքներ, իսկ մյուսի համար՝ ազատազրկում, ապա հանրային աշխատանքների համապատասխան ժամաքանակը պետք է վերածվի ազատազրկման և վերջնական պատիժ պետք է նշանակվի ազատազրկումը:

Համանման կերպով, եթե դատարանը, հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակի կարճաժամկետ ազատազրկում և կարգապահական գումարտակում պահելը պատժատեսակները, ապա դրանք պետք է վերածվեն ազատազրկման և վերջնական պատիժ պետք է նշանակվի ազատազրկումը:

Հարկ է արձանագրել, որ նշված մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ քրեական օրենսգրքում առկա չէ առանձին նորմ, որը կկարգավորի կարճաժամկետ ազատազրկում, կարգապահական գումարտակում պահել, ազատության սահմանափակում և հանրային աշխատանքներ պատժատեսակները միմյանց գումարելու այլ կանոն, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չէ նաև, որ այդ պատժատեսակներն ի կատար են ածվում առանձին:

Միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ նշվածը չի վերաբերում նույն պատժատեսակներն իրար գումարելուն, ինչը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի կարգավորումներից, որի 9-րդ մասի համաձայն՝ «Հանցագործությունների համակցության դեպքում մյուս պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում նշանակվող վերջնական պատիժը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը»: Այսինքն, եթե համակցություն կազմող հանցանքների համար նշանակվել է կարճաժամկետ ազատազրկում, ապա վերջնական պատիժը չի կարող գերազանցել ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածով սահմանված՝ կարճաժամկետ ազատազրկման առավելագույն ժամկետը՝ 2 ամիսը:

Վերոգրյալ վերլուծության համատեքստում վերադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասում առկա կարգավորումներին, հարկ է նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված են նաև ազատության սահմանափակում և հանրային աշխատանքներ պատժատեսակները, իսկ նույն հոդվածի 2-րդ մասում, որտեղ թվարկված են, թե որ պատժատեսակներն են ի կատար ածվում առանձին, նշված չէ, որ ազատության սահմանափակում և հանրային աշխատանքներ պատժատեսակները պետք է ի կատար ածվեն առանձին: Ինչից հետևում է, որ այդ պատժատեսակներն իրար

գումարելիս նույնպես պետք է համապատասխանեցվեն ազատագրկման 1 օրվան, ուստի այդ պատժատեսակները գումարելիս վերջնական պատիժ պետք է նշանակել ազատագրկումը:

Օրինակ, եթե համակցություն կազմող մի հանցանքի համար նշանակվում է հանրային աշխատանքներ՝ 160 ժամ տևողությամբ, իսկ մյուս հանցանքի համար՝ ազատության սահմանափակում՝ 2 տարի ժամկետով, ապա դրանք հանցագործությունների համակցությամբ գումարելիս պետք է վերջնական պատիժ նշանակվի ազատագրկումը (տվյալ օրինակում դրանք լրիվ գումարելիս որպես պատիժ պետք է նշանակվի 1 տարի 20 օր ժամկետով ազատագրկում):

Կարծում ենք, որ նշվածն արդարացի չէ: Նախ ստացվում է, որ ազատությունից զրկելու հետ չկապված երկու առանձին պատիժներ միմյանց գումարելիս վերջնական պատիժ է սահմանվում ազատագրկումը, այն էլ այն պայմաններում, երբ նույնիսկ հնարավոր է, որ այդ հանցանքներից և ոչ մեկի համար Հատուկ մասի համապատասխան հողվածների սանկցիաներում ազատագրկում պատժատեսակը նախատեսված չլինի: Բացի այդ, անհասկանալի է, թե ինչն է խոչընդոտում նշված պատժատեսակներն առանձին ի կատար ածելուն և ինչն է դրված դրանք գումարելիս ազատագրկման վերածելու տրամաբանության հիմքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում ավելացնել հետևյալ կարգավորումը.

«Հանրային աշխատանքների և ազատության սահմանափակման ձևով պատիժներն իրար գումարելիս ի կատար են ածվում առանձին»:

Կիրառության տեսանկյունից, մեր կարծիքով, խնդրահարույց է նաև ցմահ ազատագրկման մասով ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում առկա կարգավորումը:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Եթե հանցագործությունների համակցության մեջ մտնող հանցանքներից մեկի համար դատարանը նշանակում է ցմահ ազատագրկում, ապա վերջնական **հիմնական**¹⁷ պատիժ է նշանակվում ցմահ ազատագրկումը»:

Նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Եթե համակցության մեջ մտնող հանցանքներից մեկի համար դատարանը նշանակում է ցմահ ազատագրկում, ապա վերջնական հիմնական պատիժը որոշվում է կլանելու միջոցով»:

Այսինքն՝ թեև գործող ՀՀ քրեական օրենսգրքում չի օգտագործվում «կլանում» ձևակերպումը, այնուամենայնիվ նշված նորմը բովանդակային առումով փոփոխության չի ենթարկվել՝ հաշվի առնելով, որ համակցություն կազմող հանցանքներից մեկի համար ցմահ ազատագրկում նշանակելու դեպքում միևնույն է վերջնական հիմնական պատիժ պետք է նշանակվի ցմահ ազատագրկումը:

Բացի այդ, և՛ գործող, և՛ նախկին օրենսդրական վերը նշված կարգավո-

¹⁷ Ընդգծումը մերն է:

րումների դեպքում օգտագործվում է «վերջնական **հիմնական** պատիժ է նշանակվում» ձևակերպումը, ինչից հետևում է, որ համակցություն կազմող հանցանքներից մեկի համար ցմահ ազատազրկում նշանակելիս որպես վերջնական պատիժ ցմահ ազատազրկում նշանակելը վերաբերում է միայն հիմնական պատժատեսակները գումարելուն, ուստի լրացուցիչ պատժատեսակները չեն «կլանվում» ցմահ ազատազրկման մեջ և պետք է գումարվեն ցմահ ազատազրկմանը:

Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ էության, հակասում է վերոնշյալ կարգավորմանը: Մասնավորապես՝ նշված կարգավորման համաձայն՝ «Պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելու, տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու, ինչպես նաև զինվորական ծառայության մեջ սահմանափակման ձևով պատիժները (...) ցմահ ազատազրկման հետ գումարելիս ի կատար են ածվում առանձին»:

Ընդ որում՝ հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված որոշ պատիժներ, մասնավորապես՝ տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը և զինվորական ծառայության մեջ սահմանափակումը կիրառվում են և՛ որպես հիմնական, և՛ որպես լրացուցիչ պատիժներ:

Այսինքն՝ նշված կարգավորումից էլ ստացվում է, որ համակցություն կազմող հանցանքներից մեկի համար ցմահ ազատազրկում նշանակելու, իսկ մյուսի համար քննարկվող հոդվածում թվարկված պատժատեսակներից մեկը նշանակելու դեպքում, այդ պատիժներն ի կատար են ածվում առանձին, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ նշված դեպքում որպես վերջնական հիմնական պատիժ պետք է նշանակել ցմահ ազատազրկում:

Վերոգրյալի հիման վրա հաշվի առնելով, որ հանցագործությունների համակցության դեպքում պատիժ նշանակելու կանոններում սահմանված է, որ, եթե հանցագործությունների համակցության մեջ մտնող հանցանքներից մեկի համար դատարանը նշանակում է ցմահ ազատազրկում, ապա վերջնական հիմնական պատիժ է նշանակվում ցմահ ազատազրկումը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված որոշ պատիժներ կարող են նշանակվել նաև որպես հիմնական պատիժ, ապա կարծում ենք, որ նշված հակասությունը հստակեցման կարիք ունի: Այս առումով առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ.

«Պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելու, տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու, ինչպես նաև

զինվորական ծառայության մեջ սահմանափակման ձևով պատիժները հանրային աշխատանքների, ազատության սահմանափակման, կարճաժամկետ ազատագրկման, կարգապահական գումարտակում պահելու կամ ազատագրկման հետ գումարելիս ի կատար են ածվում առանձին:

Լրացուցիչ պատիժները ցմահ ազատագրկման հետ գումարելիս ի կատար են ածվում առանձին»:

Նախքան դատավճիռ կայացնելը կատարած մեկ այլ հանցանքի համար դատապարտվելու դեպքում պատժի կրման սկիզբը հաշվելը

Ինչպես նախկին, այնպես էլ գործող ՀՀ քրեական օրենսգրքերի կարգավորումների պայմաններում իրավակիրառ պրակտիկայում խնդրահարույց է հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս պատժի կրման սկիզբը հաշվելու հարցն այն դեպքում, երբ դատավճիռը կայացնելուց հետո պարզվում է, որ նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը անձը կատարել է մեկ այլ հանցանք:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պատիժը նշանակվում է սույն հոդվածի կանոններով, եթե դատավճիռ կայացնելուց հետո պարզվի, որ դատապարտյալը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը: Այս դեպքում վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը:

Այսինքն՝ նշված կանոնը սահմանում էր դատավճիռ կայացնելուց հետո մինչ այդ կատարած հանցանքի համար պատիժ նշանակելու կանոնները, այդ թվում՝ արդեն իսկ կրած պատիժը հաշվակցելու հարցը, սակայն չէր հստակեցնում, թե պատժի հաշվակցման դեպքում ե՞րբ պետք է համարել պատժի կրման սկիզբը:

Նշված խնդրի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «(...) առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը վերջնական պատժի ժամկետին **հաշվակցումը** կարող է իրականացվել **երկու եղանակով**.

1. Դատարանը, վերջնական պատիժ նշանակելով, նշանակված պատժից **հանում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը՝ պատժի սկիզբը հաշվելով այդ դատավճիռը կայացնելու օրվանից**:

2. դատարանը, վերջնական պատիժ նշանակելով, **հաշվակցում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը՝ պատժի սկիզբը հաշվելով առաջին դատավճռով սահմանված ժամկետից**:

Թեև նշված երկու եղանակներից ցանկացածի ընտրության դեպքում նշանակված պատժի ժամկետները լրանալու առումով **հետևանքները նույնն են՝ պատժի ժամկետները լրանալու օրերը համընկնում են**, այնուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատժի կրած մասը վերջնական պատժի ժամկետին հաշվակցելու

եղանակի ընտրությունը **կարևորվում է նաև նրանով, որ կախված եղանակի ընտրությունից՝ կարող են վրա հասնել դատապարտյալի համար **անբարենպաստ և նրա վիճակը վատթարացնող այլ իրավական հետևանքներ****: Մասնավորապես, այն ղեկավարում, երբ «՝ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնները կիրառվում են այնպիսի անձի նկատմամբ, որն առաջին գործով կայացված դատավճիգ հետո **անընդմեջ գտնվում է անազատության մեջ**, սպա վերը նշված երկու եղանակներից առաջինի կիրառման ղեկքում դատապարտյալի՝ պայմանական վաղաժամկետ ազատվելու **իրավունքը ծագում է ավելի ուշ**, քան այն ղեկքում, երբ երկրորդ կանոնի կիրառմամբ նրա նկատմամբ նշանակված պատժի ժամկետի սկիզբը հաշվվում է առաջին դատավճռով սահմանված ժամկետից»¹⁸:

Գործող «՝ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ պատիժը նշանակվում է սույն հոդվածի կանոններով, եթե դատավճիռ կայացնելուց հետո պարզվի, որ դատապարտյալը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը: Այս ղեկքում վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը և **պատժի կրման սկիզբ է համարվում առաջին դատավճռով նշանակված պատժի կրման սկիզբը**:

Հարկ է նշել, որ թեև կարևոր է, որ «՝ գործող օրենսգրքում օրենսդրական մակարդակով փորձ է արվել կարգավորել նաև տվյալ ղեկքում պատժի կրման սկիզբը որոշելու հարցը, այնուամենայնիվ գտնում ենք, որ նշված կարգավորումը խնդրահարույց է և թերի:

Մասնավորապես՝ մեջբերված դրույթը սահմանում է, որ այս ղեկքում վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը և **պատժի կրման սկիզբ է համարվում առաջին դատավճռով նշանակված պատժի կրման սկիզբը**:

Սակայն նշված կանոնը, ըստ էության, կարգավորում է միայն այն ղեկքերը, երբ անձն առաջին դատավճռով նշանակված պատիժը կրել է անընդմեջ, անընդմեջ եղել է անազատության մեջ: Մինչդեռ պատժի սկիզբը հաշվելու այս կանոնը չի կարող կիրառելի լինել այն ղեկքում, երբ հանցանք կատարած անձի՝ առաջին դատավճռով նշանակված պատժի կրումը ժամանակային առումով չի եղել անընդմեջ, օրինակ, եթե անձը պայմանական վաղաժամկետ ազատվել է առաջին դատավճռով նշանակված պատժի կրումից և պարզվել է, որ վերջինը մինչև դատապարտվելը կատարել է այլ հանցանք: Նշված ղեկքում պատժի կրման սկիզբը չի կարող համարվել առաջին դատավճռով նշանակված պատժի կրման սկիզբը, քանի որ դատապարտյալն առաջին դատավճռով նշանակված պատիժը

կրելուց հետո որոշակի ժամանակահատված գտնվել է ազատության մեջ և փաստացի պատիժ չի կրել:

¹⁸ Տե՛ս «՝ վճարելի դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԷԳ/0124/01/09 որոշումը:

Հետևաբար, կարծում ենք, որ պատժի կրման սկիզբը որոշելու մասով ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 11-րդ մասում առկա կարգավորումը նշված դեպքում կիրառելի չէ և այդ դեպքում պատժի կրման սկիզբը պետք է հաշվարկվի այլ կարգով: Մասնավորապես՝ կարծում ենք, որ այդ դեպքում դատարանը, վերջնական պատիժ նշանակելով, նշանակված պատժին պետք է հաշվակցի (հանի) առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը՝ պատժի սկիզբը հաշվելով այդ դատավճիռը կայացնելուց հետո նշանակված վերջնական պատիժը փաստացի ի կատար ածելու պահից:

Հետևաբար, առաջակում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 11-րդ մասը սահմանել հետևյալ խմբագրությամբ.

«(...) Այս դեպքում վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը: Եթե երկրորդ դատավճիռը կայացնելիս անձն անընդմեջ կրել է առաջին դատավճռով նշանակված պատիժը, սպա պատժի կրման սկիզբ է համարվում առաջին դատավճռով նշանակված պատժի կրման սկիզբը, հակառակ դեպքում երկրորդ դատավճռով նշանակված պատժին պետք է հաշվակցել առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը՝ պատժի սկիզբը հաշվելով վերջնական պատիժը փաստացի ի կատար ածելու պահից»:

Եզրակացություն

Սույն աշխատության շրջանակներում իրականացված հետազոտությունների և վերլուծության լույսի ներքո ստորև ներկայացնում ենք հանցագործությունների համակցության դեպքում պատիժ նշանակելու հետ կապված մեր եզրահանգումներն ու առաջարկությունները:

Թեև օրենսդրական հստակ պահանջ առկա չէ, սակայն կարծում ենք, որ հանցագործությունների համակցության դեպքում վերջնական պատիժ նշանակելիս դատարանները պարտավոր են նշել, թե համակցություն կազմող հանցագործության համար նշանակված պատիժներից յուրաքանչյուրից որ չափը կամ ժամկետն է գումարվում: Նշվածը բխում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից:

Առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 9-րդ մասում նախատեսել հնարավորություն հանցագործությունների համակցության դեպքում մյուս պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում նշանակվող վերջնական պատիժն Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը գերազանցելու հնարավորություն: Մասնավորապես՝ հանցագործությունների համակցության դեպքում մյուս պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում նշանակվող վերջնական պատիժը կարող է գերազանցել սույն օրենսգրքի Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը՝ դրա մեկ երրորդի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը որոշելիս մասնակի գումարվող պատիժն առնվազն այդ պատժատեսակի համար Ընդհանուր մասով նախատեսված նվազագույն չափով պետք է գումարվի, իսկ գումարման արդյունքում վերջնական պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 9-րդ մասերով նախատեսված առավելագույն չափից կամ ժամկետից ավելի ստացվելու դեպքում վերջնական պատիժը պետք է նվազեցվի և հավասարեցվի այդ ժամկետներին:

ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 10-րդ մասում օգտագործվում է «հիմնական պատժին կարող են միացվել լրացուցիչ պատիժներ» ձևակերպումը, ինչից ստացվում է, որ դատարանը, համակցություն կազմող հանցանքների կամ դրանցից մեկի համար լրացուցիչ պատիժ նշանակելով, կարող է և այն չգումարել վերջնական պատժին, ինչը մեր գնահատմամբ արդարացի չէ: Հետևաբար, առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 10-րդ մասը սահմանել հետևյալ կերպ.

«Հանցագործությունների համակցության դեպքում նշանակված հիմնական պատժին միացվում են համակցությունը կազմող հանցանքների համար նշանակված լրացուցիչ պատիժները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածը կիրառման տեսանկյունից կարող է առաջացնել որոշ խնդիրներ: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ազատության սահմանափակում և հանրային աշխատանքներ պատժատեսակներն իրար գումարելիս դրանք պետք է համապատասխանեցվեն ազատազրկման 1 օրվան և այդ պատժատեսակները գումարելիս վերջնական պատիժ պետք է նշանակել ազատազրկումը, ինչը մեր կարծիքով արդարացի չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում ավելացնել հետևյալ կարգավորումը.

«Հանրային աշխատանքների և ազատության սահմանափակման ձևով պատիժներն իրար գումարելիս ի կատար են ածվում առանձին»:

Կիրառության տեսանկյունից մեր կարծիքով խնդրահարույց է նաև ցմահ ազատազրկման մասով ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում առկա կարգավորումը, որը հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 8-րդ մասին:

Այս առումով առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ.

«Պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելու, տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից

գրկելու, օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու, ինչպես նաև գինվորական ծառայության մեջ սահմանափակման ձևով պատիժները հանրային աշխատանքների, ազատության սահմանափակման, կարճաժամկետ ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման հետ գումարելիս ի կատար են ածվում առանձին:

Լրացուցիչ պատիժները ցմահ ազատազրկման հետ գումարելիս ի կատար են ածվում առանձին»:

ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 11-րդ մասում ամրագրված՝ պատժի կրման սկիզբը որոշելուն վերաբերող կարգավորումը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ անձն առաջին դատավճռով նշանակված պատիժը կրել է անընդմեջ, անընդմեջ եղել է անազատության մեջ:

Հետևաբար, առաջակում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 11-րդ մասը սահմանել հետևյալ խմբագրությամբ.

«(...) Այս դեպքում վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը: Եթե երկրորդ դատավճիռը կայացնելիս անձն անընդմեջ կրել է առաջին դատավճռով նշանակված պատիժը, ապա պատժի կրման սկիզբ է համարվում առաջին դատավճռով նշանակված պատժի կրման սկիզբը, հակառակ դեպքում երկրորդ դատավճռով նշանակված պատժին պետք է հաշվակցել առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը՝ պատժի սկիզբը հաշվելով վերջնական պատիժը փաստացի ի կատար ածելու պահից»:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ մտել՝ 01.07.2022 թ.,
The Criminal Code of the Republic of Armenia, HO-199-N, adopted on 05.05.2021, entered into force on 01.07.2022,
2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք ՀՕ-528-Ն, ընդունվել է 18.04.2003 թ., ուժի մեջ է մտել 01.08.2003 թ.,
The Criminal Code of the Republic of Armenia, HO-528-N, adopted on 18.04.2003, entered into force on 01.08.2003,
3. ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴ3/0046/01/13 որոշումը,
Decision of the Court of Cassacion of 28 November 2013 on criminal case No. SD3/0046/01/13,
4. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԷԴ/0124/01/09 որոշումը,
Decision of the Court of Cassacion of 27 August 2010 on criminal case No. EED/0124/01/09,
5. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշումը,
Decision of the Court of Cassacion of 26 March 2010 on criminal case No. EKD/0058/11/09,
6. Թիվ ԵԴ/0321/01/18, թիվ ԱՎԴ1/0068/01/21, թիվ ԵԴ/1141/01/19, թիվ ԵՇԴ/0073/01/13, թիվ ԵԿԴ/0116/01/12, թիվ ԵԱԶԴ/0065/01/14, թիվ ԵԴ1/0335/01/23, թիվ ԱՎԴ/0064/01/16, թիվ ԵԷԴ/0054/01/13, թիվ ԵԴ/0864/01/20, թիվ ԵԴ/0050/01/19, թիվ ԿԴ/0167/01/20 քրեական գործերով դատարանի դատավճիռները,
Verdicts of the court on criminal cases No. ED/0321/01/18, No. AVD1/0068/01/21, No. ED/1141/01/19, No. ESHD/0073/01/13, No. EKD/0116/01/12, No. EAQD/0065/01/14, No. ED1/0335/01/23, No. AVD/0064/01/16, No. EED/0054/01/13, No. ED/0864/01/20, No.ED/0050/01/19, No.KD/0167/01/20,
7. Агаев И.Б. Совокупность преступлений: понятие, виды и наказуемость. М., 2003,
Agaev I.B. Cumulative crimes: The notion, types and punishability, M., 2003,
8. Божанов М.И. Назначение наказания по советскому уголовному праву. Киев, 1980,
Bozhanov M.I. Assignment of punishment according to Soviet criminal law, Kiev, 1980,
9. Вележев С.И., Марков В.П., Третьяков И.Л.. Назначение наказания в виде

- обязательных работ по совокупности преступлений. Вестник Санкт-Петербургского университета МВД России N 1 (29) 2006,
Belezhev S.I, Markov V.P, Tretyakov I.L. Assignment of punishment in the form compulsory works by Cumulative crimes. Vestnik of Saint Petersburg University. MIA of Russia N 1 (29) 2006,
10. Б. Здравомыслов. Уголовное право Российской Федерации. Особенная часть: Юрист, 1996,
B. Zdravomislov, Criminal law of the Russian Federation. Special part. Yurist, 1996,
11. Ларина Л.Ю. Человек: Преступление и наказание. Определение максимального предела наказания по совокупности преступлений. N 1 (68), 2010,
Larina L.YU. Human, Crime and Punishment. Determination of the maximum limit of punishment for Cumulative crimes. N 1 (68), 2010,
12. Становский М.Н.. Назначение наказания. СПб., 1999,
Stanovskih M.N. Assignment of punishment. SPb., 1999,
13. Цокунова И.М.. Уголовные наказания имущественного характера: виды, эволюция, перспективы: Автореф. диц. ... канд. юрид. наук. Краснодар, 1997,
Cokunova I.M, property penalties: Types, evolution, perspectives, dissertation abstracts. Ph.D. in Law, Krasnodar, 1997,
14. www.datalex.am (մուտք՝ 26.02.2024) (access 26.02.2024).

Karen Sukiasyan

Senior Prosecutor of the Prosecutor's Office of Yerevan City

CERTAIN PRACTICAL ISSUES OF THE LEGAL REGULATION OF IMPOSITION OF PUNISHMENT FOR CUMULATION OF CRIMESS¹

Abstract

The article is about a discussion on certain practical issues related to the imposition of punishment for cumulation of crimes in the Criminal Code of the Republic of Armenia.

Although, a significant part of the problematic issues concerning imposition of punishment by cumulation of crimes has been resolved alongside development of the criminal legislation, there are still a number of issues in the Criminal Code of the Republic of Armenia that are not clearly resolved or are perceived ambiguously in terms of content.

Taking into account the aforementioned, the article touches upon the rules for totally or partially adding punishments in case of cumulation of crimes, certain issues on imposing supplementary punishments and adding to the final punishment along with the basic punishments in case of cumulation of crimes and the regulations existing in the Criminal Code of the Republic of Armenia with regard to determining the punishments while adding them. What is also considered is the regulation concerning the procedure for calculating the start of the punishment in case of being convicted for another criminal offence committed before the first verdict was rendered. The positions expressed by the Court of Cassation of the Republic of Armenia on imposing punishment by cumulation of crimes are also presented.

While conducting the mentioned study, the regulations that are incomplete and give rise to misinterpretation in terms of law were identified, and proposals for improvements in the law for imposing punishment by cumulation of crimes were presented.

Keywords: cumulation of crimes; types of punishment; imposition of punishment; principles of imposing punishment; adding punishments; the start of punishment term; supplementary punishments; life sentence.

¹ The article was presented on 01.03.2024 and was reviewed on 14.05.2024.

Карен Сукиасян

Старший прокурор прокуратуры города Ереван

НЕКОТОРЫЕ ПРАКТИЧЕСКИЕ ВОПРОСЫ ЮРИДИЧЕСКОГО УРЕГУЛИРОВАНИЯ НАЗНАЧЕНИЯ НАКАЗАНИЯ ПО СОВОКУПНОСТИ ПРЕСТУПЛЕНИЙ¹

Абстракт

Данная статья посвящена исследованию некоторых практических вопросов назначения наказания за совокупность преступлений в Уголовном кодексе Республики Армения. Хотя по мере развития уголовного законодательства значительная часть проблемных вопросов, касающихся назначения наказания за сочетание преступлений, решена в Уголовном кодексе РА все еще есть некоторые вопросы, которые не имеют четкого решения или понимаются неоднозначно.

С учетом изложенного в статье упомянуты правила полного или частичного суммирования наказаний при совокупности преступлений, некоторые вопросы назначения дополнительных наказаний при совокупности преступлений и сложения. Обсуждалось также порядок отсчета начала наказания в случае осуждения за другое преступление, совершенное до вынесения первого приговора. Также были представлены позиции, выраженные Кассационным судом Республики Армения относительно назначения наказания за совокупность преступлений.

При проведении указанного исследования были выделены некоторые проблемные вопросы регулирования УК несовершеннолетние законодательные нормы и нацеленное на совершенствование законодательного урегулирования совершенствование процесса назначения наказания за совокупность преступлений.

Ключевые слова: совокупность преступлений; виды наказания; назначение наказания; цели наказания; сложение наказаний; начало срока отбывания наказания; дополнительные наказания; пожизненное лишение свободы.

¹ Статья была представлена 01.03.2024 и прошла рецензирование 14.05.2024.

Ռոզա Բախչյան

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ

ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ¹

Համառոտագիր

Հոդվածը վերաբերում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտին, այն կարգավորող օրենսդրությանը, մասնավորապես՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու չափանիշները սահմանող իրավանորմերի վերլուծությանը՝ վեր հանելով դրանցում առկա հիմնախնդիրները:

Հիմքում ունենալով վերջին շրջանում Հայաստանի Հանրապետությունում քրեական քաղաքականության մեղմացման և մարդասիրության սկզբունքի հիման վրա վերականգնողական արդարադատությանն անցնելու քաղաքականությունը, ինչպես նաև անձի վերասոցիալականացումը որպես պատժի նպատակ սահմանելու հանգամանքը՝ աշխատանքում ընդգծվել է դատապարտյալներին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի կարևորությունը թե՛ դատապարտյալի, թե՛ պետության և թե՛ հասարակության համար:

Հոդվածում, մասնավորապես, անդրադարձ է կատարվել դատապարտյալի պատշաճ վարքագծի և նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատող չափանիշներին, այդ չափանիշների գնահատման համար կազմվող զեկույցներին, զեկույցները բալային միավորներով գնահատելու և դրանց գնահատման արդյունքում դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու նպատակահարմարության քննարկման հանգամանքին:

Կատարված հետազոտության արդյունքում հեղինակն առաջարկել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման կատարելագործմանն ուղղված հնարավոր տարբերակներ, որոնք գործնականում քննարկվող ինստիտուտի կիրառումը կդարձնեն առավել դյուրին և արդյունավետ, կերաշխավորեն անձանց, այդ թվում՝ դատապարտյալների հիմնարար իրավունքները, կնպաստեն ազատությունից զրկված անձանց՝ հասարակություն վերադառնալու և դրա լիիրավ անդամ դառնալու գործընթացին, իսկ զեկույցները կազմող և դրանք գնահատող մարմինները հնարավորություն կունենան իրա-

¹ Հոդվածը ներկայացվել է 01.09.2023 թ., գրախոսվել է 29.02.2024 թ.:

տեսական, պարզ և հստակ չափանիշների գնահատման արդյունքում կազմել էլ ավելի փաստարկված և հիմնավորված զեկույցներ, որոնք կհիմնվեն ոչ միայն փաստաթղթերում առկա տեղեկատվության, այլև դատապարտյալի հետ անմիջական շփման արդյունքում նրա հոգեվիճակի, սոցիալական կարգավիճակի և հասարակություն վերադառնալուն պատրաստ լինելու հանգամանքների հետազոտման վրա:

Հոդվածում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու համար անհրաժեշտ՝ գնահատման ենթակա յուրաքանչյուր չափանիշ հեղինակի կողմից առանձին վերլուծվել է, և այդ չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման համար ներկայացվել է համապատասխան դիտարկում:

Հիմնաբառեր - դատապարտյալ, քրեակատարողական հիմնարկ, պայմանական վաղաժամկետ ազատում, պատշաճ վարքագիծ, նոր հանցանք կատարելու հավանականություն, զեկույց, բալային համակարգ, վերասոցիալականացում:

Ներածություն

Սույն աշխատանքում ներկայացվում են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտը, այն կարգավորող ներպետական օրենսդրությունը, վեր են հանվում ինստիտուտի կիրառման ընթացքում առաջ եկող մի շարք խնդիրներ և փորձ է արվում փնտրել ուղիներ և միջոցներ՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի կիրառումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված և պատժից ազատելու կառուցակարգերի մեջ իր ուրույն տեղը զբաղեցրած պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտը քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց հնարավորություն է ընձեռում կրճատել պատժի կրման ժամանակահատվածը, ավելի վաղ վերադառնալ հասարակություն և կրկին դառնալ հասարակության լիիրավ անդամ: Հայաստանի Հանրապետության ներկայիս քրեական օրենսդրությունը դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու հնարավորություն է ընձեռում այն դեպքում, երբ դատապարտյալը կանգնած է ուղղման ճանապարհին և կարիք չունի դատավճռով սահմանված պատժի ժամկետն ամբողջությամբ կրելու: Եվ չնայած այն հանգամանքին, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը ներկայումս լայն կիրառություն ունի, այնուամենայնիվ, հարց է առաջանում գործնականում դրա կիրառման որակի մասին: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու համար ներկայացվող չափանիշների իրատեսական լինելը, այդ հիմքով պատժի կրումից ազատելու ողջ գործընթացի ճիշտ կազմակերպումը և իրականացումը կարող է նպաստել քննարկվող ինստիտուտի նպատակային նշանակությամբ կիրառմանը: Թեմայի արդիականություն:

նը պայմանավորված է նրանով, որ պայմանական վաղաժամկետ ազատունը կարգավորող իրավանորմերի անկատարությունը կարող է հանգեցնել օրինականության, արդարության և մարդասիրության սկզբունքների ոտնահարմանը, բացասաբար անդրադառնալ դատապարտյալների ճակատագրի վրա, նպաստել կրկնահանգագործության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև խոչընդոտել ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացմանը:

Հանցավորության նկատմամբ պետության դրսևորած կոշտ վերաբերմունքը հանգեցրել է ազատագրկման կիրառման աճի, հետևաբար և՛ բանտերի գերբնակեցման: Նշված արդիական խնդրի լուծման համար որպես տարբերակ է առաջարկվում նաև պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման այնպիսի ճկուն համակարգի ստեղծումը, որով ուղղման ճանապարհին կանգնած և պատժի մնացած մասը կրելու կարիք չունեցող դատապարտյալներին ժամանակից շուտ ազատության մեջ հայտնվելու հնարավորություն կընձեռվի:

Հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել և վերլուծել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի իրավական հիմքերը և կիրառման առանձնահատկությունները, առկա հիմնախնդիրները և դրանց հիման վրա մշակել առաջարկներ՝ դրա կատարելագործման և կիրառման արդյունավետությունը բարձրացնելու համար: Այդ նպատակներին համապատասխան սահմանվել է փոխկապակցված խնդիրների հետևյալ շրջանակը. ներկայացնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի ընդհանուր բնութագիրը և ՀՀ օրենսդրական կարգավորումները, վերլուծել դրանք, վեր հանել պրակտիկայում առաջ եկող խնդիրները և ներկայացնել առաջարկներ՝ ոլորտում առկա խնդիրները լուծելու համար:

Գլուխ I Պայմանական վաղաժամկետ ազատունը որպես պատիժը կրելուց ազատելու պայմանական տեսակ

§1. Պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի դերը և նշանակությունը

Հանցագործությունը քրեաիրավական բացասական երևույթ է, և դրա աճը խաթարում է պետության գործունեության բնականոն ընթացքը, սպառնում պետականության հիմքերին, վտանգի մեջ դնում անձանց՝ սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքները: Այս դեպքում պետության պոզիտիվ պարտականությունն է՝ պաշտպանել օրենքով նախատեսված շահերը հանցավոր ոտնձգություններից, կանխել հանցագործությունները, սպահովել հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության, պատժի կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցների ենթարկելու կամ քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու արդարացիությունը, ինչպես նաև հասարակությունում հանցանք կատարած անձի վերափնտեգրումն ու վերասոցիալականացումը:

Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակվում է բացառապես ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատիժ: Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից կամ ազատություններից սույն օրենսգրքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ: Պատժի նպատակներն են՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները²: Ընդհանուր առմամբ, քրեական արդարադատությունն ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում պատժիչ բնույթ է կրում, որի հիմնական նպատակը հանցանքները հայտնաբերելն ու հանցագործություն կատարած անձանց պատժի ենթարկելն է: Նման մոտեցման պայմաններում ազատագրված անձը որոշակի ժամկետով կամ ցմահ մեկուսացվում է հասարակությունից, ինչի արդյունքում նվազում են նրա վերաինտեգրման և վերասոցիալականացման հնարավորությունները:

Հարկ է արձանագրել, սակայն, որ վերջին ժամանակներում Հայաստանի Հանրապետության քրեական համակարգը պատժիչ բնույթից անցում է կատարում վերականգնողականի, որն այլընտրանք է ավանդական պատժողական համակարգին և որի հիմնական գաղափարը հանցանք կատարած անձանց վերասոցիալականացումն է: Այդ մասին են վկայում նաև 2021 թվականի մայիսի 05-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով «այսուհետ նաև՝ Օրենսգիրք» ամրագրված պատժի նպատակները, որոնք, ի տարբերություն նախորդ քրեական օրենսգրքի, որպես պատժի նպատակ են սահմանում, ի թիվս այլնի, ոչ թե պատժի ենթարկված անձի ուղղումը, այլ պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը: Բացի այդ, Օրենսգիրքը նախատեսում է պատիժների ավելի ընդլայնված համակարգ, ինչպես նաև պատժից ազատելու ինքնուրույն պայմանական և ոչ պայմանական տեսակներ, որոնք պետության կողմից մարդասիրական քաղաքականության դրսևորում են և նպատակ են հետապնդում պաշտպանել հասարակության բոլոր անդամների, այդ թվում նաև՝ հանցանք կատարած անձանց շահերը:

Քրեական իրավունքի գիտությունը հնարավոր է համարում պատժի նպատակներին հասնելը մինչև դատարանի կողմից նշանակված պատժի ամբողջ ժամանակահատվածի լրանալը: Օրենսդիրն այդ հնարավորությունը նախատեսել է պատժից ազատման ինստիտուտի շրջանակներում ընդհանրապես և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի կիրարկման միջոցով մասնավորապես:

² Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն ընդունված 2021 թվականի մայիսի 05-ին, ուժի մեջ է 2022 թվականի հուլիսի 1-ից, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=181303>

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատումը, ըստ գիտնականների մեծամասնության, քրեական իրավունքում մարդասիրության սկզբունքի իրականացման ամենավառ ձևն է: Տեսաբանների գերակշիռ մասը կարծում է, որ պայմանական վաղաժամկետ ազատումը պատժի կրման ավարտական փուլն է և հանդիսանում է դատապարտյալներին խրախուսելու միջոց:

Յու. Մ. Տկաչևսկին կարծում է, որ պայմանական վաղաժամկետ ազատումն իրականացվում է պատժի կատարումը պայմանական վաղաժամկետ դադարեցնելու եղանակով: Նա նշում է, որ պայմանական վաղաժամկետ ազատումը դատապարտյալին պատժի հետագա փաստացի կրումից ազատումն է՝ պայմանով, որ նա պարտադիր կերպով պահպանի օրենքում թվարկված և դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները: Միաժամանակ, Տկաչևսկին գտնում է, որ պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը լինում է երկու տեսակի՝ ամբողջական և թերի (մասնակի): Այս հարցը, նրա կարծիքով, կախված է դատարանի դատավճռով սահմանված լրացուցիչ պատժից ազատվելուց: Եթե դատապարտյալը պայմանական վաղաժամկետ ազատվի հիմնական և բոլոր լրացուցիչ պատժներից, ապա այդպիսի ազատումը կլինի ամբողջական: Եթե դատարանը նման որոշում չկայացնի և լրացուցիչ պատժի կատարումը շարունակվի, ապա այս ազատումը կլինի մասնակի³: Պայմանական վաղաժամկետ ազատման այս մոտեցումը կիսում է նաև Ա. Վ. Պուշկինը⁴:

Վ. Կ. Դույնովը, օրինակ, գտնում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատումը խթանիչ բնույթի քրեաիրավական ազդեցության միջոցներից է, ինչի արդյունքում դատապարտյալին որոշակի պայմաններով հնարավորություն է տրվում վաղաժամկետ ազատվել պատժի հետագա կրումից⁵:

Ա. Վ. Նաումովը նշում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատումը դատապարտյալներին խրախուսելու միջոց է և միաժամանակ նպաստում է դատապարտյալների օրինակելի վարքագծին ինչպես պատժի կրման ընթացքում, այնպես էլ ազատվելուց հետո⁶:

Պայմանական վաղաժամկետ ազատումը պատժի կրման ավարտական փուլ համարելով՝ Ն. Ա. Բելյանը գտնում է, որ պետք է նախատեսել ազատագրվման կրման փուլային համակարգ՝ բաղկացած 3 կամ 4 փուլից, որոնցից վերջինը դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատումն է⁷: Մ. Ա. Եֆիմովը նույն-

³ Ткачевский Ю. М., Условно-досрочное освобождение от отбывания наказания. // Вестник Московского университета, Серия 11. Право. 1997. № 2. С. 16-17.

⁴ Комментарий к Уголовному Кодексу Российской Федерации (постатейный) / Под. ред. Н.,Г. Кадникова. М.: Книжный мир. 2016. С.197 (автор комментария – А.В. Пушкин).

⁵ Дуюнов В. К., Уголовно-правовое воздействие: теория и практика. М.: Научная книга. 2013. С. 400-401.

⁶ Уголовное право России. Общая часть: Учебник / Под ред. В. Н. Кудрявцева, В. В. Лунеева, А. В. Наумова. М.: Юрист, 2006. С. 466.

⁷ Беляев Н. А., Цели наказания и средства их достижения в исправительно-трудовых учреждениях. Избранные труды СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2003. С. 449.

պես կարծում է, որ պայմանական վաղաժամկետ ազատումը պատժի կրման վերջին փուլն է⁸:

Հայաստանի Հանրապետությունում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտը կարգավորող օրենսդրական նորմերը բազմիցս փոփոխության են ենթարկվել, ինչը խոսում է այն մասին, որ պետությունն ինքը շահագրգռված է ինստիտուտի կիրառումն ապահովող նորմերի զարգացմամբ:

Քննարկվող ինստիտուտի գործադրմամբ անձը պատժից ազատվում է պայմանական, ինչը ենթադրում է, որ պատժի նպատակները, ներառյալ՝ անձի ուղղումը, դեռ լիովին իրականացված չեն: Այսինքն՝ պայմանական վաղաժամկետ ազատման ենթակա է այն դատապարտյալը, որի անձի, դրսևորած վարքագծի վերաբերյալ տվյալների և այլ հանգամանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նա կանգնած է ուղղման ճանապարհին: Այս դեպքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքում անձի կողմից օրինապահ վարքագիծ դրսևորելու հավանականության աստիճանը բավարար է թե՛ հասարակական անվտանգության և թե՛ հասարակությունում նրա վերաինտեգրման տեսանկյունից, իսկ պատժի նպատակները հնարավոր է վերջնականապես իրագործել համապատասխան վերահսկողության ներքո դատապարտյալի՝ ազատության մեջ գտնվելու պայմաններում⁹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի¹⁰ համաձայն՝ ցանկացած բանտարկյալ պետք է վաղաժամկետ ազատ արձակվելու հարցի վերաբերյալ պարբերաբար քննարկման իրավունք ունենա, իսկ այդ իրավունքը պետք է պատշաճ կերպով հաշվի առնվի և ապահովվի: Դատարանը նաև նշել է, որ բանտարկությունը, առանց պայմանական ազատվելու հնարավորության, հանգեցնում է նրան, որ դատապարտյալը երբեք իր մեղքը քավելու հնարավորություն չի ունենում, որքան էլ բռնած լինի ուղղման ճանապարհը և որքան էլ բացառիկ լինի նրա առաջընթացը վերասոցիալականացման գործընթացում:

Նախարարների կոմիտեի կողմից 2003 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունված Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)22 հանձնարարականը¹¹ (այսուհետ՝ Հանձնարարական) խրախուսում է պայմանական

⁸ Ефимов М. А., Некоторые вопросы условно-досрочного и досрочного освобождения. // Правоведение, 1958. № 1. С. 8.

⁹ Տե՛ս թիվ ՄԳ3/0010/12/18 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը, Սկզբնաղբյուր՝ ՀՀԴՏ 2019.09.20/61(1514).1, Հոդ. 818.26 <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=133978>

¹⁰ Տե՛ս, օրինակ, Vinter and Others v. the United Kingdom [GC] - 66069/09, 130/10 and 3896/10 Judgment 9.7.2013 https://www.echr.coe.int/d/reports_recueil_2013-iii?p_1_back_url=%2Fsearch%3Fq%3DVinter%2Band%2BOthers%2Bv.%2Bthe%2BUnited%2BKingdom

¹¹ ԵՄ նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)22 հանձնարարականը անդամ երկրներին՝ պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ, ընդունված 2003 թվականի սեպտեմբերի 24-ին, <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800ccb5a>

վաղաժամկետ ազատման կիրառումը¹² բանտարկյալների ապաստոցիալիզացումից խուսափելու, վերաինտեգրումը բարելավելու, ազատության բացասական հետևանքները վերացնելու և հանրային անվտանգությունը բարելավելու նպատակով:

§2. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ՀՀ ներպետական կարգավորումները

Քրեական օրենքը կարգապահական գումարտակում պահելու կամ ազատագրվման ձևով պատիժ կրող անձանց, որոնք կրել են համապատասխան նվազագույն ժամկետը, հնարավորություն է ընձեռում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե նրանց վերաստցիալականացումը հնարավոր է առանց պատժի մնացած մասը կրելու:

Հայաստանի Հանրապետությունում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացը կարգավորվում է Օրենսգրքի 85-րդ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 132-134-րդ և 156-րդ հոդվածների դրույթներով, ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի N 336-Լ թիվ հրամանով:

Օրենսգրքի 85-րդ հոդվածով սահմանվում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հիմքերը և դրա համար դատապարտյալին ներկայացվող պահանջները:

Քննարկվող հոդվածով պայմանական վաղաժամկետ ազատման համար նախատեսվում է ինչպես պատժի նվազագույն ժամանակահատվածը (Օրենսգրքի 85-րդ հոդվածի 4-րդ մաս), որը պետք է կրի դատապարտյալը, այնպես էլ ոչ հստակ չափանիշներ, որի դեպքում պետք է ձևավորվի համոզվածություն առ այն, որ դատապարտյալի վերաստցիալականացումը հնարավոր է առանց պատժի մնացած մասը կրելու:

Այսպես, Օրենսգրքի 85-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կարգապահական գումարտակում պահելու կամ ազատագրվման ձևով պատիժ կրող դատապարտյալը դատարանի կողմից պայմանական վաղաժամկետ կարող է ազատվել պատժից, եթե դատապարտյալը կրել է պատժի՝ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված համապատասխան նվազագույն ժամկետը, և դատարանը դատապարտյալի պատշաճ վարքագիծը և նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատող հանգամանքների վերաբերյալ իրավասու մարմինների ներկայացրած զեկույցների ուսումնասիրման հիման վրա համոզվում է, որ դատապարտյալի վերաստցիալականացումը հնարավոր է առանց պատժի մնացած մասը կրելու, քանի որ՝

¹² Այն իր նախաբանում նշում է հետևյալը. «Ընդունելով, որ պայմանական ազատումը կրկնահանգադրծությունները կանխելու և սոցիալական վերականգնումը խթանելու ամենաարդյունավետ ու ամենակառուցողական միջոցներից մեկն է, որն ապահովում է ազատությունից զրկված անձի ծրագրված, օժանդակվող ու վերահսկվող վերաինտեգրումը հասարակությունում»:

- 1) պատժի կրման ընթացքում նա դրսևորել է պատշան վարքագիծ և
- 2) նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է: (...):»:

Փաստորեն, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու համար գնահատման է ենթարկվում ազատագրվման ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագիծը՝ ներկային վերաբերող գործոնը, և պայմանական վաղաժամկետ ազատվելուց հետո դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը՝ սպագայի գործոնը: Արդյունքում՝ դատարանը, գնահատման ենթարկելով օրենքով նախատեսված հանգամանքները, հանգում է հետևության դատապարտյալի դրսևորած վարքագծի և նոր հանցանք կատարելու հավանականության վերաբերյալ և որոշում, թե արդյո՞ք դատապարտյալի վերասոցիալականացումը հնարավոր է առանց պատժի մնացած մասը կրելու:

Քրեական օրենքով սահմանվում են պատժի հետագա կրման նպատակահարմարությունը որոշելու հիմնական չափանիշները և այն հանգամանքները, որոնք դատարանը պարտավոր է պատշան վերլուծության ենթարկել՝ այդ չափանիշներից յուրաքանչյուրի առկայության կամ բացակայության մասին օրինական և հիմնավորված եզրահանգում կատարելու համար:

Անձին ազատությունից զրկելու և քրեակատարողական հիմնարկում պահելու հիմնական նպատակը նրա ուղղումն ու վերասոցիալականացումն է, նրա ընկալումների, մտածելակերպի և դիրքորոշումների փոփոխությունը կատարած արարքն այլ տեսանկյունից ընկալելու, գիտակցելու և սխալը հասկանալու վերաբերյալ: Հանցանք կատարած անձի ուղղման ողջ գործընթացն արտացոլվում է նրա վարքագծում և հենց վարքագիծն է հանդիսանում այն հիմնական գործոնը, որը վկայում է դատապարտյալի ուղղման մասին:

Այսպես, քննարկվող հոդվածով դատապարտյալի պատշան վարքագծի մասին է վկայում, հետևաբար և այն գնահատելիս հաշվի է առնվում, առաջին հերթին, պատժի կրման ընթացքում խրախուսանքի կամ տույժի առկայությունը: ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը դատապարտյալներին խրախուսելու համար պահանջում է դրական վարքագծի դրսևորում, կա՛մ աշխատանքի, կա՛մ ուսման նկատմամբ բարեխիղճ վերաբերմունք¹³՝ չսահմանելով, սակայն, դրական վարքագիծ հասկացությունը:

Դատապարտյալը քրեակատարողական հիմնարկում գտնվելու ժամանակահատվածում ունի մի շարք պարտականություններ, որոնցից հարկ է առանձնացնել պատժի կրման կարգն ու պայմանները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների, պատիժը կատարող հիմնարկի և աշխատակիցների օրինական պահանջների կատարումն ու պահպանումը:

¹³ Տե՛ս ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, ՀՕ-246-Ն, ընդունված 2022 թվականի հունիսի 15-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 01-ից, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=180958>

Դատապարտյալը դրական վարքագիծ դրսևորելու համար առաջնահերթ պետք է կատարի օրենսդրությամբ նախատեսված իր պարտականությունները: Սակայն ակնհայտ է, որ խրախուսվելու կամ անվտանգության ավելի ցածր աստիճան ունեցող անվտանգային գոտի տեղավորվելու համար բավարար չէ միայն օրենսդրությամբ ամրագրված պարտականությունները կատարելու հանգամանքը, քանզի նրա կողմից պատիժը կրելու կարգը և պայմանները սահմանող իրավական ակտերի համապատասխան պահանջները պատշաճ պահպանելը նրա պարտականությունն է: Խրախուսվելու պարագայում դատապարտյալից պահանջվում է դրսևորել նաև այնպիսի վարքագիծ, որն իր ամբողջության մեջ կվկայի դրական վարքագիծ դրսևորելու մասին, հիմք կհանդիսանա նրան խրախուսելու և այդ համատեքստում նրա վարքագիծը պատշաճ գնահատելու համար: Քրեակատարողական նախկին օրենսդրությամբ նախատեսված՝ օրինապահ և դրական վարքագիծ հասկացությունները թույլ էին տալիս տարանջատելու պատժի կրման կարգն ու պայմանները կատարող՝ օրինապահ վարքագիծ դրսևորող դատապարտյալին դրական վարքագիծ դրսևորող դատապարտյալից, քանզի դրական վարքագիծն այս դեպքում հիմնավորվում էր դատապարտյալի վարքագծում ընկած դրական դինամիկայով և հստակ ընդգծվում էր օրինապահ վարքագծից դրական տարբերությունը:

Քննարկվող հարցի համատեքստում կարևորվում է նաև դատախազի դերը՝ որպես պատիժների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող սուբյեկտի: Դատախազը, որի վերոնշված լիազորությունն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ¹⁴, իրավունք ունի ստուգելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին, պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին վերաբերող իրավական ակտերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը: Այսինքն՝ դատախազն ստուգում է դատապարտյալի նկատմամբ խրախուսանք կիրառելու որոշման օրինականությունը, պարզում դրա կիրառման հիմքերը և եթե բացահայտում է, որ խրախուսման համար հիմք է հանդիսացել բացառապես պատժի կրման կարգն ու պայմանները կարգավորող օրենսդրության պահանջները պահպանելը, ապա կարող է կասեցնել օրենսդրությանը հակասող ակտի գործողությունը, իսկ պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի քննարկման վերաբերյալ դատական նիստին մասնակցելիս և դատապարտյալի պատշաճ վարքագծի վերաբերյալ դիրքորոշում հայտնելիս անդրադառնա նաև այդ հանգամանքին: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում դատապարտյալի խրախուսման հանգամանքը գնահատելիս պետք է ուշադրություն դարձվի խրախուսանքի հիմք հանդիսացած հանգամանքների օբյեկտիվությանը:

¹⁴ ՀՀ Սահմանադրություն, ընդունված 2015 թվականի դեկտեմբերի 06-ին, Սկզբնաղբյուր՝ ՀՀԳՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդ. 1118 <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>

Պատժի կատարման սահմանված կարգն ու պայմանները խախտելու համար դատապարտյալի նկատմամբ քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգով նախատեսված կարգով կարող է կիրառվել տույժ:

Դատապարտյալի կողմից պատժի կատարման սահմանված կարգի խախտումներ են համարվում զանցանքը, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչներին ուղղված սպառնալիքը, քրեակատարողական հիմնարկներում անհնազանդությունը կամ դրան ակտիվորեն մասնակցելը, նշված խախտումները կատարելու նպատակով խմբեր կազմակերպելը կամ դրանց մասնակցելը կամ օգտագործումը, արգելված առարկաներ պատրաստելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը, միջանձնային ֆիզիկական կամ հոգեկան ներգործությունը: Մեկ տարվա ընթացքում պատժի կատարման սահմանված կարգի եռակի խախտումը կարող է համարվել չարամիտ, եթե այդ խախտումներից յուրաքանչյուրի համար դատապարտյալը ենթարկվել է տույժի, բացառությամբ նախագուշացման, և տույժը չի հանվել կամ մարվել¹⁵:

Դատապարտյալի վարքագիծը գնահատելիս կարևոր նշանակություն ունի նաև նրա կողմից տույժի արժանանալու հանգամանքը, խախտումների բնույթը, ծանրության աստիճանը, չարամիտ խախտման առկայությունը: Դատապարտյալի կողմից բացասական վարքագիծ դրսևորելու և դրա արդյունքում տույժերի արժանանալու հանգամանքն արդեն իսկ խոսում է դատապարտյալի ուղղման գործընթացի անարդյունավետության մասին: Այսինքն՝ քրեակատարողական հիմնարկում օրենսդրությամբ սահմանված կարգն ու պայմանները խախտելը վկայում են պատժի նպատակների ձախողման մասին: Դատապարտյալի կողմից բացասական վարքագիծ դրսևորելու հանգամանքի մասին կարող է վկայել նաև չարամիտ խախտումների համար նրան անվտանգության ավելի բարձր աստիճան ունեցող անվտանգային գոտի տեղափոխած լինելու հանգամանքը:

Այնուամենայնիվ, հոգեբանական տեսանկյունից հաշվի առնելով յուրաքանչյուր մարդու խառնվածքը, բնավորությունը, զգայունության, ագրեսիվության և կոնֆլիկտայնության աստիճանը, որևէ պարագայում չի կարելի բացառել, որ նախկինում ներքին կանոնակարգը խախտած դատապարտյալը որոշ ժամանակ անց չի կարող իրավաչափ վարքագիծ դրսևորել և արժանանալ նաև խրախուսանքի, ինչը կարող է հետևանք լինել ներքին կանոնակարգի խախտումներ թույլ տված անձանց հետ տարվող ճշգրիտ հոգեբանական աշխատանքների, որոնց շնորհիվ նախկինում բացասական վարքագիծ դրսևորած դատապարտյալը կարող է գիտակցել իր բացասական վարքագծի հետևանքները, վերանայել իր վարքագիծը, մտածելակերպը և համոզմունքները:

Դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատելիս հաշվի են առնվում

¹⁵ Տե՛ս ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, ՀՕ-246-Ն, ընդունված 2022 թվականի հունիսի 15-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 01-ից, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=180958>

պատժի կրման ընթացքում կրթական և մշակութային ծրագրերին մասնակցելու, այդ թվում՝ նոր արհեստ կամ մասնագիտություն ձեռք բերելու հանգամանքները:

Դատապարտյալի կողմից կրթական, մշակութային, սպորտային միջոցառումներին մասնակցությունը պետք է դիտարկվի դրական վարքագծի համատեքստում և պարզվի, թե արդյո՞ք այդպիսի մասնակցությունը կրել է եզակի բնույթ, թե՛ դատապարտյալն ակնհայտ հետաքրքրություն է դրսևորել և շարունակում է դրսևորել նմանատիպ միջոցառումներին մասնակցելու նկատմամբ: Այդպիսի միջոցառումներին մասնակցությունը, որոնք պարզապես ազատ ժամանակը լրացնելու նպատակ են հետապնդում, չի կարող դիտարկվել որպես պատշաճ, դրական վարքագծի դրսևորում: Ամեն դեպքում, քրեակատարողական հիմնարկներում պետք է ապահովվի ազատությունից զրկված անձանց համար իրականացվող միջոցառումների կազմակերպումը, դրանցում վերջիններիս հետաքրքրության աստիճանի բարձրացումը և ներգրավվածությունը:

Պատժի կրման ընթացքում աշխատելու հանգամանքը գնահատելիս նախ և առաջ հարկ է պարզել դատապարտյալի կողմից աշխատելու ցանկությունը և հնարավորությունը, իսկ չաշխատելու դեպքում՝ դրա պատճառները: Պատժի կրման ընթացքում դատապարտյալի կողմից աշխատելու հանգամանքը գնահատելիս քննարկման առարկա պետք է դառնան քրեակատարողական հիմնարկում աշխատանքի պայմանների առկայությունը, դատապարտյալի կողմից աշխատանքներին մասնակցելու հնարավորությունը, դրա բացակայության դեպքում զբաղվածության այլ ձևերի առկայությունը և մասնակցելու հնարավորությունը: Հարկ է հաշվի առնել նաև, որ շատ հաճախ դատապարտյալները ներգրավվում են ինչ-որ աշխատանքների՝ դրանք չկատարելու, սակայն դրանց համար անհրաժեշտ բալային միավորներ հավաքելու մտադրությամբ:

Դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատող այլ հանգամանքները, կարծում ենք, դատապարտյալի ուղղման ճանապարհին կանգնելու և դրական վարքագիծ դրսևորելու մասին վկայող որոշակի գործողություններն են (օրինակ՝ բարեգործությամբ զբաղվելը):

Դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատող չափանիշների շարքում նախատեսելով դատապարտյալի տարիքը և կապելով այն հանցագործություն կատարելու պահին դատապարտյալի տարիքի հետ՝ կարծում ենք, օրենսդիրն առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ քրեական օրենսդրությամբ սահմանված տարիքային չափանիշներին անհրաժեշտ է տալ կիրառություն նաև պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման պարագայում: Օրինակ՝ Օրենսգիրքն անչափահասների նկատմամբ նախատեսում է առավել մեղմ պատժողական քաղաքականություն, և քննարկվող դեպքում այդպիսի տարանջատումը, կարծում ենք, ևս պետք է կատարվի այդ հիմքով: Այս պայմաններում, օրինակ, անչափահաս տարիքում հանցագործություն կատարելը պետք է դիտարկվի այլ դրական հանգամանքների

հետ համակցության մեջ, քանի որ անչափահաս տարիքում հանցագործություն կատարելու հանգամանքին արդեն իսկ գնահատական է տրվել պատիժ նշանակելիս:

Հանցանքի բնույթին ու վտանգավորության աստիճանին անդրադառնալիս հարկ է պարզել, թե ինչպիսի հասարակական հարաբերությունների դեմ է ուղղված եղել հանցագործությունը, մեղքի ձևը և տեսակը, հանցագործության նպատակը և շարժառիթը, հանցագործության կատարման եղանակը, հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում հանցավորի ունեցած դերն ու մասնակցության աստիճանը¹⁶: Դատապարտյալի ուղղման մասին եզրակացությունը պետք է հիմնվի ոչ միայն պատժի կրման ընթացքում նրա վարքագծի, այլ նաև անձի և հանցագործության բազմակողմանի գնահատման վրա¹⁷: Եվ չնայած հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը նշանակություն ունեն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի քննարկման համար և նախատեսված են որպես դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելու հանգամանք, սակայն դրանք ինքնին չեն կարող պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու կամ բավարարելու հիմք դիտարկվել: Դրանք պետք է գնահատվեն համակցության մեջ՝ դատապարտյալի անձի և պատժի կրման ողջ ընթացքում նրա դրսևորած վարքագծի համակողմանի ուսումնասիրության հետ մեկտեղ: Պատժից ազատելու քննարկվող տեսակի հարցը լուծելիս կատարված հանցագործության բնույթին և վտանգավորության աստիճանին որոշիչ նշանակություն չտալու վերաբերյալ դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ դրանք, ընկած լինելով ոչ միայն հանցագործությունների դասակարգման, այլև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների հիմքում, պարտադիր հաշվի են առնվում պատիժ նշանակելիս՝ պատժի տեսակը և չափը որոշելիս¹⁸:

Ռեցիդիվի առկայությունը վկայում է այն մասին, որ հանցագործն իր նախկին հակաօրինական գործունեությանը պետության կողմից տրված բացասական գնահատականի պայմաններում շարունակել է դրսևորել հանցավոր վարքագիծ և կատարել նոր հանցանք՝ որով և դրսևորվում է նրա հանրային բարձր վտանգավորությունը: Այս դեպքում, փաստորեն, ստացվում է, որ հանցանք կատարած անձը դասեր չի քաղել իր նախկին դատվածությունից, չի

¹⁶ Տե՛ս թիվ ԱՐԱԴ/0002/12/16 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 01-ի որոշում, Սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2017.05.20/30(1305).1, Հոդ. 486.24 <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=113252>

¹⁷ Տե՛ս թիվ ՎԲ-212/07 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 30-ի որոշում: Սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2008.01.29/5(595) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=41580>

¹⁸ Տե՛ս թիվ ԱՐԱԴ/0002/12/16 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 01-ի որոշում, Սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2017.05.20/30(1305).1, Հոդ. 486.24 <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=113252>

ուղղվել, այլ ընդհակառակը՝ շարունակել է դրսևորել հակաիրավական վարքագիծ, և, հնարավոր է, հանցանք կատարելն իր կողմից արդեն իսկ դարձել է արհեստ: Եվ չնայած այն հանգամանքին, որ ինչպես նախորդ, այնպես էլ այս հանգամանքը հաշվի են առնվել անձի նկատմամբ պատիժ նշանակելիս, հարկ է նշել, որ դրանք խոսում են անձի կողմից հանցածին վարքագիծ ունենալու մասին և քննարկման առարկա են դառնում հենց նման վարքագիծ ունեցող անձանց կողմից հետագայում կրկին հանցագործություն կատարելու հավանականության համատեքստում:

Կատարած հանցանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը բավականին խոցելի և որոշ դեպքերում ձևական բնույթ կրող հանգամանք է: Գործնականում հնարավոր չէ պարզել՝ արդյոք դատապարտյալն իսկապե՞ս զոջում է կատարած հանցանքի համար, թե՞ դա զուտ ձևական բնույթ է կրում: Կարծում ենք, որ այս հանգամանքն անհրաժեշտ է գնահատել հանցագործությանը պատճառված վնասը հատուցած կամ այլ կերպ հարթած լինելու հանգամանքի հետ համակցության մեջ: Վերջինս պատժի նպատակներից սոցիալական արդարության վերականգնման ձևերից մեկն է: Այս հանգամանքը գնահատելիս ուշադրության է արժանի պատճառված վնասը հատուցելուն ուղղված գործողությունների բնույթը, ինչպես նաև դատապարտյալի կողմից վնասը հատուցելու կամ հարթելու օբյեկտիվ հնարավորությունը: Յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնել դատապարտյալի ֆինանսական և սոցիալական դրությունը, վնասը հարթելու համար անհրաժեշտ միջոցների առկայությունը կամ դատապարտյալի կողմից դրանք ստեղծելու իրական հնարավորությունը ազատության մեջ: Կարծում ենք, որ եթե դատապարտյալի նկատմամբ կազմվել են դրական գեկույցներ և իրավացիորեն արձանագրվել է, որ վերջինիս վերասոցիալականացումը հնարավոր է առանց պատժի մնացած մասը կրելու, սակայն դատապարտյալը տուժողին պատճառված վնասը հատուցելու իրական հնարավորություն չի ունեցել և ներկայումս էլ չունի, նա այնուամենայնիվ պետք է ազատ արձակվի, քանի որ քննարկվող ինստիտուտի հիմնական նպատակը հասարակական անվտանգության ապահովումն է, որն իրականացվում է դատապարտյալին հասարակությունում օրինապահ կյանք վարելուն աջակցելու և նրան կրկին հասարակություն վերադարձնելու միջոցով: Այսինքն՝ դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելը մերժելու միակ կամ որոշիչ գործոնը չպետք է լինի տուժողին պատճառած վնասը հարթելու հանգամանքը: Ամեն դեպքում, դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս անհրաժեշտ է ապահովել նաև տուժողի ներկայությունը և լսել նրա դիրքորոշումը, քանի որ տուժողի հայտնած տեղեկությունները կարող են օգտակար լինել օբյեկտիվ որոշում կայացնելու հարցում:

Ներկա պայմաններում, երբ Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթի դեմ պայքարը նոր թափ է առել, հատկապես կարևոր է դարձել այդ արատավոր երևույթի դեմ պայքարը քրեակատարողական հիմնարկներում,

հետևաբար, գնահատման ենթարկելով դատապարտյալի՝ քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, պետք է ուշադրություն դարձնել, թե ընդունում է նա արդյոք այդ միջավայրը և դրանցում գործող օրենքները, թե՞ ոչ, մինչև դատապարտվելը և քրեակատարողական հիմնարկում քրեական ենթամշակույթին հարող անձանց հետ շփում ունեցել է կամ ունի՞, թե՞ ոչ:

Դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի է առնվում նաև որոշակի հակումները, հնարավոր կախվածությունները, նախասիրությունները: Դատապարտյալի մոտ առկա բացասական հակումները և կախվածությունները, օրինակ՝ ինքնավնասման, փախուստի, թմրամիջոցների կամ ակոհոլի ձևով, վկայում են նրա ոչ պատշաճ վարքագծի մասին, խոչընդոտելու են նրա վերսոցիալականացման գործընթացին և ի վերջո կարող են հանգեցնել նոր հանցանք կատարելուն:

Պատժի կրման ողջ ընթացքում դատապարտյալին անհրաժեշտ է նախապատրաստել պատիժը կրելուց ազատվելու դեպքում հասարակության մեջ վերաինտեգրվելուն: Այդ մասին ամրագրված է նաև Միավորված ազգերի կազմակերպության կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 60-րդ կետի 2-րդ մասում, որի համաձայն՝ ցանկալի է, որ պատժաժամկետը լրանալուց առաջ միջոցներ ձեռնարկվեն բանտարկյալին աստիճանաբար հասարակության մեջ վերադարձնելու համար: Այդ նպատակին կարելի է հասնել յուրաքանչյուր իրավախախտի յուրահատկությունները հաշվի առնելով, ազատվողների համար կամ հիմնարկի ներսում, կամ մեկ այլ հաստատությունում մտցնելով հատուկ ապրելակարգ, կամ էլ բանտարկյալին փորձաշրջանով ազատելով, որի ընթացքում նա, այնուամենայնիվ, մնում է հսկողության տակ, այն պայմանով, որ նման հսկողությունը չի դրվում ռստիկականական իշխանությունների վրա և համատեղվում է արդյունավետ սոցիալական օգնության հետ¹⁹:

Այդ նպատակով քրեակատարողական հիմնարկներում կիրառվում են աշխատանքային մեթոդներ՝ ազատագրկման բացասական հետևանքները վերացնելու և անձին լիարժեք և արդյունավետ վերասոցիալականացնելու նպատակով: Որպես այդպիսին՝ քրեակատարողական հիմնարկներում առկա են սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժիններ, որոնց անմիջական գործունեությունը կապված է դատապարտյալների՝ ազատվելուց հետո հասարակություն վերադառնալու և հարմարվելու գործողությունների հետ: Այդ ամենին նպաստում է վերջինիս կողմից վերասոցիալականացման, այդ թվում՝ անձնական զարգացման միջոցառումներին մասնակցելը, օրինակ՝ ստեղծագործ

¹⁹ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ, ընդունված հանցագործությունների կանխմանն ու իրավախախտների հետ վարվեցողությանը նվիրված ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից, Ժնև, 1955 թվականի օգոստոսի 30 <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18499>

աշխատանքով զբաղվելը, գրքեր և գրականություն կարդալը, լրատվական միջոցներին հետևելը:

Քրեակատարողական հիմնարկում ընտանիքի և արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապն ապահովելու նպատակով ստեղծում են համապատասխան պայմաններ, այն է՝ կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ: Այս համատեքստում անհրաժեշտ է նաև ավելի արդյունավետ կիրառել կարճաժամկետ մեկնումների հնարավորությունը՝ դատապարտյալներին նախապատրաստելով նաև սոցիալական վերաինտեգրմանը: Կարծում ենք, որ սույն հանգամանքը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես այն հանգամանքը, որ դատապարտյալը, հնարավոր է, նախկինում ընտանիքի միակ կերակրողն է եղել կամ նրա խնամքի տակ եղել են անձինք, այնպես էլ այն, որ հնարավոր է զբաղվածության խնդիր ունենալու պատճառով չկարողանա հոգ տանել ընտանիքի մասին, ինչն էլ նոր հանցանք կատարելու պատճառ հանդիսանա:

Դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս պետք է պարզել այն սոցիալական միջավայրը, որում հայտնվելու է դատապարտյալը ազատվելուց հետո և դատապարտյալի վրա այդ միջավայրի հնարավոր բացասական հետևանքները, նրա առողջական վիճակը, հարկադիր բուժման մեջ գտնվելը և բուժման արդյունքը, հանցանքի կատարմանը նպաստած հանգամանքների փոփոխությունները և գնահատող այլ հանգամանքներ:

Հանցանքի կատարմանը նպաստած հանգամանքների փոփոխությունները՝ որպես նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատող հանգամանք, նորամուծություն է քրեական օրենսդրության մեջ: Նման հանգամանք կարող է հանդիսանալ, օրինակ, երբ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություն կատարած անձն ազատվել է պաշտոնից:

ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը սահմանում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ընթացակարգը, որը, ըստ էության, նկարագրում է գործընթացի սկիզբը, դրա համար անհրաժեշտ պայմանները, կարգը, զեկույցների կազմման գործընթացը, դրանց արդյունքում ընդունվող որոշումները և բողոքարկման կարգը:

Քրեակատարողական հիմնարկի և պրոբացիայի ծառայության՝ Օրենսգրքի 85-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հանգամանքների վերաբերյալ զեկույցների կազմման կարգը հաստատված է ՀՀ արդարադատության նախարարի՝ 2018 թվականի հուլիսի 12-ի N 336-Լ թիվ հրամանով (այսուհետ՝ Հրաման): Հրամանի համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացում սահմանված է բալային համակարգ, որի հաշվարկման արդյունքում դատապարտյալի վերաբերյալ կազմվում է դրական կամ բացասական զեկույց: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ զեկույցի կազմման համար դատապարտյալի անձնական գործի և վարքագծի փաստական

նկարագրի վերաբերյալ ներկայացված տեղեկանքում ներառված տեղեկատվությունը գնահատվում է Հրամանի 3-րդ հավելվածով ներկայացված գնահատման չափորոշիչներով: Այդ չափորոշիչները գնահատվում են 0-ից մինչև 5 միավորով, որոնց գումարման արդյունքում ստացված առավելագույն միավորը կազմում է 43 միավոր: Չափորոշիչների գումարման արդյունքում 28 և ավելի միավոր կազմելու դեպքում գեկույցը գնահատվում է դրական, իսկ 28 միավորից պակաս կազմելու դեպքում գեկույցը գնահատվում է բացասական²⁰: Չնայած այն հանգամանքին, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս դատարանն է վերջնական որոշում կայացնում, այնուամենայնիվ, գեկույցները պետք է որոշակիորեն ուղղորդիչ նշանակություն ունենան դատախազի համար՝ դիրքորոշում հայտնելիս, իսկ դատարանի համար՝ որոշում կայացնելիս:

Քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության գեկույցների կազմման համար դատապարտյալի անձնական գործի և վարքագծի փաստական նկարագրի վերաբերյալ ներկայացված տեղեկանքում ներառված՝ Օրենսգրքի 85-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով և 3 մասի 1-13-րդ կետերով նախատեսված տեղեկատվության գնահատման չափորոշիչները սահմանվում են ՀՀ արդարադատության նախարարի 2019 թվականի հունիսի 04-ի N 198-Լ հրամանի հավելվածով:

Նշված հավելվածի 1-ին կետով սահմանված է, որ պատժի կրման ընթացքում 2 և ավելի անգամ խրախուսվելը գնահատվում է 5 միավոր, 1 անգամ խրախուսվելը՝ 3 միավոր, իսկ խրախուսանքի չարժանանալը՝ 0 միավոր: Այս դեպքում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ գործնականում հնարավոր է պատժի կրման ողջ ընթացքում 2 և ավելի անգամ խրախուսված դատապարտյալը խրախուսված լինի այնպիսի դրական վարքագծի համար (օրինակ՝ 2 անգամ սպորտային միջոցառմանը մասնակցելու համար), որոնք իրենց բնույթով համարժեք չլինեն 1 անգամ խրախուսված դատապարտյալի կողմից դրսևորած դրական վարքագծին (օրինակ՝ տևական ժամանակ քրեակատարողական հիմնարկում բարեկարգման կամ այլ հանրօգուտ աշխատանքներին մասնակցելու համար): Հրամանի հավելվածի նման տրամաբանությունից բխում է, որ դատապարտյալի վարքագծի գնահատման հիմքում դրվում է քանակական, այլ ոչ թե որակական հատկանիշները: Պատժի կրման ընթացքում կարգապահական տույժերի համար տրվող միավորները սահմանելիս հաշվի չեն առնվել տույժի կիրառմանը հանգեցրած խախտման բնույթը, ինչպես նաև չարամիտ խախտող լինելու հանգամանքը, մինչդեռ օրենսդիրը հստակ սահմանել է առավել խստացված մոտեցում-կանոնակարգ չարամիտ խախտողների համար: Ընդգծելով չարամիտ խախտման վտանգավոր բնույթը՝ օրենսդիրը սահմանել է նաև, որ չարամիտ խախտման դեպքում դատա-

²⁰ ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ N 336-Լ հրաման <https://www.irtek.am/views/act.aspx?aid=96966>

պարտյալը կարող է ներկայացվել տեղափոխման անվտանգային ավելի բարձր աստիճան ունեցող գոտի՝ պատժի կրումը շարունակելու նպատակով:

Գտնում ենք, որ օրենսդրի կողմից սահմանված՝ պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտումների նկատմամբ վերոհիշյալ մոտեցումը պետք է իր արտացոլումը գտնի նաև Հրամանում: Ամեն դեպքում, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելիս պատժի կրման ողջ ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագիծը գնահատելիս պետք է հաշվի առնվեն պատժի կրման ողջ ընթացքում դատապարտյալի կողմից տույժի ենթարկված լինելու հանգամանքը, տույժի կիրառմանը նպաստող հանգամանքները, դրանց բացահայտելուն և չեզոքացնելուն ուղղված գործողությունների կատարումը:

Հրամանի 3-րդ հավելվածի 4-րդ կետով պատժի ընթացքում առնվազն երեք ամիս աշխատելու հանգամանքը գնահատելիս և դրա համար միավոր բաշխելիս պետք է հաշվի առնվի նաև դատապարտյալի աշխատունակ լինելու հանգամանքը, և, ի վերջո, նրա կողմից աշխատանքից խուսափելու կամ հնարավորություն չունենալու հանգամանքը: Այսինքն՝ սույն դեպքում չաշխատելու և 0 միավոր ստանալու բացասական հետևանքը պետք է վրա հասնի միայն աշխատանքից չարամիտ խուսափելու դեպքում: Այդ մասին վկայակոչված է նաև Հանձնարարականում, որտեղ նշված է, որ պայմանական վաղաժամկետ տրամադրելիս աշխատանքի հնարավորությունների բացակայությունը չպետք է հիմք հանդիսանա պայմանական վաղաժամկետ ազատումը մերժելու կամ հետաձգելու համար: Պետք է ջանքեր գործադրվեն զբաղվածության այլ ձևեր գտնելու համար²¹:

Հրամանի հավելվածի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ հանցագործություն կատարելու և պատիժը կրելու պահին անձի մինչև 28 տարեկան լինելը գնահատվում է 0 միավոր, 28-ից մինչև 55 տարեկան՝ 1 միավոր, 55-ից բարձր՝ 2 միավոր: Նման մոտեցումն ակնհայտորեն անտրամաբանական է և անհասկանալի, չի բխում միջազգային փաստաթղթերով ամրագրված՝ գնահատման չափանիշների հստակ, իրատեսական և կանխատեսելի լինելու պահանջից: Այն հակասում է նաև ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ տարիքային խտրականության արգելքին: Ակնհայտ է, որ արարքը կատարելու կամ պատիժը կրելու պահին մինչև 28 տարեկան լինելը ոչ մի կերպ չի բարձրացնում նոր հանցանք կատարելու հավանականությունը, ինչի արդյունքում անձը միավոր չի ստանում, և հակառակը՝ օրինակ՝ 40 տարեկան լինելու դեպքում այդպիսի հավանականությունն ինչ-որ կերպ չի նվազում: Կարծում ենք, որ ինչպես վերը նշվեց, օրենսդիրը, նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատող չափանիշների շարքում նախատեսելով դատապարտյալի տարիքը և կապելով այն հանցագոր-

²¹ ԵՄ նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)22 հանձնարարականը անդամ երկրներին՝ պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ, ընդունված 2003 թվականի սեպտեմբերի 24-ին
<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800ccb5a>

ծուրթուն կատարելու պահին դատապարտյալի տարիքի հետ, հետապնդել է մեկ նպատակ՝ քրեական օրենսդրությամբ սահմանված տարիքային չափանիշներին տալ կիրառություն նաև պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կատարած ածման դեպքում:

Հանցանքը կատարելու պահին և պատիժը կրելու տարիքային հանգամանքի՝ նման մեկնաբանությամբ դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելու դեպքում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ առաջին անգամ դատապարտված, հանգամանքների պատահական զուգորդմամբ առաջին անգամ հանցանք կատարած երիտասարդ դատապարտյալը, որի դեպքում նոր հանցագործություն կատարելու հավանականությունը ցածր է, տարիքային չափանիշով չստանա միավոր, իսկ մի քանի անգամ դատապարտված դատապարտյալը, որի դեպքում նոր հանցագործություն կատարելու հավանականությունն ավելի բարձր է, միայն այն պատճառով, որ 28 տարեկանից բարձր է, ստանա միավոր:

Հրամանի հավելվածի 7-րդ կետով սահմանված՝ հանցագործության բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի գնահատման հիմքում դրվում է միայն մեղքի ձևը, միջնորդ ալկոհայտ է, որ հանցագործության բնույթը և հանրային վտանգավորությունն իրենցից ենթադրում են նաև հասարակական հարաբերությունների բնույթը, որոնց վնաս է պատճառվում հակաիրավական արարքով, հանցագործության կատարման հանգամանքներով՝ եղանակը, գործիքները, միջոցները, հանցավորի մտադրության իրականացման աստիճանը, շարժառիթները, նպատակները: Մինչդեռ՝ Հրամանի նշված կետի վերլուծությունից հետևում է, որ սպանության և գողություն կատարելու համար դատապարտվածները գնահատվում են նույն միավորներով:

Հրամանի հավելվածի 9-րդ կետով նախատեսված դրույթի համաձայն՝ գնահատվում է կատարած հանցանքի նկատմամբ դատապարտյալի ունեցած վերաբերմունքը: Այդ դրույթի համաձայն, եթե դատապարտյալը ընդունում է կատարած հանցանքը և զղջում է դրա համար, ապա ստանում է 3 միավոր, իսկ եթե չի ընդունում կամ չի զղջում՝ 0 միավոր: Ալկոհայտ է, որ կան դատապարտյալներ, որոնք թե՛ դատարանում՝ դատաքննության ժամանակ և թե՛ հետագայում արդեն պատիժ կրելիս, դրա ողջ ընթացքում չեն ընդունում կատարած հանցանքը և չեն զղջում դրա համար, սակայն պայմանական վաղաժամկետ ներկայացվելու պարագայում, երբ գիտեն, որ կատարած հանցանքը ընդունելու և դրա համար զղջալու համար կարող են ստանալ 3 միավոր, թեպետ չեն ընդունում և չեն զղջում կատարած արարքի համար, զեկույցների կազմման փուլում ձևականորեն հայտնում են, որ զղջում և ընդունում են մեղքը՝ դրանով իսկ ստանալով ոչ օբյեկտիվ միավորներ, ինչն էլ իր հերթին հանգեցնում է անհիմն զեկույց կազմելուն:

Հրամանի հավելվածի 11-րդ կետը սահմանում է միավորներ՝ հաշվի առնելով քրեական ենթաձևակույթի նկատմամբ դատապարտյալի ունեցած վերաբերմուն-

քը, մասնավորապես՝ քրեական ենթամշակույթը չընդունելը կամ հարելը: Սակայն հնարավոր է, որ դատապարտյալը չեզոք լինի և դրսևորի անտարբերություն դրա չգրված օրենքների նկատմամբ: Այս համատեքստում, կարծում ենք, կարելի է որպես գնահատման ենթակա հանգամանք դարձնել քրեական ենթամշակույթի նկատմամբ չեզոք վերաբերմունք ունենալը:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է փաստել, որ դատապարտյալի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատումն օրենսդրությամբ սահմանված այն մեխանիզմն է, որի կիրառմամբ ապահովվում է անձի ազատության իրավունքը: Որպեսզի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտը պրակտիկայում հնարավոր լինի կիրառել հենց այն տրամաբանության մեջ, որը նախատեսում է քրեական օրենքը, կարևոր է ապահովել օրինական, իրավաչափ, հստակ ձևակերպված, հիմնավորված և օբյեկտիվ չափանիշների ամրագրումը, որոնց շնորհիվ դատախազի կողմից հնարավոր կլինի ձևավորելու հստակ օբյեկտիվ դիրքորոշում դատապարտյալի պատշաճ վարքագծի և նոր հանցագործություն կատարելու հավանականության վերաբերյալ, իսկ դատարանի կողմից՝ անաչառ և օրինական որոշում կայացնելու համար: Այդ է պահանջում նաև «Հ՝ Սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՄԴՈ-753 որոշումը, որտեղ դատարանն անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ հայտնել է, որ «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը²²»:

Հստակ ձևակերպված իրատեսական չափանիշների առկայությունն ապահովում է, որպեսզի ազատագրկման ձևով պատիժ կրող դատապարտյալներն ի վիճակի լինեն կանխատեսել և կարգավորել իրենց վարքագիծը: Սակայն քրեակատարողական հիմնարկում դրսևորած վարքագիծը չպետք է միակ կամ որոշիչ հանգամանք դիտարկվի վաղաժամկետ ազատման հարցը քննարկելիս: Քրեակատարողական հիմնարկում պահվելու ընթացքում դրսևորած վարքագիծը և վաղաժամկետ ազատվելուց հետո կրկին հանցանք կատարելու հավանականության օբյեկտիվ, գիտական չափանիշների վրա հիմնված կանխատեսումը պետք է օգտագործվեն և գնահատվեն միասին:

²² ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՄԴՈ-753 որոշում, Սկզբնաղբյուր՝ ՀՀԳՏ 2008.05.29/32(622), հոդ. 498
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=43955>

Եզրակացություն

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի նշանակությունն այն է, որ անազատության մեջ գտնվող անձն ինքն է շահագրգռված լինում ուղղվելու և վերասոցիալականացվելու համար պատշաճ վարքագիծ դրսևորելու հարցում, ինչն էլ հնարավորություն է տալիս իր դրսևորած պատշաճ վարքագծի արդյունքում ժամանակից շուտ ազատ արձակվել և վերադառնալ հասարակություն: Պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքում ենթադրվում է, որ պատժի նպատակները, ներառյալ՝ անձի վերասոցիալականացումը, դեռ իրականացված չեն: Հակառակ պարագայում, եթե արձանագրվեր, որ անձն արդեն ուղղվել է, ապա նա պետք է ազատ արձակվեր ոչ թե պայմանականորեն, այլ վերջնական՝ առանց պայմանների: Օրենսգրքի 85-րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելիս դատարանը պարզապես պետք է համոզվի, որ անձն այլևս կարիք չունի քրեակատարողական հիմնարկում պահվելու և կարող է ապրել հասարակության մեջ: Այս դեպքում, իհարկե, դեռևս առկա են որոշակի ռիսկեր, սակայն հենց այդ ռիսկերը նվազեցնելու և չեզոքացնելու համար է դատարանի կողմից սահմանվում վերահսկողություն:

2022 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներից պայմանական վաղաժամկետ ազատվել է 145 անձ, 2021 թվականին՝ 182, 2020 թվականին՝ 199, 2019 թվականին՝ 212, 2018 թվականին՝ 530, 2017 թվականին՝ 365²³:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվողների քանակի տարեցտարի նվազման հանգամանքն անմիջականորեն կապված է նրանց ներկայացվող չափանիշների ոչ հստակ, կանխատեսելի, երբեմն անիրատեսական լինելու, օրենքների անհստակության, քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների աշխատակիցների՝ ռիսկեր գնահատելու համար բավարար մասնագիտական կարողությունների բացակայության հանգամանքների հետ, ինչն էլ իր հերթին հանգեցնում է նրան, որ կայացվում են չհիմնավորված որոշումներ:

Կարծում ենք, որ Հայաստանում գործող պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը լուրջ բարեփոխումների կարիք ունի: Անհրաժեշտ է առաջնային փոփոխություններ կատարել քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ զեկույցների կազմման կարգը սահմանող հրամանում և հրամանի հավելվածով սահմանված գնահատման ենթակա չափանիշների համար տրվող բալային համակարգում, քանի որ զեկույցները, առանց որևէ հիմնավորման, անտրամաբանական և կամայականորեն տրվող միավորներով գնահատելիս հարցականի տակ է դրվում դրանց հիմնավորվածությունն ու օբյեկտիվությունը և հնարավորություն չի լինում իրապես գնահատել

²³ Տվյալները հասանելի են դարձել ՀՀ դատախազության կողմից տարբեր տարիներին ներկայացված գործունեության մասին հաղորդումներից, <https://www.prosecutor.am/dynamicWebPages/report>

պատժի նպատակների ի կատարման ածման աստիճանը: Կարծում ենք, որ զեկույցները կազմելիս և յուրաքանչյուր չափանիշի համար գնահատական բաշխելիս, բացի դատապարտյալի անձնական գործում առկա տեղեկատվության համակարգումից, յուրաքանչյուր դեպքում պետք է լսել նաև դատապարտյալին, նրա դիրքորոշումը չափանիշների, օրինակ՝ մեղքն ընդունելու վերաբերյալ, և նոր միայն բաշխել բալերը: Նշված գործընթացին կարևորվում է նաև հատուկ ուրուտների մասնագետների, օրինակ՝ քրեաբանների, հոգեբանների, սոցիալական աշխատողների մասնակցությունը, որոնք դատապարտյալի հետ պարբերաբար առանձնագրույց ունենալու և «աշխատելու» արդյունքում ոչ միայն կարող են աջակցել վերջինիս վերասոցիալականացման հարցում, այլև գնահատեն նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը և իրենց մասնագիտական կարծիքը հայտնեն զեկույցներով ամրագրված չափանիշները գնահատելիս: Իրականացվող ողջ գործընթացի հետևանքը պետք է լինի պատճառաբանված զեկույցների առկայությունը դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու կամ մերժելու վերաբերյալ: Այն դեպքում, երբ կազմված զեկույցով դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացնելը գտնվել է ոչ նպատակահարմար, դատապարտյալին պետք է տրվի պարզաբանում պատճառների, կիրառված չափանիշների և չբավարարված պայմանների վերաբերյալ: Սույն դեպքում դատապարտյալին անհրաժեշտ է պարզաբանել զեկույցների հետ համաձայն չլինելու պարագայում դրանց բողոքարկման կարգն ու ժամկետները, ինչպես նաև այդ հարցի քննարկման հաջորդ ժամանակահատվածը, որով կապահովվի դատապարտյալի կողմից պայմանական վաղաժամկետ ազատման համար կրկին դիմելու հնարավորությունը:

Բացի այդ, քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է նշված կառույցները համալրել այնպիսի կադրերով, որոնք իրենց գործունեությանը կմոտենան ամենայն պատասխանատվությամբ՝ գիտակցելով, որ նրանց կողմից դատապարտյալների հետ տարվող աշխատանքները և կազմվող զեկույցները ունեն կարևորագույն նշանակություն և չնչին վրիպակի արդյունքում անգամ վերսոցիալականացման համար պատժի մնացած մասը կրելու անհրաժեշտություն չունեցող դատապարտյալը կշարունակի կրել պատիժ քրեակատարողական հիմնարկում:

Հարկ է հաշվի առնել նաև, որ բանտերի գերբնակեցումը, որը տարածքի, քառակուսի մետրի և բանտային պայմանների ապահովման ընդհանուր խնդիր է, ևս կարող է փոքր-ինչ չափով լուծվել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի լայնորեն կիրառման արդյունքում²⁴: Ասվածն

²⁴ Հանձնարարականի ուսումնասիրությունը ևս վկայում է այն մասին, որ վաղաժամկետ ազատման հիմնական և կենտրոնական նպատակներից մեկը քրեակատարողական հիմնարկների բեռնաթափումն է:

ի հարկե չի նշանակում, որ այն պետք է կիրառվի կամայականորեն, այլ ուղղակի հաստատում է, որ այն դատապարտյալները, որոնք դրսևորել են պատշան վարքագիծ, նրանց կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է և նրա վերատոցիալականացումը հնարավոր է առանց պատժի մնացած մասը կրելու, հնարավորություն ունենան ազատվելու քրեակատարողական հիմնարկից և վերադառնան հասարակություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է առանձնացնել գնահատման կարիք ունեցող հետևյալ հիմնական հանգամանքները՝ դատապարտյալի անձնային առանձնահատկությունները, պատիժը կրելու ողջ ընթացքում նրա դրսևորած վարքագիծը, կրկին հանցանք կատարելու հավանականությունը և նրա հետ տարվող աշխատանքների արդյունքները:

Պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ հարցի քննությունը պետք է հիմնված լինի օրենքով սահմանված, մատչելի և կանխատեսելի ընթացակարգերի վրա, իրականացվի մրցակցային սկզբունքով, կայացված որոշումը պետք է լինի օրինական, պատճառաբանված և օբյեկտիվ, և որոշման հետ դատապարտյալի անհամաձայնության դեպքում վերջինս իրավունք ունենա բողոքարկելու այն:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունված 2015 թվականի դեկտեմբերի 06-ին, Սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդ. 1118
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510> (մուտք 05.08.2023)
Constitution of the Republic of Armenia, 2015 <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510> (access Aug 05, 2023)
2. ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն ընդունված 2021 թվականի մայիսի 05-ին, ուժի մեջ է 2022 թվականի հուլիսի 1-ից,
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=181303> (մուտք 05.08.2023)
Criminal Code of the Republic of Armenia, 2021
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=181303> (access Aug 05, 2023)
3. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, ՀՕ-246-Ն, ընդունված 2022 թվականի հունիսի 15-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 01-ից,
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=180958> (մուտք 05.08.2023)
Penitentiary Code of the Republic of Armenia, 2022
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=180958> (access Aug 05, 2023)
4. ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ N 336-L հրաման, <https://www.irtek.am/views/act.aspx?aid=96966> (մուտք 17.08.2023)
Decision N 336-L of the RA Minister of Justice, 2018
<https://www.irtek.am/views/act.aspx?aid=96966> (access Aug 17, 2023)
5. ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՍԴՈ-753 որոշում, Սկզբնաղբյուր՝ ՀՀ ՊՏ 2008.05.29/32(622), Հոդ. 498,
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=43955> (մուտք 21.08.2023)
Constitutional Court Decision N SDO-753, 2008
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=43955> (access Aug 21, 2023)
6. Թիվ ՎԲ-212/07 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 30-ի որոշում, Սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2008.01.29/5(595)
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=41580> (մուտք 10.08.2023)
Decision of the RA Court of Cassation VB/212/07, 2007
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=41580> (access Aug 10, 2023)
7. Թիվ ԱԲԱԴ/0002/12/16 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 01-ի որոշում, Սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2017.05.20/30(1305).1, Հոդ. 486.24
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=113252> (մուտք 10.08.2023)
Decision of the RA Court of Cassation ARAD/0002/12/16, 2016
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=113252> (access Aug 10, 2023)
8. Թիվ ՍԳ3/0010/12/18 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշում, Սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2019.09.20/61(1514).1, Հոդ.

818.26

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=133978> (մուտք 10.08.2023)

Decision of the RA Court of Cassation SD3/0010/12/18, 2018

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=133978> (access Aug 10, 2023)

9. Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ, ընդունված հանցագործությունների կանխմանն ու իրավախախտների հետ վարվեցողությանը նվիրված ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից, Ժնև, 1955 թվականի օգոստոսի 30

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18499> (մուտք 12.08.2023)

Standard Minimum Rules for the Treatment of Prisoners, UN Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, Geneva, 1955

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18499> (access Aug 12, 2023)

10. ԵԽ նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)22 հանձնարարականը անդամ երկրներին՝ պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ, 2003 թվական,

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800ccb5a> (մուտք 13.08.2023)

Recommendation (2003)22 of the Committee of Ministers to member States on conditional release, Committee of Minister, 2003 <https://rm.coe.int/16800ccb5d> (access Aug 13, 2023)

11. Ткачевский Ю.М. Условно-досрочное освобождение от отбывания наказания. // Вестник Московского университета, Серия 11. Право. 1997. № 2.

Tkachevsky Yu.M., Conditional early release from serving a punishment. // Bulletin of Moscow University, Series 11. Law. 1997. No. 2.

12. Комментарий к Уголовному Кодексу Российской Федерации (постатейный) / Под. ред. Н.Г.Кадникова. М.: Книжный мир. 2016.

Commentary on the Criminal Code of the Russian Federation (article-by-article) / Sub. ed. N.G.Kadnikova. M.: Book world. 2016.

13. Дуюнов В.К. Уголовно-правовое воздействие: теория и практика. М.: Научная книга, 2013

Duyunov V.K. Criminal legal influence: theory and practice. M.: Scientific book. 2013

14. Уголовное право России. Общая часть: Учебник / Под ред. В.Н.Кудрявцева, В.В.Лунеева, А.В.Наумова. М.: Юрист, 2006.

Criminal law of Russia. General part: Textbook / Ed. V.N.Kudryavtseva, V.V.Luneeva, A.V.Naumova. M.: Yurist, 2006.

15. Беляев Н.А. Цели наказания и средства их достижения в исправительно-трудовых учреждениях. Избранные труды СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2003.

Belyaev N.A. The goals of punishment and the means of achieving them in correctional labor institutions. Selected works St. Petersburg: Publishing house “Legal Center Press”, 2003.

16. Ефимов М.А. Некоторые вопросы условно-досрочного и досрочного освобождения. // Правоведение, 1958. № 1.
Efimov M.A. Some issues of parole and early release from punishment. // Jurisprudence, 1958. No. 1.
17. Vinter and Others v. the United Kingdom [GC] - 66069/09, 130/10 and 3896/10 Judgment 9.7.2013
https://www.echr.coe.int/d/reports_recueil_2013-iii?p_1_back_url=%2Fsearch%3Fq%3DVinter%2Band%2BOthers%2Bv.%2Bthe%2BUnited%2BKingdom (access Aug 16, 2023)
18. <https://www.prosecutor.am/dynamicWebPages/report> (սնվւմ 28.08.2023)

Roza Bakhshyan

*Prosecutor of the Prosecutor's Office of Shengavit Administrative District
of Yerevan City*

CERTAIN FUNDAMENTAL ISSUES OF THE INSTITUTE OF CONDITIONAL EARLY RELEASE FROM SERVING PUNISHMENT IN THE CRIMINAL LAW OF THE REPUBLIC OF ARMENIA¹

Abstract

The article concerns the institution of conditional early release from serving punishment, the legislation regulating this, particularly the analysis of the legal norms establishing the criteria for conditional early release from serving punishment, identifying the key issues with regard to the legal norms.

Based on the recent policy of mitigating the criminal policy in the Republic of Armenia and transitioning to restorative justice based on the principle of humanity, as well as the fact of defining resocialization of a person as the goal of punishment, the article emphasizes the importance of the institution of conditional early release both for the convict and for the State, as well as for the society.

In particular, the article refers to the criteria for evaluating the convict's proper behavior and the probability of committing a new crime, the reports that are prepared for evaluation of these criteria, the evaluation of the reports with scoring points and the consideration of expediency of conditional early release of the convict from serving the punishment as a result of evaluation of the reports.

As a result of the conducted research, the author proposes possible options aimed at improving application of the institution of conditional early release from serving the punishment, which will make application of the institution under consideration easier and more effective in practice, thus guaranteeing the fundamental rights of persons, including convicts, and helping persons deprived of liberty to return to society and become full-fledged members of society, while the bodies preparing and evaluating the reports will, as a result of assessment of realistic, simple and clear criteria, have the opportunity to prepare even more argued and substantiated reports, which will be based not only on the information in the documents, but also on the direct contact with the convict with regard to his or her mental state, social status and on examination of the circumstances of his or her readiness to return to society.

In the article, the author conducts a separate analysis of each criterion required for conditional early release from serving the punishment, and an appropriate observation is presented for the evaluation of each of these criteria.

Keywords: convict; penitentiary institution; conditional -early release from punishment; proper behavior; probability of committing a new crime; report; scoring point system; rehabilitation.

¹ The article was presented on 01.09.2023 and was reviewed on 29.02.2024.

Роза Бахсян

*Прокурор прокуратуры административного округа Шенгавит
города Ереван*

НЕКОТОРЫЕ ФУНДАМЕНТАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ИНСТИТУТА УСЛОВНО-ДОСРОЧНОГО ОСВОБОЖДЕНИЯ ОТ ОТБЫВАНИЯ НАКАЗАНИЯ В УГОЛОВНОМ ПРАВЕ РА¹

Абстракт

В статье говорится об институте условно-досрочного освобождения от отбывания наказания и регулирующем его законодательстве, в частности, проводится анализ правовых норм, определяющих критерии условно-досрочного освобождения от отбывания наказания и освещаются проблемы в данной теме.

Основываясь на проводимой в последнее время политике смягчения уголовной системы в Республике Армения и переходе к восстановительному правосудию, основанному на принципе гуманности, а также на факте определения ресоциализации личности как цели наказания, в работе подчеркнута важность института условно-досрочного освобождения осужденных от отбывания наказания как для осужденного, так и для государства и общества в целом.

В статье говорится о критериях оценки должного поведения осужденного и вероятности совершения им нового преступления на основе протоколов с оценкой каждого критерия при помощи баллов и последующем рассмотрении целесообразности условно-досрочного освобождения осужденного от отбывания наказания на основе их результатов.

В заключении проведенного исследования автором предложены возможные варианты направленные на совершенствование применения института условно-досрочного освобождения от отбывания наказания, что позволит сделать применение данного института более простым и эффективным на практике, гарантировать основные права лиц, в том числе осужденных, и способствовать возвращению лиц лишенных свободы в общество и становлению его полноправными членам, а органам, готовящим отчеты и оценивающим их, иметь возможность в результате оценки реалистичных, простых и понятных критериев, подготовить еще более аргументированные и обоснованные заключения, которые будут основываться не только на информации в документах, но и на непосредственном контакте с осужденным, а также его психическом состоянии, социальном положении и готовности вернуться в общество.

Автор отдельно проанализировал каждый критерий, необходимый для условно-досрочного освобождения от отбывания наказания, и представил соответствующее наблюдения для оценки каждого из этих критериев.

Ключевые слова: осужденный; пенитенциарное учреждение; условно-досрочное освобождение; надлежащее поведение; вероятность совершения нового преступления; отчет система баллов; ресоциализация.

¹ Статья была представлена 01.09.2023 и прошла рецензирование 29.02.2024.

Սամինե Պետրոսյան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳՎՈՐՄԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ՝

Համառոտագիր

Հոդվածը վերաբերում է ընդհանուր բաժնային սեփականության հարաբերությունների իրավական կարգավորմանը, որում անդրադարձ է կատարվել ընդհանուր սեփականության տեսակներին և ընդհանուր բաժնային սեփականության իրավագործություններին:

Հոդվածում տրվել է ընդհանուր բաժնային սեփականության հասկացությունը, այն է՝ ընդհանուր բաժնային սեփականությունը իրավական նորմերի համակցություն է, որը կարգավորում է միևնույն գույքի նկատմամբ մի քանի սեփականատերերի իրավահարաբերությունները, որում սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշված է, և որոնք իրենց հայեցողությամբ կարող են տիրապետել, տնօրինել և օգտագործել իրենց բաժինը:

Բացի այդ, սույն ուսումնասիրության շրջանակներում վերհանվել է նաև բազմաբնակարան շենքի ընդհանուր տարածքների օգտագործման առնչությամբ պրակտիկայում առկա խնդիրը, քանի որ անհրաժեշտ է առավել հստակեցնել բաժնային սեփականության օգտագործման կանոնները, մասնավորապես՝ բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքները, որոնք փաստացի որևէ մեկի սեփականություն չեն հանդիսանում, բացառել ցանկացած անձի մշտական հիմունքներով օգտագործման հնարավորությունը՝ ներպետական օրենսդրությամբ ամրագրելով նշված բովանդակությամբ իրավական նորմեր, որոնք կկրեն պարտադիր բնույթ:

Հիմնաբառեր - ընդհանուր բաժնային սեփականություն, գույք, տնօրինել, օգտագործել, տիրապետել, սեփականատեր:

Ներածություն

Ցանկացած ինստիտուտի վերաբերյալ բազմակողմանի ուսումնասիրություն իրականացնելու, ինչպես նաև կատարված հետևությունների հիմնավորվածությունն ապահովելու համար անհրաժեշտ է նախևառաջ անդրադառնալ այդ ինս-

¹ Հոդվածը ներկայացվել է 31.01.2024 թ., գրախոսվել է 03.05.2024 թ.:

տիտուտի հասկացության վերլուծությանը, ինչից ելնելով՝ հարկ ենք համարում ուսումնասիրությունը սկսել ընդհանուր սեփականության հասկացության և տեսակների վերլուծությամբ՝ անդրադառնալով ընդհանուր սեփականության իրավունքի պատմական զարգացմանը, ինչպես նաև քննության առարկա դարձնել ընդհանուր բաժնային սեփականության իրավագործությունները:

Ներկայումս ընդհանուր սեփականության տեսական և գործնական հիմնախնդիրները պահանջում են բազմակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն՝ բացահայտելու և վերհանելու ոլորտում առկա բացթողումներն ու խնդիրները և առաջադրել հնարավոր լուծումներ՝ հաշվի առնելով ինչպես այդ հարաբերությունների առանձնահատկությունները, այնպես էլ միջազգային իրավական պրակտիկայում առկա մոտեցումները:

Ընդհանուր բաժնային սեփականությունը քաղաքացիական իրավունքի առանցքային ինստիտուտներից մեկն է, որի վերաբերյալ առկա մասնագիտական գրականությունը վկայում է նշված ոլորտի կարևորության մասին, և, չնայած ոլորտում առկա հիմնախնդիրները բազմիցս ուսումնասիրվել են, այնուամենայնիվ, ընդհանուր սեփականության ինստիտուտի ուսումնասիրությունը շարունակում է մնալ արդիական:

Սոցիալ-տնտեսական կյանքում կատարվող փոփոխությունները պահանջում են նոր մոտեցում: Ազատ շուկայական տնտեսության պայմաններում առավել կարևորվում է ընդհանուր սեփականության պաշտպանությունը: Արդի հասարակությունը չի կարող գործել առանց սեփականության, այդ թվում՝ ընդհանուր բաժնային սեփականության ոլորտում զարգացած հարաբերությունների, քանի որ դրանով է պայմանավորված պետության տնտեսական հզորությունը, մարդկության առաջընթացն ու բարեկեցությունը:

Սոցիալական պետության կարևոր խնդիրներից մեկը սեփականության, այդ թվում՝ ընդհանուր սեփականության պաշտպանությունն ու պահպանությունն² է: Սեփականության իրավունքը, բնականաբար, թելադրում է գույքային հարաբերությունների կարգավորման անհրաժեշտություն: Այդ կարգավորման հիմնական բովանդակությունը սեփականության պաշտպանությունն է³:

Սեփականության, այդ թվում՝ ընդհանուր սեփականության ինստիտուտը ամրագրվել է պետությունների հիմնական օրենքներում, ինչը վկայում է այդ ինստիտուտի կարևորության մասին: Սեփականության իրավունքը կարևորվել է նաև միջազգային այնպիսի իրավական փաստաթղթերով, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, որի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը երաշխավորում է սեփականության իրավունքը:

² St'u Никитин В. А., «Право собственности в СССР, М., 1958, էջ 22.

³ St'u Պապյան Ռ., Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Սբ. Էջմիածին, 2002, էջ 2013:

Ընդհանուր սեփականության իրավունքի պատմական զարգացումը

Ընդհանուր բաժնային սեփականության հարաբերությունների իմաստավորումը հնարավոր չէ առանց դրա պատմական արմատների վերհանման, ինչից էլ ներկով՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ ընդհանուր սեփականության ինստիտուտի պատմական զարգացմանը:

Ընդհանուր սեփականության տեսական և գործնական հարցերն ուսումնասիրվել են դեռևս վաղ ժամանակներից՝ անցնելով զարգացման պատմական ճանապարհ, մասնավորապես՝ ընդհանուր սեփականության պատմական արմատները առկա են եղել հին հռոմեական իրավունքում:

Այսպես, հռոմեական իրավունքում սեփականության իրավունքը ընդհանուր առմամբ բնութագրվում էր որպես գույքի նկատմամբ ունեցած սեփականություն⁴:

Լիտերեն «սեփականություն» տերմինը սահմանում էր իր, որը պատկանում է ինչ-որ մեկին, ինչպես նաև իրավունք, որի ուժով իրը պատկանում է ինչ-որ մեկին⁵:

Հռոմեական իրավունքում գույքի նկատմամբ անձի ունեցած իրավունքների աստիճանը և բովանդակությունը տարբերվում էր: Դրանք առավել ամբողջական արտահայտվում էին սեփականության իրավունքի ինստիտուտում⁶:

Հռոմեական պետության պատմության սկզբնական շրջանում սեփականության իրավունքն արտահայտող միասնական եզրույթ գոյություն չուներ, սակայն սեփականության ինստիտուտը հռոմեական իրավունքում գոյություն ուներ շատ վաղուց: Ք.ա. 1-ին դարից սկսած որպես սեփականության իրավունքն արտահայտող եզրույթ սկսեցին գործածել *dominium*, իսկ Ք.հ. 3-րդ դարից՝ *proprietas* եզրույթները⁷: Հռոմեական իրավունքում գործածվում էր նաև *condominium* եզրույթը, որով արտահայտվում էր միևնույն իրի նկատմամբ մի քանի անձանց ունեցած սեփականության իրավունքը⁸:

Ընդհանուր սեփականության ինստիտուտին վերաբերող դրույթներ նախատեսվել են նաև 10-12-րդ դարերում, մասնավորապես՝ Միխիթար Գոշի «Դատաստանագրքում» ամրագրվել են ընդհանուր համատեղ սեփականությանը վերաբերելի նորմեր, որոնք մեր օրերում առավել մանրամասն կարգավորում են ստացել:

Վերոգրյալից հետևում է, որ դեռևս անտիկ ժամանակաշրջանում արձարծվել է ընդհանուր սեփականության հասկացությունը, ընդ որում՝ ինչպես մեր օրերում, այնպես էլ անտիկ շրջանում այն բնութագրվել է որպես միևնույն իրի նկատմամբ մի քանի անձանց ունեցած սեփականություն, ինչը նշանակում է, որ քննության առարկա հանդիսացող ինստիտուտը, պատմական զարգացման ուղի

⁴ St' u Зом Р., Институции Римского права, перев. Нечаева В. М., М., 1888, էջ 181:

⁵ St' u Проф. О. Амонь, Собственность., С-Петербург, 1908, էջ 3:

⁶ St' u Ավետիսյան Վ. Դ., Հռոմեական մասնավոր իրավունք, Եր., 2010, էջ 49:

⁷ St' u Маяк И. Л., Проблема собственности у Авла Галлия, Древнее право, М., 2000, էջեր 79-80.

⁸ St' u Ավետիսյան Վ. Դ., Հռոմեական մասնավոր իրավունք, Եր., 2010, էջ 49:

անցնելով, ըստ էության, համակարգային փոփոխությունների չի ենթարկվել, սակայն հարկ է փաստել, որ անտիկ ժամանակաշրջանում ընդհանուր սեփականության տեսակները տարանջատված չեն եղել:

Ընդհանուր սեփականության հատկանիշները և տեսակները

Ներպետական օրենսդրությամբ առանձնացվում է ընդհանուր սեփականության երկու տեսակ՝ համատեղ և բաժնային, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երկու կամ ավելի անձանց սեփականության ներքո գտնվող գույքը նրանց է պատկանում ընդհանուր սեփականության իրավունքով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքը կարող է սեփականությանը պատկանել՝ սեփականության իրավունքում սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշելով (բաժնային սեփականություն) կամ առանց այդ բաժինները որոշելու (համատեղ սեփականություն):

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ընդհանուր սեփականության երկու տեսակ՝ բաժնային և համատեղ, ընդ որում՝ սեփականությունը կարող է համարվել ընդհանուր բաժնային, երբ ընդհանուր սեփականության իրավունքում մասնակիցների բաժինները որոշված են: Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ սեփականությունը համարվում է բաժնային, եթե օրենքով դրա նկատմամբ սահմանված չէ համատեղ սեփականություն, ինչը նշանակում է, որ սույն հոդվածում տրված չէ ընդհանուր բաժնային սեփականության հասկացությունը: Այն բացահայտվում է միայն բացառման սկզբունքի կիրառմամբ, մինչդեռ ցանկացած երևույթի սահմանումը ենթադրում է նրա ընդհանուր և էական հատկանիշների վերացարկված արտացոլում, որպիսի պայմաններում կարելի է տալ ընդհանուր բաժնային սեփականության հետևյալ հասկացությունը. ընդհանուր բաժնային սեփականությունը իրավական նորմերի համակցություն է, որը կարգավորում է միևնույն գույքի նկատմամբ մի քանի սեփականատերերի իրավահարաբերությունները, որում սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշված է, և որոնք իրենց հայեցողությամբ կարող են տիրապետել, տնօրինել և օգտագործել իրենց բաժինը:

Ընդհանուր բաժնային սեփականության հիմնական առանձնահատկությունը սեփականության իրավունքում համասեփականատերերից յուրաքանչյուրին պատկանող բաժնի որոշակիությունն է: Ընդհանուր բաժնային սեփականության հասկացությունն ունի կարևոր գիտական նշանակություն⁹: Ընդհանուր բաժնային սեփականության հասկացությունը օբյեկտիվ իմաստով բնութագրվում է որպես իրավական նորմերի համակցություն, որը կարգավորում է միևնույն գույք-

⁹ St'u Мананкова Р. П., Правоотношение общей долевой собственности граждан по советскому законодательству, Томск, 1977, էջ 8.

քի նկատմամբ մի քանի սեփականատերերի իրավահարաբերությունները, իսկ սուբյեկտիվ իմաստով բնութագրվում է որպես երկու կամ ավելի անձանց իրավունք փոխադարձ համաձայնությամբ և իրենց հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել ընդհանուր ունեցվածքը¹⁰:

Ընդհանուր բաժնային սեփականության համասեփականատիրոջ իրավունքը կախված է նրա մասնակցության փաստից, իսկ բաժնի չափը՝ իր ներդրած միջոցների չափից, համասեփականատերեր դառնալու հանգամանքից, օրինակ՝ կտակարարի կամքից, ժառանգությամբ թողնված գույքի արժեքից և այլն¹¹:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, նախատեսելով ընդհանուր սեփականության երկու տեսակ, տարբերակման հիմքում դրել է սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշելու կամ առանց այդ բաժինը որոշելու առանձնահատկությունը: Ինչը նշանակում է, որ ընդհանուր բաժնային սեփականության բացահայտման համար անհրաժեշտ է նախևառաջ վերհանել այն հանգամանքը, թե արդյո՞ք ընդհանուր սեփականության իրավունք առհասարակ ծագում է, թե՞ ոչ, որից հետո, առաջնորդվելով օրենսգրքում ամրագրված կանոնով, տարանջատել ընդհանուր սեփականության կոնկրետ տեսակը:

Այսպիսով, ընդհանուր սեփականության երկու տեսակներն ունեն ընդհանրություն, այն է՝ թե՛ ընդհանուր համատեղ սեփականության և թե՛ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում էլ միևնույն գույքը պատկանում է մի քանի անձանց, որոնք սեփականության իրավունքով կարող են տնօրինել, տիրապետել և օգտագործել այն:

Սակայն սույն ուսումնասիրության շրջանակներում առավել կարևոր են այն տարբերությունները, որոնք ընկած են ընդհանուր սեփականության տեսակների տարանջատման հիմքում, մասնավորապես՝ ընդհանուր սեփականության երկու տեսակների դեպքում էլ սեփականատերերից յուրաքանչյուրը որոշակի բաժին ունի ընդհանուր գույքի նկատմամբ, սակայն ընդհանուր բաժնային սեփականությունում դրանց չափերը նախապես որոշված են:

Բացի այդ, ընդհանուր համատեղ սեփականությունում սեփականատերերից յուրաքանչյուրն ունի նույնական իրավունքներ համապատասխան օբյեկտի նկատմամբ, իսկ ընդհանուր բաժնային սեփականությունում սեփականատերերի բաժնի չափը կարող է տարբերվել:

Ընդհանուր սեփականության հասկացության բացահայտումը պահանջում է սահմանազատել ընդհանուր (բազմասուբյեկտ) սեփականությունը մի քանի անձանց միջոցներով ստեղծված իրավաբանական անձի (միասուբյեկտ) սեփականությունից: Ընդհանուր սեփականության իրավունքի տարբերակիչ հատկանիշներն են ընդհանուր գույքի ամկայությունը և այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի սուբյեկտների բազմակիությունը կամ համասեփա-

¹⁰ Տե՛ս Гражданское право, под. ред. Е. А. Суханов, том 1, М., 1998, էջեր 580-581.

¹¹ Տե՛ս Բարսեղյան Ս. Կ., ՀՀ Քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Ե., 2006, էջեր 363-364:

կանատերերի գոյությունը, որից բխում է, որ ընդհանուր սեփականությունը բազմասուբյեկտ սեփականություն է¹²:

Ընդհանուր սեփականությունը բնութագրվում է բազմաթիվ սուբյեկտների և մեկ օբյեկտի առկայությամբ: Ընդհանուր սեփականության հարաբերություններ կարող են առաջանալ սեփականության իրավունքի սուբյեկտների միջև, այն է՝ քաղաքացիների, իրավաբանական անձանց, պետության, համայնքի, որոնք իրենց իրավագործությունները պարտավոր են իրականացնել փոխադարձ համաձայնությամբ¹³:

Նկատենք, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ ընդհանուր սեփականության սուբյեկտների շրջանակը, սակայն համակարգային վերլուծության արդյունքում կարող ենք եզրահանգել, որ ընդհանուր սեփականության սուբյեկտներն են քաղաքացիները, իրավաբանական անձինք, պետությունը, համայնքը:

Հատկանշական է, որ ընդհանուր սեփականությունը բնութագրող հատկանիշ հանդիսացող սուբյեկտների բազմաթիվությունը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է, իսկ մյուս էական հատկանիշը ընդհանուր օբյեկտի առկայությունն է, այսինքն՝ ընդհանուր սեփականության հարաբերությունների իրավական կարգավորման համար քննարկման առարկա է հանդիսանում միևնույն օբյեկտի նկատմամբ մի քանի սուբյեկտների սեփականության իրավունքը:

ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունից հետևում է, որ ընդհանուր սեփականության օբյեկտ է համարվում գույքը, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքի օբյեկտներն են գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, ընդ որում՝ հարկ է նշել, որ ընդհանուր սեփականության օբյեկտ կարող է լինել միայն այն գույքը, որը սեփականության իրավունքով կարող է պատկանել ընդհանուր սեփականության սուբյեկտներին:

Այսպիսով, քաղաքացիական իրավունքի տեսությունում տարբեր հեղինակների կողմից առանձնացված չափանիշների համակցությամբ հնարավոր է արտացոլել ընդհանուր սեփականության էությունը, այն է՝ ընդհանուր սեփականության համար բնորոշ հատկանիշներն են սուբյեկտների բազմաթիվությունը և միևնույն օբյեկտի առկայությունը:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է պատասխանել այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք միևնույն գույքը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով կարող է պատկանել և՛ քաղաքացիներին, և՛ պետությանը:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասի համա-

¹² Տե՛ս Նազարյան Վ., ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գիտագործնական մեկնաբանություններ, Ե., 2000, էջ 59:

¹³ Տե՛ս Гражданское право, под ред. Е. А. Суханов, том 1, М., 1998, էջ 578:

ձայն՝ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների մասնակիցներն են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք ու իրավաբանական անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը և համայնքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ պետությունը քաղաքացիաիրավական հարաբերություններում քաղաքացիների հետ հանդես է գալիս հավասար հիմունքներով, ինչը նշանակում է, որ միևնույն գույքի նկատմամբ և՛ քաղաքացիները, և՛ պետությունը կարող են ունենալ սեփականության իրավունք, միևնույն ժամանակ հարկ է առանձնացնել ՀՀ Սահմանադրությամբ որպես պետության բացառիկ սեփականություն հանդիսացող ընդերքը և ջրային ռեսուրսները, որոնց նկատմամբ ընդհանուր սեփականության որևէ այլ սուբյեկտ, բացի պետությունից, չի կարող ունենալ սեփականության իրավունք:

Հետևաբար, միևնույն գույքի նկատմամբ ընդհանուր սեփականություն և՛ քաղաքացիների, և՛ պետության միջև կարող է առաջանալ, սակայն տեսությամբ ամրագրված նորմերը կարծես պրակտիկայում կիրառություն չեն ստացել, մասնավորապես՝ պրատիկայում հայտնի չէ միևնույն գույքի նկատմամբ քաղաքացիների և պետության համասեփականություն:

Ընդհանուր բաժնային սեփականության իրավագործությունները

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 191-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետվում և օգտագործվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի սահմանած կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջել, որ իր տիրապետմանը և օգտագործմանը տրամադրվի ընդհանուր գույքի մեջ իր բաժնին համաչափ մաս, իսկ դրա անհնարինության դեպքում՝ գույքը տիրապետող և օգտագործող մյուս մասնակիցներից պահանջել վնասների հատուցում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ:

Վերոգրյալ քաղաքացիաիրավական նորմերի համակարգային վերլուծությու-

նից հետևում է, որ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի մասնակիցները կարող են տիրապետել, օգտագործել և տնօրինել միայն փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում վեճը կարող է լուծվել դատական կարգով: Ինչը նշանակում է, որ նշված իրավական նորմը հնարավորություն է վերապահում համասեփականատերերին փոխադարձ համաձայնությամբ սահմանելու ընդհանուր բաժնային սեփականությունը տիրապետելու և օգտագործելու միասնական կարգ, որի բացակայության դեպքում կողմերի միջև վեճը լուծվում է դատական կարգով:

Գույքի տիրապետման և օգտագործման բովանդակությունը բացահայտված է Օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասով, մասնավորապես՝ օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնանճի և այլ ձևերով:

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

ՀՀ օրենսդրությունը նաև կարգավորում է ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքն օգտագործելուց ստացված պտուղները, արտադրանքը և եկամուտները բաշխելու կարգը, մասնավորապես՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքն օգտագործելուց ստացված պտուղները, արտադրանքը և եկամուտները ներառվում են ընդհանուր գույքի կազմում ու բաժնային սեփականության մասնակիցների միջև բաշխվում են նրանց բաժիններին համաչափ, ընդ որում՝ նշված կանոնը նախատեսում է բացառություն, այն է՝ բաժնային սեփականության մասնակիցների համաձայնությամբ հնարավոր է անհամաչափ բաշխում:

Սույն ուսումնասիրության շրջանակներում հարկ է նաև դիտարկել պրակտիկայում առկա այն խնդիրը, որ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային հանդիսացող գույքի, մասնավորապես՝ նկուղների և ձեղնահարկի օգտագործման իրացման մեխանիզմների թերի կարգավորված լինելը առաջացնում է մի շարք խնդիրներ, օրինակ՝ ստացվում է այնպես, որ ձեղնահարկը օգտագործում են վերջին հարկի բնակիչները, իսկ նկուղները՝ առաջին: Արդյունքում խախտվում են բազմաբնակարան շենքի մյուս սեփականատերերի իրավունքները:

Ակնհայտ է, որ ընդհանուր գույքից գանձվող հարկերն ու գանձույթները կառավարելու ու պահելու ծախսերը դրվում են բաժնային սեփականության բոլոր մասնակիցների վրա, ինչն առաջացնում է բաժնային սեփականության մասնակիցների պարտավորությունների անհամաչափ բաշխում:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է առավել հստակեցնել բաժնային սեփականության օգտագործման կանոնները, մասնավորապես՝ բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքները, որոնք փաստացի որևէ մե-

կի սեփականությունը չեն հանդիսանում, բացառել ցանկացած անձի մշտական հիմունքներով օգտագործման հնարավորությունը՝ ներպետական օրենսդրությամբ ամրագրելով նշված բովանդակությամբ իրավական նորմեր, որոնք կկրեն պարտադիր բնույթ:

Այսպես.

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են շենքը կրող կառուցվածքները, շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), նկուղները, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակները, աստիճանները, վերելակները, վերելակային և այլ հորերը, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումներն ու տարածքները, որոնք օրենքով նախատեսված կարգով չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն:

Նույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ շինության սեփականատերն իրավունք չունի պահանջել, որ իր տիրապետմանը և օգտագործմանը տրամադրվի ընդհանուր գույքի մեջ իր բաժնին համաչափ մաս կամ բաժանել ընդհանուր բաժնային սեփականությունը:

Նշված իրավական նորմերից բխում է, որ օրենսդիրը բազմաբնակարան շենքի նկուղները, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը դիտարկել է ընդհանուր բաժնային սեփականություն՝ ամրագրելով նշված տարածքները բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանելության վերաբերյալ դրույթ, այսինքն՝ ստացվում է, որ բազմաբնակարան շենքի նկուղները և տանիքը համասեփականության իրավունքով պատկանում են շենքի շինությունների բոլոր սեփականատերերին, ինչը ենթադրում է նշված տարածքների նկատմամբ յուրաքանչյուրի՝ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքը, ընդ որում՝ թեև շինության սեփականատերերի համար նախատեսված է իմպերատիվ դրույթ՝ չպահանջելու իր տիրապետմանը և օգտագործմանը տրամադրել ընդհանուր գույքի մեջ իր բաժնին համաչափ մաս կամ բաժանել ընդհանուր բաժնային սեփականությունը, այնուամենայնիվ, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում ամրագրված «որոնք օրենքով նախատեսված կարգով չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն» դրույթն ինքնին չի բացառում նշված տարածքներն այլ անձանց՝ միանձնյա կամ ընդհանուր սեփականություն հանդիսանալու հանգամանքը, մինչդեռ ՀՀ օրենսդրությամբ անհրաժեշտ է հստակ իրավական կարգավորմամբ արգելել նման հնարավորության առկայությունը:

Հետևաբար առաջարկվում է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը խմբագրել հետևյալ կերպ. «Բազմաբնակարան շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), նկուղները, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակները, աստիճանները, վերելակները, վերելակային և այլ հորերը, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումներն ու տարածքները, լինելով համայնքային սեփականություն, հանդիսանում են ընդհանուր օգտագործման տարածք և չեն հանդիսանում բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերի սեփականությունը:

Նշված տարածքներն արգելվում է օտարել քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց»:

Անդրադառնալով ընդհանուր սեփականության տնօրինման առանձնահատկություններին՝ հարկ է փաստել, որ թեև ՀՀ օրենսդրությամբ ամրագրված է, որ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ, այնուամենայնիվ, նախատեսված է խնդրի լուծման այլընտրանքային տարբերակ, այն է՝ ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցը կարող է զրկվել իր սեփականությունից, մասնավորապես, հրապարակային սակարկությունների արդյունքում գույքը կարող է օտարվել՝ ստանալով փոխհատուցում՝ անկախ իր կամքից: Ինչը նշանակում է, որ համաձայնության պարտադիր լինելու հանգամանքը կրում է ձևական բնույթ:

ՀՀ վճարելի դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է այն իրավական հարցին, թե երբ է կարելի պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը պարտատիրոջ պահանջով հրապարակային սակարկություններով վաճառել: Մասնավորապես վճարելի դատարանը գտել է, որ պարտատիրոջ պահանջով հրապարակային սակարկություններով պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը կարող է վաճառվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, եթե՝

1. ընդհանուր սեփականության մասնակցի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ պարտավորությունները մարելու համար,
2. բաժինը բնեղենով առանձնացնելն անհնար է՝ առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, կամ դրա դեմ առարկում են ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները,
3. պարտատերն ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել է շուկայական գնով գնել պարտապանի բաժինը,

4. ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները հրաժարվել են ձեռք բերել պարտապանի բաժինը¹⁴:

Ակնհայտ է, որ սեփականատիրոջ համաձայնությունը ձևական բնույթ է կրում, և բաժնային սեփականությունը ցանկացած դեպքում կարող է առանձնացվել, եթե սեփականության մասնակիցներից մեկը ցանկություն է հայտնում առանձնացնել իր բաժինը, ինչն արդարացված է այն հիմնավորմամբ, որ ընդհանուր սեփականությունը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու յուրաքանչյուրի իրավունքը ենթադրում է սեփականատիրոջ կողմից իր բաժնին համաչափ սեփականության իրավագործություններն իր հայեցողությամբ և առանց խոչընդոտների իրացնելու հնարավորություն:

Միևնույն ժամանակ, ՀՀ օրենսդրությունը նախատեսել է երաշխիքներ, մասնավորապես՝ բաժնային սեփականության մասնակիցը զրկվում է իր սեփականությունից միայն համապատասխան փոխհատուցում ստանալու դեպքում:

Փաստորեն ՀՀ օրենսդրությունը նման կարգավորում է նախատեսել այն հիմնավորմամբ, որ սեփականության յուրաքանչյուր մասնակից (անկախ սեփականության ձևից) իրավունք ունի տնօրինել իր գույքը, և սեփականատիրոջ նշված սահմանադրական իրավունքը չի կարող սահմանափակվել միայն այն պատճառով, որ համասեփականատերն առարկում է, այսինքն՝ բաժնային սեփականության մյուս մասնակիցների շահը ևս կարևորվում է, և ՀՀ օրենսդրությունը, տալով խնդրի լուծման նման կարգավորում, ըստ էության, չի սահմանափակում սեփականատերերից որևէ մեկի սահմանադրական իրավունքը, այլ սպառնում է հավասարակշռություն բաժնային սեփականության բոլոր մասնակիցների իրավունքների պաշտպանության համար:

Եզրակացություն

Ընդհանուր բաժնային սեփականության հարաբերությունների իրավական կարգավորման պատմական զարգացումը սկսում է դեռևս անտիկ ժամանակաշրջանից, որի պատմական զարգացման ուղին ուսումնասիրելով՝ կարող ենք եզրահանգել, որ ընդհանուր սեփականության հարաբերությունների համանման կարգավորում առկա է եղել դեռևս վաղ ժամանակաշրջանից սկսած, սակայն մեր օրերում այն ստացել է հստակ կարգավորում՝ ամրագրվելով ՀՀ օրենսդրությամբ, որում առանձնացվել է ընդհանուր սեփականության երկու տեսակ:

Հարկ է փաստել, որ ՀՀ օրենսդիրը, նախատեսելով ընդհանուր սեփականության երկու տեսակ՝ բաժնային և համատեղ, սահմանել է միայն ընդհանուր սեփականության հասկացությունը, որից հետո ամրագրել է ընդհանուր սեփականության երկու տեսակների տարբերակման հիմքը՝ անտեսելով դրանցից յուրաքանչյուրի հասկացության սահմանման անհրաժեշտությունը:

¹⁴ ««ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Դերենիկ Մարգարյանի և մյուսների» թիվ ԳԴ4/0306/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 29.11.2013 թվականի որոշումը:

Փաստորեն, ներպետական օրենսդրությամբ տրված չէ ընդհանուր բաժնային սեփականության հասկացությունը, մինչդեռ ցանկացած հիմնախնդրի հիմքում համապատասխան սահմանումն է, որը թույլ է տալիս առավել հստակ պատկերացում ունենալ ուսումնասիրվող առարկայի էության վերաբերյալ:

Գտնում ենք, որ ընդհանուր սեփականության տեսակ հանդիսացող ընդհանուր բաժնային սեփականությունը չի հանդիսանում սեփականության ինքնուրույն տեսակ, այն հիմնվում է սեփականության ընդհանուր դրույթների վրա, որի առանձնահատկությունը սեփականության սուբյեկտների բազմաթիվությունն է: Ավելին, ընդհանուր բաժնային սեփականության հարաբերությունների իրավական կարգավորումը հնարավոր չէ՝ առանց սեփականության ընդհանուր դրույթները հաշվի առնելու: Հետևաբար ընդհանուր բաժնային սեփականության հասկացության սահմանման համար անհրաժեշտ է նախնառաջ բացահայտել սեփականության հասկացությունը, սեփականության իրավունքի իրականացման եղանակները, այնուհետև ընդհանուր բաժնային սեփականությունը, դիտարկելով իբրև ընդհանուր սեփականության ենթատեսակ, տալ սահմանումը, որի շնորհիվ հնարավոր կլինի անհատականացնել տվյալ ինստիտուտը և վերհանել այս ինստիտուտին բնորոշ հատկանիշները (սեփականության սուբյեկտների բազմաթիվությունը, նրանց կամարտահայտությունը և այլն):

Հետևաբար կարելի է տալ ընդհանուր բաժնային սեփականության հետևյալ հասկացությունը. ընդհանուր բաժնային սեփականությունը իրավական նորմերի համակցություն է, որը կարգավորում է միևնույն գույքի նկատմամբ մի քանի սեփականատերերի իրավահարաբերությունները, որում սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշված է, և որոնք իրենց հայեցողությամբ կարող են տիրապետել, տնօրինել և օգտագործել իրենց բաժինը:

Անդրադառնալով ընդհանուր բաժնային սեփականության իրավագործություններին՝ հարկ է առանձնացնել «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված բազմաբնակարան շենքի նկուղները, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերի բաժնային սեփականություն հանդիսանալու հանգամանքը, մասնավորապես՝ բաժնային սեփականություն դիտարկելը չի ապահովում նշված տարածքները որևէ սեփականատիրոջ կողմից միանձնյա օգտագործումը սահմանափակելու հնարավորությունը, ինչի մասին են վկայում պրակտիկայում առկա այն խնդիրները, որ ձեղնահարկը օգտագործում են վերջին հարկի բնակիչները, իսկ նկուղները՝ առաջին, արդյունքում խախտվում են բազմաբնակարան շենքի մյուս սեփականատերերի իրավունքները, և, նկատի ունենալով, որ նշված իրավահարաբերությունը կրում է մասնավոր բնույթ, ուստի համակարգային առումով բացակայում է պետության կամ համայնքի անմիջական միջամտության հնարավորությունը, որպիսի պայմաններում առաջարկվող խնդիրը հնարավոր է լուծել օրենսդրական փոփոխությամբ՝

դրանք համայնքային սեփականություն նախատեսելով և բացառելով այդ տարածքների օտարումը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որի արդյունքում քննության առարկա հանդիսացող խնդիրը կտեղափոխվի հանրային իրավահարաբերությունների տիրույթ և համայնքային շահի պաշտպանության գործառույթի շրջանակներում պետությունը՝ ի դեմս պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռք կրերի իրավունք՝ անմիջականորեն միջամտելու և պատշաճ իրավական ընթացակարգի կիրառմամբ միջոցներ ձեռնարկելու՝ կանխելու կամ վերացնելու նմանատիպ խնդիրները:

Վերը նշվածի հաշվառմամբ առաջարկվել է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը խմբագրել հետևյալ կերպ. «Բազմաբնակարան շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), նկուղները, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակները, աստիճանները, վերելակները, վերելակային և այլ հորերը, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումներն ու տարածքները, լինելով համայնքային սեփականություն, հանդիսանում են ընդհանուր օգտագործման տարածք և չեն հանդիսանում բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերի սեփականությունը:

Նշված տարածքներն արգելվում է օտարել քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց»:

Պրակտիկայի ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ Սահմանադրություն (ուժի մեջ է մտել 22.12.2015թ.).
Constitution of Armenia 22.12.2015.
2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր.
The Universal Declaration of Human Rights is the founding document of the United Nations.
3. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա.
The European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms.
4. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ուժի մեջ է մտել 01.01.1999թ.).
The Civil Code of the Republic of Armenia 01.01.1999.
5. Ավետիսյան Վ., Հռոմեական մասնավոր իրավունք, Եր., 2010.
Avetisyan A., Roman private law, E. 2010.
6. Բարսեղյան Տ., ՀՀ Քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Ե., 2006.
Barseghyan T., RA Civil Law, first part, E. 2006.
7. Նազարյան Վ., ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գիտագործնական մեկնաբանություններ, Ե., 2000.
Nazaryan V., Scientific and practical interpretations of the RA Civil Code, E. 2000.
8. Պապյան Ռ., Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Սր. Էջմիածին, 2002.
Papayan R., The Christian Roots of the Common Law, H. E. 2002.
9. Гражданское право, под ред. Е.А.Суханов, том 1, М., 1998.
Civil law un. editor Syxanov E. A, part 1, M. 1998.
10. Гражданское право, под ред. А.П. Сергеев, К. Толстой, том 1, М., 2008.
Civil law un. editor Sergeev A.P., Tolstoy K., part 1, M. 2008.
11. Проф. О. Амонь, Собственность, С-Петербург, 1908.
Prof. Amon O., Property, S-Peterburg, 1908.
12. Зом Р., Институции Римского права, М., 1888.
Zom R., Institutions of Roman Law, M. 1888.
13. Маяк И. Л., Проблема собственности у Авла Галлия, Древнее право, М., 2000
Mayak I. L., The problem of property in Aulus Gallius, M. 2000.
14. Мананкова Р.П., Правоотношение общей долевой собственности граждан по советскому законодательству, томск 1977.
Manankova R.P., The legal relationship of common share ownership of citizens under Soviet legislation, t. 1977.

Samine Petrosyan

*Senior Prosecutor of the Prosecutor's Office of
Malatia-Sebastia Administrative District of Yerevan City*

EVOLUTION OF THE LEGAL REGULATION OF COMMON OWNERSHIP RELATIONS¹

Abstract

Abstract

The article concerns the legal regulation of the relations of common ownership, addressing the types of common ownership and the jurisdiction over common ownership.

The article provides the concept of common ownership that is, common ownership is a combination of legal norms that regulates the legal relations of several owners with respect to the same property, in which the share of each of the owners is determined, and who, at their discretion, can own, dispose of and use their share.

In addition, in the framework of this study, the problem in practice regarding the use of common areas of a multi-apartment building has also been identified since it is necessary to further clarify the rules for the use of shared ownership, in particular the areas of common use of a multi-apartment building that are not actually owned by anyone, to exclude the possibility of use by any person on a permanent basis, by establishing legal norms with this content in domestic legislation, which will be mandatory.

Keywords: common share ownership; property; possess; use; dispose; owner.

¹ The article was presented on 31.01.2024 and was reviewed on 03.05.2024.

Самине Петросян

*Старший прокурор прокуратуры административного округа
Малатия-Себастья города Ереван*

ЭВОЛЮЦИЯ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ОТНОШЕНИЙ ОБЩЕЙ ДОЛЕВОЙ СОБСТВЕННОСТИ¹

Абстракт

Статья касается правового регулирования отношений общей долевой собственности, в которой были затронуты виды общей собственности и полномочия общей долевой собственности.

В статье предложено уточнить законодательством РА круг субъектов общей долевой собственности, а также дано понятие общей долевой собственности, то есть общей долевой собственности является сочетание правовых норм, регулирующих правоотношения нескольких собственников в отношении одного и того же имущества, в котором определена доля каждого из собственников, и которые по своему усмотрению могут владеть, распоряжаться и использовать свою долю.

Кроме того, в рамках данного исследования была выявлена проблема, существующая на практике в отношении использования общих территорий многоквартирного здания, поскольку необходимо более четко определить правила использования долевой собственности, в частности, общих территорий многоквартирного здания, которые фактически не являются собственностью кого-либо, исключить возможность использования любым лицом на постоянной основе, закрепив внутренним законодательством правовые нормы указанного содержания, которые будут иметь обязательный характер.

Ключевые слова: долевая собственность; имущество; владеть; пользоваться; распоряжаться; владелец.

¹ Статья была представлена 31.01.2024 и прошла рецензирование 03.05.2024.

Հայկուհի Մարտիկյան

Երևանի կայսագործի զինվորական դատախազության դատախազ

ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԳՆՄԻՉԱԿԱՆՈՐԵՆ ԾԱԳԱԾ ՀԻՄՆԱՎՈՐ ԿԱՍԿԱԾԻ ՀԻՄՔՈՎ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ²

Համառոտագիր

Հոդվածում քննարկվում է հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում անձի ձերբակալման հիմքերի, դատավարական կարգի և առանձնահատկությունների առնչությամբ որոշ հիմնախնդիրներ, մասնավորապես՝ այդ հիմքով անձին ձերբակալելու բացարձակ հնարավորությունը մինչև քրեական վարույթ նախաձեռնելը:

Քննարկման առարկա է դարձվել նաև *in flagranti delicto* (անձին ենթադրյալ հանցագործությունը կատարելու պահին (տաք հետքերով) բռնելու) սկզբունքը, արդյունքում՝ հեղինակը հետևության է հանգել, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության առավել լայն դեպքերի շրջանակ է սահմանվում, քան տվյալ իրավական տերմինի բուն էությունն է:

Վերլուծվում է նաև ձևավորված այն պրակտիկան, որի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակցի՝ հանցանքի կատարումը վկայող փաստի անմիջական ընկալումը բացառիկ իրավասությամբ պայմանավորում է անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձի ձերբակալումը:

Քննարկվում են նաև դատավարական լուծում պահանջող այն դեպքերը, երբ վարույթն իրականացնող մարմինը հետաքննության մարմնի աշխատակիցների օժանդակությամբ իրականացնում է որևէ ապացուցողական գործողություն և հայտնաբերում է տվյալ վարույթի առարկան կազմող ենթադրյալ հանցանքին վերաբերող իրեղեն կամ այլ ապացույց:

Հեղինակը եզրահանգում է, որ ձևավորված պրակտիկայի պայմաններում թերևս միակ լուծումը ձերբակալման նոր հիմք նախատեսելն է:

Հիմնաբառեր - դատավարական հարկադրանքի միջոց, ձերբակալում, ձերբակալման հիմքեր, անմիջականորեն ծագած հիմնավոր կասկած

² Հոդվածը ներկայացվել է 04.03.2024 թ., գրախոսվել է 30.10.2024 թ.:

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Սահմանադրական այս դրույթը հիմք է հանդիսացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում որպես նպատակ արձանագրել անձի իրավունքների և ազատությունների երաշխավորման վրա հիմնված՝ ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթի իրականացման արդյունավետ կարգի սահմանումը: Սահմանված նպատակի հիմքում, իհարկե, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունն է, որը նույն օրենսգրքում իր օրենսդրական ամրագրումը ստացել է վարույթի հանրայնության սկզբունքի շրջանակներում:

Դատավարական հարկադրանքի միջոցները էապես սահմանափակում են անձանց իրավունքներն ու ազատությունները: Այս է պատճառը, որ քրեական օրենսդրության սահմանված նպատակի իրականացմանը հետամուտ լինելով՝ միաժամանակ սահմանվել է անձի իրավունքները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցների շրջանակը և դրանց կիրառման իրավաչափությունն ապահովող երաշխիքները: Մի կողմից անձի նկատմամբ հարկադրանքի միջոցների ընտրությունը պայմանավորված է քրեական դատավարության խնդիրների լուծման պատշաճ հնարավորություն ապահովելու անհրաժեշտությամբ, մյուս կողմից՝ դա հակասում է իր իրավունքների և ազատությունների սահմանափակում թույլ չտալու անձի շահագրգռվածությանը: Այս տարբերությունները ստիպում են փնտրել փոխզիջումային լուծումներ՝ քրեական դատավարությունում անձի, հասարակության և պետության շահերի հավասարակշռված պաշտպանություն ապահովելու նպատակով³:

Ի ապահովումն հատկապես իրավունքի սահմանափակման համաչափության՝ գործող քրեական դատավարության օրենսգրքի դեռևս հայեցակարգային ուղղությունների առնչությամբ քննարկումներում⁴ դիտակետում է եղել անձի նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցների, այդ թվում՝ ձերբակալման ինստիտուտի վերանայումը:

Քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ մշտապես ուշադրության կենտրոնում է եղել դատավարական հարկադրանքի միջոցների ուսումնասիրությունը, սակայն գործող դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները պահանջում են գիտական նոր հետազոտություն:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով փորձ է արվել հիմնովին վերանայել ձերբակալման հիմքերը և ընթացակարգերը: Որոշ հիմնախնդիրների կապակցությամբ առաջարկվող լուծումները առանձին ղեկքերում ստեղծում են

³ Мельников В. Ю., Обеспечение прав граждан в ходе досудебного производства. М., 2006, с. 4.

⁴ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգը հաստատվել է ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 10-ի թիվ 9 արձանագրությամբ

կիրառության տեսանկյունից խոչընդոտներ: Այս առումով հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալման հնարավորությունների վերաբերյալ որոշ հիմնահարցերը շարունակում են խնդրահարույց մնալ:

Հետազոտության նպատակը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալման համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, գործնականում առաջացող հնարավոր խնդիրների վերհանումը, որը թույլ կտա բոլորովին այլ լույսի ներքո քննարկել դրանց վերահիմաստավորման անհրաժեշտությունը, իսկ հետազոտության իրավական և փորձառական հիմք են հանդիսացել նշված հիմքով ձերբակալմանն առնչվող ՀՀ և այլ պետությունների նորմատիվ իրավական ակտերը, այդ թվում՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետազոտության առարկային վերաբերելի որոշ դատական ակտեր:

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

Հիշյալ իրավունքի ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական հիմքերի վերլուծությունը վկայում է դրա առանցքային նշանակության մասին:

Այսպես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածում համապարփակ ներկայացված է նշված իրավունքը.

«Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով»:

Մեկ այլ միջազգային փաստաթղթում՝ Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետում, մարդու ազատության ու անձեռնմխելիության իրավունքը ներկայացված է հետևյալ բնորոշմամբ.

«Յուրաքանչյուր մարդ ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել քմահաճ կերպով ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով»:

Ազատության սահմաններին է նվիրված նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի «Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք» վերտառությամբ 5-րդ հոդվածը, որը Սահմանադրության 27-րդ հոդվածի համար սկզբնաղբյուր է հանդիսացել:

Համահունչ լինելով միջազգային փաստաթղթերում ամրագրված կարգավորումներին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսդրության սկզբունքներում համանմանորեն ամրագրվել է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը⁵:

1. Ձերբակալումը՝ որպես դատավարական հարկադրանքի միջոց

Ձերբակալման կիրառմամբ անձին ազատությունից զրկելու հետ կապված հարցերը, այդ թվում՝ ձերբակալման տեսակները, յուրաքանչյուրի կիրառման հիմքերն ու նպատակները, դատավարական կարգը, իրավաչափության պայմանները, ինչպես նաև ձերբակալվածի իրավունքների և օրինական շահերի ապահովման երաշխիքները, կանոնակարգված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «Ձերբակալումը» վերտառությամբ 13-րդ գլխում:

«Ձերբակալման» հասկացությունը

«Ձերբակալումը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով կամ մեղադրյալին դատարան ներկայացնելու նպատակով անձնական ազատության իրավունքի սահմանափակումն է՝ առանց դատարանի որոշման»⁶:

Այսպես է բնորոշում գործող քրեական դատավարության օրենսգիրքը ձերբակալում հարկադրանքի միջոցը: Հարկ է նկատել, սակայն, որ նշված ձևակերպումը, արտացոլում է միայն նույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասում թվարկած ձերբակալման տեսակները, իսկ Սահմանադրության՝ վերը մեջբերված 27-րդ հոդվածը փակ շրջանակում թվարկում է այն դեպքերը, որոնց հիման վրա օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում և այդ թվում միայն հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի կամ մեղադրյալին դատարան ներկայացնելու նպատակով ձերբակալման հիմքերը չեն ամրագրված:

Ձերբակալման տեսակները

Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն Սահմանադրությամբ նախատեսված կոնկրետ դեպքերում: Դա է պահանջում Սահմանադրության 27-րդ հոդվածը: Վիճարկման առարկա չի կարող լինել այն, որ մարդու անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի կարևորագույն երաշխիքը Սահմանադրությունը համարում է օրենքը, որով պետք է սահմանվեն և որին համապատասխան պետք է իրականացվեն մարդուն ազատությունից զրկելու դեպքերը և ընթացակարգը: Իրավաբանական գրականության մեջ անձին ազատությունից զրկելու հիմքերը բնորոշվում են նաև որպես անձի ազատության սկզբունքից բացառություններ:

⁵ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդված

⁶ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 44-րդ կետ

Ոչ որ չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

- 1) *անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար,*
- 2) *դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար չկատարելը,*
- 3) *օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով,*
- 4) *անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով,*
- 5) *անչտահասակին դատփարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով,*
- 6) *հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով,*
- 7) *անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով⁷:*

Անդրադառնալով գործող քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներին՝ առանձնացվում է ձերբակալման երեք տեսակ.

- 1) *հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում,*
- 2) *ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար,*
- 3) *խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ:*

Հատկանշական է, որ դեռևս նույն օրենսգրքի նախագծի⁸ տարբերակում որպես ձերբակալման տեսակ էր նախատեսվել նաև վարույթի մասնավոր մասնակիցների (բացառությամբ պաշտպանի և լիազոր ներկայացուցչի), ինչպես նաև փորձագետի, թարգմանչի, վկայի՝ սույն օրենսգրքով նախատեսված պարտականությունների կատարումն ապահովելու համար կարճաժամկետ ձերբակալումը: Նշված հիմքը քննադատությունների բախվելուց հետո, ի վերջո, տեղ չի գտել ձերբակալման տեսակների շարքում, սակայն տեղին է փաստել, որ օրենսգրքում ձերբակալման նման հիմք նախատեսելը լիովին համապատասխանում է անձին ազատությունից զրկելու թե՛ միջազգային չափանիշներին և թե՛ ներպետական չափանիշներին՝ ելնելով նաև վերոնշյալ անձանց արգելանքի վերցնելու դատավարական անհրաժեշտությունից:

⁷ ՀՀ սահմանադրության 27-րդ հոդված

⁸ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/2085/justification>

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալումը

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2022 թվականի հունիսի 1-ից գործողության մեջ դրվելուց հետո օրենքի միատեսակ կիրառության բացակայության պայմաններում իրավակիրառ մարմինը բախվել է լուրջ իրավական խոչընդոտների: Դատական պրակտիկան ընթացել է երկու ուղղությամբ. ըստ առաջին տեսակետի՝ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձը կարող է ձերբակալվել միայն քրեական վարույթ նախաձեռնելուց առաջ, իսկ երկրորդ տեսակետի համաձայն՝ քրեական վարույթ նախաձեռնելուց հետո ևս անձը կարող է անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալվել: Մինչև վերջերս բացակայում էր ձերբակալման նշված հիմքերի կիրառման միատեսակ պրակտիկան, ինչին փորձ է արվել վերջ դնել ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի 2024 թվականի հունվարի 18-ի որոշմամբ:

Մեջբերված որոշումը ուղենշել է խնդրո առարկա հիմքով անձին ձերբակալելու հնարավորության սահմանները, ինչը, սակայն, չի բացառում կիրառման տեսանկյունից խնդրահարույց իրավիճակների առկայությունը:

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկած

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի բազմաթիվ հոդվածներում կարող ենք հանդիպել «հիմնավոր կասկած» կամ «ողջամիտ կասկած» հասկացություններին⁹: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի շեմը փորձ է արել սահմանազձել մի շարք որոշումներում¹⁰:

Անձի կողմից հանցանք կատարելու փաստական տվյալների ծավալը կանխորոշում է կասկածի շեմը, որով պայմանավորված կարող է փոխվել ենթադրյալ հանցանք կատարած անձի դատավարական կարգավիճակը: Հիմնավոր կասկած չափորոշիչը փաստերի և տեղեկությունների ամբողջությունն է, որոնք թույլ են

⁹ Հարկ է նկատել, որ նշված «probable cause» չափորոշիչը կիրառելի է նաև ապացուցողական գործողությունների ժամանակ, օրինակ՝ բնակարանի խուզարկության, հաղորդակցությունների վերահսկման թույլտվությունների հիմնավորման համար:

¹⁰ Տե՛ս «Գուսինսկին ընդդեմ Ռուսաստանի» (Gusinskiy v. Russia) գործով 2004 թվականի մայիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 70276/01, կետ 53, «Կ. Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի» (K. F. v. Germany) գործով 1997 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 144/1996/765/962, կետ 57, «Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Murray v. The United Kingdom) գործով 1994 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 14310/88, կետ 56, «Վլոչն ընդդեմ Լեհաստանի» (Wloch v. Poland) գործով 2000 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 27785/95, կետ 109, «Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի» գործով 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 23978/06, կետ 136:

տալիս կողմնակի դիտորդին ողջամտորեն կարծելու, որ հավանական է հանցանքի բացահայտման համար անհրաժեշտ ապացույցների գոյությունը¹¹:

Վերոգրյալից հետևում է, որ հիմնավոր կասկածը անձի հանցանքին առնչություն ունենալու ապացուցման չափորոշիչ է, որը գործում է նաև ձերբակալումը հիմնավորելիս, ենթադրում է իրականությանը համարժեք «կարծիք», և այդ կարծիքի առկայության լեզվատիմությունը փաստող որոշակի տեղեկություններ:

Ուշադրության է արժանի, որ դեռևս նախորդ քրեական օրենսդրության գործողության պայմաններում ընդունված այն մոտեցումը, համաձայն որի՝ հանցանք կատարած լինելու կասկածանքի նվազագույն աստիճանն անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելն է, շարունակում է պահպանել իր արդիականությունը: Գործող քրեական դատավարության օրենսգիրքը թեև հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած կասկածին վերապահել է հիմնավոր լինելու որակական պահանջով, սակայն, կարծում ենք, որ քրեական հետապնդում իրականացնելու համար բավարար և կալանքը որպես խափանման միջոց ընտրելու համար նախատեսված կասկածի շեմը չի կարող նույնացվել: Այս մասին դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2009 թվականի սեպտեմբերի 12-ի ՍԴՈ-827 որոշմամբ՝ մասնավորապես ընդգծելով, որ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի բավարար աստիճանը ձերբակալման դեպքում ավելի ցածր է, քան կալանավորման:

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում անձի ձերբակալման հիմքերը

Անձը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում կարող է ձերբակալվել, եթե՝

- 1) *նա բռնվել է ենթադրյալ հանցանքը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո,*
- 2) *սկանստեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին՝ որպես քրեական օրենքով նախատեսված արարքը կատարողի,*
- 3) *տվյալ անձի կամ նրա հագուստի կամ նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում, ներառյալ տրանսպորտային միջոցում, հայտնաբերվել են քրեական օրենքով նախատեսված արարքի կատարմանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքեր,*
- 4) *առկա են հանցանքի կատարմանը անձի առնչությունը հաստատող այլ հիմքեր, և միաժամանակ նա դեպքի վայրից կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձ է կատարել կամ չունի բնակության մշտական վայր, կամ նրա ինքնությունը պարզված չէ:*

¹¹ «Ֆոկսը, Քեմբլին ու Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Fox, Campbell and Hartley v. The United Kingdom) գործով 1990 թվականի օգոստոսի 30-ի վճռում, զանգառներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, կետ 40:

2. Հանցագործության կանխման և խափանման *in flagranti delicto* իրավական սկզբունքը

2024 թվականի հունվարի 18-ի որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում ձերբակալման ինստիտուտի հիմքում դրված է հանցագործության կանխման և խափանման *in flagranti delicto* (անձին ենթադրյալ հանցագործությունը կատարելու պահին (տաք հետքերով) բռնելու) սկզբունքը: (...) Ձերբակալման տվյալ տեսակի առանձնահատկությունը նաև նրանում է, որ այն, որպես կանոն, կիրառվում է մինչև քրեական վարույթ նախաձեռնելը, և հենց ձերբակալման փաստն էլ դառնում է քրեական վարույթ նախաձեռնելու առիթը (...):»:

In flagranti (flagrante) delicto իրավական տերմինը թարգմանաբար նշանակում է «անձը բռնվել է հանցանք կատարելու պահին»¹²: Այն կարող ենք համապատասխանեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածում թվարկված՝ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալման դեպքերից միայն մեկին՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, այն է՝ անձը բռնվել է ենթադրյալ հանցանքը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո:

Օրենսդիրը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմք է սահմանում նաև, եթե ականատեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին որպես քրեական օրենքով նախատեսված արարքը կատարողի, կամ եթե տվյալ անձի կամ նրա հագուստի կամ նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում, ներառյալ տրանսպորտային միջոցում հայտնաբերվել են քրեական օրենքով նախատեսված արարքի կատարմանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքեր, ինչպես նաև, եթե առկա են հանցանքի կատարմանը անձի առնչությունը հաստատող այլ հիմքեր, և միաժամանակ նա դեպքի վայրից կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձ է կատարել կամ չունի բնակության մշտական վայր, կամ նրա ինքնությունը պարզված չէ:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածը անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության առավել լայն դեպքերի շրջանակ է սահմանում, քան տվյալ իրավական տերմինի բուն էությունն է:

Նման տեսակետը, իհարկե, կորցնում է իր ակտուալությունը ՀՀ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման պայմաններում, սակայն կարծում ենք, որ համանման մեկնաբանությունը համապատասխանում է քրեական դատավարության օրենսդրությանը և քրեադատավարական մի շարք փոփոխությունների հետ մեկտեղ կարող էր ապահովել սահուն անցում դատավարական նոր իրողության:

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի

¹² https://www.oed.com/dictionary/in-flagrante-delicto_adv

հիմքով անձին ձերբակալելու հիմքի կիրառումը սահմանափակվում է նաև այն առումով, որ որոշ հանցանքների դեպքում թե՛ տեսականորեն և՛ թե գործնականում բացառվում է այդ հիմքով ձերբակալումը:

Խոսքը հատկապես վերաբերում է նյութական հանցակազմերին, երբ վրա հասնող հետևանքը օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է և պահանջվում է որոշակի ժամանակ այդ հետևանքի վրա հասնելու համար: Դիտարկենք ինքնասպանության հասցնելու հանցակազմը. այս դեպքում հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները կարող են անմիջապես չնախորդել ինքնասպանությանը: Օրինակ՝ երբ հանցավորի գործողությունները՝ սպառնալիքը, դաժան վերաբերմունքը կամ անձնական արժանապատվությունը նվաստացնելը, արտահայտվում են ոչ թե մեկանգամյա դրսևորման ձևով, այլ կրում են պարբերաբար բնույթ՝ տուժողին հասցնելով աստիճանաբար, երկարատև հոգեճնշող վիճակի, որի ազդեցությամբ վերջինը դիմում է ինքնասպանության: Քննարկվող հանցանքի հատկանիշներով քրեական վարույթ նախաձեռնելուց հետո, ընդ որում՝ վարույթ նախաձեռնելուց կարճ ժամանակ անց, կարող են փաստական տվյալներ ձեռք բերվել այդ հանցանքը կոնկրետ անձի կողմից կատարելու վերաբերյալ¹³, և ակնհայտ է, որ վարույթն իրականացնող մարմինը լրացուցիչ ապացուցողական գործողություններով, որոնց կատարման համար նույնպես պահանջվում է ժամանակ, լրացնում է անձին մեղսագրվող արարքի փաստակազմը՝ ապահովելով քրեական հետապնդում հարուցելու շեմը, քրեական հետապնդում է հարուցվում և կալանքը որպես խափանման միջոց ընտրելու նպատակով անձին ձերբակալելու մասին որոշում է կայացվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար:

Վերոգրյալից հետևում է, որ քրեական վարույթ նախաձեռնելուց հետո կոնկրետ անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի հավաքմանն ուղղված վարույթային գործողությունները կատարվում են նույն անհապաղությամբ, ինչ անձին անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալելու դեպքում, սակայն այն տարբերությամբ, որ հանցանքի մեջ կասկածվող անձը չունի որևէ դատավարական կարգավիճակ, և վարույթն իրականացնող մարմնի համար ստեղծվում են խոչընդոտներ անձի օրինական վարքագծի նկատմամբ հսկողություն իրականացնելու տեսանկյունից:

Կասկածյալի՝ որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտի առկայությունը տեսության մեջ արժանացել է բազմաթիվ քննադատությունների: Շատերն այն համոզման են, որ «կասկածյալ» տերմինը համահունչ չէ անմեղության կանխավարկածի սկզբունքին: Քրեական դատավարության գործող օրենսգիրքը շրջանցել է այս սուբյեկտի իրավական կարգավորման վերաբերյալ առկա հիմ-

¹³ Երբ ակնաստեղ (վկան) ցուցումներով հայտնում է (մատնանշում է) տվյալներ կոնկրետ անձի կողմից հանցանքի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների կատարման վերաբերյալ:

նախնդիրներից՝ ընդհանրապես հրաժարվելով կասկածյալ դատավարական սուբյեկտից: Միշտ չէ, որ քրեադատավարական հարաբերությունների ծագման պահին բավարար ապացույցներ են լինում անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համար, բայց մինչ այդ քրեական դատավարությունում հայտնված անձը պաշտպանության իրավունք ունի և այն իրականացնում է որոշակի կարգավիճակ ձեռք բերելուց հետո: Եվ նման պայմաններում ամենևին պատահական չէ, որ քրեական դատավարության գործող օրենսգիրքը անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով արգելանքի վերցված անձին ձերբակալվածի կարգավիճակով է դարձնում քրեական դատավարության հարաբերությունների սուբյեկտ՝ դրանից բխող իրավունքներով և պարտականություններով:

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածը և մինչդատական վարույթի փուլային կառուցվածքը

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածը բացառապես հետաքննության մարմնի աշխատակցի անմիջական ընկալման հետ պայմանավորելը, կարծում ենք, չի բխում գործող քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված մինչդատական վարույթի փուլային կառուցվածքից: Հարց է ծագում, թե մինչդատական վարույթի փուլային կառուցվածքը ինչպես կարող է խոչընդոտել նշված՝ *in flagranti delicto* սկզբունքի իրացմանը:

Այսպես, 2022 թվականի հուլիսի 1-ից գործողության մեջ դրված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ընդունել է «հետաքննության» և «նախաքննության» դատավարական հարաբերակցության նոր հայեցակարգ. հետաքննությունն իրականացվում է նախաքննությանը զուգահեռ և նպաստում է նախաքննության խնդիրների լուծմանը: Նախաքննությունը սկսվում է առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում ստանալուց հետո քննիչի կողմից քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն կազմելով, իսկ քրեական վարույթ նախաձեռնելու հարցի լուծման փուլը սահմանափակված է առավելագույնը 24 ժամով:

Ակնհայտ է, որ եթե քրեական վարույթ նախաձեռնելու հարցի լուծման համար սահմանված է նման սեղմ ժամկետ և բավարար է փաստական տվյալների այնպիսի ծավալ, որին կարող է տրվել ՀՀ քրեական օրենսգրքի որևէ հոդվածին համապատասխանության նախնական իրավական գնահատական, ապա դեպքերի գերակշիռ մեծամասնության պարագայում, երբ առկա է պատշաճ հաղորդում, քրեական վարույթ նախաձեռնվելու է, իսկ այդ հանցանքը կատարելու մեջ անձին մեղադրելու համար փաստական տվյալները ձեռք են բերվելու քրեական վարույթի շրջանակներում, որպիսի պայմաններում անձի նկատմամբ փաստացի քրեական հետապնդում է իրականացվում՝ առանց նրան որևէ կարգավիճակ շնորհելու, և քրեական հետապնդում իրականացնող մարմինը չունի դատավա-

րական այլընտրանք, քան անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը, այնուհետև դատավարական այն ընթացակարգը պահպանելը, որն անհրաժեշտ է նրան դատարան ներկայացնելու նպատակով ձերբակալելու համար:

Իրավահամեմատական վերլուծություն անցկացնենք այն երկրներից մեկի օրենսդրության միջև, որտեղ *in flagranti delicto* սկզբունքի իրացումը չի բախվում որևէ իրավական խոչընդոտի՝ պայմանավորված նաև այն հանգամանքով, որ նախաքննությանը նախորդում է դատավարական ինքնուրույն փուլ: Այս առումով ուշագրավ է Ֆրանսիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրության լուծումները՝ նկատի ունենալով նաև միևնույն՝ ռոմանո-գերմանական իրավական ընտանիքին պատկանելությունը:

1958 թվականին ընդունված և մինչ օրս գործող Ֆրանսիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի¹⁴ համակարգային ուսումնասիրությունից երևում է, որ «հետաքննությունը» (*enquête*) մինչդատական վարույթի ինքնուրույն փուլ է՝ օրենսդրորեն վերապահված գործառնությունով և սուբյեկտային կազմով: Նշված օրենսգրքի «Առաջին մասի» 14-րդ հոդվածը նվիրված է (դատական) ոստիկանությանը (*la police judiciaire*), որը հետաքննության իրականացման սուբյեկտ է և կոչված է «պարզել քրեական օրենսդրության խախտման փաստը, խախտում կատարած անձի ինքնությունը և այդ առնչությամբ ապացույցներ հավաքել»: Ընդ որում՝ հետաքննությունը սահմանափակված չէ ժամկետներով, իսկ հետաքննության և նախաքննության միջև հարաբերակցությունը հատվում է քրեական գործի հարուցմամբ (քրեական վարույթի նախաձեռնում): Բացի այդ, հետաքննությունը սկսելու համար որևէ դատավարական ակտ չի պահանջվում:

Համադրելով Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրությունների միջև տարբերությունները՝ հանգում ենք հետևյալին.

1. ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում հետաքննության փուլը նախատեսված չէ որպես քրեական գործի հարուցման փուլին նախորդող գործունեություն, որպիսի պայմաններում առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում ստանալու պահից, բայց ոչ ուշ, քան 24 ժամը լրանալը, քննիչը պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնել և ձեռնամուխ լինել նախաքննության կատարմանը, մինչդեռ ֆրանսիական օրենսդրության համաձայն՝ հետաքննությունը սկսելու համար դատավարական ակտ կազմելու քրեադատավարական պահանջ անգամ սահմանված չէ:

2. Ֆրանսիական քրեական դատավարության օրենսդրության համաձայն՝ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալումը մշտապես նախորդում է քրեական վարույթ նախաձեռնելուն, քանի որ մինչ այդ (դատական) ոստիկանության կողմից իրականացվում է հետաքննություն, որը որպես

¹⁴ <https://www.legifrance.gouv.fr/codes/id/LEGIARTI000006575204/>

մինչդատական վարույթի առանձին փուլ ժամանակային առումով սահմանափակված չէ և ավարտվում է քրեական գործի հարուցման համար անհրաժեշտ հիմքերի հաստատման, այդ թվում՝ հանցանք կատարած անձի ինքնությունը պարզելուց հետո:

Հատկանշական է նաև այն, որ նույն ֆրանսիական օրենսդրության կարգավորումների պայմաններում մինչև վարույթ նախաձեռնելը՝ անձին ազատությունից զրկումը համարվում է անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալում, իսկ նախաքննության ընթացքում անձը ձերբակալվում է անձին արգելանքի վերցնելու դատարանի կարգադրագրի (մանդատ) հիման վրա: Այս առումով ուշադրության է արժանի այն, որ գործող օրենսգրքի հայեցակարգում հաստատվել էր համանման մոդել և նախատեսվում էր, որ ձերբակալումը կարող է կիրառվել կա՛մ հանցանք կատարած լինելու անմիջական ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում, կա՛մ մեղադրյալին դատարան ներկայացնելու կարգադրագրի հիման վրա¹⁵:

3. Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալման ընդհանուր կանոնը և ընդհանուր կանոնից բացառությունը

Այսուհետ կիրառելի ընդհանուր կանոնն այն է, որ անձը կարող է անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալվել մինչև քրեական վարույթ նախաձեռնելը և բացառապես հետաքննության մարմնի սեփական նախաձեռնությամբ:

Ընդհանուր կանոնից միակ բացառությունը վերաբերում է գաղտնի քննչական գործողություններ կատարելու ընթացքում ենթադրյալ հանցանքը կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալելու հնարավորությանը, քանի որ հետաքննության մարմնի աշխատակիցը տվյալ դեպքում գործում է սեփական նախաձեռնությամբ և անմիջականորեն կարող է բախվել ենթադրյալ հանցանքի փաստին և այն կատարողին¹⁶:

ՀՀ Վճռաբեկ դատարանը ընդհանուր կանոնից բացառություն սահմանելու հետ մեկտեղ՝ անդրադարձել է դրանից բխող ոչ պակաս կարևորություն ունեցող այն դեպքերին, երբ վարույթն իրականացնող մարմինը հետաքննության մարմնի աշխատակիցների օժանդակությամբ իրականացնում է որևէ ապացուցողական գործողություն և հայտնաբերում է տվյալ վարույթի առարկան կազմող ենթադրյալ հանցանքին վերաբերող իրեղեն կամ այլ ապացույց: Նման դեպքերում ձերբակալում չի կարող իրականացվել անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի

¹⁵ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգ, հաստատվել է ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 10-ի թիվ 9 արձանագրությամբ, կետ 2.19:

¹⁶ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2024 թվականի հունվարի 18-ի թիվ ՀԿԴ/0188/06/23 որոշում, կետ 15:

հիմքով: Իսկ եթե ձեռք է բերվում նոր առերևույթ հանցանքի փաստի մասին վկայող ապացույց կամ հայտնաբերվում է նոր առերևույթ հանցանքի փաստ, հետաքննության մարմնի աշխատակիցն իրավասություն է ստանում գործադրելու ձերբակալման ինստիտուտը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածում ամրագրված է խուզարկության ընդհանուր պայմանները:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն.

«Բացի խուզարկության որոշման մեջ նշվածից, քննիչը վերցնում է նաև խուզարկության ընթացքում հայտնաբերված այն բոլոր օբյեկտները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հանված են շրջանառությունից կամ գտնվում են ապօրինի շրջանառության մեջ՝ անկախ տվյալ վարույթին դրանց առնչությունից, կամ որոնք իրենց բնույթով, բովանդակությամբ, տարբերակիչ նշաններով կամ իրենց վրա առկա հետքերով կարող են կապված լինել այդ կամ մեկ այլ ենթադրյալ հանցագործության հետ»:

Մեջբերված հոդվածը թույլ է տալիս վարույթն իրականացնող քննիչին կոնկրետ դեպքով խուզարկության ընթացքում վերցնել նաև օբյեկտները, որոնք իրենց անհատականացնող հատկանիշներով կապված են այլ ենթադրյալ հանցագործության հետ:

Ստացվում է, որ կոնկրետ վարույթի շրջանակներում կատարվող ապացուցողական գործողության շրջանակներում ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվող անձը կարող է ձերբակալվել հետաքննության մարմնի կողմից այլ ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվելու դեպքում, սակայն այդ՝ մեկ այլ հանցանքի հետ առնչություն ունեցող առարկաները տվյալ վարույթի հետ դատավարական որևէ կապվածություն չունենալու պայմաններում վերցվում են վարույթն իրականացնող քննիչի կողմից: Բացի այն, որ այդ իրավիճակում դատավարական գործողությունների միջև տրամաբանական շղթան բացակայում է, իրավական լուծում է պահանջում այն հարցը, թե այդ առարկաները ինչպես են դատավարականացվելու մյուս վարույթի շրջանակներում:

Օրինակ՝ եթե վարույթը նախաձեռնվել է թմրամիջոցի ապօրինի իրացման հատկանիշներով, խուզարկություն է կատարվում այդ հանցանքի մեջ կասկածվող անձի բնակարանում իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոց հայտնաբերելու նպատակով, սակայն միաժամանակ հայտնաբերվում է առերևույթ զինամթերքի հատկանիշներ պարունակող օբյեկտներ՝ նոր առերևույթ հանցանքի փաստի մասին վկայող ապացույց:

Քննչական գործողությունների արձանագրությունները արտացոլում են ապացուցողական գործողությունների կատարման ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից անմիջականորեն ընկալված՝ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները: Այս տեսանկյունից, կարծում ենք, որ խնդրահարույց են նաև այն իրավիճակները, երբ հետաքննության մարմնի աշ-

խատակցի ներկայությունը չի պահանջվում ապացուցողական գործողության ընթացքում և վարույթն իրականացնող քննիչը ապացուցողական գործողության կրկին դիտարկենք՝ խուզարկության ընթացքում, ձեռք է բերում նոր առերևույթ հանցանքի փաստի մասին վկայող ապացույց:

Փաստորեն, հետաքննության մարմնի աշխատակցի՝ հանցանքի կատարումը վկայող փաստի անմիջական ընկալումը բացառիկ իրավասությամբ պայմանավորում է անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձի ձերբակալումը: Հատկանշական է նաև, որ քրեական վարույթ նախաձեռնելու ակնհայտ հիմքերի առկայության դեպքում հետաքննության մարմնի պետը¹⁷ իրավասություն ունի նաև այդ հիմքով ձերբակալված անձին վարչական շենք բերելուց հետո նրան ազատ արձակելու՝ որևէ դատավարական պարտականություն չունենալով անձին արգելանքից ազատ արձակելու հարցը քննարկելու նպատակահարմարությունը թողնելու վարույթն իրականացնող քննիչին: Օրինակ՝ երբ պարեկային ծառայության աշխատակիցը անձին ձերբակալում է խուլիզանություն կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով, անձի վարչական շենքում գտնվելու դեպքում հետաքննության մարմնի պետը նրան ազատ արձակելու մասին որոշում է կայացնում, ապա քննչական մարմնին պատշաճ կարգով հաղորդում հանցագործության դեպքի մասին:

ՀՀ Վճռաբեկ դատարանը մեջբերված որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված՝ վարույթն իրականացնող մարմին ասելով՝ պետք է հասկանալ ձերբակալելու իրավասություն ունեցող անձ՝ հետաքննության մարմին: Իսկ հակառակ մոտեցումը՝ այն, որ նշված կետում ձևակերպված վարույթն իրականացնող մարմինը քննիչն է, գնահատվել է «ձևական»¹⁸:

Կարծում ենք, վերոգրյալը որոշակի անհամապատասխանություն է առաջացնում հատկապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի կարգավորման առարկայի տեսանկյունից. քրեական վարույթի իրականացման հիմունքներում ամրագրվել է վարույթի հանրային մասնակիցներից՝ քննիչի, հսկող դատախազի և դատարանի՝ վարույթային փուլերի հաջորդականությամբ յուրաքանչյուրի դերաբաշխումը որպես վարույթն իրականացնող մարմին: Մտացվում է, որ հետաքննության մարմինը՝ օժտված լինելով բացառապես վարույթն իրականացնող մարմնին օժանդակող գործառնություններով մինչև քրեական վարույթի նախաձեռնումը այնպիսի իրավասությամբ է օժտվել, որն անգամ կարող է կանխորոշել քրեական վարույթ նախաձեռնելուց հետո քննության սկզբնական փուլում վարույթային գործողությունների կատարումը: Ներկայացված վերջին օրինակում եթե հետաքննության մարմնի պետը անձին ազատ արձակելու մասին

¹⁷ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետ

¹⁸ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2024 թվականի հունվարի 18-ի թիվ ՀԿԳ/0188/06/23 որոշում, կետ 20:

որոշում կայացնի, քրեական վարույթ նախաձեռնելուց հետո վարույթն իրականացնող քննիչը զրկվում է անձի փախուստը կանխելու, վերջինին ձերբակալվածի կարգավիճակով հարցաքննելու, ինչպես նաև նախաքննության սկզբնական փուլում «տաք հետքերով» քննությունն ապահովելու հնարավորությունից:

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետության 2021 թվականին ընդունված քրեական դատավարության օրենսգրքը քրեադատավարական նոր լուծումներով հանդերձ իր ժամանակի համար ապահովում է անցումը ժողովրդավարական և իրավական դատավարության օրենսգրքում շարունակաբար կատարվում են փոփոխություններ և լրացումներ: Այսպես, 2022 թվականից առ այսօր կատարվել են մի շարք փոփոխություններ, առկա է յուրաքանչյուր փոփոխությանը համապատասխանող շուրջ 15 ինկորպորացիա: Դատական պրակտիկան իր հերթին է վեր հանում բազմաթիվ խնդիրներ, և դրանց այն մասը, որը հնարավոր է կարգավորել դատական իշխանության ունեցած սահմանադրական լիազորությունների շրջանակում, ստանում է իր լուծումը:

Սակայն ո՛չ դատական իշխանության և ո՛չ էլ օրենսդիր իշխանության հատվածական մոտեցման պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսդրության որակական կատարելագործման խնդիրը լուծել հնարավոր չէ: Խնդիրը պահանջում է միաժամանակյա մոտեցում՝ իշխանություններից յուրաքանչյուրի սահմանադրական առաքելությանը համահունչ:

Այսպես, հողվածում ներկայացված վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ դատավարական նոր իրողությունը պահանջում է առանձնացնել հիմնավոր կասկածի երկու աստիճան՝ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկած և նախաքննության ընթացքում պարզված՝ հանցանք կատարելու հիմնավոր կասկած: Նման պայմաններում թերևս միակ լուծումը ձերբակալման նոր հիմք նախատեսելն է՝ ազատության մեջ գտնվող անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և դատարան ներկայացնելու համար: Այսօրինակ փոփոխությունը իրավաչափ է այնքանով, որքանով խիստ անհրաժեշտություն է ՀՀ վճռաբեկի դատարանի կողմից ձևավորած նոր պրակտիկայի պայմաններում:

Սույն հողվածով քննարկման առարկա են դարձվել որոշ հարցեր, որոնք, սակայն, փոքր մասն են կազմում խնդրո առարկա հարցի կապակցությամբ իրավական զարգացման անհրաժեշտությունը ընդգծելու համար: Գաղտնիք չէ, որ պետական իշխանության թևերից յուրաքանչյուրի սահմանադրական առաքելությունն է գործել ի նպաստ իրավական պետությանը բնորոշ քրեական քաղաքականության, և դատաիրավական բարեփոխումների իրականացման միայն ժամանակին հաջորդականությամբ է հնարավոր ապահովել իրավական զարգացում:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն, 22.12.2015
Constitution of the Republic of Armenia, 22.12.2015
2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021, ՀՕ-306-Ն
Criminal Procedure Code of the Republic of Armenia
3. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2024 թվականի հունվարի 18-ի թիվ ՀԿԴ/0188/06/23 որոշում
Decision of the court of Cassation of the Republic of Armenia, January 18, 2024, Criminal Case CDH/0188/06/23
4. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգ, հաստատվել է ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 10-ի թիվ 9 արձանագրությամբ
Concept of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, approved by the Government of the Republic of Armenia on 10th of March, 2011
5. Ֆրանսիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք
The French code of criminal procedure (French: Code de procédure pénale), <https://www.legifrance.gouv.fr/codes/id/LEGIARTI000006575204/> (access 01.02.2024)
6. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ
The draft of Criminal Procedure Code of the Republic of Armenia
<https://www.e-draft.am/projects/2085/justification> (access 18.01.2024)
7. https://www.oed.com/dictionary/in-flagrante-delicto_adv մուտք 04.02.2024, access 04.02.2024
8. Мельников В. Ю., Обеспечение прав граждан в ходе досудебного производства. М., 2006, с. 4.
Melnikov V. Yu., Ensuring the rights of citizens during pre-trial proceedings. М., 2006, p. 4.
9. Пурс А.Г. Задержание как мера уголовно-процессуального принуждения. Автореф. дисс. на соиск. уч. ст. канд. юрид. наук. Минск., 2010. | Международная ассоциация содействия правосудию (МАСП/IUAJ)
Purs A.G. Detention as a measure of criminal procedural coercion. Author's abstract. diss. for the job application uch. Art. Ph.D. legal Sci. Minsk, 2010. | International Association for the Advancement of Justice (IUAJ)

Haykuhi Martikyan

Prosecutor of Yerevan Garrison Military Prosecutor's Office

PROBLEMS RELATED TO DETENTION ON THE GROUNDS OF REASONABLE SUSPICION (DOUBT) OF COMMITMENT OF A CRIME¹

Abstract

The article discusses some issues related to the grounds, procedural order and features of arresting a person in the presence of a reasonable suspicion (doubt) of having committed a crime, in particular, the absolute possibility of arresting a person on that basis before initiating criminal proceedings.

The principle of *in flagranti delicto* (catch a person at the moment of committing the alleged crime) was also discussed, as a result, the author came to the conclusion that the current Code of Criminal Procedure of the Republic of Armenia defines a wider range of cases of existence of reasonable suspicion than it is the very essence of the the given legal principle.

The established practice is also analyzed, according to which the police inquiry has the exclusive authority, arresting a person on the grounds of immediately arising reasonable suspicion.

The cases requiring a procedural solution are also discussed, when the investigative body which conducts the pre-trial proceeding, with the help of police investigation, carries out any evidentiary action and discovers material or other evidence related to the alleged crime that is the subject of the given proceedings.

The author concludes that, in the conditions of the developed practice, perhaps the only solution is to provide a new ground for detention.

Keywords: means of judicial coercion; detention; grounds for detention; reasonable suspicion (doubt).

¹ The article was presented on 04.03.2024 and was reviewed on 30.10.2024.

Айкуи Мартикян

Прокурор Военной прокуратуры Ереванского гарнизона

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ЗАДЕРЖАНИЯ НА ОСНОВЕ НЕПОСРЕДСТВЕННОГО ПОДОЗРЕНИЯ В СОВЕРШЕНИИ ПРЕСТУПЛЕНИЯ¹

Абстракт

В статье рассматриваются некоторые вопросы, связанные с основаниями, процессуальным порядком и особенностями задержания лица при наличии обоснованного подозрения в совершении преступления, в частности, абсолютной возможности задержания лица на этом основании до возбуждения уголовного дела.

Обсуждался также принцип *in flagranti delicto*, в результате чего автор пришел к выводу, что действующий Уголовно-процессуальный кодекс Республики Армения определяет более широкий круг случаев задержания на основе непосредственного подозрения в совершении преступления, чем сама суть этого юридического термина.

Также анализируется сложившаяся практика, согласно которой непосредственное восприятие факта, указывающего на совершение преступления, сотрудником следственного органа, обладающего исключительными полномочиями, обуславливает задержание лица на основании непосредственно возникшего обоснованного подозрения.

Обсуждаются также случаи, требующие процессуального решения, когда орган, ведущий производство (следователь), с помощью сотрудников органов дознания осуществляет какое-либо доказательное действие и обнаруживает вещественные или иные доказательства, связанные с предполагаемым преступлением, являющимся предметом данного производства.

Автор приходит к выводу, что в условиях сложившейся практики, пожалуй, единственным выходом является создание нового основания для задержания.

Ключевые слова: мера уголовного принуждения; задержание; основания для задержания; непосредственно возникающие обоснованные подозрения.

¹ Статья была представлена 04.03.2024 и прошла рецензирование 30.10.2024.

Կարողինա Հարությունյան

*Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

**«ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԻ
ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ¹**

*«Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ
և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր
են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով»²:*

*«Միասնական բնորոշման բացակայությունը՝ հասկանալու, թե ով է կազմում
փոքրամասնություն, առանցքային խոչընդոտ է փոքրամասնությունների
իրավունքների լիարժեք և արդյունավետ իրացման համար»³:*

Համառոտագիր

21-րդ դարում, երբ առաջին հայացքից հաղթահարվել են կրոնական անհանդուրժողականության զանգվածային դրսևորումները, իսկ պետությունները ստանձնել են կրոնի և խղճի ազատության իրավունքի հարգման ու երաշխավորման պարտականությունը, կրոնի ազատության իրավունքի իրացումը շարունակում է լինել թիրախավորված, ենթարկվել քաղաքական շահարկումների և խտրականության:

Ամփոփելով կրոնական փոքրամասնությունների խնդիրը՝ կարելի է արձանագրել, որ դրանք, լինելով բնակչության մեծամասնությունից թվաքանակով պակաս, ենթակա են տարբեր սոցիալ-մշակութային ու իրավական մարտահրավերների: Կրոնական փոքրամասնությունները, ունենալով իրենց յուրահատուկ հավատամքները և ինքնությունը, կարիք ունեն ոչ միայն օրենքով ամրագրված իրավունքների պաշտպանության, այլ նաև հասարակության կողմից ընդունելիության ու հարգանքի: Այդ նպատակով անհրաժեշտ է միավորել քաղաքական, իրավական և հասարակական ջանքերը՝ ապահովելու նրանց լիարժեք

¹ Հոդվածը ներկայացվել է 28.09.2024 թ., գրախոսվել է 31.10.2024 թ.:
² Universal Declaration of Human Rights (UDHR), article 1, Source: www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights (accessed 28.09.2024)
³ Special Rapporteur on minority issues, “Concept of a minority: mandate definition”, OHCHR, 2021 Source: www.ohchr.org/EN/Issues/Minorities/SRMinorities/Pages/ConceptMinority.aspx. (accessed 28.09.2024).

ինտեգրումն ու ազատությունը իրենց կրոնական հավատամքների կամ համոզմունքների իրացման համար:

Հետազոտելով մարդու իրավունքների այս կարևոր ոլորտը՝ ուսումնասիրությունը նպատակ ունի նպաստել կրոնի ազատության իրավունքի պաշտպանության շուրջ շարունակական երկխոսությանը՝ առաջարկելով կրոնական փոքրամասնության այնպիսի սահմանում, որը կարող է օգնել ձևավորել ավելի ներառական հասարակություն և քաղաքականություն՝ պաշտպանելով բոլոր անհատների իրավունքները՝ անկախ նրանց կրոնական համոզմունքներից և որպես կրոնական կազմակերպություն գրանցված կառույցի անդամակցությունից:

Միջազգային փորձի, իրավաբան-գիտնականների տարբեր մոտեցումների վերլուծության արդյունքում առաջարկվում է կրոնական կամ համոզմունքային փոքրամասնության հետևյալ սահմանումը.

««Կրոնական կամ համոզմունքային փոքրամասնություն» տերմինը բնորոշվում է որպես պետության տարածքում փաստացի բնակվող անձանց խումբ, որը բնակչության մեծամասնությունից քանակապես փոքր է և (կամ) զբաղեցնում է ոչ գերիշխող դիրք, ունի կրոնական կամ համոզմունքային բնութագրեր և ցանկություն՝ պահպանելու իր ինքնությունը»:

Տրված սահմանման վերլուծության արդյունքում բացահայտվում են նաև կրոնական կամ համոզմունքային փոքրամասնության բնորոշ քանակական և որակական տարրերը, ինչպիսիք են՝ պետության տարածքում փաստացի բնակվելը, բնակչության մեծամասնությունից քանակապես փոքր լինելը և (կամ) ոչ գերիշխող դիրք ունենալը, կրոնական կամ համոզմունքային բնութագրերը և կրոնական կամ համոզմունքային ինքնությունը պահպանելու ցանկությունը:

Հիմնաբառեր - փոքրամասնություն, կրոնական փոքրամասնություն, մարդու իրավունքներ, կրոնի ազատության իրավունք, իրավունքների պաշտպանություն:

Ներածություն

Կրոնական փոքրամասնությունները շարունակում են տարածվել աշխարհում, իսկ կրոնական փոքրամասնությունների՝ կրոնի ազատության իրավունքի իրացման համընդգրկուն և արդյունավետ մեխանիզմների մշակումը շարունակում է մնալ արդիական խնդիր:

21-րդ դարում, երբ առաջին հայացքից հաղթահարվել են կրոնական անհանդուրժողականության զանգվածային դրսևորումները, իսկ պետությունները ստանձնել են կրոնի և խղճի ազատության իրավունքի հարգման ու երաշխավորման պարտականությունը⁴, կրոնի ազատության իրավունքի իրացումը շարունակում է մնալ արդիական խնդիր:

⁴ St'u Universal Declaration of Human Rights (UDHR). Source: www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights (accessed 28.09.2024),

նակում է լինել թիրախավորված և ենթարկվել քաղաքական շահարկումների:

Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ նաև՝ ՄԱԿ) գլխավոր վեհաժողովի (այսուհետ նաև՝ Գլխավոր վեհաժողով) կողմից 2023 թվականի դեկտեմբերի 19-ին ընդունված բանաձևով հերթական անգամ ընդգծվել է, որ կրոնը կամ խիղճը յուրաքանչյուր անձի կյանքի ընկալման հիմնարար տարրն է, իսկ կրոնի և խղճի ազատությունը՝ որպես մարդու համընդհանուր իրավունք, ինչը պետք է լիովին հարգվի և երաշխավորվի:

Նույն բանաձևով Գլխավոր վեհաժողովն իր մտահոգությունն է արտահայտել կրոնի կամ խղճի վրա հիմնված շարունակվող անհանդուրժողականության և բռնության ակտերի վերաբերյալ, որոնք ուղղված են կրոնական համայնքներին և կրոնական փոքրամասնություններին պատկանող անձանց նկատմամբ, միևնույն ժամանակ առանցքային մտահոգություն է առաջացրել նման միջադեպերի աճող թիվն ու ինտենսիվությունը:

Միևնույն ժամանակ, Գլխավոր վեհաժողովն իր խիստ մտահոգությունն է արտահայտել ինչպես սահմանափակումներ նախատեսող օրենսդրական կարգավորումների ընդունման առնչությամբ, այնպես էլ ներպետական օրենսդրության խտրական կիրարկման վերաբերյալ⁵:

International Covenant on Civil and Political Rights (ICCPR). Source: www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-covenant-civil-and-political-rights (accessed 28.09.2024),
Convention on the Elimination of All Forms of Discrimination Against Women (CEDAW). Source: www.un.org/womenwatch/daw/cedaw/ (accessed 28.09.2024), Declaration on the Elimination of All Forms of Intolerance and of Discrimination Based on Religion or Belief Source: www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/declaration-elimination-all-forms-intolerance-and-discrimination-based-religion-or-belief (accessed 28.09.2024),
African Charter on Human and Peoples' Rights. Source: www.au.int/en/treaties/african-charter-human-and-peoples-rights (accessed 28.09.2024),
European Convention on Human Rights (ECHR). Source: www.echr.coe.int/documents/convention_eng.pdf (accessed 28.09.2024),
American Convention on Human Rights Source: www.oas.org/en/iachr/mandate/Basics/Basic%20Documents/American%20Convention.pdf (accessed 28.09.2024),
The Right to Freedom of Thought, Conscience, and Religion in International Law Source: www.ohchr.org/en/special-procedures/sr-freedom-of-religion-or-belief (accessed 28.09.2024)
Banjul Charter on Human and Peoples' Rights. Source: www.achpr.org/legalinstruments/detail?id=49 (accessed 28.09.2024),
UN Resolution on the Promotion and Protection of Human Rights. Source: www.ohchr.org/en/special-procedures/sr-freedom-of-religion-or-belief (accessed 28.09.2024),
UNESCO Declaration on the Role of Religion in the Promotion of a Culture of Peace Source: www.unesco.org/en/culture/peace (accessed 28.09.2024), General Comment No. 22 (48th session) on the Right to Freedom of Thought, Conscience, and Religion Source: www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/general-comment-no-22-right-freedom-thought-conscience-and-religion (accessed 28.09.2024) և այլն
⁵ St'u Resolution adopted by the General Assembly on 19 December 2023 [on the report of the Third Committee (A/78/481/Add.2, para. 139)], N 78/212. Freedom of religion or belief. Source: <https://documents.un.org/doc/undoc/gen/n23/422/50/pdf/n2342250.pdf> (accessed 28.09.2024)

Նշված փաստաթղթերը և վերոնշյալ բանաձևը հաստատում են անհատների և համայնքների, հատկապես կրոնական փոքրամասնությունների հավատալիքները հարգելու և պաշտպանելու կարևորությունը, որոնք հաճախ բախվում են խտրականության և հալածանքի:

Վերոնշյալի համատեքստում առանձին կարևորություն են ներկայացնում նաև տվյալ պետության բնակչության մեծամասնության կրոնական հավատալիքների, համոզմունքների և կրոնական փոքրամասնության գործելակերպի հարաբերակցման, փոխադարձ հարգանքի ու հանդուրժողականության հարցերը:

Այսպես, փոքրամասնությունների և համայնքների կրոնական իրավունքներին նվիրված ուսումնասիրությունների անհրաժեշտությունը ընդգծվում է թե՛ գործնական և թե՛ տեսական նկատառումներով՝ դարձնելով այն **արդիական ոլորտ** շարունակական հետազոտությունների և տարբեր խմբերի շահերի պաշտպանության համար:

Այս հետազոտության **արդիականությունը** առկա մարտահրավերների համատեքստում քաղաքականության և իրավական բարեփոխումների համար կրոնական փոքրամասնության սահմանումը մշակելու մեջ է: Քանի որ միջազգային մարմինները և պետությունները բախվում են կրոնական ազատության խնդիրներին, նպատակային հետազոտությունները կարող են էմպիրիկ ապացույցներ և տեսական պատկերացումներ ապահովել, որոնք անհրաժեշտ են արդյունավետ քաղաքականություն և իրավական մշակույթ ձևավորելու համար:

Այս ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի գլոբալիզացված աշխարհում, որտեղ միջմշակութային և միջկրոնական առերեսումները անխուսափելի են, սակայն հաճախ առաջանում են թյուրընկալումներ և բախումներ՝ կապված տարբեր համոզմունքների հետ:

Գործնական տեսանկյունից՝ կրոնական փոքրամասնությունների բնորոշումը և դրա տարրերի բացահայտումը էական է նրանց ինքնությունը, համոզմունքները և գործելակերպը պաշտպանելու համար: Այս հետազոտությունը կարող է օգտակար լինել նաև առանձին շահագրգիռ խմբերի և քաղաքացիական հասարակության համար՝ իրենց հուզող հարցերին տալով պատասխաններ կամ բարձրացնելով նոր հարցեր:

Տեսական առումով՝ կրոնի ազատության իրավունքի սույն ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի խորը հասկանալ կրոնի, ինքնության և մարդու իրավունքների փոխազդեցությունը: Այն կարող է տեսական աղբյուր հանդիսանալ կամ նպաստել կրոնական բազմակարծության բարդություններին վերաբերող առավել համակողմանի մոտեցումների մշակմանը:

Անդրադառնալով սույն հետազոտության նպատակներին և խնդիրներին՝ հարկ ենք համարում ընդգծել հետևյալը.

Նախ՝ հետազոտությունը ձգտում է վերլուծել գոյություն ունեցող միջազգային իրավական շրջանակները և դրանց արդյունավետությունը կրոնական

փոքրամասնությունների բնորոշման հարցում: Սա ներառում է պայմանագրերի, բանաձևերի և հռչակագրերի, ինչպես նաև իրավաբան-գիտնականների մոտեցումների ուսումնասիրություն և վերլուծություն: Երկրորդ՝ հետազոտության նպատակն է բացահայտել լավագույն փորձը և ձևակերպել առաջարկություններ ազգային և միջազգային համատեքստում կրոնական փոքրամասնությունների բնորոշման համար: Սա ներառում է նորարար իրավական մեխանիզմների և համայնքակենտրոն մոտեցումների առաջարկում, որը կնպաստի հանդուրժողականության և փոխըմբռնման ամրապնդմանը:

Հետազոտելով մարդու իրավունքների այս կարևոր ոլորտը՝ ուսումնասիրությունը նպատակ ունի նպաստել կրոնի ազատության իրավունքի պաշտպանության շուրջ շարունակական երկխոսությանը՝ առաջարկելով կրոնական փոքրամասնության այնպիսի սահմանում, որը կարող է օգնել ձևավորել ավելի ներառական հասարակություն և քաղաքականություն՝ պաշտպանելով բոլոր անհատների իրավունքները՝ անկախ նրանց կրոնական համոզումներից և որպես կրոնական կազմակերպություն գրանցված կառույցի անդամակցությունից:

Նշվածի համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին.

- ո՞ր խմբերն են հանդիսանում փոքրամասնություն,
- ի՞նչ չափանիշներով է ձևավորվում փոքրամասնությունը,
- ի՞նչ մոտեցումներ են առկա միջազգային իրավունքում և իրավաբան-գիտնականների աշխատություններում,
- ի՞նչ չափանիշների հաշվառմամբ ենք առաջարկում ձևավորել «կրոնական փոքրամասնություն» սահմանումը,
- ո՞րն է «կրոնական փոքրամասնության» մեր սահմանումը:

1. «Փոքրամասնությունը»՝ որպես իրավունքի սուբյեկտ.

միջազգային և տեսական մոտեցումները, առկա մարտահրավերները

Փոքրամասնությունների կողմից կրոնի ազատության իրավունքի իրացման խնդիրների ուսումնասիրության և դրանց լուծումների մշակման համար առաջնային է սուբյեկտային կազմի հստակ ընկալումը, այն է՝ «փոքրամասնություն» եզրույթի բացահայտումը:

Այսպես, բոլոր պետություններն իրենց պետական սահմաններում՝ տարածքում, ունեն մեկ կամ մի քանի փոքրամասնությունների խմբեր, որոնք բնութագրվում են իրենց ազգային, էթնիկական, լեզվական կամ կրոնական ինքնությամբ, որը տարբերվում է տվյալ պետության բնակչության մեծամասնությունից:

1992 թվականին ընդունված ՄԱԿ-ի Փոքրամասնությունների իրավունքների մասին հռչակագրի 1-ին հոդվածը ճանաչում է փոքրամասնությունները որպես առանձին ազգային կամ էթնիկ, մշակութային, կրոնական և լեզվական խմբեր և նախատեսում է պետությունների պարտականությունը՝ պաշտպանելու նրանց գոյությունը:

Սակայն չկա միջազգայնորեն համաձայնեցված սահմանում, թե որ խմբերն են փոքրամասնություններ: Այսպես, օրինակ, Հայաստանի Հանրապետությունը ազգային փոքրամասնությունների բնորոշման հարցում փորձ է կատարել առաջարկել ազգային փոքրամասնություններին թվարկելու քաղաքականությունը⁶, մինչդեռ կրոնական փոքրամասնությունները չեն ստացել իրենց բնորոշումը ներպետական օրենսդրությամբ:

Հաճախ ընդգծվում է, որ փոքրամասնության գոյությունը փաստ է, և որ ցանկացած սահմանում պետք է ներառի և՛ օբյեկտիվ գործոններ (օրինակ՝ էթնիկական, լեզվական կամ կրոնական ինքնության առկայությունը), և՛ սուբյեկտիվ գործոններ (ներառյալ անհատների կողմից իրենց որպես փոքրամասնության անդամ ճանաչելը):⁷

Լայն ընդունելի սահմանման շուրջ համաձայնության հասնելու դժվարությունն այն է, որ փոքրամասնությունների կենսապայմանները խիստ տարբերվում են:

Նրանցից ոմանք ապրում են հստակ սահմանված տարածքներում՝ առանձնացված բնակչության գերակշռող մասից, մյուսները ցրված են ողջ պետության տարածքով: Որոշ փոքրամասնություններ ունեն իրենց հավաքական ինքնության և պատմության ուժեղ զգացողություն, մյուսները պահպանում են միայն հատվածական պատկերացում իրենց ընդհանուր արմատների մասին⁸:

Իրավաբան-գիտնական Ս. Թոմուշատը գտնում է, որ ազգային փոքրամասնությունները «խմբեր են, որոնք գիտակցում են իրենց տարբերություններն այն աստիճան, որ փորձում են տնօրինել իրենց ճակատագիրը գոնե մասամբ»⁹: Դ. Թյուրքը և Թ. Վեյթերը բնորոշում են ազգային փոքրամասնությունները որպես «մարդկանց խումբ, որոնք պատկանում են մի ազգի, որն ունի իր սեփական պետությունը, բայց ապրում է մեկ այլ, սովորաբար հարևան պետությունում»¹⁰: ԽՍՀՄ գիտնական Ս. Ի. Բրուկը գտնում է, որ «ազգային փոքրամասնություն» տերմինը միանշանակ չէ, մասնավորապես՝ շատ դեպքե-

⁶ Տե՛ս «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծ Աղբյուր՝ <https://www.e-draft.am/projects/1801/about> (մուտք՝ 28.09.2024)

⁷ Նշվածը բխում է ինչպես 2-րդ հղման մեջ թվարկված մի շարք իրավական ակտերից, այնպես էլ Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայից (հոդված 3): Աղբյուր՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81178> (մուտք՝ 28.09.2024):

⁸ Տե՛ս Организация Объединенных Наций, “Права меньшинств: международные стандарты и руководство по их соблюдению”, 2010, էջ 2:
Источник: https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/MinorityRights_ru.pdf (accessed 28.09.2024)

⁹ Տե՛ս Tomushat C., “Status of Minorities under Article 27 of the International Covenant on Civil and Political Rights”, 1985, էջ 960:

¹⁰ Տե՛ս Turk D., “Norms and institutions within the UN system Relevant to minority issues”, Conference paper № 5. Colombo. 6-10 November. 1988, էջ 29, Veiter Th., “Commentary on the Concept of “National Minorities””, Revue des Droits de l’Homme. 1974. Vol. VII

րում խոսքը վերաբերում է այն խմբերին, որոնք առանձնացված են քիչ թե շատ մեծ ազգերի հիմնական կազմից, օրինակ՝ հույները՝ Թուրքիայում, ալժիրցիները՝ Ֆրանսիայում, արբանացիները՝ Իտալիայում, և այլն: Այս տերմինի օգտագործումը ավելի քիչ արդարացված է այն ազգությունների դեպքում, որոնք չունեն իրենց պետությունը (օրինակ՝ քրդերը՝ Թուրքիայում, Իրանում, Իրաքում և Սիրիայում, բելուջիները՝ Պակիստանում, Իրանում, Աֆղանստանում և այլն), հատկապես, որ այդ ազգերը մեծամասնություն են կազմում իրենց էթնիկ տարածքներում: Որոշ դեպքերում տվյալ երկրի բոլոր ազգությունները, բացի հիմնական ազգաբնակչությունից, համարվում են ազգային փոքրամասնություններ¹¹:

Թեև նշված հեղինակները փորձ են կատարել բնորոշել «ազգային փոքրամասնություն» եզրույթը, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ «փոքրամասնություն» եզրույթի բացահայտման տեսանկյունից վերոնշյալ ձևակերպումները կարող են օգտակար լինել կամ առնվազն՝ արժանի ուսումնասիրության:

Իրավաբան-գիտնական Ն. Կատկոն «փոքրամասնություն» տերմինը բնորոշում է որպես պետության մեջ քաղաքացիների մի խումբ, որը բնակչության հիմնական մասից փոքր է և (կամ) զբաղեցնում է ոչ գերիշխող դիրք, ունի կայուն էթնիկ, լեզվական, կրոնական և մշակութային բնութագրեր և ցանկություն՝ պահպանելու իր ինքնությունը: Ընդ որում, նպատակահարմար է փոքրամասնություն ասելով հասկանալ ինչպես էթնիկ, այնպես էլ կրոնական, լեզվական և մշակութային փոքրամասնությունները և դրանք միավորել «փոքրամասնություն» ընդհանուր տերմինի ներքո¹²:

Հատկանշական է, որ Զաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում նշվում է «էթնիկական, կրոնական, լեզվական փոքրամասնություն», այլ փաստաթղթերում նշվում է միայն «ազգային փոքրամասնություններ»¹³ տերմինը: Սակայն հաճախ կիրառվելիք ազգային փոքրամասնության սահմանումն ավելի ընդգրկում է փաստացի, քանի որ ներառում է և՛ լեզվական, և՛ էթնիկական, և՛ կրոնական փոքրամասնություններին՝ առանց սահմանազատելու:

Այսպես, օրինակ, Միջազգային արդարադատության մշտական պալատը դեռևս 1930 թվականին փորձել է շարադրել ազգային փոքրամասնությունների սահմանումը հետևյալ ձևակերպմամբ. «անձանց խումբ, որը բնակվում է մեկ պետության կամ տարածաշրջանի շրջանակում, որի անդամները պատկանում են միևնույն ռասային, ունեն միևնույն կրոնը, լեզուն և ավանդույթները, և որոնց

¹¹ St'u Брук С. И., “Население мира: Этнодемографический справочник”, Наука, Москва, 1986, էջ 84:

¹² St'u Катко Н., “Критерии определения меньшинства”, Белорусский журнал международного права и международных отношений, международное право N2, էջ 38:
Источники: https://elib.bsu.by/bitstream/123456789/29315/1/2001_2_JILIR_katko_r.pdf (accessed 28.09.2024)

¹³ Օրինակ՝ Charter of Fundamental Rights of the European Union, article 21
Source: https://www.europarl.europa.eu/charter/pdf/text_en.pdf (accessed 28.09.2024)

միավորում է փոխադարձ ձգտումը՝ պահպանելու այդ ավանդույթները, կրոնը, լեզուն, իրենց զավակների կրթությունն իրենց ռասային, կրոնին և ոգուն համահունչ»:

Մեկ այլ բնորոշմամբ՝ ազգային փոքրամասնությունը, ի տարբերություն պետության բնակչության հիմնական զանգվածի, նվազ քանակություն ունեցող, դոմինանտ դիրք չգրադեցնող խումբ է, որի անդամները հանդիսանում են սույն պետության քաղաքացիները՝ օժտված էթնիկական, կրոնական, լեզվական բնութագրիչներով, որոնք բնորոշ են միայն իրենց, և որոնք ջանում են պահպանել իրենց ինքնությունը և միասնականությունը:

Միևնույն ժամանակ, տարբեր միջազգային փաստաթղթեր փոքրամասնությունների ներքո ընդգրկում են տարբեր հատկանիշներով օժտված խմբերի¹⁴:

Համաձայն 1979 թվականին ՄԱԿ-ի խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովի հատուկ զեկուցող Փրանչեսկո Կապոտորտի կողմից ձևակերպված սահմանման՝ փոքրամասնություն է «խումբը, որը թվաքանակով ավելի փոքր է, քան պետության մնացած բնակչությունը, և գերիշխող դիրք չի գրադեցնում, որի անդամները, լինելով պետության քաղաքացիներ, ունեն էթնիկ, կրոնական կամ լեզվական առանձնահատկություններ, որոնք տարբերվում են մնացած բնակչության հատկանիշներից և թեկուզ անուղղակի ձևով ցանկանում են պահպանել իրենց ինքնությունը»¹⁵:

1992 թվականի դեկտեմբերի 18-ին ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովն ընդունել է «Ազգային կամ էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին» հռչակագիրը¹⁶: Փաստաթղթի մշակման ժամանակ ևս կատարվեցին փորձեր՝ տալու ազգային փոքրամասնությունների սահմանումը, սակայն բոլոր կողմերի համար ընդունելի տարբերակ այդպես էլ չհնչեց:

Առավել իրատեսական տարբերակն առաջ քաշվեց ավստրիական պատվիրակության կողմից, որը հետևյալն է. «Փոքրամասնություն է հանդիսանում անձանց խումբը, որը բնակվում է պետության տարածքում ոչ դոմինանտ դիրքերում, որի անդամները, լինելով տվյալ պետության քաղաքացի, ունեն էթնիկ,

¹⁴ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց՝ նվիրված ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում, 2011 թ., Երևան, էջ 10:

Աղբյուր՝ <https://ombuds.am/images/files/9711eea3661a09face5102809637e692.pdf> (մուտք՝ 28.09.2024 թ.):

¹⁵ Տե՛ս Организация Объединенных Наций, “Права меньшинств: международные стандарты и руководство по их соблюдению”, 2010, էջ 2:

Источник: https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/MinorityRights_ru.pdf (accessed 28.09.2024)

¹⁶ Տե՛ս Declaration on the Rights of Persons Belonging to National or Ethnic, Religious and Linguistic Minorities, Adopted by General Assembly resolution 47/135 of 18 December 1992.

Source: https://www.ohchr.org/sites/default/files/Booklet_Minorities_English.pdf (accessed 28.09.2024)

կրոնական, լեզվական առանձնահատկություններ, որոնք տարբերվում են բնակչության այլ զանգվածներից, և որոնք ունեն կամք՝ պահպանելու իրենց մշակույթը, ավանդույթները, կրոնը և լեզուն»¹⁷:

Առաջին հայացքից տեսական երևացող այս հարցի քննարկման հիմքում ընկած են ոչ միայն կարևոր տեսական հարցի պատասխանի բացահայտումը կամ ձևակերպումը, այլև մի շարք պրակտիկ հարցերի լուծման բանաձևը:

Մասնավորապես, որոշակի խումբ անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետության տեսանկյունից առաջնային է այդ խմբի բնորոշումը, էության բացահայտումը և ընկալումը:

Այսպես, օրինակ, կրոնական կազմակերպություններն օրենքով սահմանված որոշակի հիմքերի համապատասխանության պայմաններում հնարավորություն են ունենում ստանալու իրավաբանական գրանցում, օգտվելու իրավաբանական անձի կարգավիճակից բխող իրավունքներից, առավել միասնական իրացնել անդամների կրոնի ազատության իրավունքը, արդյունավետ մեխանիզմներ մշակել տվյալ պետության հետ համագործակցության ձևաչափերի տեսանկյունից և այլն:

Գիտակցելով կրոնական կազմակերպությունների և կրոնական փոքրամասնությունների օբյեկտիվ տարբերությունները՝ վերոնշյալ մի շարք հնարավորություններից փաստացի զրկվում են կամ կարող են զրկվել կրոնական փոքրամասնությունները, որոնք գրանցված չեն որպես կրոնական կազմակերպություն կամ, օրինակ, դասվում են ոչ թեխտական և այլ համոզմունքների լայն շրջանակի (ներառյալ չհանաչված և ոչ ավանդական կրոններն ու աշխարհայացքները, օրինակ՝ անիմիստներ, աթեիստներ, ազնոստիկներ, հումանիստներ և այլն):

Փոքրամասնությունները կարող են լինել չկազմակերպված, ցրված պետության սահմաններում, չունենալ պաշտամունքի կենտրոններ և այլն, միևնույն ժամանակ որոշակի պայմաններում առավել սուր են նրանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերը, նրանց նկատմամբ անհանդուրժողականության դրսևորումները:

Ուստի, կրոնական կամ համոզմունքային փոքրամասնության եզրույթի բացահայտումը կօգնի ինդենտիֆիկացնել նշված փոքրամասնություններին, առավել արդյունավետ մեխանիզմներ ապահովել նրանց իրավունքների իրացման և պաշտպանության գործընթացում, ինչպես նաև առավել հետևողական լինել անհանդուրժողականության դրսևորումների, իրավահավասարության և հակախտրականության երաշխավորման նկատմամբ:

Ամփոփելով սույն գլուխը՝ հատկանշական են Փոքրամասնությունների

¹⁷ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց՝ նվիրված ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում, 2011 թ., Երևան, էջ 11:

Աղբյուր՝ <https://ombuds.am/images/files/9711eea3661a09face5102809637e692.pdf> (մուտք՝ 28.09.2024 թ.):

հարցերով հատուկ զեկուցողի խոսքերը. «միասնական բնորոշման բացակայությունը՝ հասկանալու, թե ով է կազմում փոքրամասնությունը, առանցքային խոչընդոտ է փոքրամասնությունների իրավունքների լիարժեք և արդյունավետ իրացման համար»¹⁸:

2. «Փոքրամասնության» բնորոշման տարրերը (չափանիշները)

Թեև այդպես էլ միասնական ընդունված սահմանում առկա չէ փոքրամասնությունների բնորոշման հարցում, այնուամենայնիվ, ուսումնասիրելով մի շարք ձևակերպումներ, սույն գլխում կքննարկվեն այն տարրերը (չափանիշները), որոնք բնորոշ են փոքրամասնություններին:

Այսպես, ներկայումս իրավական գրականության մեջ «փոքրամասնություն» եզրույթի ամենամեջբերված սահմանումը պատկանում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովի հատուկ զեկուցող Ֆ. Կապտորտին¹⁹:

«Փոքրամասնություն» հասկացության մեկ այլ՝ հաճախ հիշատակվող սահմանումը պատկանում է կանադացի իրավաբան Ժյուլի Դեշենին, որը ներկայացվել է նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովին: Ըստ Ժ. Դեշենի՝ փոքրամասնությունը սահմանվում է որպես «նույն պետության քաղաքացիների խումբ, որը կազմում է թվային փոքրամասնություն և գտնվում է այդ պետությունում ոչ գերիշխող դիրքում, այն ունի էթնիկ, կրոնական կամ լեզվական բնութագրեր, որոնք տարբերվում են բնակչության մեծամասնության բնութագրերից: Այս խմբի անդամները միմյանց հետ համերաշխության զգացում ունեն՝ դրդված, թեկուզ անուղղակիորեն, որպես խումբ գոյատևելու հավաքական ցանկությամբ, և որի նպատակն է մեծամասնության հետ փաստացի և իրավական հավասարության հասնելը»²⁰:

Ֆ. Կապտորտիի և Ժ. Դեշենի սահմանումները հենց միջազգային իրավական փորձեր են՝ սահմանելու «փոքրամասնություն» հասկացությունը: Նրանց միջև էական տարբերություններ չկան: Երկու դեպքում էլ առանցքային օբյեկտիվ բնութագրերի համակցումն է հենց այդ հատկանիշները պահպանելու սուբյեկտիվ մտադրության հետ: Երկու սահմանումներն էլ ընդգծում են «փոքրամասնության» ոչ գերիշխող դիրքը, որը սահմանափակվում է պետությունների քաղաքացիներով:

¹⁸ Stéu Special Rapporteur on minority issues, “Concept of a minority: mandate definition”, OHCHR, 2021. Source: www.ohchr.org/EN/Issues/Minorities/SRMinorities/Pages/ConceptMinority.aspx. (accessed 28.09.2024)

¹⁹ Stéu սույն հետազոտության էջ 10:

²⁰ Stéu UN Doc: E/CN.4/Sub.2/1985/31. Source: <https://digitallibrary.un.org/record/88267> (accessed 28.09.2024)

Այսպես, ըստ հեղինակների՝ «փոքրամասնությունը» կարելի է համարել որպես մեկ պետության քաղաքացիների կայուն համայնք, որը գտնվում է պետության տարածքում ոչ գերիշխող դիրքում, և որի անդամներն ունեն էթնիկ, կրոնական կամ լեզվական հատկանիշներ, որոնք տարբերվում են մնացած բնակչությունից: Այս համայնքի անդամները միմյանց հետ համերաշխության և միասնության զգացում ունեն՝ պայմանավորված որպես խումբ գոյատևելու հավաքական կամքով՝ նպատակ ունենալով հասնել փաստացի և իրավական հավասարության՝ պահպանելով իրենց մշակույթը, ավանդույթները, կրոնը կամ լեզուն:

ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի վեցերորդ կոմիտեի նյութերում նշվում է, որ փոքրամասնությունների չափանիշները պետք է լինեն «տարբերակիչ», «մշտական», «կայուն», «ընդհանուր ծագում» կամ «ընդհանուր բնորոշ հատկանիշներ» ունեցող²¹:

Ուշադրության է արժանի նաև այն մոտեցումը, որ մի շարք երկրներ կրոնական փոքրամասնություն են համարում երկրի բնակչության դավանանքից տարբերվող հավատամք ունեցող ցանկացած խմբի: Այսպես, օրինակ, մի շարք ռուս իրավաբան-գիտնականներ առաջարկում են բոլոր կրոնական խմբերը, բացառությամբ ուղղափառների, դասակարգել որպես կրոնական փոքրամասնություններ Ռուսաստանում²²:

Ա. Հեյդը փոքրամասնությունը սահմանում է որպես «ինքնիշխան պետությունում ապրող մարդկանց ցանկացած խումբ, որը կազմում է երկրի ընդհանուր բնակչության կեսից պակասը, և որի անդամներն ունեն ընդհանուր էթնիկ, կրոնական կամ լեզվական հատկանիշներ, որոնք տարբերում են նրանց մնացած բնակչությունից»:

Այս չափանիշի միանշանակ ընդունումը միշտ չէ, որ նպատակահարմար է, քանի որ որոշ դեպքերում կարող են լինել խմբեր, որոնք կազմում են ընդհանուր բնակչության կեսը կամ նույնիսկ մեծամասնությունը, սակայն պետության որոշակի տարածքում (վարչական շրջան, մարզ, համայնք, սուբյեկտ և այլն) առնչվում են փոքրամասնություններին բնորոշ խնդիրների:

Այս տեսանկյունից «փոքրամասնություն» եզրույթի սահմանման մոտեցումը հստակեցում է պահանջում: Նախ՝ փոքրամասնությունը կարող է ապրել ոչ թե կոմպակտ, այլ ցրված վիճակում, ինչը նրանց համար դժվարացնում է իրենց իրավունքների պաշտպանությունը գործող ներքին ընթացակարգերի միջոցով: Երկրորդ՝ մի խումբ կարող է լինել փոքրամասնություն պետության բնակչության մեջ, բայց մեծամասնություն կազմել նրա մասերում: Այս խնդիրը հատկապես

²¹ St' u Dехканов С. А., “Международно-правовые критерии меньшинств”, Вестник РУДН, серия Юридические науки, 2010, № 3, էջ 124: Источник: <https://cyberleninka.ru/article/n/mezhdunarodno-pravovye-kriterii-menshinstv> (accessed 28.09.2024)

²² St' u Рысев В., Рыжов Ю., “Положение религиозных меньшинств в России и Литве: сравнительный анализ”.
Источник: <http://www.baznica.info/index.php?name=Pages&op=page&pid=3861> (accessed 28.09.2024)

արդիական է ինքնավար մարզեր ունեցող պետությունների համար: Երրորդ՝ պետության բնակչությունը կարող է լինել փոքրամասնությունների ամբողջություն, որոնցից ոչ մեկը չի կազմում բացարձակ թվային մեծամասնություն: Չորրորդ՝ հնարավոր է իրավիճակ, երբ խումբը թվային առումով փոքր է մնացած բնակչության համեմատ, բայց գերիշխող դիրք է զբաղեցնում նահանգում կամ որոշակի սուբյեկտում²³:

Այն դիրքորոշումը, որ «փոքրամասնությունը» չպետք է սահմանափակվի իր քանակական բաղադրիչով, կիսում են մի շարք իրավաբան-գիտնականներ: Այսպես, «եթե մեր մտահոգության առարկան հենց փոքրամասնության կարգավիճակն է, պարտադիր չէ, որ այն իր չափերով ավելի փոքր լինի, քան գերիշխող խումբը»²⁴, «եթե մենք խոսում ենք փոքրամասնության կողմից մեծամասնության իրավունքների ոտնահարման մասին, ապա սա ոչ թե փոքրամասնությունների պաշտպանության խնդիր է, այլ ընդհանրապես ինքնորոշման խնդիր»²⁵, «փոքրամասնությունների որոշման քանակական չափանիշը գրեթե անհիմաստ է կիրառել դաշնային նահանգներում, որի առարկան ազգային-պետական միավորներն են»²⁶:

Այսպիսով, քանակական բնութագիրը «փոքրամասնությունը» սահմանելիս որոշիչ չէ, թեև այն ազդում է պետության քաղաքական գործընթացում փոքրամասնությունների մասնակցության արդյունավետության վրա, և դրա կիրառման ժամանակ պետք է հաշվի առնվեն այլ բնութագրեր: Այս խնդրի լուծման ուղղությամբ կարևոր է դառնում գերիշխող դիրքի չափանիշը կամ տարրը:

Այս մոտեցումը թույլ է տալիս հաշվի առնել այն փաստը, որ ոչ մի փոքրամասնություն կամ իր իրավունքների պաշտպանության կարիքն ունեցող ոչ մի խումբ դուրս չի մնա «փոքրամասնություն» եզրույթից և, համապատասխանաբար, փոքրամասնությունների իրավունքների միջազգային պաշտպանության համակարգից: Այսինքն՝ փոքրամասնություններ պետք է ճանաչվեն բոլոր այն խմբերը, որոնք տարբերվում են իրենց հատկանիշներով և գերիշխող դիրք չեն զբաղեցնում:

Խմբի ոչ գերիշխող դիրքը ենթադրում է նրա իրավունքների ոտնահարման հնարավորություն, որը պետք է պաշտպանված լինի՝ անկախ այդ խմբի թվային չափերից: Բնակչության մի մասի գերակայությունը սովորաբար արտահայտվում է պետության պետական, քաղաքական և հասարակական կյանքում: Օբյեկտիվորեն փոքրամասնությունը անբարենպաստ դիրք է զբաղեցնում հասարակա-

²³ Տե՛ս Дехканов С. А., “Международно-правовые критерии меньшинств”, Вестник РУДН, серия Юридические науки, 2010, № 3, էջ 125:

Источник: <https://cyberleninka.ru/article/n/mezhdunarodno-pravovye-kriterii-menshinstv> (accessed 28.09.2024)

²⁴ Տե՛ս Klineberg O., “The Study of Multinational Societies”, papers of the Ljubljana Seminar, 1975, էջ 15. Source: <https://archive.org/details/multinationalsoc0000unse> (accessed 28.09.2024)

²⁵ Տե՛ս Жвания Г. Е., “Международно-правовые гарантии защиты национальных меньшинств: Исторический очерк”, Тбилиси, 1959, էջեր 3-4:

²⁶ Տե՛ս Карапетян Л. М., “Федеративное государство и правовой статус народов”, Москва, 1996, էջ 75:

կան համակարգում, քանի որ նրա անդամները չեն կարող մասնակցել նույն չափով, որքան մեծամասնության անդամները հիմնարար հանրային ոլորտներում՝ իրավական համակարգ, կրթական համակարգ, աշխատաշուկա, տնտեսություն և այլն:

Այսպես, հիմնական չափանիշը, որով հնարավոր է տարբերակել մարդկանց փոքրամասնությունն ու մեծամասնությունը, ըստ Ս. Մ. Պունժինի՝ «առաջին հերթին պետության մեջ ոչ գերիշխող դիրք ունենալն է և թվային փոքրամասնություն լինելն է»²⁷:

Փոքրամասնության բնորոշման տարրերից է ներկայացվում նաև քաղաքացիությունը: Նման չափանիշի անհրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ միայն իր քաղաքացիների հետ փոխգործակցության դեպքում պետությունը կարող է լեգիտիմորեն արդյունավետ կերպով պաշտպանել ինչպես անհատների, այնպես էլ այն խմբի իրավունքները, որոնք կազմում են այդ անձինք: Օտարերկրյա քաղաքացիների դեպքում «քանի դեռ անձը պահպանում է իր օտարերկրյա կարգավիճակը, նա պահպանում է իրավունքը՝ օգտվելու միջազգային սովորության իրավունքով նախատեսված պաշտպանությունից այլ երկրում գտնվող անձանց համար, ինչպես նաև ցանկացած հատուկ իրավունք, որը կարող է նրան տրվել պայմանագրերով կամ այլ հատուկ համաձայնագրով»²⁸: Այսպես, օրինակ, փոքրամասնության հայեցակարգի մշակմամբ զբաղվող գիտնականների մեծ մասը կիսում է ՄԱԿ-ի խորականության կանխարգելման և ազգային փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովի արտահայտած այն տեսակետը, որ **ազգային** փոքրամասնության կարգավիճակը ճանաչվում է միայն տվյալ պետության քաղաքացիների համար:

Այս մոտեցումը բացատրվում է առաջին հերթին նրանով, որ անձանց այնպիսի կատեգորիաների, ինչպիսիք են՝ միգրանտների, քաղաքացիություն չունեցող անձանց, փախստականների և այլոց նկատմամբ կարող են կիրառվել նրանց կարգավիճակը կարգավորող այլ միջազգային պայմանագրեր:

Հատկանշական է, որ այս դիրքորոշումն արտահայտվել է ազգային փոքրամասնությունների վերաբերյալ, սակայն հաճախ վերագրվում է առհասարակ ցանկացած փոքրամասնության, այդ թվում նաև՝ կրոնական փոքրամասնության: Չխորանալով այն հարցի մեջ, թե որքանով է արդարացի քաղաքացիության տարրի նախատեսումը ազգային փոքրամասնությունների բնորոշման համար՝ հարկ է արձանագրել, որ կրոնական փոքրամասնությունների տեսանկյունից կարող են առաջանալ իրավունքի իրացման արհեստական խոչընդոտներ և իրավունքների պաշտպանության հնարավոր ռիսկեր, որոնց մասին կխոսվի հաջորդիվ:

²⁷ St' u Pунжин С. М., “Проблема защиты прав национальных меньшинств в международном праве”, Государство и право, № 8, 1992, էջ 125:

²⁸ St' u Capotorti F., “Study on the Rights of Persons belonging to Ethnic, Religious and Linguistic Minorities”, UN Doc E/CNY/Sub. 2/384, 1979, էջ 111:

Փոքրամասնության որակական հատկանիշը, որը նրան տարբերում է պետության բնակչության մեծամասնությունից, կայուն էթնիկական, մշակութային, կրոնական և լեզվական բնութագրիչն է: Խմբի մշակույթը, լեզուն, կրոնը որոշիչ գործոններ են պետության մեջ փոքրամասնության ձևավորման համար: Նշված գործոններից ելնելով է՝ մարդկանց խումբը ձևավորում է համապատասխանաբար էթնիկ, լեզվական կամ կրոնական փոքրամասնություն:

Փոքրամասնության որոշիչ տարրը իրեն որպես փոքրամասնություն ընկալելու խմբի կամքի և ցանկության սուբյեկտիվ առկայությունն է, որը հիմնված է իր սեփական գաղափարի և շահերի, ինքնությունը պահպանելու մտադրության վրա: Այսպես, գոյության և ինքնության իրավունքները անբակտելի են, դրանց հայտնվելը կամ անհետացումը կախված չէ փոքրամասնության քաղաքական կարգավիճակից:

Էթնիկ, լեզվական և կրոնական ինքնությունը առանձնահատուկ որակներ ունեցող խմբի գոյության ամենակարևոր հատկանիշն է: Պետությունները չպետք է ազդեն սուբյեկտիվ տարրի վրա: Փոքրամասնությունը, համաձայն իր ինքնորոշման, պետք է լինի ինքնատիպ, ցանկանա և ձգտի պահպանել այդպիսի ինքնատիպությունը, իր առանձնահատկությունները և ճանաչվի այս խմբի մյուս անդամների կողմից որպես իր մաս: Իր հերթին, այն պետությունը, որի տարածքում ապրում է փոքրամասնությունը, պետք է հարգի նման ինքնությունը և նպաստի դրա պահպանմանն ու զարգացմանը²⁹:

Ամփոփելով ներկայացված տեսակետները՝ նշենք, որ ՄԱԿ-ի կանոնադրությունը մշակելիս փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խնդիրը հաշվի է առնվել որպես խաղաղության և միջազգային կայունության ապահովման կարևորագույն գործոններից մեկը և մինչ օրս հանդիսանում է մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր խնդրի առանցքային մասը:

Միևնույն ժամանակ, Գլխավոր վեհաժողովն արտահայտել է այն դիրքորոշումը, որ դժվար է միասնական լուծում գտնել փոքրամասնությունների սահմանման այս բարդ և նուրբ հարցում, որն ունի իր առանձնահատկությունները յուրաքանչյուր պետության համար: ՄԱԿ-ի հատուկ ենթահանձնաժողովի շրջանակներում «փոքրամասնություն» հասկացության սահմանման խնդրի շուրջ քննարկումները տևեցին ավելի քան 40 տարի՝ առանց զոհաբերության արդյունքի:

Այս համատեքստում «փոքրամասնություն» հասկացության սահմանման միասնական չափանիշների մշակումը և տարրերի առանձնացումը միջազգային իրավունքի կարևոր խնդրի լուծման հնարավոր ուղիներից մեկն է՝ փոքրամասնություններին խտրականությունից և բոլոր տեսակի հետապնդումներից արդյունավետ պաշտպանելու նպատակով:

²⁹ St' u Dехканов С. А., “Международно-правовые критерии меньшинств”, Вестник РУДН, серия Юридические науки, 2010, № 3, էջեր 128-130:
Источники: <https://cyberleninka.ru/article/n/mezhdunarodno-pravovye-kriterii-menshinstv> (accessed 28.09.2024)

Այսպես, մեր ուսումնասիրած աղբյուրներից ակնհայտ է դառնում, որ «փոքրամասնության» բնորոշման տարրերը լինում են քանակական և որակական: Ընդհանուր առմամբ ընդունված են համարվում հետևյալ տարրերը (չափանիշները).

- քանակական չափանիշ,
- ոչ գերակայության չափանիշ,
- պետության տարածքում քաղաքացիության չափանիշ,
- ինքնության չափանիշ,
- կամքի չափանիշ:

3. Կրոնական փոքրամասնության բնորոշումը և դրա բաղադրատարրերը

Վերոնշյալ գլուխներում մեջբերված աղբյուրներից կարող ենք արձանագրել, որ «փոքրամասնություն» տերմինը, ընդհանուր առմամբ, վերաբերում է ազգային կամ էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին:

Անդրադառնալով կրոնի ազատության իրավունքի իրացման համատեքստում փոքրամասնությունների հարցին՝ հարկ է նշել, որ տվյալ համատեքստում կարևոր են երկու հիմնական խումբ փոքրամասնություններ.

- կրոնական փոքրամասնություն, որն անկախ իր էթնիկ պատկանելությունից՝ ունի տարբերվող դավանանք կամ չունի դավանանք,
- ազգային փոքրամասնություն, որը որպես էթնիկ խումբ ունի իրեն բնորոշ դավանանքը:

Այս երկու դեպքերում նշված փոքրամասնություններին պատկանող անձինք հանդես են գալիս որպես կրոնական փոքրամասնություն՝ բնակչության մեծամասնության համեմատ:

Անհրաժեշտ է պարզաբանել, որ երբ անհատի կամ խմբի (ինքնա-) նույնականացումը կատարվում է կրոնական հողի վրա (իսկ էթնիկական, լեզվական և մշակութային հատկանիշները երկրորդական բնույթ են կրում), հարկ է խոսել հենց «կրոնական կամ համոզմունքային փոքրամասնության» մասին: Բացի այդ, անձի խղճի ազատության իրավունքի իրացման հնարավորությունը կամ այդպիսի հնարավորության բացակայությունն անքակտելիորեն կապված է նրա կրոնական ինքնորոշման հետ կոնկրետ սոցիալ-մշակութային միջավայրում, և այստեղ նույնպես առարկայական է կրոնական և համոզմունքային փոքրամասնություններին որպես առանձին խումբ նույնականացնելը:

Փոքրամասնություն հասկացության սահմանումը պետք է հիմնված լինի փոքրամասնությունների հայեցակարգի համակողմանի բացահայտմանն ուղղված մոտեցման վրա: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով ուսումնասիրության առարկան, անհրաժեշտ ենք համարում փոքրամասնության էության վերոնշյալ դիտարկումների արդյունքում ձևակերպել «կրոնական կամ համոզմունքային փոքրամասնություն» եզրույթի սահմանումը:

Այսպիսով, գտնում ենք, որ «կրոնական կամ համոզմունքային փոքրամասնություն» տերմինը բնորոշվում է որպես պետության տարածքում փաստացի բնակվող անձանց խումբ, որը բնակչության մեծամասնությունից քանակապես փոքր է և (կամ) զբաղեցնում է ոչ գերիշխող դիրք, ունի կրոնական կամ համոզմունքային բնութագրեր և ցանկություն՝ պահպանելու իր ինքնությունը:

Այսպիսով, նշված սահմանումը պարունակում է ինչպես քանակական (փոքր թվաքանակ և ոչ գերիշխող դիրք) հատկանիշը, այնպես էլ որակական (կայուն կրոնական բնութագրիչ, ինքնության պահպանման ցանկություն):

Մեր սահմանման համատեքստում կարևոր ենք համարում ընդգծել, որ փոքրամասնության բնորոշման տեսանկյունից առաջարկում ենք **չդիտարկել քաղաքացիության կոմպոնենտը**: Մասնավորապես, կրոնի ազատության իրավունքի իրացման տեսանկյունից էական չէ նշված իրավունքի իրացման սուբյեկտի և պետության իրավաբանական կապի բնույթը կամ առկայությունը, հակառակ պարագայում՝ կարող է ստացվել, որ այս կամ այն հանգամանքներում որևէ երկրում հայտնված կրոնական փոքրամասնությունները՝ որպես միասնություն, հնարավոր է, որ խոչընդոտներ ունենան կրոնի ազատության իրավունքի իրացման համատեքստում կամ ինքնության պահպանման տեսանկյունից հնարավոր է, որ հայտնվեն առավել խոցելի դիրքերում, քան տվյալ պետության քաղաքացի կրոնական փոքրամասնությունները:

Թեև մի շարք իրավաբան-գիտնականներ փոքրամասնության բնորոշման հարցում կարևորում են անձ-պետություն իրավական կապի ամրագրումը, Փոքրամասնությունների հարցերով ներկայիս հատուկ զեկուցողը ձգտում է վերականգնել կամ վերակենդանացնել նախկին մեկնաբանությունը, ըստ որի՝ փոքրամասնություն նշանակում է մեծամասնությունից ավելի փոքր խումբ: Ավելին, վերջինս, կապված կրոնական կամ դավանանքային փոքրամասնությունների հետ, ընդգծել է այն հանգամանքը, որ «այս կատեգորիան ներառում է կրոնական, ոչ կրոնական, ոչ թեիստական և այլ համոզմունքների լայն շրջանակ, ներառյալ չճանաչված և ոչ ավանդական կրոններն ու աշխարհայացքները, ներառյալ անիմիստներ, այթեիստներ, ազնոստիկներ, հումանիստներ, «նոր կրոններ» և այլն»³⁰:

Կարևոր է ընդգծել նաև, որ կան միջազգային փաստաթղթեր և միջազգային հարթակներում հնչած այն մոտեցումը, որ կրոնական փոքրամասնության սահմանումը չի կարող սահմանափակվել միայն քաղաքացիների կամ մշտական բնակիչների համար³¹:

³⁰ Տե՛ս A/75/211, General Assembly UN, կետ 76 b:
Source: <https://documents.un.org/doc/undoc/gen/n20/190/15/pdf/n2019015.pdf> (accessed 28.09.2024)
Бейрутская декларация «Вера за права человека» (F4R). Источник: https://www.ohchr.org/sites/default/files/BeirutDeclarationonFaithforRights_RU.pdf (accessed 28.09.2024)

³¹ Տե՛ս հղում 17, կետ 59:

Հաջորդ հատկանիշն այն է, որ փոքրամասնությունը բնակչության մեծամասնությունից **քանակապես փոքր է և (կամ) գրադեցնում է ոչ գերիշխող դիրք**:

Կարևոր է ընդգծել այն սկզբունքը, որ պետության տարածքում էթնիկ, կրոնական կամ լեզվական փոքրամասնությունների առկայությունը կախված չէ այդ պետության որոշումից, այլ պետք է որոշվի օբյեկտիվ չափանիշների հիման վրա³²: Այսպիսով, փոքրամասնության խմբի առկայությունը փաստի հարց է և ոչ թե օրենքի, պաշտոնական քաղաքականության կամ որոշման:

Եթե քանակական չափանիշն ընկալելի և ընդունելի է հենց «փոքրամասնություն» բառի ստուգաբանության տրամաբանությունից, ապա գերիշխող դիրքի չափանիշը կարող է առաջացնել որոշակի տարրնկալումներ:

Մասնավորապես, ի հավելումն նախորդ գլխում քննարկված խնդիրների և հիմք ընդունելով ժողովրդավարական հասարակության առանձնահատկությունները՝ կարող է ստացվել մի իրավիճակ, երբ կրոնական փոքրամասնության պատկանող կամ ոչ թեխտական համոզմունքներ ունեցող անձը կամ քաղաքական թիմը, գալով իշխանության, որոշակի առավելություններ կամ քաղաքական հովանավորչություն սպասողի իր համայնքի կամ համոզմունքների խումբ անձանց նկատմամբ կամ որոշակի սահմանափակումներ կամ օժանդակության նվազում սահմանի բնակչության մեծամասնության դավանանքի կրոնական կազմակերպության նկատմամբ: Այսպիսով, պետության ողջ տարածքի հաշվառմամբ զուտ քանակական կոմպոնենտը բավարար չէ բնորոշելու փոքրամասնությանը՝ իրավունքների պաշտպանության արդյունավետության տեսանկյունից: Մասնավորապես, թվաքանակով լինելով նվազ, սակայն ունենալով գերիշխող դիրք քանակական մեծամասնության նկատմամբ՝ քանակական փոքրամասնությունը ոչ միայն չի ունենա կրոնի ազատության իրավունքի իրացման խոչընդոտներ կամ խնդիրներ, այլև ինքնին կարող է ստեղծել այդպիսի խոչընդոտներ քանակական մեծամասնության համար: Նման պարագայում քանակական մեծամասնությունը կհայտնվի մի իրավիճակում, երբ, չհանդիսանալով որոշում ընդունող խումբ, չի կարող օգտվել կրոնական փոքրամասնությունների իրավունքներից՝ արդյունքում խոցելի վիճակում հայտնվելով անհանդուրժողականության և խտրականության տեսանկյունից:

Լ. Վիրտը նշում է, որ «փոքրամասնությունը մարդկանց մի խումբ է, որոնք իրենց ֆիզիկական կամ մշակութային առանձնահատկությունների պատճառով առանձնանում են տվյալ հասարակությունում մյուսներից, արժանանում են հատուկ և անհավասար վերաբերմունքի, հետևաբար, կոլեկտիվ խտրականության օբյեկտ են»³³:

³² St'u Комитет по правам человека, замечание общего порядка № 23 (1994), пункт 5.2

Источник: <http://hrlibrary.umn.edu/russian/gencomm/Rhrcom23.html> (accessed 28.09.2024)

³³ St'u Дехканов С. А., «Международно-правовые критерии меньшинств», Вестник РУДН, серия Юридические науки, 2010, № 3, էջ 127: Источник: <https://cyberleninka.ru/article/n/mezhdunarodno-pravovye-kriterii-menshinstv> (accessed 28.09.2024)

Այսպես, փոքրամասնությունն ճանաչելու և իրավական մեխանիզմներ մշակելու հիմնարար անկյունաքարը խտրականության դեմ պայքարն է, այն կարևոր է ինչպես միջազգային մարմինների կողմից միջազգային իրավական պաշտպանության, այնպես էլ պաշտպանության կարիք ունեցող փոքրամասնությունների նույնականացման համար: Հետևաբար, երբ մենք խոսում ենք կրոնական փոքրամասնության սահմանման մասին, պետք է հաշվի առնենք խտրականության սպառնալիքը, որը ոչ միայն վտանգ է ներկայացնում ազգային փոքրամասնությունների գոյությանը և խախտում նրանց իրավունքները, այլև վտանգ է ներկայացնում խաղաղության և միջազգային անվտանգության համար: Այսպիսով, գերակայության և խտրականության չափանիշները պետք է հաշվի առնվեն «փոքրամասնություն» սահմանելիս և կիրառվեն այլ չափանիշների հետ համատեղ:

Առաջարկվող սահմանման հաջորդ հատկանիշը **կրոնական կամ համոզմունքային բնութագրիչն է**: Տվյալ պարագայում հարկ ենք համարում կարևորել ինչպես ավանդական կրոնական հայացքներ ունենալը (օրինակ՝ քրիստոնեություն, մահմեդականություն և այլն), այնպես էլ ոչ տարածված կրոնական հայացքներ (բացառությամբ՝ կրոնական էքստրիմիստական կազմակերպությունների) կամ համոզմունքներ (օրինակ՝ ոչ թեիստական) ունենալը: Նշված մոտեցմամբ էլ պայմանավորված է մեր այն ձևակերպումը, որ տվյալ խումբ փոքրամասնությունը կարող է անվանվել ինչպես կրոնական փոքրամասնություն, այնպես էլ համոզմունքային փոքրամասնություն (երբ համոզմունքի հիմքում ընկած չեն կրոնական դոկտրիններ):

Կարևոր է նաև անդրադառնալ այն հարցին, որ որոշ իրավաբան-գիտնականներ ընդգծում են **կայուն կրոնական բնութագրիչը**³⁴: Ընդ որում, կայունության հատկանիշը վերագրվում է ոչ միայն կրոնական փոքրամասնությանը, այլ առհասարակ ցանկացած փոքրամասնության բնութագրման համատեքստում: Սակայն եթե կայունության կոմպոնենտը տրամաբանական է ազգային, էթնիկ կամ մշակութային փոքրամասնությունների համար, ապա կրոնական փոքրամասնությունների դեպքում կարող է առաջացնել որոշակի դժվարություններ:

Մասնավորապես՝ կայունության մասին խոսելիս հարկ է հստակ մատնանշել դրա որոշման կամ չափման տարրերը: Օրինակ՝ արդյո՞ք կայունությունը որոշվում է երկար տարիների կամ դարերի գոյությամբ, կամ արդյո՞ք կայունությունը որոշվում է դոգմատիկ արժանահավատությամբ (որքան որ դա հնարավոր է կրոնի կամ հավատամքի դեպքում), կամ արդյո՞ք այն որոշվում է հետևորդների թվաքանակով, տարածման հեռանկարներով կամ որևէ այլ չափելի կամ օրյեկտիվ հատկանիշով:

³⁴ St'u Мухаметзянова-Дуггал Р. М., Кляшев А. Н., “Религиозные меньшинства России: теоретико-правовой и социальный аспекты”, ISSN 1998-4812, 2010, էջ 777: Источники: <https://cyberleninka.ru/article/n/religioznye-menshinstva-rossii-teoretiko-pravovoy-i-sotsialnyy-aspekty/viewer> (accessed 28.09.2024). Source: www.pewresearch.org/religion/ (accessed 28.09.2024)

Այսպես, կայունության որևէ հատկանիշ միանշանակ չէ, աշխարհում վերացել են երբեմնի «կայուն» կրոնները, համոզմունքները, ի հայտ են եկել նորերը, դարձել գերիշխող, կորցրել իրենց հետևորդներին, զարգացել կամ անհետացել:

Մեր գնահատմամբ՝ կայունության չափանիշի բացահայտումը որևէ ձևով չի կարող ավելացնել կամ նսեմացնել որևէ կրոնական փոքրամասնության համոզմունքային հիմքերը, տալ կամ սահմանափակել նրանց իրավունքները, ուստի նման չափանիշի սահմանումն ավելի շատ բարդություններ կարող է առաջացնել կրոնական փոքրամասնության համար, քան օժանդակել իրավունքների իրացման արդյունավետությանը:

Չհակառակվելով քանակական տեսության մոտեցմանը՝ մեր համոզմամբ փոքրամասնությունների հարցում առաջնային հատկանիշը անձի ինքնորոշման ցանկությունն է, հատկապես, երբ խոսքը վերաբերում է կրոնական կամ համոզմունքային փոքրամասնություններին:

Հենց ինքնորոշման հատկանիշի արդյունքում է առհասարակ առաջանում կրոնական փոքրամասնության ձևակերպման անհրաժեշտությունը, քանի որ այդպիսով մարդիկ փորձում են իրացնել կրոնի ազատության իրավունքը, բնորոշել իրենց այս կամ այն կրոնի հետևորդ կամ այթեխտ կամ որոշակի համոզմունքներ ունեցող անձ, ինքնարտահայտվել սոցիալ-մշակութային իրականության մեջ, հասարակության կողմից ընկալվել կամ ընդունվել որոշակի ձևաչափով, ապահովել արդարության իրենց պատկերացումները և հասարակության կողմից ընկալման իրենց իրավունքը:

Ավելին, կարևոր է նշել, որ միջազգային իրավունքում չկա պահանջ կամ սահմանափակում, որ անձը պետք է ճանաչի իրեն որպես մեկ փոքրամասնության պատկանող: Անձը պետք է հնարավորություն ունենա՝ ճանաչելու իրեն մեկ կամ մի քանի էթնիկ կամ կրոնական փոքրամասնությունների անդամ և ստանալու նրանց օրինական ճանաչումը, եթե այդպիսին անհրաժեշտ է որոշակի իրավունքների իրացման տեսանկյունից, օրինակ՝ այլընտրանքային զինվորական ծառայությունը՝ կապված դավանանքի կամ համոզմունքների հետ և այլն:

Այսպես, օրինակ, անձը կարող է պատկանել երկու ազգային փոքրամասնությունների, դավանել դրանցից միայն մեկի կրոնը կամ անգամ փորձել ապահովել երկու հավատքների ծեսերի պահպանումը, ինչպես նաև պատկանել ազգային փոքրամասնության և դավանել տվյալ փոքրամասնության դավանանքից տարբերվող դավանանքի կամ ունենալ ոչ թեխտական համոզմունքներ:

Ընդ որում, մեր համոզմամբ պարտադիր չէ, որ անձն իրեն վերագրի կոնկրետ կրոնական կամ համոզմունքային փոքրամասնության, որպեսզի համարվի այդպիսի փոքրամասնության պատկանող: Մասնավորապես, բավարար է, որ անձն ունենա, կրի որոշակի համոզմունքներ, լինի որոշակի կրոնի հետևորդ և իրեն ինքնորոշի որպես այդ կրոնի կամ համոզմունքի պատկանող անձ՝ անկախ նրանից, թե գիտի՞ արդյոք իր նման համոզմունքներ ունեցող այլ անձանց կամ

համայնքի մասին, վերագրո՞ւմ է իրեն «փոքրամասնություն» տերմինը, թե՞ ոչ:

Այս մոտեցումը հնարավորություն է տալիս անձի իրավունքների արդյունավետ պաշտպանություն իրականացնել՝ անկախ իր գիտելիքների, իրավագիտակցության և աշխարհաճանաչողության հանգամանքից: Օրինակ՝ կարող են լինել դեպքեր, երբ մարդիկ, պարզապես չունենալով անհրաժեշտ գիտելիքներ իրենց իրավունքների իրացման տեսանկյունից, իրենց չհամարեն «փոքրամասնություն», առհասարակ չտիրապետեն նման տերմինաբանության կամ բնակչության տարանջատման նման սկզբունքի, ուստի չկարողանան իրացնել կամ պաշտպանել իրենց իրավունքները որպես փոքրամասնություն:

Հետևաբար, կարևոր է, որ իրենց կողմից առկա լինի ինքնորոշման հատկանիշը, իսկ «փոքրամասնություն» համարելը անհրաժեշտ է պետության քաղաքականության տեսանկյունից: Նշվածը չի վերաբերում այն դեպքերին, երբ անձը, ունենալով անհրաժեշտ գիտելիքներ և պատկերացումներ, այնուամենայնիվ, իրեն չի համարում փոքրամասնության անդամ:

Ամփոփելով կրոնական փոքրամասնությունների խնդիրը՝ կարելի է արձանագրել, որ դրանք, լինելով բնակչության փոքրաթիվ խմբեր, ենթակա են տարբեր սոցիալ-մշակութային ու իրավական մարտահրավերների: Կրոնական փոքրամասնությունները, ունենալով իրենց յուրահատուկ հավատամքները և ինքնությունը, կարիք ունեն ոչ միայն օրենքով ամրագրված իրավունքների պաշտպանության, այլ նաև հասարակության կողմից ընդունելիության, իրավահավասարության ու հարգանքի: Այդ նպատակով անհրաժեշտ է միավորել քաղաքական, իրավական և հասարակական ջանքերը՝ ապահովելու նրանց լիարժեք ինտեգրումը և ազատությունն իրենց կրոնական հավատամքների կամ համոզմունքների իրացման համար:

Նշվածի համատեքստում առաջնային կարևորություն ունի հենց կրոնական փոքրամասնություն եզրույթի բացահայտումը:

Եզրակացություն

Կրոնական փոքրամասնությունները, լինելով բնակչության փոքրաթիվ խմբեր, ենթակա են տարբեր սոցիալ-մշակութային, հասարակական ու իրավական մարտահրավերների: Ուստի, անհրաժեշտ է միավորել քաղաքական, իրավական և հասարակական ջանքերը՝ ապահովելու նրանց լիարժեք ինտեգրումը և ազատությունն իրենց կրոնական հավատամքների կամ համոզմունքների իրացման համար: Նշվածի համատեքստում առաջնային կարևորություն ունի հենց «կրոնական փոքրամասնություն» եզրույթի բացահայտումը:

Միջազգային հարթակներում և ներպետական օրենսդրություններում դեռևս փորձեր են կատարվում՝ տալու փոքրամասնության միասնական սահմանումը:

Հաշվի առնելով ուսումնասիրության առարկան և այն հանգամանքը, որ որոշակի խումբ անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետության

տեսանկյունից առաջնային է այդ խմբի բնորոշումը, էության բացահայտումը և ընկալումը՝ առաջարկում ենք կրոնական փոքրամասնության հետևյալ սահմանումը.

«Կրոնական կամ համոզմունքային փոքրամասնություն» տերմինը բնորոշվում է որպես պետության տարածքում փաստացի բնակվող անձանց խումբ, որը բնակչության մեծամասնությունից քանակապես փոքր է և (կամ) զբաղեցնում է ոչ գերիշխող դիրք, ունի կրոնական կամ համոզմունքային բնութագրեր և ցանկություն պահպանելու իր ինքնությունը:

Նշված սահմանումից բխում է, որ կրոնական կամ համոզմունքային փոքրամասնության բնորոշ տարրերն են.

1. որոշակի պետության սահմաններում փաստացի բնակվելը,
2. տվյալ պետության բնակչության մեծամասնությունից քանակապես փոքր լինելը և (կամ) գերիշխող դիրք չունենալը,
3. կրոնական կամ համոզմունքային բնութագիր ունենալը,
4. ցանկություն՝ պահպանելու կրոնական կամ համոզմունքային ինքնությունը:

Կրոնական կամ համոզմունքային փոքրամասնություն համարվելու համար անհրաժեշտ են վերոնշյալ բոլոր տարրերի միաժամանակյա առկայությունը:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծ Աղբյուր՝ <https://www.e-draft.am/projects/1801/about> (մուտք՝ 28.09.2024)
Draft Law of the Republic of Armenia on National Minorities
Source: <https://www.e-draft.am/projects/1801/about> (accessed 28.09.2024)
2. Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա
Աղբյուր՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81178> (մուտք՝ 28.09.2024):
Framework Convention on the Protection of the Rights of National Minorities
Source: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81178> (accessed 28.09.2024)
3. Universal Declaration of Human Rights (UDHR)
Source: www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights (accessed 28.09.2024)
4. Special Rapporteur on minority issues, “Concept of a minority: mandate definition”, OHCHR, 2021
Source: www.ohchr.org/EN/Issues/Minorities/SRMi-norities/Pages/ConceptMinority.aspx. (accessed 28.09.2024)
5. Universal Declaration of Human Rights (UDHR).
Source: www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights (accessed 28.09.2024),
6. International Covenant on Civil and Political Rights (ICCPR)
Source: www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-covenant-civil-and-political-rights (accessed 28.09.2024),
7. Convention on the Elimination of All Forms of Discrimination Against Women (CEDAW). Source: www.un.org/womenwatch/daw/cedaw/ (accessed 28.09.2024),
8. Declaration on the Elimination of All Forms of Intolerance and of Discrimination Based on Religion or Belief. Source: www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/declaration-elimination-all-forms-intolerance-and-discrimination-based-religion-or-belief (accessed 28.09.2024),
9. African Charter on Human and Peoples’ Rights. Source: www.au.int/en/treaties/african-charter-human-and-peoples-rights (accessed 28.09.2024),
10. European Convention on Human Rights (ECHR)
Source: www.echr.coe.int/documents/convention_eng.pdf (accessed 28.09.2024),
11. American Convention on Human Rights.
Source: www.oas.org/en/iachr/mandate/Basics/Basic%20Documents/American%20Convention.pdf (accessed 28.09.2024),
12. The Right to Freedom of Thought, Conscience, and Religion in International Law

- Source: www.ohchr.org/en/special-procedures/sr-freedom-of-religion-or-belief (accessed 28.09.2024)
13. Banjul Charter on Human and Peoples' Rights. Source: www.achpr.org/legal-instruments/detail?id=49 (accessed 28.09.2024),
 14. UN Resolution on the Promotion and Protection of Human Rights
Source: www.ohchr.org/en/special-procedures/sr-freedom-of-religion-or-belief (accessed 28.09.2024),
 15. UNESCO Declaration on the Role of Religion in the Promotion of a Culture of Peace. Source: www.unesco.org/en/culture/peace (accessed 28.09.2024),
 16. General Comment No. 22 (48th session) on the Right to Freedom of Thought, Conscience, and Religion. Source: www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/general-comment-no-22-right-freedom-thought-conscience-and-religion (accessed 28.09.2024) և այլն
 17. Resolution adopted by the General Assembly on 19 December 2023 [on the report of the Third Committee (A/78/481/Add.2, para. 139), N 78/212. Freedom of religion or belief.
Source: <https://documents.un.org/doc/undoc/gen/n23/422/50/pdf/n2342250.pdf> (accessed 28.09.2024)
 18. Declaration on the Rights of Persons Belonging to National or Ethnic, Religious and Linguistic Minorities, Adopted by General Assembly resolution 47/135 of 18 December 1992. Source: https://www.ohchr.org/sites/default/files/Booklet_Minorities_English.pdf (accessed 28.09.2024)
 19. UN Doc: E/CN.4/Sub.2/1985/31.
Source: <https://digitallibrary.un.org/record/88267> (accessed 28.09.2024)
 20. Charter of Fundamental Rights of the European Union
Source: https://www.europarl.europa.eu/charter/pdf/text_en.pdf (accessed 28.09.2024)
 21. A/75/211, General Assembly UN, կետ 76 b).
Source: <https://documents.un.org/doc/undoc/gen/n20/190/15/pdf/n2019015.pdf> (accessed 28.09.2024)
 22. Бейрутская декларация «Вера за права человека» (F4R). Источники: https://www.ohchr.org/sites/default/files/BeirutDeclarationonFaithforRights_RU.pdf (accessed 28.09.2024)
 23. Beirut Declaration “Faith for Human Rights” (F4R). Source: https://www.ohchr.org/sites/default/files/BeirutDeclarationonFaithforRights_RU.pdf (accessed 28.09.2024)
 24. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց՝ նվիրված ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում, 2011 թ., Երևան

Աղբյուր՝ <https://ombuds.am/images/files/9711eea3661a09face5102809637e692.pdf> (մուտք՝ 28.09.2024 թ.):

Ad Hoc Public Report of the RA Human Rights Defender on the Protection of the Rights of National Minorities in the Republic of Armenia, 2011, Yerevan
Source: <https://ombuds.am/images/files/9711eea3661a09face5102809637e692.pdf> (accessed 28.09.2024)

24. Special Rapporteur on minority issues, “Concept of a minority: mandate definition”, OHCHR, 2021. Source: www.ohchr.org/EN/Issues/Minorities/SRMinorities/Pages/ConceptMinority.aspx. (accessed 28.09.2024)
25. Tomushat C., “Status of Minorities under Article 27 of the International Covenant on Civil and Political Rights”, 1985
26. Turk D., “Norms and institutions within the UN system Relevant to minority issues”, Conference paper № 5. Colombo. 6-10 November. 1988, էջ 29, Veiter Th., Commentary on the Concept of “National Minorities”, Revue des Droits de l’Homme. 1974. Vol. VII
27. Klineberg O., “The Study of Multinational Societies”, papers of the Ljubljana Seminar, 1975, էջ 15, Source: <https://archive.org/details/multinationalsoc0000unse> (accessed 28.09.2024)
28. Capotorti F., “Study on the Rights of Persons belonging to Ethnic, Religious and Linguistic Minorities”, UN Doc E/CNY/Sub. 2/384, 1979,
29. Организация Объединенных Наций, “Права меньшинств: международные стандарты и руководство по их соблюдению”, 2010. Источник: https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/MinorityRights_ru.pdf (accessed 28.09.2024). United Nations, “Minority Rights: International Standards and Guidelines for Implementation”, 2010
Source: https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/MinorityRights_ru.pdf (accessed 28.09.2024)
30. Брук С. И., “Население мира: Этнодемографический справочник”, Наука, Москва, 1986
Brook S. I., “Population of the World: Ethnodemographic Handbook”, Science, Moscow, 1986
31. Катько Н., “Критерии определения меньшинства”, Белорусский журнал международного права и международных отношений, международное право N2
Источник: https://elib.bsu.by/bitstream/123456789/29315/1/2001_2_JILIR_katko_r.pdf (accessed 28.09.2024)
Katko N., “Criteria for Determining a Minority”, Belarusian Journal of International Law and International Relations, International Law N2. Source: https://elib.bsu.by/bitstream/123456789/29315/1/2001_2_JILIR_katko_r.pdf (accessed 28.09.2024)

32. Дехканов С. А., “Международно-правовые критерии меньшинств”, Вестник РУДН, серия Юридические науки, 2010, № 3.
Источник: <https://cyberleninka.ru/article/n/mezhdunarodno-pravovye-kriterii-menshinstv> (accessed 28.09.2024)
Dekhkanov S.A., “International legal criteria for minorities”, Bulletin of RUDN, Legal Sciences series, 2010, No. 3. Source: <https://cyberleninka.ru/article/n/mezhdunarodno-pravovye-kriterii-menshinstv> (accessed 28.09.2024)
33. Рысев В., Рызов Ю., “Положение религиозных меньшинств в России и Литве: сравнительный анализ”.
Источник: <http://www.baznica.info/index.php?name=Pages&op=page&pid=3861> (accessed 28.09.2024)
Rysev V., Ryzhov Yu., “The situation of religious minorities in Russia and Lithuania: a comparative analysis”.
Source: <http://www.baznica.info/index.php?name=Pages&op=page&pid=3861> (accessed 28.09.2024)
34. Жвания Г. Е., “Международно-правовые гарантии защиты национальных меньшинств: Исторический очерк”, Тбилиси, 1959
Zhvania G. E., “International Legal Guarantees for the Protection of National Minorities: Historical Essay”, Tbilisi, 1959
35. Карапетян Л. М., “Федеративное государство и правовой статус народов”, Москва, 1996
Karapetyan L. M., “Federal state and the legal status of peoples”, Moscow, 1996
36. Пунжин С. М., “Проблема защиты прав национальных меньшинств в международном праве”, Государство и право, № 8, 1992
Punzhin S. M., “The Problem of Protecting the Rights of National Minorities in International Law”, State and Law, No. 8, 1992
37. Комитет по правам человека, замечание общего порядка № 23 (1994)
Источник: <http://hrlibrary.umn.edu/russian/gencomm/Rhrcom23.html> (accessed 28.09.2024)
Human Rights Committee, general comment No. 23 (1994). Source: <http://hrlibrary.umn.edu/russian/gencomm/Rhrcom23.html> (accessed 28.09.2024)
38. Мухаметзянова-Дуггал Р. М., Кляшев А. Н., “Религиозные меньшинства России: теоретико-правовой и социальный аспекты”, ISSN 1998-4812, 2010
Источник: <https://cyberleninka.ru/article/n/religioznye-menshinstva-rossii-teoretiko-pravovoy-i-sotsialnyy-aspekty/viewer> (accessed 28.09.2024)
Mukhametzyanova-Duggal R. M., Klyashev A. N., “Religious minorities of Russia: theoretical, legal and social aspects”, ISSN 1998-4812, 2010
Source: <https://cyberleninka.ru/article/n/religioznye-menshinstva-rossii-teoretiko-pravovoy-i-sotsialnyy-aspekty/viewer> (accessed 28.09.2024)

Karolina Harutyunyan

*Ph.D. Student at the Chair of Constitutional Law of Faculty of Law
of Yerevan State Univeristy*

THE ESSENCE OF THE DEFINITION “RELIGIOUS MINORITY” AND THE IMPORTANCE OF CHARACTERIZATION¹

*“All human beings are born free and equal in dignity and rights.
They are endowed with reason and conscience and should act towards one
another in a spirit of brotherhood.”²*

*“An absence of consistency in understanding who is a minority is a
recurring stumbling block to the full and effective realization of the
human rights of minorities.”³*

Abstract

In the 21st century, when at first sight the mass manifestations of religious intolerance have been overcome, and states have assumed the obligation to respect and guarantee the right to freedom of religion and conscience, the exercise of the right to freedom of religion is still targeted and is subject to political speculation and discrimination.

Summarizing the problem of religious minorities, it can be stated that religious minorities, being small groups of the population, are subject to various challenges in terms of society, culture and law. With their own unique beliefs and identities, religious minorities need not only the protection of rights established by law, but also need to be accepted and respected by society. To this end, it is necessary to combine political, legal and social efforts to ensure their full integration and their freedom to exercise their religious beliefs or convictions.

By exploring this important area of human rights, the study aims to promote the ongoing dialogue over protection of the right to freedom of religion by proposing a definition of a religious minority that can help shape a more inclusive society and

¹ The article was presented on 28.09.2024 and was reviewed on 31.10.2024.

² Universal Declaration of Human Rights (UDHR), article 1. Source: www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights (accessed 28.09.2024)

³ Special Rapporteur on minority issues, “Concept of a minority: mandate definition”, OHCHR, 2021 Source: www.ohchr.org/EN/Issues/Minorities/SRMinorities/Pages/ConceptMinority.aspx (accessed 28.09.2024)

policy, protecting the rights of all individuals, regardless of their religious beliefs and membership to an institution registered as a religious organization.

As a result of the analysis of international practice and different approaches of legal scholars, the following definition of a religious or belief minority is proposed:

"The term religious or belief minority is defined as a group of persons actually residing in the territory of the state, which is numerically smaller than the main part of the population and/or occupies a non-dominant position, has religious or belief characteristics and a desire to preserve its identity."

As a result of the analysis of the given definition, the characteristic quantitative and qualitative elements of a religious or belief minority are also identified, such as actual residence in the territory of the state, being quantitatively smaller than the main part of the population and/or having a non-dominant position, religious or belief characteristics and the desire to preserve religious or belief identity.

Keywords: minority; religious minority; human rights; right to freedom of religion; protection of rights.

Каролина Арутюнян

*Аспирант кафедры конституционного права юридического факультета
Ереванского государственного университета*

СУТЬ ОПРЕДЕЛЕНИЯ «РЕЛИГИОЗНОГО МЕНЬШИНСТВА» И ВАЖНОСТЬ ХАРАКТЕРИСТИКИ¹

«Все люди рождаются свободными и равными в своем достоинстве и правах. Они наделены разумом и совестью и должны действовать по отношению друг к другу в духе братства».²

«Отсутствие последовательности в понимании того, кто является меньшинством, является постоянным камнем преткновения на пути к полной и эффективной реализации прав человека меньшинств».³

Абстракт

В XXI веке, когда на первый взгляд массовые проявления религиозной нетерпимости преодолены, а государства взяли на себя ответственность за соблюдение и обеспечение права на свободу вероисповедания и совести, реализация права на свободу вероисповедания продолжает подвергаться прицельным нападениям, политическим спекуляциям и дискриминации.

Подводя итог проблеме религиозных меньшинств, можно отметить, что они, являясь малочисленными группами населения, подвергаются различным социально-культурным и правовым вызовам. Религиозные меньшинства, имеющие собственные уникальные убеждения и идентичность, нуждаются не только в защите прав, установленных законом, но и в принятии и уважении со стороны общества. Для этого необходимо объединить политические, правовые и социальные усилия, чтобы обеспечить их полную интеграцию и свободу в осуществлении своих религиозных убеждений или убеждений.

Анализируя эту важную область прав человека, исследование направлено на то, чтобы внести вклад в продолжающийся диалог вокруг защиты права на свободу вероисповедания, предложив определение религиозного меньшинства, ко-

¹ Статья была представлена 28.09.2024 и прошла рецензирование 31.10.2024.

² Universal Declaration of Human Rights (UDHR), article . Source: www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights (accessed 28.09.2024)

³ Special Rapporteur on minority issues, “Concept of a minority: mandate definition”, OHCHR, 2021 Source: www.ohchr.org/EN/Issues/Minorities/SRMinorities/Pages/ConceptMinority.aspx (accessed 28.09.2024)

торое может помочь сформировать более инклюзивное общество и политику, защищая права всех лиц, независимо от их религиозных убеждений и зарегистрированных в качестве религиозной организации.

В результате анализа международного опыта и различных подходов ученых-юристов предлагается следующее определение религиозного или убежденного меньшинства:

“Термин религиозное или мировоззренческое меньшинство определяется как группа лиц, фактически проживающих на территории государства, которая численно меньше основной части населения и (или) занимает недоминирующее положение, имеет религиозные или убежденные характеристики и стремится сохранить свою идентичность”.

В результате анализа данного определения также выявлены характерные количественные и качественные элементы религиозного или мировоззренческого меньшинства, такие как фактическое проживание на территории государства, количественное превосходство над основной частью населения и (или) недоминирующее положение, религиозные или мировоззренческие особенности и стремление сохранять религиозную или мировоззренческую идентичность.

Ключевые слова: меньшинство; религиозное меньшинство; права человека; право на свободу вероисповедания; защита прав.

Մարիամ Այվազյան

Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ (ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ), ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՉԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՏԱՐՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ՝

Համառոտագիր

Կատարողներին վերապահված հիմնական իրավունքներից է կատարումները հրապարակային հաղորդելու և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքները: Այս իրավունքները հատկապես կարևորվում են թվային դարաշրջանում, քանի որ անընդհատ և արագորեն ի հայտ են գալիս կատարումները հանրությանը մատչելի դարձնելու այնպիսի նոր եղանակներ, ինչպիսիք են սթրիմինգային ծառայությունները, հիպերլինքերի տեղադրումը և մի շարք այլ եղանակներ: Նման զարգացումների համատեքստում հայկական պրակտիկան չի պատասխանում կատարումները հրապարակային հաղորդելու և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքների մեկնաբանության հիմնախնդիրներին:

Այս իսկ պատճառով հետազոտության շրջանակներում ուսումնասիրվում է կատարումները հրապարակային հաղորդելու, հեռարձակելու, հանրությանը մատչելի դարձնելու իրավունքների եզրութաբանական տարբերությունները: Այնուհետ վերլուծվում է նշված իրավունքների մեկնաբանման վերաբերյալ միջազգային պրակտիկան՝ հիմնվելով Արդարադատության Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի վրա: Հետազոտությունը եզրահանգում է, որ հանրությանը հաղորդելու իրավունքը լայն իրավունք է, որն իր մեջ ընդգրկում է հեռարձակման և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքները:

Ավելին, հետազոտության ընթացքում առանձնացվել են հանրությանը հաղորդելու իրավունքի մեկնաբանության հետևյալ չափանիշները: Այսպես, հանրությանը հաղորդելու իրավունքի մեկնաբանության ժամանակ ամեն անգամ գնահատվեն հետևյալ հարցերը՝

- Արդյո՞ք կատարումները հաղորդվել են անձանց անորոշ շրջանակի, թե՞ ոչ: Անձանց անորոշ շրջանակը ենթադրում է աշխատանքը հասանելի դարձնել այնպիսի անձանց շրջանակին, որը սահմանափակված չէ

¹ Հոդվածը ներկայացվել է 29.09.2024 թ., գրախոսվել է 25.10.2024 թ.:

որոշակի մասնավոր խմբին պատկանող յուրահատուկ անհատներով, և ովքեր չեն պատկանում ընտանիքի կամ մտերիմների սովորական շրջանակին:

- Գնահատման ենթակա հաջորդ չափանիշը պետք է լինի, թե արդյո՞ք կատարման հանրության հաղորդումը տեղի է ունեցել շահույթ ստանալու նպատակով, թե՞ ոչ:
- Երրորդ չափանիշը, որը պետք է գնահատման ենթարկվի, թե արդյո՞ք հանրությունը, որին հասանելի է դարձվել կատարումները, հնարավորություն ուներ այլ եղանակով հասանելիություն ստանալ կատարմանը, թե՞ ոչ:

Մինևույն ժամանակ, անդրադառնալով հիպերլինքերի տեղադրմանը որպես հանրությանը հաղորդելու իրացում, պետք է գնահատման ենթարկվեն հետևյալ հարցերը՝

- Արդյո՞ք հղումը տեղադրվել է արդեն իսկ համացանցում ազատորեն հասանելի կատարմանը, թե՞ ոչ: Եթե հիպերլինքը տեղադրվել է արդեն իսկ ազատորեն հասանելի կատարմանը, ապա հիպերլինքի տեղադրումը չի դիտարկվի որպես կատարողի՝ հանրությանը հաղորդելու իրավունքի խախտում:
- Արդյո՞ք հիպերլինքի տեղադրումը տեղի է ունեցել շահույթ ստանալու նպատակով, թե՞ ոչ:

Հիմնաբառեր - մտավոր սեփականություն, կատարող, հարակից իրավունքներ, հանրությանը հաղորդելու իրավունք, հանրությանը մատչելի դարձնելու իրավունք:

Ներածություն

Կատարողներին² վերապահված հիմնական իրավունքներից է կատարումները հրապարակային հաղորդելու և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքները: Այս իրավունքները հատկապես կարևորվում են թվային դարաշրջանում, քանի որ անընդհատ և արագորեն ի հայտ են գալիս կատարումները հանրությանը մատչելի դարձնելու այնպիսի նոր եղանակներ, ինչպիսիք են աթրիմինգային ծառայությունները, հիպերլինքերի տեղադրումը և մի շարք այլ եղանակներ:

² 2006 թվականի հունիսի 15-ին ընդունված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-142-Ն), այսուհետ՝ Օրենք, 42-րդ հոդվածը սահմանում է. «1. Կատարում է համարվում դերասանի, երգչի, երաժշտի, պարողի, դիրիժորի, խմբավարի կամ այլ անձի կատարումը, որը դերակատարում, երգում, ասումնքում ներկայացնում կամ այլ ձևով կատարում է գրական կամ գեղարվեստական ստեղծագործություն, այդ թվում՝ ժողովրդական բանահյուսության և արվեստի ստեղծագործություններ: Կատարողներ են համարվում դերասանները, երգիչները, երաժիշտները, պարողները, դիրիժորները, խմբավարները և այլ անձինք, որոնք դեր են կատարում, երգում են, արտասանում, կարդում, նվագում կամ այլ ձևով կատարում են գրական կամ գեղարվեստական ստեղծագործություններ, կրկեսային, տիկնիկային, էստրադային և համանման այլ ներկայացումներ, ինչպես նաև ժողովրդական բանահյուսության և արվեստի ստեղծագործություններ»:

Նման զարգացումների համատեքստում հայկական պրակտիկան չի պատասխանում կատարումները հրապարակային հաղորդելու և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքների մեկնաբանության հիմնախնդիրներին:

Այս իսկ պատճառով սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվում է կատարումները հրապարակային հաղորդելու, հեռարձակելու, հանրությանը մատչելի դարձնելու իրավունքների եզրութաբանական տարբերությունները: Այնուհետ վերլուծվում է նշված իրավունքների մեկնաբանման վերաբերյալ միջազգային պրակտիկան՝ հիմնվելով Արդարադատության Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի վրա:

Նշված վերլուծությունների հիման վրա հետազոտությունը ներկայացնում է հրապարակային հաղորդելու և հանրությանը մատչելի դարձնելու մեկնաբանման առանձնահատկությունները, որոնք կարող են կիրառելի լինել հայկական պրակտիկայում:

§1. Հրապարակային հաղորդելու (հանրությանը հաղորդելու), հեռարձակման, հանրությանը մատչելի դարձնելու իրավունքների հասկացությունը և տարանջատումը

Կատարումները հրապարակային հաղորդելու³, հեռարձակելու և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքները միմյանց հետ սերտորեն փոխկապակցված իրավունքներ են, այդ իսկ պատճառով այս իրավունքները անհրաժեշտ է հետազոտել միասնության մեջ:

Ըստ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության բառարանի՝ հանրությանը հաղորդելու իրավունքը կիրառվում է Բեռնի կոնվենցիայով, և *նշանակում է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օբյեկտների պատկերների կամ հնչյունների, կամ դրանց երկուսի հաղորդումը հաղորդալարով կամ առանց դրա, որը թույլ է տալիս այդ պատկերները և/կամ հնչյունները ընկալել այն անձանց կողմից, ովքեր չեն պատկանում ընտանիքի կամ մտերիմների սովորական շրջանակին, այնպիսի վայրում, որոնք հեռու են հաղորդումը սկսելու սկզբնական վայրից, և առանց նման հաղորդման՝ պատկերները և/կամ հնչյունները հասանելի չէին լինի հաղորդման վայրում կամ վայրերում՝ անկախ այն բանից, թե վերոգրյալ անձինք կարող էին ընկալել այդ պատկերները և հնչյունները միաժամանակ նույն վայրում, թե տարբեր ժամանակ՝ տարբեր վայրերում*⁴: Ի հավելումն վերոգրյալի՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հեղինակային պայմանագիրը հանրությանը հաղորդելու իրավունքի մեջ ներառում է նաև հանրությանը մատչելի դարձնելու իրավունքը՝ ուղղակիորեն ընդգծելով, որ հեղի-

³ Հաջորդիվ հետազոտությունում մենք հավասարապես կօգտագործենք հրապարակային հաղորդելու և հանրությանը հաղորդելու եզրույթները:

⁴ *St'u World Intellectual Property Organization. Guide to the copyright and related rights treaties administered by WIPO: And glossary of copyright and related rights and terms. WIPO, 2003, էջ 275-276*

նակները օգտվում են բացառիկ իրավունքից՝ թույլատրելու իրենց ստեղծագործությունները հրապարակայնորեն հաղորդելու՝ հաղորդալարով կամ առանց հաղորդալարի, ներառյալ հանրությանը մատչելի դարձնելը այնպիսի եղանակով, որ հասարակության անդամներին դրանք հասանելի լինեն անհատապես ընտրած ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ⁵:

Եթե Բեռնի կոնվենցիայից կարելի է բխեցնել հանրությանը հաղորդելու իրավունքի բավականին լայն մեկնաբանություն, ապա կատարողների իրավունքների պաշտպանությանը նվիրված Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների պահպանության մասին Հռոմի կոնվենցիան (այսուհետ՝ Հռոմի Կոնվենցիա), տալով այս իրավունքի հասկացությունը, այն որոշակիորեն նեղացնում է՝ սահմանելով, որ կատարողները իրավունք ունեն կանխել առանց իրենց համաձայնության իրենց կատարման հեռարձակումն ու հրապարակային հաղորդումը⁶: Նշված ձևակերպմամբ ստացվում է, որ հեռարձակումը առանձին կատերգորիա է, որը չի մտնում հանրությանը հաղորդելու մեջ:

Կատարողների իրավունքների պաշտպանությանը նվիրված հաջորդող միջազգային փաստաթղթերը և սմրագրում են հրապարակային հաղորդման հասկացությունը⁷: Այսպես, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Կատարումների և հնչյունագրերի պայմանագիրը (այսուհետ՝ Կատարումների և հնչյունագրերի պայմանագիր) հրապարակային հաղորդումը բնութագրում է հետևյալ կերպ. «Կատարման կամ հնչյունագրի «հրապարակային հաղորդում» նշանակում է հնչյունագրում ամրագրված կատարման հնչյունների կամ ուղղակի հնչյունների կամ հնչյունների ներկայացման հաղորդումը հասարակությանը ցանկացած եղանակով՝ բացի եթերային հեռարձակումից»: Պայմանագիրը սահմանում է, որ հրապարակային հաղորդումը ընդգրկում է հնչյունագրում ամրագրված հնչյունների կամ հնչյունների ներկայացումը հասարակությանը, ունկնդրելի դարձնելը⁸: Իր հերթին «Տեսալսողական կատարումների մասին» Պեկինի պայմանագիրը (այսուհետ՝ Պեկինի պայմանագիր) և սալիս է գրեթե նույնանման հասկացություն՝ ամրագրելով, որ հանրությանը հաղորդումը նշանակում է չամրագրված կատարման կամ տեսալսողական

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս «Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների պահպանության մասին» Հռոմի Կոնվենցիա (1961), այսուհետ՝ Հռոմի Կոնվենցիա, հոդված 7:

⁷ Հռոմի կոնվենցիան կատարողների իրավունքների պաշտպանությանը նվիրված առաջին և հիմնաքարային փաստաթուղթն է: Հռոմի կոնվենցիային հաջորդած «Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության» 1996 թվականի «Կատարումների և հնչյունագրերի պայմանագիրը» և «Տեսալսողական կատարումների մասին» Պեկինի պայմանագիրը կատարողների իրավունքների պաշտպանության հիմնական միջազգային փաստաթղթերն են:

⁸ Տե՛ս Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Կատարումների և Հնչյունագրերի պայմանագիր (1996), այսուհետ՝ Կատարումների և Հնչյունագրերի պայմանագիր, հոդված 2:

ամրագրման մեջ ամրագրված կատարման հաղորդումը հանրության ցանկացած եղանակով՝ բացի հեռարձակումից⁹:

Բավականին հետաքրքիր է նաև հանրությանը մատչելի դարձնելու իրավունքի շուրջ զարգացումները: Հռոմի Կոնվենցիան այս իրավունքի վերաբերյալ որևէ նշում չէր պարունակում, սակայն ժամանակի ընթացքում գլոբալ թվայնացումը և թվային դարաշրջանը հանգեցրին հանրությանը մատչելի դարձնելու իրավունքի սահմանմանը, որը սկիզբ դրվեց համացանցի ժամանակաշրջանի պայմանագրերով, այն է՝ Կատարումների և հնչյունագրերի պայմանագրով, ապա Պեկինի պայմանագրով¹⁰:

Այսպես և՛ Կատարումների և հնչյունագրերի պայմանագիրը, և՛ Պեկինի պայմանագիրը, նախատեսելով հանրությանը մատչելի դարձնելու իրավունքը, այն բնութագրում են որպես ամրագրված կատարումները հանրությանը մատչելի դարձնել հաղորդալարով կամ առանց հաղորդալարի, այնպիսի եղանակով, որ հասարակության ներկայացուցիչներին դրանք հասանելի լինեն անհատապես ընտրած ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ¹¹: Այս իրավունքը հատկապես կարևորում է սրբնթաց զարգացող ինտերնետ հարթակների և տեխնոլոգիաների ժամանակաշրջանում: Այս իրավունքի ներքո կարելի է դիտարկել, օրինակ, կատարումները մատչելի դարձնելը համացանցում ներբեռնման համար, կամ հիպերլինքերի տեղադրումը և այլն¹²: Ավելին, այս իրավունքի վրա են հիմնված ներկայիս ամենատարածված սթրիմինգային¹³ (streaming) ծառայությունները (բաժանորդագրությամբ կամ առանց դրա), որոնք հասանելիություն են ապահովում երաժշտությանը, ֆիլմերին և այլն¹⁴: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ հանրությանը մատչելի դարձնելու իրավունքը հանրությանը հաղորդելու իրավունքի ենթաճյուղն է՝ հարմարեցված թվային դարաշրջանին:

Այս համատեքստում կարևոր է անդրադառնալ նաև հեռարձակման իրավունքին: Հեռարձակումը աշխատանքի կամ հարակից իրավունքի օբյեկտի հանրության հաղորդումն է՝ առանց հաղորդալարի: Այն իր մեջ ընդգրկում է ինչպես

⁹ Տե՛ս Տեսալսողական կատարումների մասին Պեկինի պայմանագիր (2012), այսուհետ՝ Պեկինի պայմանագիր, հոդված 2:

¹⁰ Տե՛ս AEPO Artis, Performers' Rights in International and European Legislation: Situation and Elements for Improvement, (Oct 2018) էջ 60:

¹¹ Տե՛ս Կատարումների և Հնչյունագրերի պայմանագիր, հոդված 10, Պեկինի պայմանագիր, հոդված 10:

¹² Տե՛ս Pila, Justine, and Paul Torremans. European intellectual property law. Oxford University Press, USA, 2019, էջ 299:

¹³ Ըստ պահանջի սթրիմինգային ծառայությունների օրինակ են Netflix, Disney Plus, HBO Max, Hulu, Peacock, Apple TV Plus, Paramount Plus, and Amazon Prime Video, իսկ կենդանի սթրիմինգային ծառայություններից՝ Hulu + Live TV, YouTube TV, Sling TV, FuboTV, Philo TV, and DirecTV Stream: Երաժշտության համար որպես սթրիմինգային ծառայություններ կարելի է առանձնացնել Spotify, Apple Music, Tidal HiFi. Amazon Music Unlimited, YouTube Music:

¹⁴ Տե՛ս AEPO Artis, Performers' Rights in International and European Legislation: Situation and Elements for Improvement, (Oct 2018), էջ 68-69:

վերգետնյա (terrestrial broadcasting), այնպես էլ արբանյակային (satellite broadcasting) հեռարձակումը: Մինևույն ժամանակ պետք է նշել, որ հեռարձակման ներքո չի ընկալվում համակարգչային ցանցերի միջոցով աշխատանքի կամ հարակից իրավունքի օբյեկտի՝ հանրությանը մատչելի դարձնելը¹⁵:

Առաջին միջազգային կոնվենցիան, որը ուղղակիորեն սահմանում է հեռարձակման հասկացությունը, Հռոմի կոնվենցիան է, որը սահմանում է, որ հեռարձակում նշանակում է հանրության ընկալման համար¹⁶ հնչյունների կամ պատկերների և հնչյունների՝ առանց հաղորդալարի տարածումը¹⁷: Այս ձևակերպումը ենթարկվում է որոշակի քննադատության, քանի որ հանրության ընկալման համար եզրույթը առաջացնում է որոշակի անհստակություններ: Անգլիալեզու գրականության մեջ վերոգրյալ բառապաշարը տարակարծիք մեկնաբանությունների տեղիք է տալիս, և նույնիսկ կա մեկնաբանություն, որ նշված բառապաշարը նշանակում է, որ կատարումը պետք է պարտադիր ընկալվի հանրության կողմից¹⁸: Սակայն որպեսզի տարածումը որակվի որպես հեռարձակում, աշխատանքի փաստացի կամ իրական ընկալումը անհրաժեշտ չէ¹⁹:

Հաջորդ միջազգային փաստաթուղթը, որը ձևակերպում է հեռարձակման հասկացությունը, Կատարումների և հնչունագրերի պայմանագիրն է, որ սահմանում է. «Հեռարձակում նշանակում է հնչյունների կամ պատկերների և հնչյունների կամ դրանց ներկայացման տարածումը հասարակությանը՝ *առանց հաղորդալարի*. այսպիսի տարածումը արբանյակային կապով նույնպես «հեռարձակում» է. «հեռարձակում» է համարվում նաև կողավորված ազդանշանների տարածումը, եթե դրանց սպակոդավորման միջոցները հասարակությանը տրամադրվել են հեռարձակող կազմակերպության կողմից կամ նրա համաձայնությամբ»²⁰: Նույնաման հասկացություն է ամրագրում նաև Պեկինի պայմանագիրը²¹:

Նշված եզրույթների բազմազանությունը առաջին հայացքից առաջացնում է բավականին մեծ շփոթություն և դժվարացնում է կողմնորոշվել մի քանի իրավունքների շրջանակներում:

Սակայն իրերի դրությունը, կարծում ենք, հետևյալն է. հանրությանը հաղորդելու կամ հրապարկային հաղորդելու իրավունքը պետք է դիտարկել կատարումների՝ հաղորդալարով կամ առանց դրա հաղորդումը հասարակությանը այն

¹⁵ Տե՛ս World Intellectual Property Organization. Guide to the copyright and related rights treaties administered by WIPO: And glossary of copyright and related rights and terms. WIPO, 2003, էջ 270-271:

¹⁶ Հռոմի Կոնվենցիայի անգլերեն տեքստը ձևակերպված է հետևյալ կերպ՝ “broadcasting” means the transmission by wireless means for public reception of sounds or of images and sounds;

¹⁷ Տե՛ս Հռոմի Կոնվենցիա, հոդված 3:

¹⁸ Տե՛ս World Intellectual Property Organization. Guide to the copyright and related rights treaties administered by WIPO: And glossary of copyright and related rights and terms. WIPO, 2003, էջ 271:

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁰ Տե՛ս Կատարումների և Հնչունագրերի պայմանագիր, հոդված 2:

²¹ Տե՛ս Պեկինի պայմանագիր, հոդված 3:

ձևակերպմամբ, որ ամրագրված է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության բառարանում: Չնայած կոնվենցիոն տարբեր բնորոշումներին՝ հանրությանը հաղորդելու իրավունքը պետք է դիտարկել որպես լայն իրավունք, որն իր մեջ ընդգրկում է նաև հեռարձակումը և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքը²²:

Այս առումով ՀՀ օրենսդրությունը առաջացնում է որոշակի բարդություններ: Եթե հանրությանը հաղորդելու և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքի պարագայում ՀՀ օրենսդրությունը հետևել է միջազգային պրակտիկայում առկա մոտեցումներին և ձևակերպումներին, ապա հեռարձակման պարագայում վիճակը քիչ այլ է²³: Այսպես, Օրենքը հեռարձակումը դիտարկում է որպես տարածումը ինչպես հաղորդալարով, այնպես էլ առանց դրա: Մինչդեռ վերոգրյալ քննարկված հասկացություններից պարզ է դառնում, որ հեռարձակումը միջազգային պրակտիկայում դիտարկվում է որպես միայն առանց հաղորդալարի տարածում: Ավելին, նույնիսկ ԵՄ դիրեկտիվների եզրութաբանությամբ հստակորեն տարբերակում է մտցվում անլար հեռարձակման և մալուխային տարածման միջև: Դիրեկտիվները հստակորեն ընդգծում են, որ հեռարձակումը իր բնույթով առանց հաղորդալարի տարածումն է, իսկ հաղորդալարով հաղորդման պարագայում օգտագործում են մալուխային վերահաղորդում եզրույթը (cable retransmission)²⁴: Ինչը նշանակում է, որ մեր օրենսդրության կողմից օգտագործվող հասկացությունը չի համապատասխանում միջազգային պրակտիկայում օգտագործվող եզրութաբանությանը, և հաղորդալարով հաղորդումը չպետք է ընդգրկել հեռարձակման հասկացության ներքո:

Այսպիսով, սույն հետազոտության շրջանակում մենք ելնում ենք այն հիմնական տից, որ հանրությանը հաղորդելու իրավունքը լայն իրավունք է, որն իր մեջ ընդգրկում է հեռարձակման և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքները՝ հիմնվելով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության սահմանման վրա:

²² Այս համատեքստում հեռարձակումը պետք է դիտարկել որպես կատարման՝ առանց հաղորդալարի տարածումը հասարակությանը՝ ընդգրկելով վերգետնյա (terrestrial broadcasting), այնպես էլ արբանյակային հեռարձակումը: Իր հերթին հանրությանը մատչելի դարձնելը պետք է դիտարկել որպես կատարումների՝ հանրությանը հաղորդելը այնպիսի եղանակով, որ հասարակության ներկայացուցիչներին դրանք հասանելի լինեն անհատապես ընտրած ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ:

²³ Օրենքի 19-րդ հոդվածի իմաստով՝ հանրությանը հաղորդում է համարվում ոչ նյութականացված ձևով ստեղծագործությունը հանրության անդամներին մատչելի դարձնելն անմիջական կատարման միջոցով կամ դրա տեսաձայնագրության հաղորդման միջոցով՝ հաղորդալարով կամ առանց հաղորդալարի: Հանրությանը հաղորդումը նաև ստեղծագործության մատչելի դարձնելն է հանրության անդամներին այնպիսի ձևով, որ այն հասանելի լինի հանրության անդամներին նրանց կողմից անհատապես ընտրված ցանկացած վայրում և պահին, մասնավորապես՝ համակարգչային կամ նմանատիպ ցանցերի միջոցով:

²⁴ Տե՛ս, օրինակ, Council Directive 93/83/EEC of 27 September 1993 on the coordination of certain rules concerning copyright and rights related to copyright applicable to satellite broadcasting and cable retransmission, Directive 2001/29/EC of the European Parliament and of the Council of 22 May 2001 on the harmonisation of certain aspects of copyright and related rights in the information society:

Ուստի այս իրավունքների մեկնաբանման ընթացքում պետք է հաշվի առնել դրանց փոխկապակցվածությանը և ելնել մեկնաբանման միևնույն հիմնակետերից:

§ 2. Հանրությանը հաղորդելու և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքների մեկնաբանման որոշակի առանձնահատկություններ

Հայկական դատական պրակտիկայում գրեթե բացակայում են կատարումների նկատմամբ հանրությանը հաղորդելու կամ հանրությանը մատչելի դարձնելու իրավունքների խախտման վերաբերյալ հաջողված դատական գործերը²⁵, այդ իսկ պատճառով այս իրավունքների բացահայտման համար անհրաժեշտ է անդրադարձ կատարել Արդարադատության եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, քանի որ Դատարանի կողմից տրվող մեկնաբանությունները կարևոր նշանակություն ունեն այս իրավունքների բացահայտման համար՝ հատկապես հաշվի առնելով, որ Դատարանի մեկնաբանությունները հիմնվում են մեր իրավական համակարգի մաս կազմող Կատարումների և Հնչյունագրերի պայմանագրի, ԹԻՓՄ²⁶ համաձայնագրի և Հռոմի Կոնվենցիայի վրա:

Հանրությանը հաղորդելու իրավունքի բացահայտման համար հատկապես կարևոր նշանակություն ունեն Արդարադատության Եվրոպական դատարանի Phonographic Performance (Ireland) Limited v Ireland, Attorney General²⁷, այսուհետ՝ ՓՓԼ-ի գործը, և Societa` Consortile Fonografici (SCF) v Marco Del Corso²⁸ գործերը, այսուհետ՝ ԷսՍիՖ-ի գործը:

ՓՓԼ-ի գործով հնչյունագրային կատարումների կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը ներկայացնում էր հնչյունագրեր արտադրողների շահերը Իռլանդիայում: Նշված գործի շրջանակներում Կազմակերպությունը հայց էր ներկայացրել Իռլանդիայի դեմ՝ պնդելով, որ այն պարագայում, երբ իշխանությունները սահմանում են բացառություն հյուրանոցների համար՝ ազատելով նրանց հյուրանոցի սենյակներում հնչյունագրերի օգտագործման համար վարձատրության վճարումից, թույլ են տալիս ԵՄ օրենսդրության խախտում²⁹:

²⁵ Սկսած 2013 թվականից Հեղինակային իրավունքների կոլեկտիվ կառավարում իրականացնող «ՀայՀեղինակ» կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը ներկայացրել է սահմանափակ թվով հայցեր հեղինակների հրապարկման նկատման իրավունքների խախտման վերաբերյալ, սակայն այս գործերի քննության ընթացքում բացահայտված չեն հանրությանը հաղորդելու իրավունքի մեկնաբանության առանձնահատկությունները: Տե՛ս, օրինակ, ԵԿԴ/2948/02/13, ԵԿԴ/2947/02/13 և այլն:

²⁶ Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիր (TRIPS):

²⁷ Judgment of the Court (Third Chamber), 15 March 2012, Phonographic Performance (Ireland) Limited v Ireland and Attorney General. Case C-162/10:

²⁸ Judgment of the Court (Third Chamber), 15 March 2012, Phonographic Performance (Ireland) Limited v Ireland and Attorney General. Case C-162/10:

²⁹ Տե՛ս Alex Freelove and Joel Smith, The blog of the Journal of Intellectual Property Law and Practice, The dental surgery, the hotel bedroom and ‘communication to the public’ <http://jiplp.blogspot.com/2012/07/the-dental-surgery-hotel-bedroom-and.html> [Accessed 29 August 2024]:

Նշված գործի շրջանակներում դատարանը գտավ, որ հյուրանոցի սենյակներում հնչյունագրերի հեռարձակումը հանրությանը հաղորդել է, ինչը նշանակում է, որ հյուրանոցները պարտավոր են վճարել արդարացի փոխհատուցում նշված հնչյունագրերի հաղորդման համար, ուստի Իռլանդիայի կողմից թույլ է տրվել ԵՄ օրենսդրության խախտում՝ սահմանելով բացառություն հյուրանոցների համար³⁰:

Սակայն պետք է նշել, որ իր վերլուծություններով առավել հետաքրքրական են ԷսՍԻՖ-ի գործով կատարված եզրահանգումները և գործի հանգամանքները: Գործի հանգամանքները հետևյալն էին. ԷսՍԻՖ-ը՝ Հնչյունագիր արտադրողների իրավունքների կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը, հայց էր ներկայացրել Դել Մարկոյի՝ իտալացի ատամնաբույժի դեմ, որպեսզի վերջինս վճարի կոլեկտիվ կազմակերպությանը ռոյալթի իր մասնագիտական գործունեության ընթացքում ռադիոհաղորդչի միջոցով հնչյունագրերի հեռարձակման համար³¹: Այս գործի շրջանակներում Արդարադատության Եվրոպական դատարանի առջև բարձրացված էին մի շարք հարցեր: Կարևորագույն հարցերից էր այն, թե արդյո՞ք Հռոմի Կոնվենցիան, ԹԻԻՓՍ-ը, Հնչյունագրերի և կատարումների պայմանագիրը կիրառելի են ԵՄ իրավական համակարգում, և արդյո՞ք այդ միջազգային փաստաթղթերում օգտագործվող «հանրությանը հաղորդել» եզրույթը իր էությունը նույն է, ինչ ԵՄ դիրեկտիվներում օգտագործվող եզրույթը: Այս առումով դատարանի եզրահանգումը այն էր, որ ԹԻԻՓՍ համաձայնագիրը, Կատարումների և հնչյունագրերի պայմանագիրը ԵՄ իրավական համակարգի մաս են, ինչը չի կարելի ասել Հռոմի Կոնվենցիայի մասին, թեև այն ունի իր անուղղակի ազդեցությունը ԵՄ իրավական համակարգի վրա³²: Դրա հետ մեկտեղ Դատարանը ամրագրեց, որ անհատները չեն կարող ուղղակիորեն վկայակոչել ԹԻԻՓՍ համաձայնագիրը և Կատարումների և Հնչյունագրերի պայմանագիրը: Ինչ վերաբերում է եզրութարանական մեկնաբանություններին, ապա Դատարանը ամրագրեց, որ հանրությանը հաղորդելը պետք է մեկնաբանվի Հռոմի Կոնվենցիայով, ԹԻԻՓՍ-ով, Հնչյունագրերի և կատարումների պայմանագրով օգտագործվող հավասարազոր կոնցեպտների լույսի ներքո՝ հաշվի առնելով այդ միջազգային փաստաթղթերի համատեքստը և այն շեշտադրումները, որոնք դրված են միջազգային փաստաթղթերում³³:

Դատարանի առջև դրված հաջորդ հարցը այն էր, թե արդյո՞ք տնտեսական գործունեության մեջ ներգրված աստամնաբուժարանում առանց որևէ վար-

³⁰ Տե՛ս AEPO Artis, Performers’ Rights in International and European Legislation: Situation and Elements for Improvement, (Oct 2018), էջ 16:

³¹ Տե՛ս Telfa, Broadcast of music by radio to clients of professional practices on a non profit basis is not “public” and as a result is royalty free <https://www.telfa.law/broadcast-of-music-by-radio-to-clients-of-professional-practices-on-a-non-profit-basis-is-not-public-and-as-a-result-is-royalty-free/> [Accessed 29 August 2024]:

³² Տե՛ս T Judgment of the Court (Third Chamber), 15 March 2012, Società Consortile Fonografici (SCF) v Marco Del Corso, para 56, <https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/?uri=CELEX:62010CJ0135> [Accessed 29 August 2024]:

³³ Տե՛ս նույն տեղում, para 56:

ձատրության իրենց հաճախորդների համար հնչունագրերի հեռարձակումը իրենից ներկայացնում է հանրությանը հաղորդել կամ հանրությանը մատչելի դարձնել, թե՛ ոչ: Այս կապակցությամբ Դատարանը առանձնացրեց այն չափանիշները, որոնք պետք է գնահատման ենթակա դառնան գործողությունը որպես հանրությանը հաղորդել որակելու համար:

- Առաջին՝ դատարանը ընդգծում է օգտագործողի անփոխարինելի դերը (indispensable role of the user): Հղում տալով իր նախկին որոշումներին՝ դատարանը նշեց, որ, օրինակ, հյուրանոցի կողմից հնչունագրի՝ հանրությանը հաղորդումը տեղի է ունենում այն դեպքում, երբ հյուրանոցի օպերատորը, լիովին գիտակցելով իր գործողության հետևանքները, միջամտում է՝ իր հաճախորդներին տալով հասանելիություն պաշտպանվող օբյեկտի հեռարձակմանը³⁴: Այս պարագայում, առանց նման միջամտության, հաճախորդները չէին կարող հասանելիություն ունենալ հեռարձակվող օբյեկտներին, եթե նույնիսկ գտնվում են հեռարձակման ծածկություն³⁵:
- Երկրորդ՝ դատարանը նշում է, որ նախկինում բազմիցս անդրադարձ է կատարվել «հանրություն» եզրույթին, որը նշանակում է անձանց անորոշ շրջանակ և բավականին մեծ շրջանակ³⁶: Անձանց անորոշ շրջանակը բնորոշելիս դատարանը հղում է կատարում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության բառարանին՝ նշելով, որ անորոշ շրջանակը ենթադրում է աշխատանքը հասանելի դարձնել այնպիսի անձանց շրջանակին, որը սահմանափակված չէ որոշակի մասնավոր խմբին պատկանող յուրահատուկ անհատներով: Ինչ վերաբերում է անձանց բավականին մեծ շրջանակին, ապա ըստ դատարանի՝ այն գերազանցում է նվազագույնի (*de minimis*) շեմը: Սա հանրության շրջանակից բացառում է մարդկանց այն խմբերը, որոնք չափազանց փոքր են կամ անէական: Միևնույն ժամանակ, անձանց քանակը որոշելու համար կարևոր է որոշել աշխատանքը հանրությանը հաղորդելու գումարային ազդեցությունը հնարավոր լսարանին: Ինչը նշանակում է, որ ոչ միայն կարևոր է պարզել, թե քանի անձ միաժամանակ միևնույն վայրում հասանելիություն ունի աշխատանքին, այլ նաև, թե քանի անձ հաջորդաբար հասանելիություն ունի պահպանվող օբյեկտին³⁷:

³⁴ Տե՛ս նույն տեղում, para 82:

³⁵ Այստեղ դատարանը հղում է տալիս Case C-306/05 SGAE [2006] ECR I-11519 C-429/08 Football Association Premier League and Others [2011] ECR I-9083 գործերում կատարված իր վերլուծություններին:

³⁶ Տե՛ս դատարանի վերլուծությունները՝ Case C-89/04 Mediakabel [2005] ECR I-4891, paragraph 30; Case C-192/04 Lagardère Active Broadcast [2005] ECR I-7199, paragraph 31, and SGAE, paragraphs 37 and 38):

³⁷ Տե՛ս T Judgment of the Court (Third Chamber), 15 March 2012, Società Consortile Fonografici (SCF) v Marco Del Corso, para 83-87, <https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/?uri=CELEX:62010CJ0135> [Accessed 29 August 2024]:

- Պատարանի կողմից նշվող երրորդ չափանիշը այն է, թե արդյո՞ք հանրությանը հաղորդելը տեղի է ունեցել շահույթ ստանալու նպատակով, թե՞ ոչ³⁸: Այսպես անդրադարձ կատարելով իր նախկինում կայացված որոշումներին՝ դատարանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ, օրինակ, հյուրանոցային օպերատորների պարագայում հաճախորդներին աշխատանքի հեռարձակմանը հասանելիություն տալը կարելի է դիտարկել որպես առանձին ծառայություն, որ իրականացվում է որոշակի շահ ստանալու նպատակով: Պատճառն այն է, որ նման ծառայության տրամադրումը ազդում է հյուրանոցում կեցության պայմանների վրա, հետևաբար նաև հյուրանոցի սենյակի գնի վրա³⁹:

Գործի շրջանակներում դատարանը, վերլուծելով վերոգրյալ չափանիշները, եկել էր այն եզրակացության, որ թեև առաջին չափանիշը առկա է, այն է՝ ատամնաբուժարանի այցելուները կարող էին լսել հեռարձակումը ատամնաբույժի նպատակամղված միջամտության արդյունքում, սակայն առկա չեն հաջորդ երկու չափանիշները: Ուստի դատարանը գտավ, որ հնչունագրերի հեռարձակումը հանրությանը հաղորդել չէ, քանի որ հնչունագրերը լսող անձանց շրջանակը շատ փոքր էր, նրանք չէին որոշում լսե՞լ, թե՞ չլսել դրանք⁴⁰: Ատամնաբույժը չէր կարող ենթադրել, որ իր հաճախորդների հոսքը կարող է էականորեն մեծանալ միայն այն պատճառով, որ իր ատամնաբուժարանում կա համապատասխան ֆոնային երաժշտություն⁴¹:

Նշված գործը կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր անգամ գնահատելու, թե արդյո՞ք կա հանրությանը հաղորդել, թե՞ ոչ, քանզի միայն որոշակի կառույցում ուղղակի երաժշտության տարածումը ոչ միշտ է, որ կարող է համարվել հանրությանը հաղորդում:

Վերոգրյալ մեկնաբանությունների լույսի ներքո մենք այն կարծիքին են, որ հանրությանը հաղորդելու իրավունքի մեկնաբանության ժամանակ հայկական իրավակիրառ պրակտիկան ևս պետք է ուշադրության կենտրոնում պահի և ամեն անգամ գնահատի հետևյալ հարցերը.

- Արդյո՞ք կատարումները հաղորդվել են անձանց անորոշ շրջանակի, թե՞ ոչ: Կարծում ենք՝ անձանց անորոշ շրջանակի մեկնաբանության համար

³⁸ Տե՛ս Alex Freelove and Joel Smith, The blog of the Journal of Intellectual Property Law and Practice, The dental surgery, the hotel bedroom and ‘communication to the public’, <http://jiplp.blogspot.com/2012/07/the-dental-surgery-hotel-bedroom-and.html> [Accessed 29 August 2024]:

³⁹ Տե՛ս T Judgment of the Court (Third Chamber), 15 March 2012, Società Consortile Fonografici (SCF) v Marco Del Corso, para 90, <https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/?uri=CELEX:62010CJ0135> [Accessed 29 August 2024]

⁴⁰ Տե՛ս Pila, Justine, and Paul Torremans. European intellectual property law. Oxford University Press, USA, 2019, էջ 297:

⁴¹ Տե՛ս T Judgment of the Court (Third Chamber), 15 March 2012, Società Consortile Fonografici (SCF) v Marco Del Corso, para 97, <https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/?uri=CELEX:62010CJ0135>, [Accessed 29 August 2024]:

պետք է առաջնորդող լինի Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից տրված ձևակերպումը, ըստ որի՝ անորոշ շրջանակը ենթադրում է աշխատանքը հասանելի դարձնել այնպիսի անձանց շրջանակին, որը սահմանափակված չէ որոշակի մասնավոր խմբին պատկանող յուրահատուկ անհատներով, և ովքեր չեն պատկանում ընտանիքի կամ մտերիմների սովորական շրջանակին:

- Գնահատման ենթակա հաջորդ չափանիշը պետք է լինի, թե արդյո՞ք կատարման՝ հանրությանը հաղորդումը տեղի է ունեցել շահույթ ստանալու նպատակով, թե՛ ոչ: Եթե կատարման՝ հանրությանը հաղորդումը տեղի է ունեցել շահույթ ստանալու նպատակով, ապա առավել մեծ է հավանականությունը, որ դրանով խախտվում է կատարողի իրավունքները:
- Երրորդ չափանիշը, որը պետք է գնահատման ենթարկվի, թե արդյո՞ք հանրությունը, որին հասանելի է դարձվել կատարումները, հնարավորություն ունեք, այլ եղանակով հասանելիություն ստանալ կատարմանը, թե՛ ոչ:

§ 3. Հիպերլինքերի տեղադրումը որպես հանրությանը հաղորդելու իրավունքի իրականացման ձև

Հանրությանը հաղորդելու իրավունքի շրջանակներում կարևոր է անդրադառնալ այն հարցին, թե արդյո՞ք հիպերլինքերի⁴² (hyperlinks) տեղադրումը կարող է դիտարկվել որպես հանրությանը հաղորդում, թե՛ ոչ: Այս առումով կարևոր է կրկին անդրադառնալ Արդարադատության Եվրոպական դատարանի գործերին: Այս կապակցությամբ Դատարանի առաջին գործերից էր «Nils Svensson et al v Retriever Sverige AB» գործը, այսուհետ՝ Սվենսոնի գործ: Գործի շրջանակներում դիմումատուներն էին լրագրողները, որոնց հոդվածները տպագրվում էին «Göteborgs-Posten» թերթում և նույն թերթի կայքում: Իր հերթին «Retriever Sverige»-ն ուներ կայք, որն իր հաճախորդներին, ըստ նրանց ներկայացրած պահանջների, հասանելիություն էր սպահովում այլ կայքերի հոդվածների հիպերլինքերի ցանկին: Այդ հոդվածների մեջ էին նաև «Göteborgs-Posten»-ի հոդվածները⁴³: Գործի շրջանակում Արդարադատության Եվրոպական դատարանը պետք է պարզեր, թե արդյո՞ք նման հիպերլինքերի տեղադրումը իրենից ներկայացնում է աշխատանքը հանրությանը մատչելի դարձնելը, և արդյո՞ք առկա է հեղինակային իրավունքի խախտում, թե՛ ոչ: Նշված գործի շրջանակներում դատարանը եկավ

⁴² Մենք ընդունում ենք, որ ավելի նախընտրելի է օգտագործել հիպերհղում, հիպերկապ կամ հղում եզրույթը, սակայն նման եզրույթը աշխատանքի շարադրանքում որոշակիորեն կարող է տարընկալումներ առաջացնել, այդ իսկ պատճառով հիմնականում կօգտագործենք հիպերլինք եզրույթը:

⁴³ St'u Judgment of the Court (Fourth Chamber), 13 February 2014, Nils Svensson and Others v Retriever Sverige AB, para 8, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A62012CJ0466> [Accessed 29 August 2024]:

մի քանի եզրահանգման⁴⁴: Այսպես, դատարանը առաջին անգամ նշեց, որ հիպերլինքերը հանրությանը հաղորդում են, ինչը ԵՄ իրավունքի համաձայն՝ հեղինակի/կատարողի բացառիկ իրավունքն է: Սակայն միևնույն ժամանակ դատարանը նշեց, որ հիպերլինքերի տեղադրումը հեղինակի իրավունքների խախտում չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ հիպերլինքերի տեղադրմամբ աշխատանքը ներկայացվում է նոր հանրությանը: Իր հերթին, ըստ դատարանի, նոր հանրությունը ընդգրկում է այն անձանց, որոնք հասանելիություն են ստացել աշխատանքին իրավատիրոջ գործողությունների արդյունքում: Այլ կերպ, եթե իրավատերը իր աշխատանքը հրապարակում է առցանց, ցանկացած այլ անձ կարող է տեղադրել նշված աշխատանքի հիպերլինքը՝ առանց հետագա թույլտվության⁴⁵:

Այս շարքում հաջորդը գործը «BestWater International GmbH v Michael Mebes and Stefan Potsch»⁴⁶-ն էր: Այն հետաքրքրական է նախևառաջ այն պատճառով, որ այս գործի պարագայում առկա էր հղման մեկ այլ տեսակը, այսպես կոչված՝ շրջանակավորումը (“transclusion” or “framing”): Գործի հանգամանքները հետևյալն էին. «BestWater»-ը ջրի ֆիլտրման համակարգեր մշակող կազմակերպություն էր, որը պատրաստել էր ջրերի աղտոտման վերաբերյալ երկու թույլ տևողությամբ ֆիլմ: Ֆիլմը, առանց ընկերության համաձայնության, տեղադրվել էր ՅուԹյուբում: Իր հերթին «Mebes and Potsch»-ը վաճառքի գործակալներ էին, որոնք աշխատում էին «BestWater»-ի մրցակիցների համար: Նրանք ունեին կայք, որտեղ գովազդում էին իրենց հաճախորդների արտադրանքը, որը թույլ էր տալիս նաև դիտել «BestWater»-ի ֆիլմը՝ սեղմելով հիպերլինքը, որը գործում էր շրջանակավորման տեխնիկայի միջոցով: Դա նշանակում էր, որ, երբ «Michael Mebes»-ի օգտատերերը սեղմում էին համապատասխան հիպերլինքը, միանգամից «Michael Mebes»-ի կայքում հայտնվում էր «BestWater»-ի յություբյան վիդեոն՝ տպավորություն ստեղծելով, որ ֆիլմը ստեղծվել էր «Michael Mebes»-ի կայքում⁴⁷: Նշված գործի շրջանակներում դատարանը սահմանեց, որ գործողությունը որպես հանրությանը հաղորդել բնութագրելու համար անհրաժեշտ է, որ այն հաղորդվի այնպիսի տեխնիկական միջոցով, որը տարբերվում է նախկինում օգտագործված միջոցից, կամ հաղորդվի այնպիսի նոր հանրությանը, որը հաշվի չէր առնվել իրավատիրոջ՝ հանրությանը առաջին անգամ հաղորդելիս: Դատարանը, հղում տալով Սվենսոնի

⁴⁴ Տե՛ս European Court of Justice, Nils Svensson et al v Retriever Sverige AB, C-466/12 <https://wilmap.stanford.edu/entries/european-court-justice-nils-svensson-et-al-v-retriever-sverige-ab-c-46612>, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A62012CJ0466> [Accessed 29 August 2024]:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում:

⁴⁶ Order of the Court (Ninth Chamber) 21 October 2014. BestWater International GmbH v Michael Mebes and Stefan Potsch. Case C-348/13.

⁴⁷ Տե՛ս BestWater International GmbH v. Mebes <https://globalfreedomofexpression.columbia.edu/cases/bestwater-international-gmbh-v-mebes/>, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A62012CJ0466> [Accessed 29 August 2024]:

գործին, նշեց, որ երրորդ անձի կողմի կայքում հեղինակային իրավունքով պաշտպանվող օբյեկտի հիպերլինքը տեղադրելը հանրությանը հաղորդել է, եթե աշխատանքը հասանելի է դարձվում նոր հանրությանը: Այնուհետև՝ դատարանը քննարկում է այն հարցը, թե այնպիսի հիպերլինքի տեղադրումը, որը տպավորություն է ստեղծում, որ նյութի հղումը ոչ թե առաջնային կայքից է, այլ մեկ այլ կայքից, իրենից ներկայացնում է հեղինակային իրավունքի խախտո՞ւմ, թե՛ ոչ: Արդարադատության դատարանը, համաձայնելով ազգային դատարանի դիրքորոշման հետ, եկավ այն եզրակացության, որ նման շրջանակավորման տեխնիկան աշխատանքը հանրությանը հաղորդել է⁴⁸: Պատասխանելով այն հարցին, թե արդյո՞ք նման հաղորդումը հաղորդում է նոր հանրությանը, թե՛ ոչ՝ դատարանը ամրագրեց, որ եթե աշխատանքը հասանելի է առաջնային հղմամբ, պետք է ենթադրել, որ իրավատերերը թույլատրել են հաղորդումը՝ դիտարկելով համացանցի բոլոր օգտատերերին որպես հանրություն: Հետևաբար դատարանը եզրահանգեց, որ նման շրջանակավորումը հանրությանը հաղորդում չէ այնքանով, որքանով պաշտպանվող օբյեկտը չի հաղորդվում նոր հանրությանը⁴⁹:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ երկու գործերը՝ կարելի է նկատել, որ հիպերլինքի տեղադրումը հանրությանը հաղորդել չէ, եթե հղումը տեղադրվել էր արդեն իսկ համացանցում հասանելի աշխատանքին, և չեն շրջանցվել պաշտպանության միջոցները՝ աշխատանքին հասանելիություն ստանալու համար: Այս երկու գործերը շատերի կողմից մեկնաբանվում էին որպես հղման բացարձակ ազատության իրավունք այն դեպքերում, երբ աշխատանքը ազատորեն հասանելի էր համացանցում: Ընդ որում, դատարանի մոտեցումը այն էր, որ հղումների տարբեր տեսակների նկատմամբ պետք է դրսևորել միատեսակ մոտեցում⁵⁰:

Սակայն բավականին շրջադարձային մոտեցումներ ի հայտ եկան Արդարադատության դատարանի «GS Media BV v Sanoma Media Netherlands BV and Others»⁵¹ գործով: Գործի շրջանակներում դատարանը պետք է պատասխաներ այն հարցին, թե արդյո՞ք հղումը այն նյութերին, որոնց հրապարակումը չէր թույլատրվել իրավատիրոջ կողմից, հանրությանը հաղորդելու իրավունքի խախտում է, թե՛ ոչ: Այս գործով պատասխանողը հայտնի հոլանդական բլոգն էր, որը տեղադրել էր հոլանդական ամսագրերի համար նախատեսված ֆոտոների հղումներ, որոնց արտահոսքը անհայտ օգտատիրոջ կողմից կատարվել էր ավստրալական կայքերից մեկում⁵²: Իր վերլուծությունները կատարելիս դատարանը հղում

⁴⁸ Տե՛ս նույն տեղում:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում:

⁵⁰ Տե՛ս Benjamin Znaty, ECJ rules on GS Media and reshapes case law on hyperlinking <https://mediawrites.law/author/benjamin-znaty/>, [Accessed 29 August 2024]:

⁵¹ Judgment of the Court (Second Chamber) of 8 September 2016, GS Media BV v Sanoma Media Netherlands BV and Others, Case C-160/15.

⁵² Տե՛ս European Court of Justice, GS Media BV v Sanoma Media Netherlands BV and Others, Case C-160/15 <https://wilmap.stanford.edu/entries/european-court-justice-gs-media-bv-v-sanoma-media-netherlands-bv-and-others-case-c-16015> [Accessed 29 August 2024]:

կատարեց արդեն վերը քննարկված երկու գործերին՝ նշելով, որ այդ գործերի պարագայում հիպերլինքերը տեղադրվել էին այնպիսի օբյեկտների համար, որոնք հանրությանը արդեն իսկ հասանելի էին իրավատիրոջ համաձայնությամբ, և հաղորդումը չէր եղել նոր հանրությանը: Սակայն նշված գործով իրավիճակը այլ էր. հղումը տեղադրվել էր այնպիսի ֆոտոներին, որոնք նախապես հասանելի չէին դարձվել իրավատիրոջ կողմից: Դատարանը, հաշվի առնելով համացանցի առանձնահատկությունները, եկավ այն երգակցության, որ բավականին խնդրահարույց է առանց հեղինակի համաձայնության հրապարակված աշխատանքների հիպերլինքերը դիտարկել որպես հանրությանը հաղորդում, քանի որ նման մոտեցումը կարող է դառնալ սպառնալիք խոսքի ազատությանը: Դատարանը նաև ընդգծեց, որ գործնականում բավականին դժվար է նաև գնահատել, թե արդյո՞ք աշխատանքի հրապարակման համար կա իրավատիրոջ համաձայնությունը, թե՞ ոչ: Նման դիտարկումները հանգեցրին մի շարք պայմանների սահմանմանը: Դատարանը սահմանեց, որ առանց իրավատիրոջ համաձայնության հրապարակված աշխատանքներին հղում տալու պատասխանատվությունը պետք է հիմնված լինի ողջամիտ իմացության չափանիշի վրա (a reasonable knowledge standard)⁵³: Ավելին, դատարանը հստակ տարաջատում մտցրեց այնպիսի դեպքերի համար, երբ հիպերլինքը տեղադրվել է շահույթ ստանալու նպատակով: Այսպես, այն դեպքերում, երբ անձը հղումը տեղադրելիս չի հետապնդում շահույթ ստանալու նպատակ, ապա, որպես կանոն, նման պարագայում չպետք է լինի ակնկալիք, որ անձը տեղյակ է համաձայնության բացակայության մասին: Մինևույն ժամանակ, այն դեպքերում, երբ անձը հղումը տեղադրում է շահույթ ստանալու նպատակով, ակնկալիքը այն է, որ նա պետք է ստուգեր, թե արդյո՞ք իր կողմից տեղադրված հղումները չեն ուղղորդում դեպի առանց իրավատիրոջ համաձայնության տեղադրված աշխատանքներին, հետևաբար գործում է այն կանխավարկածը, որ հղումը տեղադրվել է լրիվ գիտակցումով, որ նյութը ենթակա է պաշտպանության և իրավատիրոջ կողմից նյութի հրապարակման համաձայնության հնարավոր բացակայության⁵⁴: Այսինքն՝ այս պարագայում գործում է իմացության հերքման կանխավարկածը (a rebuttable presumption of knowledge)⁵⁵, այսինքն՝ կանխավարկածը, որ անձը գիտեր կամ պարտավոր էր իմանալ համաձայնության բացակայության մասին:

⁵³ Տե՛ս Benjamin Znaty, ECJ rules on GS Media and reshapes case law on hyperlinking <https://mediawrites.law/author/benjamin-znaty/>:

⁵⁴ Տե՛ս European Court of Justice, GS Media BV v Sanoma Media Netherlands BV and Others, Case C-160/15 <https://wilmap.stanford.edu/entries/european-court-justice-gs-media-bv-v-sanoma-media-netherlands-bv-and-others-case-c-16015>, [Accessed 29 August 2024]:

⁵⁵ Տե՛ս GS Media BV v Sanoma Media Netherlands BV, Playboy Enterprises International Inc., Britt Geertruida Dekker <https://curia.europa.eu/juris/document/document.jsf?docid=183124&doclang=EN>, [Accessed 29 August 2024]:

Ուստի այն դեպքերում, երբ անձի՝ «գիտեր կամ պարտավոր էր իմանալ»-ու կանխավարկածը չի հերքվում, ապա հիպերլինքի տեղադրումը պետք է համարվի ոչ իրավաչափ և դիտարկվի որպես հանրությանը հաղորդելու իրավունքի խախտում⁵⁶: Այսինքն՝ այս գործը սկիզբ դրեց նոր չափանիշի, թե արդյո՞ք հղում տեղադրելիս անձը տեղյակ էր, որ իր կողմից դրված հղումը ուղղորդում է դեպի ոչ իրավաչափորեն հրապարակված աշխատանքի, թե՞ ոչ:

Վերոգրյալ վերլուծությունների լույսի ներքո մենք այն կարծիքին ենք, որ գնահատելու համար թե արդյո՞ք հիպերլինքի տեղադրումը իրենից ներկայացնում է կատարումը հանրությանը հաղորդել, թե՞ ոչ, պետք է հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները՝

- Արդյո՞ք հղումը տեղադրվել է արդեն իսկ համացանցում ազատորեն հասանելի կատարմանը, թե՞ ոչ: Եթե հիպերլինքը տեղադրվել է արդեն իսկ ազատորեն հասանելի կատարմանը, ապա հիպերլինքի տեղադրումը չի դիտարկվի որպես կատարողի՝ հանրությանը հաղորդելու իրավունքի խախտում: Սակայն, եթե հիպերլինքը տեղադրվում է այնպիսի կատարմանը հասանելիություն ապահովելու համար, որը ազատորեն հասանելի չէ անձանց անորոշ շրջանակի, ապա այս պարագայում առկա կլինի հանրությանը հաղորդելու իրավունքի խախտում: Ընդ որում՝ այս պարագայում պետք է հաշվի առնել նաև հիպերլինքը տեղադրողի ողջամիտ իմացության չափանիշը, թե արդյո՞ք նա գիտի, որ տեղադրում է այնպիսի հիպերլինք, որը հասանելիություն է ապահովում նախկինում հանրությանը չհաղորդված կատարմանը:
- Արդյո՞ք հիպերլինքի տեղադրումը տեղի է ունեցել շահույթ ստանալու նպատակով, թե՞ ոչ: Եթե կատարման հիպերլինքի տեղադրումը տեղի է ունեցել շահույթ ստանալու նպատակով, ապա առավել մեծ է հավանականությունը, որ դրանով խախտվում է կատարողի իրավունքները:

Եզրակացություն

Հետազոտության շրջանակում մենք հանգել ենք այն եզրակացության, որ հանրությանը հաղորդելու իրավունքը լայն իրավունք է, որն իր մեջ ընդգրկում է հեռարձակման և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքները: Ուստի այս իրավունքների մեկնաբանման ընթացքում պետք է հաշվի առնել դրանց փոխկապակցվածությունը և ելնել մեկնաբանման միևնույն հիմնակետերից:

Ավելին, հետազոտության ընթացքում առանձնացվել են հանրությանը հաղորդելու իրավունքի մեկնաբանության հետևյալ չափանիշները:

⁵⁶ Տե՛ս European Court of Justice, *GS Media BV v Sanoma Media Netherlands BV and Others*, Case C-160/15 <https://wilmap.stanford.edu/entries/european-court-justice-gs-media-bv-v-sanoma-media-netherlands-bv-and-others-case-c-16015>, [Accessed 29 August 2024]:

Այսպես, հանրությանը հաղորդելու իրավունքի մեկնաբանության ժամանակ ամեն անգամ գնահատվեն հետևյալ հարցերը՝

- Արդյո՞ք կատարումները հաղորդվել են անձանց անորոշ շրջանակի, թե՞ ոչ: Ընդ որում, անձանց անորոշ շրջանակը ենթադրում է աշխատանքը հասանելի դարձնել այնպիսի անձանց շրջանակի, որը սահմանափակված չէ որոշակի մասնավոր խմբին պատկանող յուրահատուկ անհատներով, և ովքեր չեն պատկանում ընտանիքի կամ մտերիմների սովորական շրջանակին:
- Գնահատման ենթակա հաջորդ չափանիշը պետք է լինի, թե արդյո՞ք կատարման՝ հանրությանը հաղորդումը տեղի է ունեցել շահույթ ստանալու նպատակով, թե՞ ոչ:
- Երրորդ չափանիշը, որը պետք է գնահատման ենթարկվի, թե արդյո՞ք հանրությունը, որին հասանելի է դարձվել կատարումները, հնարավորություն ուներ այլ եղանակով հասանելիություն ստանալ կատարմանը, թե՞ ոչ:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով հիպերլինքերի տեղադրմանը՝ որպես հանրությանը հաղորդելու իրավունքի իրացում պետք է գնահատման ենթարկվեն, հետևյալ հարցերը՝

- Արդյո՞ք հղումը տեղադրվել է արդեն իսկ համացանցում ազատորեն հասանելի կատարմանը, թե՞ ոչ: Եթե հիպերլինքը տեղադրվել է արդեն իսկ ազատորեն հասանելի կատարմանը, ապա հիպերլինքի տեղադրումը չի դիտարկվի որպես կատարողի՝ հանրությանը հաղորդելու իրավունքի խախտում:
- Արդյո՞ք հիպերլինքի տեղադրումը տեղի է ունեցել շահույթ ստանալու նպատակով, թե՞ ոչ:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. AEPO-ARTIS. *Performers' Rights in International and European Legislation: Situation and Elements for Improvement*. Oct 2018
2. BestWater International GmbH v. Mebes. *Global Freedom of Expression*, Columbia University.
<https://globalfreedomofexpression.columbia.edu/cases/bestwater-international-gmbh-v-mebes/>.
3. European Court of Justice. *GS Media BV v Sanoma Media Netherlands BV and Others, Case C-160/15*
<https://wilmap.stanford.edu/entries/european-court-justice-gs-media-bv-v-sanoma-media-netherlands-bv-and-others-case-c-16015>.
4. Frelove, Alex, and Joel Smith. "The Dental Surgery, the Hotel Bedroom and 'Communication to the Public'." *Journal of Intellectual Property Law and Practice*, 2012.
<http://jiplp.blogspot.com/2012/07/the-dental-surgery-hotel-bedroom-and.html>.
5. Judgment of the Court (Third Chamber). "Società Consortile Fonografici (SCF) v Marco Del Corso." *Court of Justice of the European Union*, 15 March 2012
<https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/?uri=CELEX:62010CJ0135>.
6. Menell, Peter S., Lemley, Mark A., and Merges, Robert P. *Intellectual Property in the New Technological Age*. 2017.
7. Morgan, Owen. *International Protection of Performers' Rights*. Hart, 2002.
8. Pila, Justine, and Paul Torremans. *European Intellectual Property Law*. Oxford University Press, USA, 2019
9. Telfa. "Broadcast of Music by Radio to Clients of Professional Practices on a Non-Profit Basis is Not 'Public' and as a Result is Royalty Free." *Telfa Law*.
<https://www.telfa.law/broadcast-of-music-by-radio-to-clients-of-professional-practices-on-a-non-profit-basis-is-not-public-and-as-a-result-is-royalty-free/>.
10. World Intellectual Property Organization. *Guide to the Copyright and Related Rights Treaties Administered by WIPO: And Glossary of Copyright and Related Rights and Terms*. WIPO, 2003.
11. Znaty, Benjamin. "ECJ Rules on GS Media and Reshapes Case Law on Hyperlinking." *Media Writes*. <https://mediawrites.law/author/benjamin-znaty/>.

Mariam Ayvazyan

Lecturer at the Chair of Civil Law of Yerevan State University

THE RIGHTS TO COMMUNICATE TO THE PUBLIC, TO MAKE AVAILABLE TO THE PUBLIC AS BASIC RIGHTS OF THE PERFORMER¹

Abstract

One of the main rights reserved to performers is the right to communicate their performances to the public and make them available to public. These rights are particularly significant in the digital age, where new methods of public availability to performances, such as streaming services, hyperlinking, and various other technologies, are rapidly emerging. In light of these developments, Armenian practice does not address the challenges associated with interpreting the rights to rights to publicly communicate performances and make them available to the public.

Therefore, this research focuses on exploring the terminological distinctions between the rights to communicate, broadcast and make performances available to the public. The study also analyzes international practices in interpreting these rights, drawing on the precedent set by the European Court of Justice. The research concludes that the right to communicate to the public is a broad right encompassing both broadcasting and making performances available to the public.

Additionally, this research identifies several criteria for interpreting the right to communicate performances to the public. The following questions should be evaluated in each instance:

- Were the performances communicated to an indefinite number of individuals?
- An indefinite circle implies making the work available to a group that is not limited to specific individuals within a private group, such as family or close friends.
- Was the communication to the public done for profit?
- Did the public to whom the performance was made available have alternative means of accessing it?

Furthermore, when considering the posting of hyperlinks as communication to the public, the following questions must be addressed:

- Was the hyperlink directed to a performance already freely available on the internet? If so, posting the hyperlink would not constitute a violation of the performer's right to communicate to the public.

¹ The article was presented on 29.09.2024 and was reviewed on 25.10.2024.

- Was the hyperlink placed for profit?

Keywords: intellectual property; performer; related rights; right to communicate to the public; right to make available to the public.

Мариам Айвазян

*Преподаватель кафедры гражданского права
Ереванского государственного университета*

ПРАВА НА СООБЩЕНИЕ ДЛЯ ВСЕОБЩЕГО СВЕДЕНИЯ И ПРАВО ДОВЕДЕНИЯ ДО ВОСПРИЯТИЯ ПУБЛИКОЙ КАК ОСНОВНЫЕ ПРАВА ИСПОЛНИТЕЛЯ¹

Абстракт

Одним из основных прав, предоставленных исполнителям, является право на сообщение для всеобщего сведения их выступлений и доведение их до восприятия публикой. Эти права особенно важны в цифровую эпоху, когда стремительно развиваются новые методы публичного предоставления доступа к выступлениям, такие как стриминговые сервисы, гиперссылки и различные другие технологии. В свете этих изменений армянская практика не в полной мере решает проблемы, связанные с толкованием прав на сообщение для всеобщего сведения и доведение до восприятия публикой.

Поэтому данное исследование направлено на изучение терминологических различий между правами на сообщение, трансляцию и доведение выступлений до восприятия публикой. Исследование также анализирует международную практику толкования этих прав, опираясь на прецеденты, установленные Судом Европейского Союза. В заключении исследования делается вывод, что право на сообщение для всеобщего сведения является широким правом, включающим как трансляцию, так и доведение выступлений до восприятия публикой.

Кроме того, в ходе исследования были выявлены несколько критериев для толкования права на сообщение для всеобщего сведения выступлений публике. В каждом случае следует оценивать следующие вопросы:

Были ли выступления сообщены неопределенному числу лиц? Неопределенный круг подразумевает предоставление работы группе лиц, которая не ограничена определенными лицами из частной группы, такой как семья или близкие друзья.

Сообщение для всеобщего сведения было осуществлено с целью получения прибыли?

Была ли у публики, которой было предоставлено выступление, возможность получить доступ к нему другими способами?

¹ Статья была представлена 29.09.2024 и прошла рецензирование 25.10.2024.

Кроме того, при рассмотрении публикации гиперссылок как сообщения для всеобщего сведения необходимо учитывать следующие вопросы:

Была ли гиперссылка направлена на выступление, уже свободно доступное в интернете? Если да, то публикация гиперссылки не будет нарушением права исполнителя на сообщение для всеобщего сведения.

Была ли гиперссылка размещена с целью получения прибыли?

Ключевые слова: интеллектуальная собственность; исполнитель; смежные права; права на сообщение для всеобщего сведения; право доведения до восприятия публикой.

**ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅՑՑՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Հոդվածին ներկայացվող ընդհանուր պահանջները.

1. Տպագրման ներկայացվող հոդվածը պետք է անդրադառնա իրավագիտության ոլորտի արդիական կոնկրետ խնդրի, լինի հիմնավորված, առաջադրի որևէ հստակ թեզ, պարունակի իրավունքի բնագավառին վերաբերող վերլուծություններ, շարադրված լինի գրագետ և համապատասխանի ակադեմիական չափանիշներին:

2. Հոդվածը կարող է լինել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն:

3. Հոդվածի ընդհանուր ծավալը պետք է լինի 20-30 էջի սահմաններում:

4. Հոդվածը պետք է բաղկացած լինի (նշված հերթականությամբ).

ա) վերտառությունից (title, заглавие),

բ) հեղինակի մասին տեղեկությունից (data, данные),

գ) ներածությունից (introduction, введение),

դ) բուն հետազոտությունից՝ համապատասխան բաժիններով (գլուխներով) և պարագրաֆներով,

ե) եզրակացությունից (conclusion, заключение),

զ) համառոտագրից (abstract, абстракт),

է) հիմնաբառերից կամ բանալի բառերից (keywords, ключевые слова),

ը) գրականության ցանկից (reference list, список литературы):

Հոդվածին ներկայացվող տեխնիկական պահանջները.

5. Տեքստը մուտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ:

6. Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն և անգլերեն տեքստերը՝ Times New Roman տառատեսակներով:

7. Հոդվածի էջերը համարակալվում են:

8. Յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) ֆորմատի և համապատասխանի հետևյալ չափանիշներին. լուսանցքներ՝ ձախից՝ 2 սմ, աջից՝ 1 սմ, վերևից՝ 2,5 սմ, ներքևից՝ 2 սմ:

9. Միջտողային հեռավորությունը պետք է լինի 1,5 սմ: Պարբերությունների միջև չպետք է լինի այլ հեռավորություն:

10. Պարբերությունները պետք է երկու կողմից հավասարեցված լինեն և սկսվեն 1 սմ խորքից:

11. Տեքստը, բացառությամբ՝ վերտառության և տողատակի ծանոթագրությունների, շարադրվում է 12 տառաչափով:

12. Վերտառությունը պետք է լինի 14 տառաչափով, կենտրոնում (Center) և թավ (Bold) տառատեսակով: Վերտառությունն ամբողջությամբ գրվում է մեծատառերով:

13. Տողատակի ծանոթագրությունները (References) պետք է լինեն 10 տառաչափով և երկու կողմից հավասարեցված:

Հոդվածի առանձին մասերին ներկայացվող ընդհանուր պահանջները.

14. Վերտառությունը պետք է բաղկացած լինի առավելագույնը 20 բառից և համապատասխանի հոդվածի բովանդակությանը: Այն ներկայացվում է եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) և չպետք է պարունակի հապավումներ, եթե դրանք հանրահայտ չեն:

15. Հեղինակի մասին տեղեկությունը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն), և պետք է լրացվի Հավելված 1-ի նմուշների ձևաչափի վրա:

16. Եթե հոդվածի հեղինակները մի քանիսն են, ապա յուրաքանչյուր հեղինակի համար Հավելված 1-ով սահմանված տեղեկությունը տրվում է առանձին՝ կցված ըստ նրանց որոշած հերթականության:

Հոդվածին ներկայացվող բովանդակային պահանջները.

17. Ներածությունը պետք է պարունակի.

- ա) թեմայի ձևակերպում,
- բ) հետազոտության հիպոթեզի ձևակերպում,
- գ) հետազոտության արդիականության հիմնավորում,
- դ) հետազոտության նպատակի և խնդիրների ձևակերպում,
- ե) օգտագործված մեթոդների վերաբերյալ տեղեկություն (ըստ հեղինակի ցանկության):

18. Բուն հոդվածը պետք է համապատասխանի վերտառությանը, պարունակի իրավունքի բնագավառին վերաբերող վերլուծություններ, գիտական ուսումնասիրության մեթոդների կիրառում, դրա հիման վրա առաջադրված խնդիրների լուծումներ:

19. Եզրակացությունը պետք է ներառի.

ա) հետազոտության ընթացքում ձեռք բերված հեղինակային արդյունքների համառոտ ներկայացում,

բ) ուսումնասիրության եզրակացությունների ամփոփում (յուրաքանչյուր կետ պետք է նվիրված լինի ներածության մեջ նշված խնդիրներին պատասխանելուն կամ ներածությունում նշված հիպոթեզի (եթե այդպիսի կան) դրույթներն ապացուցելու փաստարկ հանդիսանա):

20. Համառոտագիրը ներկայացվում է եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն), 200-300 բառերի սահմանում և պետք է ներառի.

ա) խնդրի ուսումնասիրության արդիականությունն ու նպատակահարմարությունը (ուսումնասիրվող խնդրի արդիականության համառոտ և հակիրճ նկարագրությունը),

բ) հոդվածի նպատակը,

գ) հեղինակային արդյունքները (հոդվածում բացահայտվածը, հիմնավորվածը և ապացուցվածը),

դ) ստացված արդյունքների գործնական և տեսական նշանակությունը:

21. Եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) նշվում են 5-10 բանալի բառեր, որոնք միմյանցից անջատվում են ստորակետներով (,):

Հոդվածի ներկայացման կարգը.

22. Հոդվածը ներկայացվում է էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակով հետևյալ էլ. հասցեին ուղարկելու միջոցով. **orinakanutyun@prosecutor.am**

23. Էլեկտրոնային նամակում անհրաժեշտ է կատարել նշում այն մասին, որ հոդվածն ուղարկվում է տպագրման:

Հոդվածների ընդունումը և գրախոսումը.

24. Այն հոդվածները, որոնք չեն համապատասխանում վերոնշյալ բոլոր պահանջներին, ենթակա են վերադարձման և չեն փոխանցվում գրախոսման:

25. Վերոնշյալ բոլոր պահանջներին համապատասխանող հոդվածները ենթակա են անանուն և գաղտնի գրախոսման «Օրինականություն» գիտագործնական պարբերականի գրախոսների կողմից:

26. Յուրաքանչյուր իրավունքի նյութին վերաբերող հոդվածը գրախոսում է տվյալ ոլորտում առնվազն իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և (կամ) տվյալ ոլորտում ակտիվ մասնագիտական գործունեություն ծավալող անձը:

27. Գրախոսը ստուգում է աշխատանքի արդիականությունը, գիտականությունը, օրիգինալությունը, ակադեմիական չափանիշներին համապատասխանությունը և առաջադրված խնդրի լուծման մակարդակը:

28. Գրախոսականում նշվում են աշխատանքի և՛ դրական, և՛ բացասական կողմերը:

29. Գործում է ակադեմիական ազատության սկզբունքը:

30. Տպագրման են ենթակա այն հոդվածները, որոնք երաշխավորվել են գրախոսի կողմից:

31. Գրախոսականների էլեկտրոնային տարբերակները կարող են տրվել առանց գրախոսող անձի ինքնության բացահայտման բացառապես հոդվածի հեղինակին և միայն վերջինիս պահանջի դեպքում:

Հոդվածներին ներկայացվող պահանջների ամբողջական տարբերակը տե՛ս հետևյալ

կայքէջում՝ www.prosecutor.am

Կոնտակտային տվյալներ.

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 5

Հեռ՝ 010-511-506

REQUIREMENTS FOR ARTICLES TO BE PUBLISHED IN THE SCIENTIFIC-PRACTICAL JOURNAL “LEGALITY” OF THE RA PROSECUTOR’S OFFICE

General requirements for the article:

1. The article submitted for publication should address an existing specific problem in the field of law, be evidence-based, present a clear thesis, contain thorough and accurate analysis related to the field of law, as well as be written in academic language and be in compliance with academic standards.
2. The article may be submitted in Armenian, English or Russian.
3. The number of pages of the article should range between 20 and 30 pages.
4. The article should contain the following sections:
 - (a) title,
 - (b) information about the author,
 - (c) introduction,
 - (d) the main research with corresponding sections (chapters) and paragraphs,
 - (e) conclusion,
 - (f) abstract,
 - (g) keywords,
 - (h) reference list.

Technical requirements and guidelines:

5. All manuscripts submitted for publication should be in Unicode fonts.
6. GHEA Grapalat should be used for Armenian texts, and Times New Roman for Russian and English texts.
7. The pages of the article should be numerated.
8. The typesetting of the text of the article should be carried out on a computer in the MS Word program (A 4 format) and meet the following criteria: margins from the left: 2 cm, from the right: 1 cm, top: 2,5 cm and bottom: 2 cm.
9. The line spacing should be 1,5 cm. Other line spacing should not be used between paragraphs.
10. Paragraphs should be aligned on both sides and start at 1 cm depth.
11. The font of the text should be 12, except for the title and footnotes.
12. The title should be in font 14 in the center and bold. The title should be written entirely in capital letters.
13. The footnotes should be in font 10 and aligned on both sides.

General requirements for separate parts of the article:

14. The title should contain up to 20 words and be relevant to the content of the article. It should be presented in three languages (Armenian, English and Russian) and should not contain abbreviations, unless they are well known.
15. Information about the author should be submitted electronically in three languages (Armenian, English and Russian) and be filled in the samples according to Appendix 1.
16. If the article has co-authors, the information defined in Appendix 1 should be provided separately.

Content requirements:

17. The introduction should contain:
 - (a) formulation of the issue,
 - (b) presentation of hypothesis of the research,
 - (c) justification of the relevance and importance of the research,
 - (d) formulation of the aims and objectives of the research,
 - (e) methodology.
18. The article itself should correspond to the title, contain analysis in the field of law, contain a suitable research methodology to achieve the objectives and the solution of problems described in the introduction.
19. The conclusion should contain:

(a) a summary of the author’s findings deriving from the research,
(b) key points of the conclusions of the research (each paragraph should be devoted to the objectives mentioned in the introduction or should serve as an argument, proving the propositions of the hypothesis (if any) mentioned in the introduction).

20. The abstract should be provided in three languages (Armenian, English and Russian) within 200 -300 words and should include:

- (a) brief and concise description of relevance and importance of the research,
- (b) the aim of the article,
- (c) the author’s findings (disclosed, substantiated and proven in the article),
- (d) the practical and theoretical importance of the obtained outcomes.

21. 5-10 key words should be highlighted in three languages (Armenian, English and Russian) which are separated from each other with a semicolon (;).

The procedure for article submission:

22. The article should be submitted electronically (Microsoft Word) via the following e-mail:

orinakanutyun@prosecutor.am

23. The e-mail should indicate that the article is being sent for publication.

Admission and review of articles:

24. Articles that fail to meet the above-mentioned requirements will be returned and will not be submitted for review.

25. Articles meeting all the mentioned requirements are peer-reviewed anonymously and confidentially by the reviewers of the Scientific-Practical Journal “Legality”.

26. The article is reviewed by at least a candidate of a legal science and/or a specialist implementing a professional activity that is active in the given field.

27. The reviewer evaluates the article based on the accuracy of the scientific research, its relevance, scientificity, originality, compliance with academic standards and the level at which the defined objectives are achieved.

28. Both positive and negative aspects are mentioned in the review.

29. The principle of academic freedom applies.

30. Articles endorsed by a reviewer are eligible for publication.

31. Electronic versions of reviews can be provided only to the author of the article and at his or her request, without disclosing the identity of the reviewer.

See the full version of requirements for articles on the following website: www.prosecutor.am

Contacts

Address- Vazgen Sargsyan Street 5, Yerevan, 0010, Armenia

Tel.- 010-511-506

ТРЕБОВАНИЯ К СТАТЬЯМ, ПУБЛИКУЕМЫМ В НАУЧНО-ПРАКТИЧЕСКОМ ЖУРНАЛЕ «ЗАКОННОСТЬ» ПРОКУРАТУРЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Общие требования к статье:

1. Представляемая для публикации статья должна затрагивать актуальную, конкретную проблему в области юриспруденции, быть обоснованной, излагать четкий тезис, содержать анализы, относящиеся к области права, быть изложена грамотно и соответствовать академическим стандартам.
2. Статья может быть на армянском, английском или русском языке.
3. Общий объем статьи должен быть в пределах 20-30 страниц.
4. Статья должна состоять из следующих частей (в указанном порядке):
 - а) заглавие (title);
 - б) данные об авторе (data);
 - в) введение (introduction);
 - г) основное исследование с соответствующими разделами (главами) и параграфами;
 - д) заключение (conclusion);
 - е) абстракт (abstract);
 - г) ключевые слова (keywords);
 - з) список литературы (reference list).

Технические требования к статье:

5. Текст набирается шрифтами системы кодировки «Юникод» (Unicode).
6. Армянский текст статьи должен быть изложен шрифтом GHEA Grapalat. Русский и английский тексты – шрифтом Times New Roman.
7. Страницы статьи нумеруются.
8. Страницы должны быть формата А4 (201x297 мм) и соответствовать следующим критериям: поля слева 2 см, справа 1 см, сверху 2,5 см, снизу 2 см.
9. Расстояние между строк должно быть 1,5 см. Других интервалов между абзацами быть не должно.
10. Абзацы должны быть выровнены по обеим сторонам и начинаться на 1 см в глубину.
11. Размер шрифта текста – 12, кроме заглавия и сносок.
12. Заглавие набирается прописной буквой, по центру, жирным шрифтом, размер шрифта – 14.
13. Сноски должны быть выровнены по обеим сторонам. Размер шрифта сносок – 10.

Общие требования к отдельным частям статьи:

14. Заглавие должно состоять максимум из 20 слов и соответствовать содержанию статьи. Оно представляется на трех языках (армянском, английском и русском) и не должно содержать сокращений, если последние не являются общеизвестными.
15. Информация об авторе представляется на трех языках (армянском, английском и русском), в электронном виде, и должна быть заполнена на примере Приложения 1.
16. При наличии нескольких авторов статьи установленная Приложением 1 информация по каждому автору приводится отдельно с определенного ими порядка.

Требования к содержанию статьи:

17. Введение должно содержать:
 - а) формулировку научной и (или) практической проблемы;
 - б) представление исследовательской гипотезы;
 - в) обоснование актуальности исследования;
 - г) представление цели и задач исследования;
 - д) информацию об использованных методах (по желанию автора).
18. Статья должна соответствовать заглавию, содержать анализы в области права, научное и (или) практическое исследование, применение методов научного исследования и решение поставленных задач, описанных во введении.

19. Заключение должно содержать:

- а) краткое изложение авторских результатов, полученных в ходе исследования;
- б) краткие выводы по результатам исследования (каждый пункт должен быть посвящен решению определенной научной и (или) практической проблемы, упомянутой во введении, или излагать аргументы по доказыванию положений гипотезы (если таковая имеется), упомянутой во введении).

20. Абстракт представляется на трех языках (армянском, английском и русском), в пределах 200-300 слов, и должен содержать:

- а) актуальность и целесообразность изучения научной и (или) практической проблемы (краткое и лаконичное описание актуальности изучаемой проблемы);
- б) цель статьи;
- в) авторские результаты (раскрытые, обоснованные и доказанные в статье);
- г) практическая и теоретическая значимость полученных результатов.

21. На трех языках (армянском, английском и русском) также указываются 5-10 ключевых слов, отделяемых друг от друга точкой с запятой (;).

Порядок представления статьи:

22. Статья представляется в электронной (Microsoft Word) версии по следующему электронному адресу

orinakanutyun@prosecutor.am

23. В электронном письме должно быть указано, что данная статья отправляется для публикации.

Прием и рецензирование статей:

24. Статьи, не соответствующие вышеуказанным требованиям, подлежат возврату и не представляются на рецензирование.

25. Статьи, соответствующие указанным требованиям, подлежат анонимному и конфиденциальному рецензированию рецензентами научно-практического журнала «Законность».

26. Статья, относящаяся к каждой отрасли права, рецензируется лицом, имеющим степень не ниже кандидата юридических наук в данной области и (или) осуществляющим активную профессиональную деятельность в данной сфере.

27. Рецензент проверяет актуальность работы, научность, оригинальность, соответствие академическим стандартам и уровень решения предъявленной проблемы.

28. В рецензировании отмечаются как положительные, так и отрицательные стороны работы.

29. Действует принцип академической свободы.

30. Печатанию подлежат статьи, гарантированные рецензентом.

31. Электронные версии рецензий предоставляются без раскрытия личности рецензента исключительно автору статьи и только по его запросу.

Полную версию требований к статьям смотрите на сайте: www.prosecutor.am

Контактные данные

Адрес: Республика Армения, г. Ереван, 0010, улица Вазгена Саргсяна 5

Тел.: 010-511-506

Նշումների համար

For notes

Для заметок

- © «Օրինականություն», Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն, 2024, N 136
- © “Orinakanutiun” (Legality) - Prosecutor General's Office of the Republic of Armenia, 2024, N 136
- © «Оринаканутюн» (Законность) – Генеральная прокуратура Республики Армения, 2024, N 136

Խմբագրական խորհրդի նախագահի օգնական՝ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Assistant to the Chair of the Editorial Board: K. HARUTYUNYAN
Ассистент председателя редакционной коллегии: К. АРУТЮНЯН

Հրատարակիչ տնօրեն՝ Ա. ՉՈՒՆԳՈՒՐՅԱՆ
Publishing director: A. CHUNGURYAN
Директор издательства: А. ЧУНГУРЯН

Համակարգչային ձևավորող՝ Հ. ԱԲԵԼՅԱՆ
Computer designer: H. ABELYAN
Верстка: А. АБЕЛЯН

Հանձնված է տպագրության՝ 7.11.2024
Չափսը՝ 70x100 1/16
Տպագրությունը՝ օֆսեթ: 18 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 500
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ գրատուն» հրատարակչությունում
Info@astghikgratun.am
www.astghikgratun.am